

≡ Ա գ ա թ ա ք ռ ի ս տ ի ≡

?

1915.info

Ապրիլի  
1 թ Գրպան



ԱԳԱԹԱ ՔՐԻՍՏԻ  
AGATHA CHRISTIE

ՏԱՐԵԿԱՆՈՎ ԼԻ ԳՐՊԱՆ

A POCKET FULL OF RYE



ՀՏԴ 821.111-31 Քրիստի  
ԳՄԴ 84(4Մբ)-44  
Ք 934

## Անգլերենից թարգմանեց Քրիստինե Չիլինգարյանը

Քրիստի Ագաթա  
Ք 934 Տարեկանով լի գրպան / Ագաթա Քրիստի.- Եր.:  
Էդիթ Պրինտ, 2024.- 272 էջ:

Լոնդոնյան գրասենյակում առավոտյան թեյն ըմպելիս մեծա-  
հարուստ Ռեքս Ֆորթեսբյուի ինքնազգացողությունն անսպասե-  
լիորեն վատանում է, և հիվանդանոց տեղափոխվելուն պես նա  
մահանում է: Հետաքննությամբ պարզվում է, որ նրան թունավորել  
են, և որ ամենատարօրինակն է՝ հանգուցյալի պիջակի գրպանում  
հայտնաբերվում են տարեկանի հափիկներ:

Ի՞նչ է սա: Խելագարի ձեռքի գրոծ, թե՛ սառնասրտորեն ի կա-  
տար ածված ծրագրի մաս: Խորաթափանց միսս Մարփլը պա-  
րասխան կգտնի բոլոր հարցերին:

թվայնացրել է 19/5.info կայք

ՀՏԴ 821.111-31 Քրիստի  
ԳՄԴ 84(4Մբ)-44

ISBN 978-9939-972-64-0

Armenian edition © Edit Print

A Pocket Full of Rye Copyright © 1953 Agatha Christie Limited.

All rights reserved.

AGATHA CHRISTIE, MARPLE, the Agatha Christie Signature and the AC Monogram Logo are registered trademarks of Agatha Christie Limited in the UK and elsewhere. All rights reserved.

## ԳԼՈՒԽ 1

Թեյ պատրաստելու հերթը միսս Սոմերսինն էր: Միսս Սոմերսն ամենից նորն ու անփորձն էր մեքենագրուհիներից: Արդեն երիտասարդ չէր, իսկ գառնանման դեմքը հեզաբարո տվայտանք էր արտահայտում: Թեյնիկի ջուրը դեռ բավականաչափ չէր եռացել, երբ միսս Սոմերսը լցրեց այն թեյի վրա, բայց խեղճ միսս Սոմերսը երբեք վստահ չէր լինում, թե երբ է թեյնիկը եռում: Սա մեկն էր նրան տանջող առօրյա հոգսերից:

Նա լցրեց թեյը և հերթով մատուցեց բաժակները՝ ավստներից յուրաքանչյուրում երկուական փափուկ քաղցր թխվածքաբլիթ դնելով:

Միսս Գրիֆիթը՝ փորձառու ավագ մեքենագրուհին, ճերմակահեր պեդանտը, որ տասնվեց տարի աշխատում էր Միացյալ ներդրումային հավատարմագրային ֆոնդում, կտրուկ կերպով ասաց.

- Ջուրը կրկին չի եռացել, Սոմերս:

Միսս Սոմերսը, որի անհանգիստ, հեզահամբույր դեմքը վարդագունեց, ասաց.

- Աստված իմ, այս անգամ ինձ իրոք թվաց, թե եռացել էր:

Միսս Գրիֆիթը մտածեց. «Թերևս, մի ամիս էլ պահենք նրան, քանի դեռ աշխատանքը լիքն է... Ախր, իսկապես: Ինչպիսի շիլաշփոթ սարքեց այս շշմած ապուշը «Իսթերն Դիվելոփմենթսի» նամակից. պարզից էլ պարզ գործ էր, և թեյ պատրաստելն էլ ամեն անգամ ձեռքից չի գալիս: Միայն թե այսքան դժվար չլիներ խելացի մեքենագրուհի գտնելը... նախորդ անգամ էլ թխվածքաբլիթների թիթեղատուփն ամուր չէր փակել... Իսկապես...»:

Ինչպես միսս Գրիֆիթի՝ վրդովմունքով լի ներքին մե-

նախոսություններից շատերը, այս նախադասությունն անավարտ մնաց:

Այդ պահին սահուն քայլվածքով ներս մտավ միսս Գրովնորը՝ միսթր Ֆորթեսքյուի թեյի սրբազան արարողությունն անելու: Միսթր Ֆորթեսքյուն այլ ձևով պատրաստված թեյ էր խմում, ուրիշ ճենապակե բաժակով և հատուկ թխվածքաբլիթներով: Միայն թեյնիկն ու հանդերձարանի ծորակի ջուրն էին նույնը: Սակայն միսթր Ֆորթեսքյուի թեյի դեպքում ջուրը եռացած էր լինում: Միսս Գրովնորը հոգում էր դրա համար:

Միսս Գրովնորն անհավանականորեն շքեղ շիկաեղ էր: Նա թանկարժեք ձևվածքով սև կոստյում էր հագնում, իսկ բարեկազմ ոտքերը ծածկված էին սև շուկայից ամենաընտիր ու թանկ նեյլոնե զուգագուլպայով:

Նա ևս մեկ անգամ սահեց մեքենագրուհիների սենյակով՝ առանց որևէ մեկին հայացքի կամ խոսքի արժանացնելու: Ասես մեքենագրուհիները սև ուտիճների բազմություն լինեին: Միսս Գրովնորը միսթր Ֆորթեսքյուի զուտ անձնական քարտուղարուհին էր. չար լեզուները շարունակ ակնարկում էին, որ նա ավելին էր, բայց դա իրականությանը չէր համապատասխանում: Միսթր Ֆորթեսքյուն վերջերս էր երկրորդ անգամ ամուսնացել մի հմայիչ ու շքեղ կնոջ հետ, որ լիովին ունակ էր զբաղեցնելու նրա ողջ ուշադրությունը: Միսթր Ֆորթեսքյուի համար միսս Գրովնորը պարզապես ճոխությամբ ու թանկարժեքությամբ լցված գրասենյակի ներքին հարդարանքի պարտադիր բաղադրիչն էր:

Միսս Գրովնորը, սկուտեղն առջևում պահած՝ իբրև ծիսական զոհաբերության կարգ, անցավ սահուն քայլերով: Սահեց աշխատասենյակով ու սպասասրահով, որտեղ առավել կարևոր հաճախորդներին էր թույլատրված նստել,

իր իսկ ընդունարանով և վերջապես դռան թեթև թակոցով մտավ սրբություն սրբոցը՝ միսթր Ֆորթեսքյուի առանձնասենյակը:

Դա մի ընդարձակ սենյակ էր, որի փայլեցրած մանրահատակը տեղ-տեղ ծածկված էր թանկարժեք արևելյան գորգերով: Սենյակը նրբաճաշակորեն հարդարված էր բաց գույնի փայտից պանելներով, իսկ հսկայական փափուկ բազկաթոռները պաստառված էին բաց դեղնավուն կաշվով: Սոսու փայտից վիթխարի գրասեղանի հետևում՝ սենյակի կիզակետում, բազմել էր միսթր Ֆորթեսքյուն ինքը:

Միսթր Ֆորթեսքյուն պակաս տպավորիչ տեսք ուներ, քան կարելի էր ակնկալել, թեև նա ջանք չէր խնայում սենյակին համապատասխանելու համար: Խոշորամարմին, թորշոմած մարդ էր՝ պսպղուն ճաղատ գլխով: Տպավորություն թողնելու համար քաղաքային իր գրասենյակում ամառանոցային թվիդե ազատ պիջակով էր: Նա խոժոռված նայում էր գրասեղանին դրված ինչ-որ թղթերի, երբ միսս Գրովնորն իրեն բնորոշ կարապային սահքով մոտեցավ նրան: Սկուտեղը դնելով սեղանին՝ նրա քթի տակ՝ ցածր, չեզոք ձայնով շնջաց. «Ձեր թեյը, միսթր Ֆորթեսքյու»,- ու հեռացավ:

Միսթր Ֆորթեսքյուն, ըստ արարողակարգում իր դերի, քրթմնջաց:

Վերադառնալով իր գրասեղանի մոտ՝ միսս Գրովնորն անցավ ձեռքի տակ եղած գործերին: Երկու հեռախոսագանգ կատարեց, սրբագրեց նամակները, որոնք տպված դրված էին այնտեղ՝ պատրաստելով միսթր Ֆորթեսքյուի ստորագրության համար, և մի հեռախոսագանգի պատասխանեց:

- Վախենամ՝ հիմա անհնար է,- ասաց նա ձայնի ինքնագոհ հնչերանգով:- Միսթր Ֆորթեսքյուն խորհրդակցության է:

Խոսափողը ցած դնելիս նա հայացք գցեց ժամացույցին: Տասնմեկից տասը բույս էր անցել:

Հենց այդ պահին էր, որ մի արտասովոր ծայն ներս թափանցեց միսթր Ֆորթեսքյուի գրեթե ձայնամեկուսիչ դռնից: Թեև այն խլացած էր, անհնար էր չճանաչել ցավագին, խեղդվող ճիչը: Նույն վայրկյանին միացավ միսս Գրովնորի գրասեղանի կանչի կոճակը՝ ասես երկարածիզ մոլեգին ճիչեր արձակելով: Միսս Գրովնորը, որ մի պահ վախից տեղում էր գամվել, անվճռականորեն ոտքի ելավ: Անսպասելիի հետ բախումը թուլացրել էր նրա հավասարակշռությունը: Բայցևայնպես, իր սովորական վայելչագեղ կեցվածքով նա շարժվեց դեպի միսթր Ֆորթեսքյուի դուռը, թակեց և ներս մտավ:

Այն, ինչը նա տեսավ, էլ ավելի խաթարեց նրա հավասարակշռությունը: Գրասեղանի հետևում նստած նրա գործատուն կարծես այլայլվել էր ուժգին ցավից: Նրա ջղաձիգ շարժումներին հետևելը տագնապ էր ներշնչում:

- Աստված իմ, միսթր Ֆորթեսքյու, Ձեզ վնաս եք գգում, հարցրեց միսս Գրովնորը և անմիջապես գիտակցեց հարցի հիմարությունը: Կասկածից վեր էր, որ միսթր Ֆորթեսքյուն ծանր վիճակում էր: Մոտենալով նա տեսավ, որ ղեկավարը ցնցվում էր ցավագին ջղաձգություններից:

Բառերը դուրս էին թռչում ընդհատուն հեղցներով.

- Թեյը... գրողը տանի, ի՞նչ եք... լցրել թեյի մեջ... օգնություն կանչեք... արագ բժիշկ բերեք...

Միսս Գրովնորը փախավ սենյակից: Շիկահեր քարտուղարուհու ինքնագոհության հետքը չէր մնացել. այժմ նա տեղը տեղին սարսափահար կին էր, որ կորցրել էր գլուխը:

Նա ճչալով վազեց մեքենագրուհիների աշխատասենյակ.

- Միսթր Ֆորթեսքյուն նուպայի մեջ է... նա մահանում է... պետք է բժիշկ կանչենք... նա սոսկալի տեսք ունի... հաստատ կմահանա...

Անմիջապես հետևեցին միմյանցից խիստ տարբերվող արձագանքներ:

Միսս Բելը՝ ամենաերիտասարդ մեքենագրուհին, ասաց.

- Եթե էպիլեպսիա է, պետք է խցան դնենք բերանը: Ո՞վ ունի խցան:

Ոչ ոք խցան չուներ:

- Նրա տարիքում հավանաբար կաթված է,- ասաց միսս Սոմերսը:

- Պետք է բժիշկ կանչենք, անհապաղ,- ասաց միսս Գրիֆիթը:

Սակայն նրան բնորոշ պատրաստականությունն արգելակել էր. տասնվեց տարվա ծառայության ընթացքում երբևէ կարիք չէր եղել քաղաքային գրասենյակ բժիշկ կանչելու: Իր անձնական բժիշկը Սթրիթսթեմ Հիլում էր: Այստեղ մոտակայքում որտեղ բժիշկ կար:

Ոչ ոք չգիտեր: Միսս Բելը ձեռքն առավ հեռախոսային տեղեկագիրքը և սկսեց «Բ» տառի ներքո փնտրել բժիշկներին: Սակայն տեղեկատուն դասակարգված չէր, և բժիշկները լռելյայն կարգով առանձնացված ցուցակով չէին, ինչպես տաքսիները: Ինչ-որ մեկն առաջարկեց հիվանդանոց գանգել, բայց ո՞րը:

- Պետք է ճիշտ հիվանդանոց գանգել,- պնդում էր միսս Սոմերսը,- այլապես չեն գա: Ուզում եմ ասել՝ ազգային առողջապահական համակարգն է պատճառը. հիվանդանոցը պետք է տվյալ շրջանում լինի:

Ինչ-որ մեկն առաջարկեց 999 գանգել, բայց միսս Գրիֆիթը վրդովվեց ու ասաց, որ այդ դեպքում գործը կհասնի ոստիկանությանը, իսկ դա անկարելի էր: Մի երկրում, որի բոլոր քաղաքացիներն ունեին առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորություն, մի խումբ բավականաչափ խելացի կանայք անհավատալի անտեղյա-



կությունն էին ցուցաբերում ճիշտ ընթացակարգերից: Միսս Բելն անցավ «Շ» տառի ներքո «շտապօգնություն» փնտրելուն: Միսս Գրիֆիթն ասաց.

- Նրա անձնական բժիշկը... նա պետք է բժիշկ ունենա:

Ինչ-որ մեկը նետվեց անձնական հասցեագրքի հետևից: Միսս Գրիֆիթը հրահանգեց գործակատար տղային դուրս գալ փողոց ու ինչ-որ տեղից ինչ-որ կերպ բժիշկ գտնել: Անձնական հասցեագրքում միսս Գրիֆիթը գտավ սրբ Էդվին Սենդեմենին, որի հասցեն Հարլի Սթրիթում էր: Միսս Գրովնորը, փլվելով աթոռներից մեկի վրա, ողբաց այնպես, որ նրա ձայնի մեջ սովորականից քիչ էր նկատվում Մեյֆեյրի առողջանությունը:

- Ես թեյը պատրաստեցի այնպես, ինչպես միշտ... իսկապես... չէր կարող որևէ բան այնպես չլինել...

- Որևէ բան այնպես չլինել:- Միսս Գրիֆիթի ձեռքը քարացավ հեռախոսի սկավառակի վրա:- Ինչո՞ւ ես այդպես ասում:

- Նա ասաց դա... միսթր Ֆորթեսյուն... նա ասաց, որ թեյը...

Միսս Գրիֆիթի ձեռքն անվճռականորեն տատանվում էր Ուելթեքի և 999-ի միջև: Միսս Բելը՝ երիտասարդ ու հույսով լի, ասաց.

- Պետք է մի քիչ մանանելս ու ջուր տանք նրան... հիմա: Գրասենյակում մանանելս չկամ:

Գրասենյակում մանանելս չկար:

Կարճ ժամանակ անց բժիշկ Այզեքսը Բեթնալ Գրին հիվանդանոցից և սրբ Էդվին Սենդեմենը հանդիպեցին վերելակում ճիշտ այն պահին, երբ երկու տարբեր շտապօգնության մեքենաներ մոտեցան շենքին: Հեռախոսն ու գործակատար տղան արել էին իրենց գործը:

## ԳԼՈՒԽ 2

Տեսուչ Նիլը նստած էր միսթթ Ֆորթեսքյուի սրբավայրում՝ սոսու փայտից հսկայական գրասեղանի հետևում: Նրա ենթականերից մեկը, առանց ուշադրություն գրավելու, նստել էր դռան մոտ՝ պատին հենված:

Տեսուչ Նիլը նրբաոճ, զինվորականի տեսքով տղամարդ էր՝ շագանակագույն գանգուրներով, որ դեպի վեր էին աճում բավական նեղ ճակատից: Երբ նա արտաբերում էր «եղած-չեղած շաբլոն գործ է» արտահայտությունը, նրանք, ում դա հասցեագրված էր, հաճախ չարախնդալով մտածում էին. «Իսկ դու միայն շաբլոն բաների ես ունակ»: Նրանք չարաչար սխալվում էին: Տեսուչ Նիլի՝ թվացյալ երևակայությունից զուրկ արտաքինի տակ թաքնված էր հարուստ երևակայության տեր մտածողը, իսկ նրա հետաքննության մեթոդներից մեկը հանցանքի անհավանական վարկածներ առաջ քաշելն էր՝ կիրառելով դրանք այն անձանց հանդեպ, որոնց տվյալ պահին հարցաքննում էր:

Նրա անվրեպ աչքն անմիջապես կանգ էր առել միսս Գրիֆիթի վրա՝ որպես ամենահարմար թեկնածուի, որ հակիրճ կերպով կներկայացներ այն իրադարձությունների շարքը, որոնց պատճառով ինքը նստած էր այստեղ, և միսս Գրիֆիթը, հիանալիորեն տալով առավոտվա դեպքերի ամփոփ հաշվետվությունը, քիչ առաջ դուրս էր եկել սենյակից: Տեսուչ Նիլը մտովի առաջ քաշեց երեք տարբեր, գունագեղ պատճառներ, թե ինչու ավագ մեքենագրուհին թույն կլցներ իր գործատուի առավոտյան թեյի մեջ, և հերքեց բոլորը՝ որպես քիչ հավանական:

Նա դասակարգեց միսս Գրիֆիթին որպես՝ ա) ոչ այն մարդկանցից, որ կթունավորեր, բ) գործատուին չսիրահարված, գ) առանց ցայտուն հոգեկան անհավասարակշ-

ռության, դ) ոչ այն կանանցից, որ քեն կպահեր: Ըստ ամենայնի՝ միսս Գրիֆիթն իսկապես կարող էր ծառայել միայն իբրև հավաստի տեղեկությունների աղբյուր:

Տեսուչ Նիլը հայացք գցեց հեռախոսին: Ամեն պահի նա զանգի էր սպասում Սենթ Ջուդս հիվանդանոցից:

Իհարկե, հնարավոր էր, որ միսթեր Ֆորթեսքյուի անսպասելի հիվանդությունը բնական պատճառներ ունենար, սակայն բժիշկ Այզեքսը Բեթնալ Գրինից այդպես չէր կարծում, սրը Էդվին Սենդեմենը Հարլի Սթրիթից՝ նույնպես:

Տեսուչ Նիլը սեղմեց կանչի կոճակը, որը հարմարավետորեն տեղավորված էր նրա ծախ ձեռքի մոտ, և պահանջեց, որ իր մոտ ուղարկեն միսթեր Ֆորթեսքյուի անձնական քարտուղարուհուն:

Միսս Գրովնորը թեթևակիորեն վերականգնել էր հավասարակշիռ կեցվածքը, բայց միայն այդքանը: Նա ներս մտավ վախեցած (կարապի սահքից ոչինչ չէր մնացել նրա շարժումներում) և անմիջապես պաշտպանողաբար ասաց.

- Ես չեմ արել դա:

- Իսկապես,- առանց ձևականությունների շնջաց տեսուչ Նիլը:

Նա մատնացույց արեց այն աթոռը, որտեղ միսս Գրովնորը սովորաբար տեղավորվում էր նոթատետրը ձեռքին, երբ միսթեր Ֆորթեսքյուն կանչում էր նրան իր նամակները գրի առնելու: Այժմ նա նստեց դժկամորեն և տազնապած աչքերը հառեց տեսուչ Նիլին: Տեսուչ Նիլը, որ, տրվելով երևակայությանը, մտքում պտտեցնում էր սցենարները՝ «Գայթակղություն», «Շանտաժ», «Պլատինե շիկահերը դատարանում» և այլ թեմաներով, հանգիստ ու պարզապես փոքր-ինչ հիմարավուն տեսք ուներ:

- Թեյի հետ կապված խնդիր չկար,- խոսեց միսս Գրովնորը:- Չէր կարող լինել:

- Հասկանալի է,- ասաց տեսուչ Նիլը:- Ձեր անունը, ազգանունը և հասցեն, խնդրեմ:

- Գրովնոր: Այրին Գրովնոր:

- Ինչպե՞ս է այն գրվում:

- Օ՛ր, ինչպես հրապարակը<sup>1</sup>:

- Իսկ հասցեն:

- Ռաշմուր Ռոուդ 14, Մասվել Հիլ:

Տեսուչ Նիլը գոհունակությամբ գլխով արեց: «Ոչ մի գայթակղություն,- ասաց նա ինքն իրեն:- Ոչ էլ սիրո բույն: Հարգված ընտանիքից է, ծնողների հետ է ապրում: Ոչ մի շանտաժ»:

Հետաքրքրաշարժ վարկածների հերթական հիանալի հավաքածուն ջուրը լցվեց:

- Եվ ուրեմն՝ այդ Դոբ էիք թեյը պատրաստել,- սիրալիրորեն հարցրեց նա:

- Դե՛, ես պարտավոր էի: Ուզում եմ ասել՝ միշտ ես եմ պատրաստում:

Առանց շտապելու՝ տեսուչ Նիլը նրանից դուրս կորզեց միսթեր Ֆորթեսքյուի առավոտյան թեյի արարողության մանրամասները: Բաժակը, ափսե՛ն ու թրմելու թեյամանն արդեն փաթեթավորվել էին և ուղարկվել համապատասխան բաժանմունք փորձաքննության: Այժմ տեսուչ Նիլն իմացավ, որ միայն և միայն Այրին Գրովնորն էր ձեռք տվել այդ բաժակին, ափսեին և թրմելու թեյամանին: Գրասենյակի ընդհանուր օգտագործման թեյնիկի մեջ ջուրը լցրել էր միսս Գրովնորը հանդերձարանի ծորակից:

- Իսկ հենց թեյը:

- Դա միսթեր Ֆորթեսքյուի թեյն էր՝ հատուկ, չինական: Այն հարևանությամբ գտնվող իմ սենյակում՝ դարակում է պահվում:

---

<sup>1</sup> Գրովնոր Սքուեյր. Լոնդոնի երկրորդ խոշորագույն հրապարակը:

Տեսուչ Նիլը գլխով արեց: Հարցրեց շաքարի մասին և իմացավ, որ միաթի Ֆորթեսքյուն թեյը շաքարով չէր խմում:

Հեռախոսը զնգաց: Տեսուչ Նիլը վերցրեց խոսափողը: Նրա դեմքի արտահայտությունը փոքր-ինչ փոխվեց:

- Սենթ Ջուդսի՞ց է:

Նա գլխով արեց միսս Գրովնորին՝ ցույց տալով, որ ազատ է:

- Առայժմ այսքանը, շնորհակալ եմ, միսս Գրովնոր:

Միսս Գրովնորը աճապարանքով դուրս եկավ սենյակից:

Տեսուչ Նիլն ուշադիր լսեց Սենթ Ջուդսից խոսողի բարակ, անտարբեր ձայնը: Այդ ընթացքում նա մատիտով մի քանի խորհրդավոր նշում արեց իր առջև դրված գրանցամատյանի անկյունում:

- Ասում եք՝ հինգ րոպե առանց է մահացել,- հարցրեց նա՝ հայացք գցելով ձեռքի ժամացույցին: *Տասներկուսն անց քառասուներեք.* գրեց գրանցամատյանում:

Անտարբեր ձայնը հաղորդեց, որ անձամբ բժշկ Բեռնսդորֆը կցանկանար գրուցել տեսուչ Նիլի հետ:

- Լավ, միացրե՞ք նրան,- ասաց տեսուչ Նիլը, ինչը ցնցեց ձայնի տիրոջը, որի պաշտոնական խոսքի մեջ որոշակի հարգալից նոտաներ էին ներթափանցել բժշկի անունը տալիս:

Հետևեցին տարատեսակ չխկոցներ, դզզոցներ և հեռվից հասնող անորոշ շշուկներ: Տեսուչ Նիլը համբերատարությամբ սպասում էր:

Ապա առանց զգուշացման կրծքային թավ գոռոց հնչեց, որը ստիպեց նրան խոսափողը մեկ-երկու դյույմ հետ քաշել ականջից:

- Ողջո՞յն, Նիլ, այ՛ ծեր անգղ: Էլի դիակներիդ գործի՞ն ես անցել:

Տեսուչ Նիլը և պրոֆեսոր Բեռնսդորֆը Սենթ Ջուդսից

ուղիղ մեկ տարի առաջ միասին ներգրավվել էին թունավորման մի գործի մեջ և բարեկամական հարաբերություններ էին պահպանել:

- Լսել եմ՝ մեր ընկերը մահացել է, բժիշկ:

- Այո՛: Նրան այստեղ հասցնելու պահին այլևս ոչինչ չէինք կարող անել:

- Իսկ մահվան պատճառը:

- Բնականաբար դիահերձում կկատարվի: Շատ հետաքրքիր գործ է: Իսկապես հետաքրքիր է: Ուրախ եմ, որ մասնակից եմ դրան:

Բեռնսդորֆի հագեցած ձայներանգում լսվող մասնագիտական հրճվանքն առնվազն մեկ բան էր ասում տեսուչ Նիլին:

- Ինչպես հասկանում եմ, չես կարծում, որ բնական մահ է եղել,- չորությամբ նկատեց նա:

- Հազիվ թե,- հաստատակամորեն ասաց բժիշկ Բեռնսդորֆը:- Իհարկե, սա պաշտոնական չէ,- ուշացած զգուշավորությամբ հավելեց նա:

- Իհարկե, իհարկե: Հասկանալի է: Նրան թունավորել են:

- Վստահաբար: Եվ բացի դրանից... սա միանգամայն ոչ պաշտոնական է, դե, հասկանում ես... միայն մեր մեջ ասած... պատրաստ եմ գրազ գալու, թե ինչ թույն է եղել:

- Մի՛... թե:

- Տաքսին<sup>1</sup>, եղբայր: Տաքսին:

- Տաքսին: Երբևէ չեմ լսել դրա մասին:

- Գիտեմ: Այն խիստ հազվագյուտ է: Իսկապես սքանչելիորեն հազվագյուտ: Չէի ասի, թե ինքս էլ կնկատեի այն, եթե ընդամենը երեք կամ չորս շաբաթ առաջ նման մի դեպք չունենայի: Երկու երեխա տիկնիկների թեյախմութ-

---

<sup>1</sup> Թունավոր հատկություններ ունեցող նյութ, որը հիմնականում ստացվում է կենու տերևներից և հատապտուղներից:

յուն խաղալիս... կենու ծառից հատապտուղներ էին քաղել և օգտագործել թեյի համար:

- Դ՛մ է պատճառը: Կենու հատապտուղները:

- Հատապտուղները կամ տերևները: Խիստ թունավոր են: Տաքսինը, անշուշտ, ալկալոիդն է: Ինձ թվում է՝ չեմ լսել որևէ դեպքի մասին, որ այն միտումնավոր կերպով օգտագործած լինեն: Իրոք չափազանց հետաքրքիր է և արտասովոր... Չես պատկերացնի, Նիլ, թե մարդ որքան է հոգնում մշտական հերբիցիդներից: Տաքսինն իսկական վայելք է: Ես, իհարկե, գուցե սխալվում եմ... ի սեր Աստծո, թող սա մեր մեջ մնա... բայց կարծում եմ, որ այդպես է: Քեզ նույնպես պետք է որ հետաքրքրի: Բազմազանություն կմտցնի առօրյայում:

- Բոլորը զվարճանում են՝ բացի զոհից: Դ՛մ է ասածդ:

- Այո՛, այո՛, խեղճ մարդ:- Բժիշկ Բեռնսոդորֆի ձայնն անտարբերությամբ հնչեց:- Նրա բախտը չի բերել:

- Նա ինչ-որ բան ասել է մահից առաջ:

- Դե՛, քո մարդկանցից մեկը նոթատետրով նստած էր նրա կողքին: Նա կունենա ստույգ մանրամասները: Մի անգամ քթի տակ ինչ-որ բան է ասել թեյի մասին... որ գրասենյակում ինչ-որ բան են լցրել իր թեյի մեջ... բայց դա, իհարկե, անհեթեթություն է:

- Ինչո՞ւ է անհեթեթություն,- կտրուկ կերպով հարցրեց տեսուչ Նիլը, որ կրկին պատկերացրել էր շքեղ միսս Գրովնորին թրմվող թեյի մեջ կենու հատապտուղներ ավելացնելիս և այդ միտքն անպատեհ համարել:

- Որովհետև թույնը չէր կարող այսքան արագ ներգործել: Որքան հասկանում եմ, ախտանշաններն ի հայտ են եկել թեյը խմելուց անմիջապես հետո՛:

- Այդպես են ասում:

- Դե՛, սակավաթիվ թույներ կան, որ այդքան արագ են

ներգործում՝ իհարկե, բացի ցիանիդներից... ու, թերևս, մաքուր նիկոտինից...

- Իսկ դա վստահաբար ցիանիդ կամ նիկոտին չէր:

- Իմ սիրելի՛ ընկեր: Նա մահացած կլիներ նախքան շտապօգնության ժամանումը: Օ՛, ո՛չ, դրանցից ոչ մեկի մասին խոսք լինել չի կարող: Ես իսկապես կասկածում էի ստրիխնինը, սակայն ջղաձգություններն ամենևին բնորոշ չէին դրան: Դեռևս, անշուշտ, ոչ պաշտոնապես, բայց պատրաստ եմ խաղասեղանին դնելու հեղինակությունս, որ դա տաքսինն է:

- Որքան ժամանակ կպահանջվեր, որ այն գործեր:

- Կախված հանգամանքներից: Մեկ ժամ, երկու ժամ, երեք ժամ: Հանգուցյալը լավ ուտել սիրող մարդու տեսք ուներ: Եթե նա կուշտուկուտ նախաճաշել է, դա կարող էր դանդաղեցնել գործընթացը:

- Նախաճաշ,- մտազբաղորեն ասաց տեսուչ Նիլը:- Այո՛, ըստ երևույթին, նախաճաշն է:

- Նախաճաշ Բորջիաների հետ:- Բժիշկ Բեռնսդորֆը գվարթորեն ծիծաղեց:- Դե ինչ, բարի որս, ընկերս:

- Շնորհակալ եմ, բժիշկ: Նախքան հեռախոսազանգի ավարտը կցանկանայի խոսել սերժանտիս հետ:

Եվ կրկին չխկոցներ, դզզոցներ ու հեռվից հասնող անորոշ շշուկներ հնչեցին: Իսկ հետո խոսափողի միջից ծանր շնչառություն լսվեց, ինչը սերժանտ Հեյի խոսքի պարտադիր նախերգանքն էր:

- Սըր,- շտապողաբար ասաց նա:- Սըր:

- Նիլն է: Հանգուցյալն ասել է որևէ բան, որ ես պետք է իմանամ:

- Ասում էր՝ թեյն էր պատճառը: Թեյը, որը խմել էր գրասենյակում: Բայց բուժաշխատողն ասում է, որ դա չէ...

- Այո՛, գիտեմ: Ուրիշ ոչինչ:



- Ո՛հ, սըր: Բայց մի տարօրինակ բան կա: Նրա հագի կոստյումը... ես ստուգեցի գրպանների պարունակությունը: Սովորական իրեր էին՝ թաշկինակ, բանալիներ, մանրադրամ, դրամապանակ... բայց կար մի բան, որ միանգամայն տարօրինակ էր: Պիջակի աջ գրպանը: Այնտեղ հացահատիկ կար:

- Հացահատիկ:

- Այո՛, սըր:

- Ի՞նչ նկատի ունեք՝ ասելով հացահատիկ: Ուզում եք ասել՝ նախաճաշի համար նախատեսվածը: «Ֆարմըրզ Գլորի» կամ «Ուիթիֆեքս»: Թե՛ եզիպտացորեն կամ գարի...

- Ճիշտ այդպես, սըր: Հատիկներ էին: Տարեկանի էին նման: Բավական շատ էին:

- Հասկանալի է... Տարօրինակ է... Սակայն հնարավոր է՝ նմուշ է եղել... կապված որևէ գործարքի հետ:

- Համամիտ եմ, սըր... բայց մտածեցի, որ ավելի լավ է ասեմ այդ մասին:

- Միանգամայն ճիշտ եք, Հեյ:

Խոսափողը տեղը դնելուց հետո տեսուչ Նիլը մի քանի վայրկյան անթարթ նայում էր իր դիմաց: Նրա՝ կարգուկանոն սիրող միտքն անցնում էր հետաքննության առաջին փուլից երկրորդին՝ թունավորման կասկածից անտարակուսելի փաստին: Պրոֆեսոր Բեռնսդորֆի հաղորդածը գուցեև պաշտոնական չէր, բայց պրոֆեսոր Բեռնսդորֆն այն մարդը չէր, որ կսխալվեր իր պնդումներում: Ռեքս Ֆորթեսքյուին թունավորել էին, և թույնը, թերևս, նրան տվել էին առաջին ախտանշանների բռնկումից մեկից երեք ժամ առաջ: Հետևաբար հնարավոր էր թվում, որ գրասենյակի աշխատակազմը մաքուր էր օրենքի առաջ:

Նիլը ոտքի ելավ և դուրս եկավ ընդունարան: Չհամա-

կարգված քիչումիչ աշխատանք էր արվում, սակայն գրամեքենաները լիարժեք արագությամբ չէին բանում:

- Միսս Գրիֆիթ: Կարո՞ղ եմ ևս մեկ-երկու բառ փոխանակել Ձեզ հետ:

- Իհարկե, միսթր Նիլ: Կարո՞ղ եմ աղջիկներից մի քանիսը դուրս գալ լանչի: Նրանց սովորական ժամը վաղուց անցել է: Թե՛ նախընտրելի է, որ ինչ-որ բան պատվիրենք այստեղ:

- Ո՛չ, կարող եմ գնալ լանչի: Միայն թե հետո պետք է վերադառնան:

- Անշուշտ:

Միսս Գրիֆիթը Նիլի հետևից առանձնասենյակ մտավ: Նա նստեց իրեն բնորոշ զուսպ, գործիմաց ձևով:

Առանց նախաբանի՝ քննիչ Նիլն ասաց.

- Ես տեղեկություն եմ ստացել Սենթ Ջուդս հիվանդանոցից. միսթր Ֆորթեսպյուն մահացել է 12:43-ին:

Միսս Գրիֆիթն ընդունեց լուրն առանց զարմանքի՝ միայն գլուխը թափ տալով:

- Ես կասկածում էի, որ նա լուրջ հիվանդ է,- ասաց նա:

Նիլը նկատեց, որ նա ամենևին վշտացած չէր:

- Կներկայացնե՞ք ինձ նրա տունն ու ընտանիքը հանգամանորեն, խնդրեմ:

- Անշուշտ: Ես արդեն փորձել եմ կապ հաստատել միսս Ֆորթեսպյուի հետ, բայց նա կարծես դուրս է եկել գուժխաղալու: Լանչին նրան տանը չէին սպասում: Ստույգ չէ, թե նա որ դաշտում է խաղում:- Ապա բացատրաբար հավելեց.- Նրանք ապրում են Բեյդոն Հիթում, որը, դե, գիտեք, երեք հայտնի գուժի դաշտերի կենտրոնն է:

Տեսուչ Նիլը գլխով արեց: Բեյդոն Հիթը գրեթե ամբողջությամբ բնակեցված էր քաղաքի մեծահարուստներով: Երկաթուղին գերազանց էր աշխատում. ընդամենը քսան

մղոն էր հեռու Լոնդոնից, և այնտեղից համեմատաբար հեշտ էր հասնել մեքենայով նույնիսկ առավոտյան ու երեկոյան խիտ երթևեկության ժամանակ:

- Բարի եղեք, ասեք հստակ հասցեն և հեռախոսահամարը:

- Բեյդոն Հիթ, 3400: Անունն է Կենու տնակ:

- Ինչ,- հարցը կտրուկ դուրս թռավ տեսուչ Նիլի բերանից, նախքան նա կհասցնեք զսպել իրեն:- Ասացի՞ք՝ Կենու տնակ:

- Այո՛:

Միսս Գրիֆիթը թեթևակիորեն հետաքրքրված տեսք ընդունեց, սակայն տեսուչ Նիլը դարձյալ հավաքեց իրեն:

- Կարո՞ղ եք ավելի մանրամասնորեն ներկայացնել նրա ընտանիքը:

- Միսիս Ֆորթեսքյուն նրա երկրորդ կինն է: Շատ ավելի երիտասարդ է նրանից: Նրանք մոտ երկու տարի առաջ են ամուսնացել: Միսթեր Ֆորթեսքյուի առաջին կինը վաղուց է մահացել: Առաջին ամուսնությունից նա երկու որդի և մեկ դուստր ունի: Դուստրը նրանց տանն է ապրում, ինչպես և ավագ որդին, որը բաժնետեր է ընկերությունում: Ցավոք, այսօր նա գործերով Անգլիայի հյուսիսում է: Ենթադրաբար վաղը կվերադառնա:

- Երբ է մեկնել:

- Երեկ չէ՛ առաջին օրը:

- Փորձե՛լ եք կապ հաստատել նրա հետ:

- Այո՛: Միսթեր Ֆորթեսքյուին հիվանդանոց տեղափոխելուն պես ես զանգեցի Մանչեսթերի «Միդլենդ» հյուրանոց, որտեղ, ինչպես ինձ էր թվում, նա հանգրվանել է, սակայն այսօր վաղ առավոտյան հեռացել էր այնտեղից: Կարծես թե պատրաստվում էր նաև Շեֆիլդ և Լեսթեր ուղևորվելու, բայց վստահ չեմ: Կարող եմ տրամադրել այդ քաղաքների որոշ ընկերությունների անունները, որոնք նա գուցե այցելի:

Անկասկած, բանիմաց կին է, մտածեց տեսուչը, և եթե նա մարդ սպաներ, հավանաբար դա նույնպես գործի գիտակի պես կաներ: Սակայն նա ստիպեց իրեն վերջ տալ այդ մտքերին և կրկին կենտրոնանալ միսթր Ֆորթեսքյուի ընտանեկան ճակատի վրա:

- Ասացի՞ք՝ երկու որդի՞ ունի:

- Այո՛, բայց հոր հետ տարածայնության պատճառով արտերկրում է ապրում:

- Երկու որդի՞ն էլ ամուսնացա՞ծ են:

- Այո՛: Միսթր Փերսիվալը երեք տարի է՝ ամուսնացած է: Նա և իր կինն առանձին բնակարան են զբաղեցնում Կենու տնակում, թեև շուտով Բեյդոն Հիթում իրենց սեփական տուն են տեղափոխվելու:

- Միսիս Փերսիվալ Ֆորթեսքյուի հետ չե՞ք կարողացել կապ հաստատել այսօր առավոտյան զանգելիս:

- Նա մեկ օրով Լոնդոն էր մեկնել: Միսս Գրիֆիթը շարունակեց.- Միսթր Լանսելոթը մեկ տարուց պակաս է, ինչ ամուսնացել է: Լորդ Ֆրեդերիկ Էնսթիսի այրու հետ: Կարծում եմ՝ տեսած կլինեք նրա լուսանկարները: «Թաթլերում»՝ ձիերի հետ, դե, գիտեք: Արգելքներով ձիարշավի սյունակներում:

Միսս Գրիֆիթն ասես փոքր-ինչ շնչակտուր լիներ, իսկ նրա այտերը թեթևակիորեն կարմրել էին: Նիլը, որ հմտորեն նկատում էր մարդկանց տրամադրությունները, հասկացավ, որ այս ամուսնությունը խորապես հուզել էր միսս Գրիֆիթի ներքին սնոբին և ռոմանտիկին: Միսս Գրիֆիթի համար արիստոկրատը մնում էր արիստոկրատ, և այն փաստը, որ հանգուցյալ լորդ Ֆրեդերիկ Էնսթիսը որոշ չափով կասկածելի հեղինակություն ուներ մարզական շրջանում, գրեթե վստահաբար հայտնի չէր նրան: Ֆրեդի Էնսթիսը հրազենով ցրիվ էր տվել սեփական ուղեղն անմիջա-

պես այն բանից առաջ, երբ ձիարշավի կազմակերպիչները սկսել էին հետաքննել նրա ձիերից մեկը վարելու հանգամանքները: Նիլն աղոտ կերպով էր հիշում նրա կնոջը: Նա իռլանդացի պերի դուստր էր և նախկինում ամուսնացած էր եղել մի օդաչուի հետ, որ զոհվել էր Բրիտանիայի ճակատամարտում<sup>1</sup>:

Եվ այժմ կարծես նա ամուսնացել էր Ֆորթեսքյու ընտանիքի սպիտակ ագռավի հետ. Նիլը ենթադրում էր, որ հոր հետ տարածայնությունը, ինչը բժախնդրորեն հիշատակեց միսս Գրիֆիթը, վկայում էր երիտասարդ Լանսելոթ Ֆորթեսքյուի կարիերայի որևէ ամոթալի միջադեպի մասին:

Լանսելոթ Ֆորթեսքյու: Ա՛յ քեզ անուն: Իսկ ի՞նչ էր մյուս որդու անունը... Փերսիվալ: Հետաքրքիր է՝ ինչպիսին է եղել միսիս Ֆորթեսքյուն: Զարմանալի ճաշակ է ունեցել անունների հարցում...

Տեսուչը մոտ քաշեց հեռախոսը և հավաքեց հեռախոսացանցի համարը: Նա խնդրեց միացնել իրեն Բեյդոն Հիթ 3400 հասցեի հետ:

Քիչ անց տղամարդու ծայնն ասաց.

- Բեյդոն Հիթ 3400:

- Ես ուզում եմ խոսել միսիս Ֆորթեսքյուի կամ միսս Ֆորթեսքյուի հետ:

- Ներեցեք, նրանք տանը չեն: Երկուսն էլ:

Ձայնից տեսուչ Նիլն այնպիսի տպավորություն ստացավ, որ այդ մարդը թեթևակիորեն հարբած էր:

- Դուք ծառայապետն եք:

- Ճիշտ այդպես:

- Միսթր Ֆորթեսքյուն լրջորեն հիվանդացել է:

---

<sup>1</sup> Երկրորդ համաշխարհային պատերազմի օդային ճակատամարտերից մեկը, որը տևել է 1940 թվականի հուլիսի 10-ից մինչև հոկտեմբերի 30-ը:

- Գիտեմ: Ձանգեցին ու ասացին: Բայց ես ոչինչ չեմ կարող անել: Միսթր Վալը մեկնել է հյուսիս, իսկ միսիս Ֆորթեսքյուն դուրս է եկել տնից՝ գոլֆ խաղալու: Միսիս Վալը Լոնդոնում է, բայց ընթրիքին կվերադառնա, իսկ միսս Էլեյնն իր աղջիկ սկաուտների հետ է:

- Տանը կամ մեկը, որի հետ կարող եմ խոսել միսթր Ֆորթեսքյուի հիվանդության մասին: Դա կարևոր է:

- Դե... չգիտեմ:- Տղամարդու ձայնը լի էր կասկածանքով:- Այստեղ է միսս Ռեմսբրոմը, բայց նա երբևէ չի խոսում հեռախոսով: Կամ միսս Դավը... կարելի է ասել՝ նա տան կառավարչուհին է:

- Ես կխոսեմ միսս Դավի հետ, խնդրեմ:

- Կփորձեմ գտնել նրան:

Խոսափողի միջից լսվում էին նրա հեռացող ոտնաձայները: Տեսուչ Նիլը մոտեցող ոտնաձայներ չլսեց, բայց մեկ կամ երկու րոպե անց կանացի մի ձայն խոսեց.

- Միսս Դավն է խոսում:

Ձայնը ցածր էր ու հավասարակշռված՝ հստակ առոգանությամբ: Տեսուչ Նիլը բարեհաճ պատկերացում կազմեց միսս Դավի մասին:

- Ցավում եմ, որ ստիպված եմ ասել Ձեզ, միսս Դավ, միսթր Ֆորթեսքյուն քիչ առաջ մահացել է Սենթ Ջուդս հիվանդանոցում: Գրասենյակում նրա ինքնազգացողությունն անսպասելիորեն վատացել էր: Ես ուզում եմ հնարավորինս շուտ կապ հաստատել նրա ազգականների հետ...

- Իհարկե: Ես գաղափար չունեի...- Նրա խոսքն ընդհատվեց: Ձայնի մեջ հուզմունք չկար, բայց նա ցնցված էր: Միսս Դավը շարունակեց.- Այս ամենն անչափ ցավալի է: Իրականում այն մարդը, որի հետ պետք է կապ հաստատեք, միսթր Փերսիվալ Ֆորթեսքյուն է: Նա է այն մեկը, որ կհոգա անհրաժեշտ պատրաստությունների համար: Գու-

ցե կարողանաք կապվել նրա հետ Մանչեսթերի «Միդլենդ» կամ, հավանաբար, Լեսթերի «Գրանդ» հյուրանոցում: Կամ կարող եք փորձել Լեսթերի «Շիրեր Էնդ Բոնդսը»: Վախենամ՝ ես չգիտեմ նրանց հեռախոսահամարը, բայց տեղյակ եմ, որ նա պատրաստվում էր այցելելու այդ ընկերություն, և նրանք գուցե հաղորդեն Ձեզ, թե նա այսօր որտեղ կարող է լինել: Միսիս Ֆորթեսբյուն վստահաբար ընթրիքին տանը կլինի, հնարավոր է թեյի ժամին: Սա մեծ ցնցում կլինի նրա համար: Պետք է որ խիստ հանկարծակի պատահած լինի: Առավոտյան տնից դուրս գալիս միսթր Ֆորթեսբյուն միանգամայն լավ էր զգում իրեն:

- Դուք տեսել եք նրան դուրս գալուց առաջ:

- Օ՛, այո: Ինչն էր պատճառը: Սիրտը:

- Նա սրտի խնդիր է ունեցել:

- Ո՛չ... ո՛չ... չեմ կարծում... բայց քանի որ դա այսքան անսպասելի էր, մտածեցի...- Նա ընդհատեց խոսքը:- Դուք Սենթ Ջուդս հիվանդանոցից եք խոսում: Բժիշկ եք:

- Ո՛չ, միսս Դավ, ես բժիշկ չեմ: Խոսում եմ միսթր Ֆորթեսբյուի քաղաքային գրասենյակից: Ես խուզարկու տեսուչ Նիլն եմ Քրեական հետախուզության բաժանմունքից և այդտեղ հասնելուն պես՝ այցի կգամ ձեզ:

- Խուզարկու տեսուչ: Ուզում եք ասել... Ինչ եք ուզում ասել:

- Հանկարծամահության դեպք է եղել, միսս Դավ, իսկ երբ հանկարծամահություն է լինում, մեզ կանչում են դեպքի վայր, հատկապես եթե հանգուցյալը վաղուց բժշկի չի դիմել, ինչը, ենթադրում եմ, այդպես է:

Ձայնի հարցական երանգը միայն թեթևակիորեն հնչեց, բայց երիտասարդ կինը պատասխանեց.

- Այդպես էլ կա: Փերսիվալը երկու անգամ բժշկի հետ տեսակցություն էր նշանակել նրա համար, բայց նա չէր

ներկայացել: Նա ամենևին շրջահայաց չէր... նրանք բոլորն անհանգստանում էին...

Միսս Դավը խոսքը կիսատ թողեց, ապա վերադարձավ իր նախկին ինքնավստահ վիճակին:

- Եթե նախքան Ձեր ժամանումը միսիս Ֆորթեսքյուն տուն վերադառնա, ինչ կցանկանաք, որ փոխանցեմ նրան: Բացառիկ գործնականություն՝ մտածեց տեսուչ Նիլը:  
Բարձրաձայն նա ասաց.

- Միայն ասացեք նրան, որ հանկարծամահության դեպքում մենք պարտավոր ենք որոշակի հարցաքննություն անել: Ըստ սահմանված կարգի:

Նա կախեց խոսափողը:



### ԳԼՈՒԽ 3

Նիլը մի կողմ հրեց հեռախոսը և շեշտակի հայացք գցեց միսս Գրիֆիթի վրա:

- Այսպիսով՝ վերջին շրջանում նրա համար անհանգստացել են,- ասաց նա:- Ցանկացել են, որ բժիշկը գննի նրան: Դուք դա չսասացիք ինձ:

- Մտքովս չանցավ,- ասաց միսս Գրիֆիթը և հավելեց.- Նա երբևէ իսկապես վատառողջ չի թվացել ինձ...

- Վատառողջ չէր... իսկ ինչպիսին էր:

- Դե՛, պարզապես աննրբանկատ էր: Նման չէր իրեն: Ինչ-որ առումով տարօրինակ էր:

- Անհանգիստ էր ինչ-որ բանի համար:

- Օ՛, ո՛չ: Անհանգիստ չէր: Այդ մենք էինք, որ անհանգիստ էինք...

Տեսուչ Նիլը համբերատարությամբ սպասեց:

- Բարդ է ասելը, իսկապես,- ասաց միսս Գրիֆիթը:- Նա տրամադրության տատանումներ ուներ, հասկանում էք: Երբեմն բավական դյուրագրգիռ էր: Անկեղծ ասած՝ մեկ-երկու անգամ մտածել եմ, որ նա հարբեցողությամբ է զբաղվում... Գլուխ էր գոլում ու խելքից դուրս պատմություններ պատմում, որոնք, վստահաբար, չէին կարող ճիշտ լինել: Որքան այստեղ եմ, նա հիմնականում միշտ փակ է եղել իր գործերի հարցում. ոչինչ չէր բացահայտում, հասկանում էք: Սակայն վերջերս բոլորովին այլ մարդ էր դարձել՝ զրուցասեր, և ակնհայտորեն... դե՛... փողը քամուն էր տալիս: Դա ամենևին նման չէր նրա սովորական պահվածքին: Դեհ, ինչ ասեմ, երբ գործակատար տղան պետք է իր տատիկի հուղարկավորությանը գնար, միսթր Ֆորթեսքյուն կանչել էր նրան, հինգֆունտանոց թղթադրամ տվել և ասել, որ երկրորդ ֆավորիտի վրա խաղադրույք անի, իսկ

հետո քրքջացել: Նա... դէ, նա պարզապես նման չէր իրեն: Ահա ամենը, որ կարող եմ ասել:

- Հավանաբար այնպիսին էր, ինչպես եթե ինչ-որ բան մտքում դրած լինէր:

- Ոչ բառի բուն իմաստով: Ասես ինչ-որ հաճելի... հուզումնալից բան էր կանխավայելում...

- Գուցե բարեհաջող կերպով խոշոր գործարք էր կնքելու:

Միսս Գրիֆիթն էլ ավելի մեծ վստահությամբ համաձայնեց:

- Այո՛... այո՛, դա շատ ավելի մոտ է ասածիս: Ասես առօրյա հարցերն այլևս նշանակություն չունենային: Նա ոգևորված էր: Բացի դրանից՝ տարօրինակ տեսքով մարդիկ էին գործնական այցեր կատարում նրան: Այդ մարդիկ երբևէ չէին եղել այստեղ: Դա սարսափելի անհանգստացնում էր միսթեր Փերսիվալին:

- Ա՛հ, անհանգստացնում էր նրան, այո՛:

- Այո՛: Միսթեր Փերսիվալը միշտ վայելել է հոր չափազանց մեծ վստահությունը, հասկանում եք: Հայրն ապավինում էր նրան: Բայց վերջերս...

- Վերջերս նրանք այնքան էլ հաշտ չէին:

- Դէ, միսթեր Ֆորթեսբյուն անում էր շատ բաներ, որոնք միսթեր Փերսիվալն անխոհեմ էր համարում: Միսթեր Փերսիվալը միշտ խիստ զգուշավոր է և շրջահայաց: Սակայն հանկարծ հայրը դադարեց լսել նրան, ինչը վշտացնում էր միսթեր Փերսիվալին:

- Իսկ այդ ամենի հետ կապված՝ իրական վեճ ունեցել են:

Տեսուչ Նիլը շարունակում էր բազմակողմանիորեն հարցաքննել:

- Վեճի մասին չգիտեմ... իհարկե, հիմա եմ հասկանում, որ նա նույն մարդը չէր... այնպես էր գոռում:

- Գոռացե՛լ է, այո՛: Ի՞նչ է ասել:
- Նա ուղիղ մեքենագրուիհների սենյակ եկավ...
- Այնպես որ դուք բուլորդ լսեցի՞ք:
- Դե... այո՛:

- Եվ վիրավորական անուններ տվեց Փերսիվալին... անպատվե՛ց նրան... հայիոյե՛ց: Ասաց՝ Փերսիվալն ինչ-որ բան է արել:

- Ավելի ճիշտ, որ նա ոչինչ չի արել... ողորմելի ու աննշան գործակատար անվանեց նրան: Ասաց, որ նա զուրկ է լայն մտահորիզոնից, բիզնեսը մեծ մասշտաբով վարելու գաղափարից: Ասաց. «Ես տուն կվերադարձնեմ Լանսին: Նա քո տասնապատիկն արժե... ինչպես նաև բարեհաջող ամուսնացել է: Լանսը կամքի ուժ ունի, նույնիսկ եթե մի անգամ քրեական հետապնդման տակ հայտնվելու ռիսկին է դիմել...»: Օ՛, Աստված իմ, սա չպիտի ասեի:

Միսս Գրիֆիթը, որ հուզմունքից կորցրել էր ինքնավերահսկողությունը, ինչպես տեսուչ Նիլի փորձված ձեռքն ընկած մյուս մարդիկ, հանկարծ շփոթմունքով լցվեց:

- Մի՛ մտահոգվեք,- հանգստացրեց նրան տեսուչ Նիլը:- Ինչ եղել, եղել է:

- Օ՛, այո՛, դա վաղուց էր: Միսթը Լանսը պարզապես երիտասարդ էր ու հախուռն և իսկապես չէր գիտակցում, թե ինչ է անում:

Այս տեսակետը միսթը Նիլը նախկինում նույնպես լսել էր և համամիտ չէր դրան: Բայցևայնպես, նա անցավ նոր հարցերին:

- Մի փոքր մանրամասները ինձ այստեղի աշխատակազմի մասին:

Միսս Գրիֆիթը, շտապելով շեղվել իր անզգուշությունից, դուրս թափեց ընկերության տարատեսակ անձանց մասին տեղեկությունները: Տեսուչ Նիլը շնորհակալություն

հայտնեց նրան, իսկ հետո ասաց, որ կցանկանար ևս մեկ անգամ տեսնել միսս Գրովնորին:

Խուզարկու ոստիկան Ուեյթը սրեց մատիտը: Նա թախիծով նկատեց, որ սա վերնախավային միություն է: Նրա հայացքը գնահատողաբար անցավ հսկայական բազկաթոռների, մեծ գրասեղանի և անուղղակի լուսավորության սարքերի վրայով:

- Այս բոլոր մարդկանց ազգանունները նույնպես վերնախավային են: Գրովնոր. սա կապ կունենա որևէ դուքսի հետ: Իսկ Ֆորթեսքյուն... դա ևս ազնվական ազգանուն է:

Տեսուչ Նիլը ժպտաց:

- Նրա հոր ազգանունը Ֆորթեսքյու չէր: Ֆոնտեսկու էր, իսկ նա ծագումով Կենտրոնական Եվրոպայից էր: Ենթադրաբար, այս մարդը մտածել է, որ Ֆորթեսքյուն ավելի լավ է հնչում:

Խուզարկու ոստիկան Ուեյթն ակնածանքով նայեց վերադասին:

- Նշանակում է՝ ամեն ինչ գիտեք նրա մասին:

- Պարզապես նախքան կանչով ժամանելը որոշ տեղեկություններ եմ հավաքել:

- Նախկինում դատապարտված չի եղել, այնպես չէ՞:

- Օ՛, ո՛չ: Միսթր Ֆորթեսքյուն չափազանց խելացի մարդ էր դրա համար: Նա որոշակի կապեր է ունեցել սև շուկայի հետ և մի քանի առնվազն կասկածելի գործարք կնքել, որոնք, սակայն, միշտ տեղավորվել են օրենքի շրջանակում:

- Հասկանալի է,- ասաց Ուեյթը:- Այնքան էլ լավ մարդ չի եղել:

- Խարդախ,- ասաց Նիլը:- Բայց մենք ոչինչ չունենք նրա դեմ: Հարկային ծառայությունը վաղուց է ընկած նրա հետևից, բայց անզոր է նրա հնարամտության դեմ: Իսկա-

կան ֆինանսական հանճար էր հանգուցյալ միսթր Ֆորթեսյուն:

- Այն մարդկանցից,- ասաց ոստիկան Ուեյթը,- որ կարող էր թշնամիներ ունենալ:

Նրա խոսքը լի էր հույսով:

- Օ՛, այո՛... թշնամիներ, անկասկած: Սակայն նրան տանն են թունավորել, հիշե՛ք դա: Կամ այդպես է թվում: Գիտե՛ք, Ուեյթ, արդեն որոշակի օրինաչափություն է ի հայտ գալիս: Հին ու ծանոթ մի օրինաչափություն: Լավ որդին՝ Փերսիվալը: Վատ որդին՝ Լանսը, որ գրավիչ է կանանց համար: Կինը, որը երիտասարդ է ամուսնուց և որը չի հստակեցրել, թե որ գովֆի դաշտում է խաղալու: Այս ամենը խիստ ծանոթ է: Սակայն կա մի բան, որն ամենաանպատեհ ձևով դուրս է մնում սրանից:

- Ո՞րն է դա,- հարցրեց ոստիկան Ուեյթը հենց այն պահին, երբ դուռը բացվեց, և միսս Գրովնորը՝ իր նախկին կեցվածքով ու շքեղությամբ, մեծամտաբար հարցրեց.

- Ցանկանում էիք տեսնել ինձ:

- Կցանկանայի մի քանի հարց տալ Ձեր գործատուի... թերևս, պետք է ասեմ՝ հանգուցյալ գործատուի մասին:

- Խեղճ մարդ,- անհամոզիչ կերպով ասաց միսս Գրովնորը:

- Ուզում եմ իմանալ՝ վերջերս նրա մեջ որևէ փոփոխություն նկատե՞լ եք:

- Դե՛, այո՛: Ճիշտը որ ասեմ:

- Ինչպիսի՞:

- Իսկապես չգիտեմ... Նա անհեթեթություններ էր դուրս տալիս: Նրա ասածների կեսն իրոք անհավատալի էր: Բացի դրանից՝ հեշտությամբ հունից դուրս էր գալիս, հատկապես միսթր Փերսիվալի հետ: Ինձ հետ՝ ոչ, որովհետև, բնականաբար, ես երբեք չեմ վիճում: Ես պարզա-

պես ասում եմ. «Այո՛, միսթեր Ֆորթեսքյու», ինչ տարօրինակ բան էլ ասի... ավելի ճիշտ՝ ասեր:

- Նա երբևէ... դե՛... սիրահետե՞լ է Ձեզ:

Միսս Գրովնորի պատասխանի մեջ թեթևակի ափսոսանք հնչեց.

- Դե՛, ո՛չ, չեմ կարող նման բան պնդել:

- Մի բան էլ կա, միսս Գրովնոր: Միսթեր Ֆորթեսքյուն գրպանում հացահատիկ պահելու սովորություն ունե՛ր:

Միսս Գրովնորի զարմանքը ցայտուն էր:

- Հացահատիկ: Նրա գրպանո՞ւմ: Նկատի ունե՞ք՝ աղավ-նիներին կերակրելու կամ նման մի բանի համար:

- Հնարավոր է նաև այդ նպատակով:

- Օ՛, վստահ եմ, որ ոչ: Միսթեր Ֆորթեսքյուն: Աղավնի-ների՞ կերակրեր: Ա՛հ, ո՛չ:

- Կարո՞ղ էր այսօր նրա գրպանում գարի... կամ տարեկան լինել... ինչ-որ հատուկ առիթով: Գուցե նմո՞շ: Հացահատիկի հետ կապված գործարք:

- Օ՛, ո՛չ, կեսօրից հետո «Ասիական նավթից» էր մարդկանց սպասում: Եվ «Ատտիկուս» շինարարական ընկերության նախագահին... Ուրիշ ոչ մեկի:

- Ինչ արած...

Նիլը ձեռքի շարժումով ցույց տվեց, որ թեման փակ է, և միսս Գրովնորը՝ ազատ:

- Աքանչելի ոտքեր ունի,- հառաչեց ոստիկան Ուեյթը:- Եվ ընտիր զուգագուլպաներ...

- Ինչ օգուտ ոտքերից,- ասաց տեսուչ Նիլը:- Ինչ ունեի, դրանով էլ մնացի: Տարեկանով լի գրպան... և առանց դրա որևէ բացատրության:

## ԳԼՈՒԽ 4

Իջնելիս Մերի Դավը կանգ առավ և նայեց սանդղահարթակի պատուհանից: Քիչ առաջ ժամանած մեքենայից երկու տղամարդ էր դուրս գալիս: Նրանցից բարձրահասակը մի պահ թիկունքով դեպի տունը կանգնեց՝ շրջակայքը զննելով: Մտորելուց հետո Մերի Դավը որոշեց, թե նրանք ովքեր էին: Տեսուչ Նիլը և, հավանաբար, նրա ենթականերից մեկը:

Նա շրջվեց պատուհանից և նայեց ամբողջ հասակը ցույց տվող հայելու մեջ՝ կախված այն պատից, որտեղից սանդուղքը շրջադարձ էր անում... Այնտեղ տեսավ մի փոքրամարմին զուսպ կերպարանք՝ մաքրամաքուր սպիտակ օձիքով և թևքածալերով բաց դեղնամոխրագույն զգեստով: Նրա մուգ մազերը բաժանված էին մեջտեղից՝ երկու փայլուն ալիքներով դեպի հետ քաշած ու վզի մոտ հանգույց արած... Շրթներկը բաց վարդագույն էր:

Ընդհանուր առմամբ, Մերի Դավը գոհ էր իր տեսքից: Թույլ ժպիտը շուրթերին՝ նա իջավ աստիճաններով:

Տունը զննելիս տեսուչ Նիլը մտածում էր. «Տնակ են անվանել այն, դե, իհարկե: Կենու տնակ: Այս հարուստ մարդկանց ձևականությունները»: Ինքը տեսուչ Նիլն այն դոյակ կանվաներ: Նա գիտեր, թե տնակն ինչ էր: Այդպիսի մեկում էր մեծացել: Այն պահատնակում, որ գտնվում էր Հարթինգթոն Փարքի դարպասի մոտ՝ մեծածավալ, պալադյան ճարտարապետությամբ, քսանինը ննջարաններով տան, որ այժմ անցել է Ազգային հիմնադրամի՝ սեփականությանը: Դրսից

---

1 1895 թվականին հիմնադրված բրիտանական շահույթ չհետապնդող ոչ պետական ընկերություն, որը զբաղվում է Անգլիայի, Ուելսի և Հյուսիսային Իռլանդիայի պատմամշակութային ժառանգության պահպանությամբ:

պահատնակը փոքր էր և հաճելի, բայց խոնավ, անհարմարավետ և տարրական սանիտարական պայմաններից զատ՝ զուրկ ամեն ինչից: Հուրախություն տեսուչ Նիլի ծնողների՝ նրանց համար այս պայմանները բավական պատշաճ և հարմար էին: Վարձակալության վճար չկար, և նրանց միակ անելիքն անհրաժեշտության դեպքում դարպասը բացել-փակելն էր, իսկ տարածքը լիքն էր ճագարներով, երբեմն էլ փասիան կամ նման մի բան էր հայտնվում նրանց կաթսայում: Միսիս Նիլն այդպես էլ չբացահայտեց էլեկտրական արդուկների, դանդաղ այրման վառարանների, չորացնող պահարանների, ծորակի տաք և սառը ջրի ու ընդամենը մատնազարկով լույսը վառելու հաճույքը: Ձմռանը Նիլերը նավթի լամպ էին օգտագործում, իսկ ամռանը, մուֆն ընկնելուն պես՝ պառկում քնելու: Նրանք առողջ և երջանիկ ընտանիք էին, որ ամբողջովին հետ էր մնացել իր ժամանակից:

Այնպես որ, երբ տեսուչ Նիլը լսեց «տնակ» բառը, մանկության հիշողություններն արթնացան նրա մեջ: Այնինչ այս վայրը, որ ցուցադրականորեն Կենու տնակ էին կոչել, ճիշտ այն դոլակներից էր, որ հարուստները կառուցում են իրենց համար, իսկ հետո անվանում «իրենց փոքրիկ անկյունը գյուղում»: Այս մեկն անգամ գյուղում չէր՝ ըստ գյուղի մասին տեսուչ Նիլի պատկերացումների: Տունը ծավալուն, կարմիր աղյուսից կառույց էր, որ ձգվում էր ոչ թե դեպի վեր, այլ երկայնքով՝ չափից շատ կտուրներով և մեծաքանակ վիտրաժային պատուհաններով: Պարտեզները չափազանց արհեստական էին. ամենուրեք վարդաթմբեր էին, պերգոլաներ<sup>1</sup> ու լճակներ և տան անունն արդարացնող խուզած կենու ցանկապատեր:

---

<sup>1</sup> Կանաչապատ գրուցարան կամ սյուներով, ճաղակամարներով միջանցք այգիներում, որը նախատեսված է շոգից պատսպարվելու համար:



Եթե որևէ մեկը ցանկանար տաքսինի հումք ձեռք բերել, այստեղ կենու պակաս չէր լինի նրա համար: Աջ կողմում՝ վարդի պերգուլայի հետևում, իսկական բնության մի պատառիկ էր մնացել՝ իբրև անտառի թագավորության Մովսես. ճյուղերը դիմհարներով ամրացրած վիթխարի կենի էր, որպիսին կապակցվում է եկեղեցական բակերի հետ: Այդ ծառը, մտածեց տեսուչ Նիլը, շատ ավելի վաղուց էր այստեղ, քան կարմիր աղյուսից նորակառույց տները սկսել էին ցանի պես տարածվել գյուղական շրջանում: Այն կանգնած էր եղել այստեղ, նախքան կնախագծվեին գուլֆի դաշտերը, և նորաձև ճարտարապետները կշրջեին իրենց հարուստ հաճախորդների հետ՝ մատնացույց անելով այս կամ այն հողամասի առավելությունները: Եվ քանի որ ծառն արժեքավոր հնություն էր, այն պահպանվել էր ու նոր ձևավորման մասը կազմել՝ ամենայն հավանականությամբ, անուն տալով նոր բաղձալի տանը: Կենու տնակ: Հնարավոր է նաև, որ հենց այս ծառի հատապտուղներն են... տեսուչ Նիլը վերջ տվեց այս անօգուտ մտորումներին: Պետք էր գործով զբաղվել: Նա սեղմեց զանգի կոճակը:

Դուռն անմիջապես բացեց միջին տարիքի մի տղամարդ, որը ճշգրտորեն համապատասխանում էր այն պատկերացմանը, որ հեռախոսազրույցի ժամանակ տեսուչ Նիլը կազմել էր նրա մասին: Բավական շինծու պճնամոլ՝ խոյս տվող աչքերով ու դողդոջուն ձեռքերով:

Տեսուչ Նիլը ներկայացրեց իրեն և ենթակային ու բավականությամբ նկատեց, որ ծառայապետի աչքերում մի պահ տազնապի արտահայտություն հայտնվեց... Նիլն էական նշանակություն չտվեց դրան: Դա կարող էր բոլորովին կապ չունենալ Ռեքս Ֆորթեսբյուրի մահվան հետ: Միանգամայն հնարավոր էր, որ դա զուտ ակամա արձագանք էր:

- Միսիս Ֆորթեսբյուն դեռ չի վերադարձել:

- Ո՛չ, սըր:

- Ոչ էլ միսթըր Փերսիվալ Ֆորթեսքյուն: Կամ միսս Ֆորթեսքյուն:

- Ո՛չ, սըր:

- Այդ դեպքում կցանկանայի տեսնել միսս Դավին, խնդրեմ:

Տղամարդը թեթևակիորեն թեքեց գլուխը:

- Ահա միսս Դավը. իջնում է աստիճաններով:

Մինչ միսս Դավը հանգիստ իջնում էր լայն աստիճաններով, տեսուչ Նիլն իր հայացքի մեջ առավ նրան: Այս անգամ պատկերացումը չէր համընկնում իրականության հետ: Ենթագիտակցաբար «տան կառավարչուհի» արտահայտությունը նրա երևակայության մեջ խոշորամարմին ու տիրական կնոջ էր ուրվագծել՝ սև զգեստում թաքցրած բանալիների գնդոցով:

Տեսուչը լիովին անպատրաստ էր իրեն ընդառաջ իջնող փոքրամարմին վայելույզ կերպարանքին: Նրա զգեստի նուրբ աղավնագույն երանգները, սպիտակ օձիքն ու թևքածալերը, կոկիկ ալիքներով հարդարված մազերը, Մոնա Լիզայի թույլ ժպիտը. այս ամենը, չգիտես ինչու, փոքրինչ անիրական էր թվում, ասես երեսունը չբոլորած այս երիտասարդ կինն ինչ-որ դեր էր խաղում՝ ոչ թե կառավարչուհու, մտածեց նա, այլ Մերի Դավի: Նա ասես նպատակաուղղված լիներ արտաքնապես իր ազգանվանը համապատասխանելուն<sup>1</sup>:

Կառավարչուհին զսպվածությամբ ողջունեց նրան:

- Տեսուչ Նիլ:

- Այո՛: Սա Սերժանտ Հեյն է: Միսթըր Ֆորթեսքյուն, ինչպես հեռախոսով ասացի Ձեզ, մահացել է Սենթ Ջուդս

---

<sup>1</sup> Դավ ազգանունը ծագել է անգլերեն «dove»՝ «աղավնի», բառից և նույն գրելաձևն ունի:

հիվանդանոցում 12:43-ին: Հավանաբար, նրա մահվան պատճառ է հանդիսացել մի բան, որը նա կերել է այսօր նախաճաշին: Հետևաբար երախտապարտ կլինեի, եթե սերժանտ Հեյին ուղեկցեին խոհանոց, որտեղ նա կարող է հարցուփորձ անել մատուցված ուտելիքի վերաբերյալ:

Նրանց հայացքները մի պահ հանդիպեցին. կառավարչուհին մտքերի մեջ ընկավ, այնուհետև գլխով արեց:

- Իհարկե,- ասաց նա և դիմեց անհանգիստ կանգնած ծառայապետին.- Քրամֆ, ուղեկցե՞ք սերժանտ Հեյին և ցույց տվե՞ք այն ամենը, ինչ կամենա:

Երկու տղամարդիկ միասին հեռացան: Մերի Դավն ասաց Նիլին.

- Այստեղ կգա՞ք:

Նա բացեց սենյակներից մեկի դուռը և տեսուչին ներս առաջնորդեց: Դա մի անդեմ սենյակ էր, որն ակնհայտորեն «ծխարան» էր՝ տախտակադրվագներով, ճոխ պատառներով, հսկայական փափուկ բազկաթոռներով և պատերին փակցված սպորտային տպվածքներով:

- Նստե՛ք, խնդրեմ:

Տեսուչ Նիլը նստեց, իսկ Մերի Դավը տեղավորվեց նրա դիմաց: Նա նախընտրեց դեմքով դեպի լույսը նստել, ինչպես նկատեց տեսուչը: Տարօրինակ ընտրություն կնոջ համար: Էլ ավելի տարօրինակ, եթե կինը թաքցնելու բան ունի: Սակայն, հնարավոր է, Մերի Դավը թաքցնելու բան չուներ:

- Ինչպիսի՞ անհաջողություն,- ասաց նա,- որ ընտանիքի անդամներից ոչ մեկը տեղում չէ: Միսիս Ֆորթեսբյուն ամեն պահի կարող է վերադառնալ: Ինչպես և միսիս Վալը: Միսթր Փերսիվալին հեռագրեր եմ ուղարկել տարբեր հասցեներով:

- Շնորհակալ եմ, միսս Դավ:

- Ասում եք՝ միսթր Ֆորթեսքյուի մահվան պատճառը մի բան է, որ գուցե կերել է նախաճաշին: Սննդային թունավորում նկատի ունեք:

- Հնարավոր է:

Տեսուչն ուշադիր հետևում էր նրան: Կառավարչուհին հանգիստ ասաց.

- Հազիվ թե: Այս առավոտ նախաճաշին կաթնաձվածեղ էր ու խոզապուխտ, սուրճ, բոված հաց և մուրաբա: Օժանդակ սեղանին նաև սառը ազդրապուխտ կար, բայց այն երեկ էր կտրվել, և ոչ ոք իրեն վատ չէր զգացել: Որևէ ձկնատեսակ չի մատուցվել, ոչ էլ նրբերշիկ. ոչ մի նման բան:

- Տեսնում եմ՝ Դուք հստակորեն գիտեք, թե ինչ է մատուցվել:

- Բնականաբար: Ես եմ կարգադրում, թե ինչ պատրաստեն: Երեկ ընթրիքին...

- Ո՛չ,- ընդհատեց նրան տեսուչ Նիլը:- Երեկվա ընթրիքն այս հարցում անկարևոր է:

- Ինձ թվում էր՝ սննդային թունավորման նուպան երբեմն ընդհուպ քսանչորս ժամ հետո է դրսևորվում:

- Ոչ այս դեպքում... Կասե՞ք ինձ հստակորեն, թե ինչ է կերել և խմել միսթր Ֆորթեսքյուն այսօր առավոտյան տնից դուրս գալուց առաջ:

- Ժամը ութին վաղ առավոտյան թեյն է մատուցվել նրա սենյակ: Նախաճաշն ինն անց քառորդին էր: Միսթր Ֆորթեսքյուին, ինչպես ասացի Ձեզ, մատուցվել է կաթնաձվածեղ, խոզապուխտ, սուրճ, բոված հաց և մուրաբա:

- Հացահատիկային փաթիլներ:

- Ո՛չ, նա չի սիրում հացահատիկային փաթիլներ:

- Սուրճի շաքարը... կտորով է, թե՛ ավազանման:

- Կտորով: Բայց միսթր Ֆորթեսքյուն սուրճն առանց շաքարի է խմում:

- Նա սովորություն ունի առավոտյան որևէ դեղորայք ընդունելու: Աղեր: Տոնուսավորող միջոց: Մարսողությունը կարգավորող դեղ:

- Ո՛չ, ոչ մի նման բան:

- Դուք նոյնպես նախաճաշել եք նրա հետ:

- Ո՛չ, ես չեմ ուտում ընտանիքի հետ:

- Ովքեր էին ներկա նախաճաշին:

- Միսիս Ֆորթեսքյուն: Միսս Ֆորթեսքյուն: Միսիս Վալ Ֆորթեսքյուն: Միսթր Փերսիվալ Ֆորթեսքյուն, իհարկե, բացակայում էր:

- Իսկ միսիս և միսս Ֆորթեսքյունները նախաճաշին նույն բաներն են կերել:

- Միսիս Ֆորթեսքյուն միայն սուրճ ու նարնջի հյութ է խմում և բոված հաց ուտում, միսիս Վալն ու միսս Ֆորթեսքյուն միշտ հագեցնող նախաճաշ են անում: Կաթնաձվածեղից ու սառը ազդրապուխտից բացի՝ հնարավոր է նաև հացահատիկային փաթիլներ կերած լինեն: Միսիս Վալը թեյ է խմում, ոչ թե սուրճ:

Տեսուչ Նիլը մի պահ մտքերի մեջ ընկավ: Կարծես թե հնարավորությունների շրջանակն առնվազն նեղանում էր: Երեք և միայն երեք մարդ էր նախաճաշել հանգուցյալի հետ՝ նրա կինը, դուստրը և հարսը: Նրանցից յուրաքանչյուրը կարող էր, օգտվելով առիթից, տաքսին ավելացնել նրա սուրճի մեջ: Սուրճի դառնությունը կքողարկեր տաքսինի դառնահամը: Կար, իհարկե, նաև վաղ առավոտյան թեյը, բայց Բեռնսդորֆը տեղեկացրել էր, որ թեյի մեջ համը կզգացվեր: Սակայն, հնարավոր է, առավոտյան առաջին բանը, երբ զգայարանները դեռ արթուն չեն... Տեսուչ Նիլը բարձրացրեց գլուխը՝ տեսնելով, որ Մերի Դավը նայում է իրեն:

- Տոնուսավորող միջոցի և դեղորայքի վերաբերյալ Ձեր հարցերը բավական տարօրինակ են, տեսնո՞ւյ՝ ասաց նա:- Բառացիորեն նշանակում է, որ կան դեղամիջոցն այն չի եղել, կան դրա մեջ ինչ-որ բան են ավելացրել: Անկասկած, սրանցից ոչ մեկը սննդային թունավորում չեն որակի:

Նիլն ակնապիշ նայում էր նրան:

- Ես չասացի, որ միսթր Ֆորթեսքյուն... վստահաբար... մահացել է սննդային թունավորումից: Բայցևայնպես, նա ինչ-որ թունավորումից է մահացել: Ըստ էության... պարզապես թունավորումից:

Կառավարչուհին ցածրաձայն կրկնեց.

- Թունավորումից...

Նա ո՞չ վախեցած էր, ո՞չ շփոթված, լոկ հետաքրքրված էր: Դա նոր բան փորձող մարդու պահվածք էր:

Փաստացի, մի պահ մտորելուց հետո նա հենց դա էլ նկատեց.

- Նախկինում երբևէ թունավորման դեպքի հետ չեմ առնչվել:

- Դա այնքան էլ հաճելի չէ,- սառնությամբ հաղորդեց նրան Նիլը:

- Այո... երևի...

Միսս Դավը մի պահ մտածեց դրա մասին, իսկ հետո վեր նայեց՝ անսպասելիորեն ժպտալով նրան:

- Ես չեմ արել դա,- ասաց նա:- Բայց ենթադրում եմ, որ բոլորը Ձեզ դա կասեն:

- Պատկերացում ունե՞ք, թե ով է իսկապես արել:

Կառավարչուհին թոթվեց ուսերը:

- Անկեղծ ասած՝ նա հակակրեյի մարդ էր: Ով ասես կարող էր անել:

- Բայց մարդկանց չեն թունավորում միայն «հակակրե-

լի» լինելու համար, միսս Դավ: Սովորաբար պետք է բավական հիմնավոր դրդապատճառ լինի:

- Այո՛, իհարկե:

Միսս Դավը մտազբաղ էր:

- Կկամենայի՞ք պատմել ինձ այս տնային տնտեսության մասին:

Կառավարչուհին նրան նայեց: Տեսուչը թեթևակիորեն ցնցվեց՝ տեսնելով նրա աչքերի սառնությունն ու հրճվանքը:

- Դուք հենց պաշտոնական հաղորդագրություն չեք խնդրում ինձնից, այնպես չէ: Ո՛չ, անհնար է. չէ՛ որ Ձեր սերժանտը զբաղված է սպասակազմին իրար խառնելով: Ես չե՛ի ցանկանա ասածս կրկնել դատարանում, բայց, միևնույն է, ավելի լավ է՝ ասեմ դա... ոչ պաշտոնապես: Ինչպե՛ս են ասում՝ ոչ հրապարակավ:

- Դե ուրեմն սկսե՛ք, միսս Դավ: Ես վկա չունեմ, ինչպես արդեն նկատեցիք:

Նա մեջքով հենվեց թիկնակին՝ սլացիկ ոտքը ճոճելով և աչքերը կկոցելով:

- Թույլ տվե՛ք՝ սկսեմ նրանից, որ հավատարմության զգացում չեմ տածում գործատուներիս հանդեպ: Ես աշխատում եմ նրանց համար, որովհետև դրա դիմաց լավ են վարձատրում, իսկ լավ վարձատրությունն իմ պահանջն է:

- Ես փոքր-ինչ զարմացա՝ տեսնելով, որ նմանատիպ աշխատանք եք անում: Մտածում էի՝ Ձեր խելքով ու կրթությամբ...

- Պետք է բանտարկվե՛ի գրասենյակում: Կամ փաստաթղթեր հավաքե՛ի նախարարությունում: Թանկագին տեսուչ Նիլ, սա հեշտությամբ գումար վաստակելու կատարյալ միջոց է: Մարդիկ ցանկացած գումար կվճարեն... ցանկացած... կենցաղային հոգսերից ազատվելու համար:

Անձնակազմ գտնելն ու վարձելը միանգամայն հոգնեցուցիչ գործ է: Գործակալություններին գրելը, հայտարարություններ տեղադրելը, մարդկանց հետ զրուցելը, հարցազրույցներին նախապատրաստվելը և վերջապես ամբողջ տնտեսությունն անխափան կերպով վարելը որոշակի ունակություն են պահանջում, որն այս մարդկանց մեծ մասը չունի:

- Իսկ եթե Ձեր հավաքած անձնակազմը լքի՞ Ձեզ: Լսել եմ նման բաների մասին:

Մերին ժպտաց:

- Անհրաժեշտության դեպքում ես կարող եմ անկողինները հավաքել, սենյակների փոշին սրբել, կերակուր պատրաստել և մատուցել. որևէ մեկը տարբերությունը չի նկատի: Իհարկե, ես այս փաստը չեմ ազդարարում: Դա կարող է մտքերի տեղիք տալ: Բայցևայնպես, ցանկացած փոքրիկ թերացում, վստահաբար, կարող եմ շտկել: Թեև թերացումները հաճախակի չեն: Ես աշխատում եմ միայն մեծահարուստների համար, որոնք ինչքան հարկավոր է կվճարեն հարմարավետության դիմաց: Ես առավելագույն չափով եմ վարձատրում անձնակազմին, ուստիև ստանում եմ լավագույններին:

- Ինչպիսին ծառայապետն է:

Մերի Դավը զարմացած, գնահատող հայացք գցեց նրա վրա:

- Ամուսնական զույգի մշտական խնդիրն է: Քրամփը մնում է միսիս Քրամփի պատճառով, որ երբևէ հանդիպածս լավագույն խոհարարներից մեկն է: Նա գանձ է, և նրան պահելու համար շատ բանի հետ կարելի է հաշտվել: Մեր միսթր Ֆորթեսքյուն սիրում է ուտել... ավելի ճիշտ՝ սիրում էր: Այս տանը ոչ մեկը բարոյական սկզբունքներ չունի, իսկ փողը լիովի է: Կարագ, ձու, սերուցք. միսիս Քրամ-



փը կարող է պատվիրել, ինչ կամենա: Ինչ վերաբերում է Քրամփին, նա պարզապես բավարարում է պահանջները: Նրա արձաթեղենը կարգին վիճակում է, սեղանին մատուցումն էլ վատ չէ: Գինու մառանի բանալին ինձ մոտ եմ պահում, աչքս վիսկիի ու ջինի վրա է, և հետևում եմ, թե ինչպես է հագուստը կարգի բերում:

Տեսուչ Նիլը բարձրացրեց հոնքերը:

- Աքանչելի միսս Քրիչթոնը<sup>1</sup>:

- Կարծում եմ՝ պետք է կարողանաս ամեն բան ինքդ անել: Այդ ժամանակ... դա անելու կարիքը երբևէ չես ունենա: Բայց Դուք իմ կարծիքն էիք ուզում իմանալ ընտանիքի մասին:

- Եթե դեմ չեք:

- Նրանք բոլորն իսկապես ավելի քան հակակրեյի են: Հանգուցյալ միսթր Ֆորթեսքյուն այն խարդախ մարդկանցից էր, որ միշտ ապահով են գործում: Նա հաճախ էր պարծենում իր տարատեսակ խելացի գործարքներով: Կոպիտ էր ու տիրական և իսկական բռնակալ: Միսիս Ֆորթեսքյուն՝ Ադելը, նրա երկրորդ կինն է և երեսուն տարով երիտասարդ է նրանից: Բրայթոնում էր հանդիպել նրան: Նա մատնահարդար էր՝ աչքը մեծ փողի վրա: Չափազանց գեղեցկատես է, իսկապես սեքսուալ. հասկանում եք, թե ինչ նկատի ունեմ:

Տեսուչ Նիլը ցնցված էր, բայց կարողացավ ցույց չտալ դա: Նրա կարծիքով՝ Մերի Դավի պես աղջիկը չպետք է նման բաներ ասեր:

Երիտասարդ լեդին անվրդով կերպով շարունակեց.

- Ադելը, բնականաբար, փողի համար է ամուսնացել

---

<sup>1</sup> «Աքանչելի Քրիչթոնը». Ջեյմս Մեթյու Բարրիի՝ 1902 թվականին գրված կատակերգական պիեսը, որի հիման վրա 1957-ին նկարահանվել է նույնանուն ֆիլմ:

նրա հետ, և նրա որդին՝ Փերսիվալը, ու դուստրը՝ Էլեյնը, պարզապես կատաղած էին: Որքան կարող են, անտանելի են նրա հանդեպ, բայց նա խոհեմաբար ուշադրություն չի դարձնում դրան կամ չի էլ նկատում: Գիտի, որ ծերուկն իր ամեն մի ուզածը կանի: Աստված իմ, կրկին սխալ ժամանակածն: Դեռ այնքան էլ չեմ գիտակցում, որ նա մահացած է...

- Պատմե՛ք որդու մասին:

- Թանկագին Փերսիվալի: Վալի, ինչպես կինն է անվանում նրան: Նա քճնախոս կեղծավոր է: Խստաբարո է, խորամանկ ու նենգ: Սարսափում է հորից և թույլ է տալիս, որ ծաղրի իրեն, թեև բավականաչափ խելացի է իր ուզածին հասնելու համար: Ի տարբերություն հոր՝ նա ժլատ է փողի հարցում: Տնտեսումը նրա տարերքներից մեկն է: Ահա թե ինչու էր այդքան ձգձգում իր համար տուն փնտրելը: Այստեղ սենյակաշարք ունենալը հոգուտ նրա գրպանի էր:

- Իսկ նրա կինը:

- Ջենիֆերն արտաքուստ հեզ է ու հիմարավուն: Թեև այնքան էլ համոզված չեմ դրանում: Նախքան ամուսնությունը բուժքույր է եղել հիվանդանոցում. խնամել է Փերսիվալին, երբ նա թոքաբորբ ուներ, ինչը հասել է ռոմանտիկ հանգուցալուծման: Ծերուկը հիասթափված էր այդ ամուսնությունից: Նա սնոր էր և ուզում էր, որ Փերսիվալը, ինչպես ինքն էր ասում, «հաջող ամուսնություն» ունենա: Նա քամահրում էր խեղճ միսիս Վալին և անարգանքի արժանացնում նրան: Կարծում եմ՝ միսիս Վալն ամենևին չի սիրում... չէր սիրում նրան: Նրա հիմնական հետաքրքրությունն են գնումներն ու կինոն, իսկ գլխավոր հոգան այն է, որ ամուսինը քիչ փող է տալիս իրեն:

- Դստեր մասին ի՞նչ կասեք:

- Էլեյնի: Իսկապես ցավում եմ Էլեյնի համար: Նա վատ

մարդ չէ: Այն հիանալի դպրոցական աղջիկներից է, որ այդպես էլ չեն մեծանում: Բավականաչափ լավ է խաղեր խաղում, ղեկավարում է աղջիկ սկաուտների մանկապատանեկան խմբերի և զբաղվում այլ նմանատիպ բաներով: Ոչ վաղ անցյալում նա ինչ-որ սիրավեպ էր ունեցել մի բողոքավոր ուսուցչի հետ, բայց հայրը պարզել էր, որ այդ երիտասարդը կոմունիստական հայացքներ ունի, և հուժկու հարվածով վերջ էր տվել նրանց հարաբերություններին:

- Նրա համարձակությունը չէր հերիքել՝ հորը դեմ գնալու:

- Հերիքել էր: Այդ երիտասարդն էր հետ կանգնել: Ենթադրում եմ՝ դարձյալ փողի հարց էր: Էլեյնն առանձնապես հմայիչ չէ, խեղճ աղջիկ:

- Իսկ մյուս որդին:

- Երբեք չեմ տեսել նրան: Բոլորն ասում են՝ նա հմայիչ է և կատարյալ սրիկա: Անցյալում ինչ-որ մանր խնդիր է ունեցել՝ կապված չէկ կեղծելու հետ: Արևելյան Աֆրիկայում է ապրում:

- Ինչպես նաև կապերը խզել է հոր հետ:

- Այո, միսթր Ֆորթեսքյուն չէր կարող ժառանգությունից զրկել նրան, որովհետև արդեն իսկ ընկերության կրտսեր գործընկեր էր դարձրել, բայց տարիներ շարունակ չի շփվել նրա հետ, և փաստացի, եթե երբևէ հիշատակվում էր Լանսի անունը, նա ասում էր. «Մի՛ խոսեք ինձ հետ այդ սրիկայի մասին: Նա իմ որդին չէ»: Այնուհանդերձ...

- Այո, միսս Դավ:

Մերին անշտապ ասաց.

- Այնուհանդերձ չէի զարմանա, եթե ծերուկ Ֆորթեսքյուն ծրագրած լիներ այստեղ վերադարձնել նրան:

- Ինչն է Ձեզ ստիպում այդպես մտածել:

- Պատճառն այն է, որ մեկ ամիս առաջ ծերուկ Ֆոր-

թեսքյուն սարսափելի վեճ ունեցալ Փերսիվալի հետ... նա պարզել էր, որ Փերսիվալն ինչ-որ բան է անում իր թիկունքում... չգիտեմ, թե ինչ... նա ցասման մեջ էր: Փերսիվալը հանկարծ դադարեց սիրելի դրդին լինել: Բացի դրանից՝ վերջերս նա բավականին փոխվել է:

- Միսթր Ֆորթեսքյուն փոխվել էր:

- Ո՛չ: Փերսիվալին նկատի ունեմ: Մահու չափ տագնապած տեսքով է շրջում:

- Իսկ սպասավորների մասին ի՞նչ կասեք: Քրամփնե-րին արդեն նկարագրեցիք: Էլ ո՞վ կա այստեղ:

- Գլեդիս Մարտինն աղախինն է կամ մատուցողուհին, ինչպես մեր օրերում նրանք սիրում են կոչել իրենց: Նա մաքրում է ներքևի հարկի սենյակները, սեղան գցում, հավաքում սպասքը և օգնում Քրամփին սպասարկել սեղանը: Բավական վայելույ աղջիկ է, բայց գրեթե ծալպակաս: Քթի տակ խոսողներից:

Նիլը գլխով արեց:

- Սպասուհին էլնն Կուրտիսն է: Հասակն առած է, խիստ դյուրագրգիռ ու բարկացկոտ, բայց լավ է ծառայում և առաջնակարգ սպասուհի է: Մյուսները դրսից են՝ կանայք, որ գալիս են որպես հավելյալ օգնող ձեռքեր:

- Միայն այսքանն են տանն ապրում:

- Նաև ծեր միսս Ռեմսթրոմը:

- Ո՞վ է նա:

- Միսթր Ֆորթեսքյուի առաջին կնոջ քույրը: Կինը զգալիորեն մեծ էր միսթր Ֆորթեսքյուից, իսկ քույրն իր հերթին՝ նրա կնոջից... հետևաբար նրա յոթանասունը վաղուց է լրացել: Նա իր առանձին սենյակն ունի երկրորդ հարկում, ինքն է պատրաստում իր համար և անում մնացյալ բանե-րը. միայն մի կին է մտնում նրա մոտ՝ մաքրություն անելու: Բավական էքսցենտրիկ կին է և երբեք չի սիրել փեսային,

բայց քրոջ կենդանության օրոք տեղափոխվել և նրա մահվանից հետո շարունակում է ապրել այստեղ: Միսթր Ֆորթեսքյուին նա երբևէ առանձնապես չի հուզել: Թեև մորաքույր էֆին իսկական դեմք է:

- Եվ վերջ:

- Վերջ:

- Այսպիսով՝ հասանք Ձեզ, միսս Դավ:

- Ձեզ մանրամասներ են պետք: Ես որք եմ: Քարտուղարական դասընթացի եմ հաճախել Սուրբ Ալֆրեդի քարտուղարների դպրոցում: Ես անցա սղագրող-մեքենագրուհու աշխատանքի, թողեցի այն և մեկ ուրիշ տեղում աշխատեցի, ապա եկա այն եզրակացության, որ սխալ ուղղությամբ եմ գնում և սկսեցի այժմյան գործունեությունը: Երեք գործատուի եմ փոխել: Մոտ մեկ տարի կամ տասնութ ամիս հետո ես հոգնում եմ տվյալ վայրից ու շարժվում առաջ: Մեկ տարուց քիչ ավելի է, ինչ Կենու տնակում եմ: Ես կմեքենագրեմ գործատուներիս անուններն ու հասցեները և հանձնարարականներիս կրկնօրինակների հետ կտամ սերժանտ... Հեյին, այո: Դա բավարար կլինի՞:

- Լիովին, միսս Դավ:

Նիլը մի պահ լռեց՝ բավականությամբ երևակայելով, թե ինչպես է միսս Դավը ծածուկ թունավորում միսթր Ֆորթեսքյուի նախաճաշը: Նրա միտքն էլ ավելի հեռուն գնաց, և նա տեսավ՝ ինչպես է կառավարչուհին մեթոդիկ ձևով կենու հատապտուղները հավաքում զամբյուղակի մեջ: Հոգոց արձակելով՝ նա վերադարձավ իրականություն:

- Հիմա կցանկանայի տեսնել աղջկան... ըըը... Գլեդիսին... իսկ հետո սպասուհուն՝ Էլենին:- Ոտքի կանգնելով՝ նա հավելեց.- Ի դեպ, միսս Դավ, կարո՞ղ եք հուշել ինձ՝ միսթր Ֆորթեսքյուի ինչի՞ն էր պետք գրպանում անփութորեն հացահատիկ պահել:

- Հացահատիկ:

Մերի Դավն ապշահար նայում էր նրան, ինչպես թվում էր, անկեղծ զարմանքով:

- Այո, հացահատիկ: Դա Ձեզ ինչ-որ բան ասում է, միսս Դավ:

- Բոլորովին:

- Ո՞վ էր հետևում նրա հագուստին:

- Քրամփը:

- Հասկանալի է: Միսս Ֆորթեսբյուն և միսս Ֆորթեսբյուն նույն ննջասենյակն են զբաղեցնում:

- Այո, նա, իհարկե, հանդերձասենյակ և լոգարան ուներ, ինչպես և կինը...- Մերին հայացք գցեց ձեռքի ժամացույցին: - Իսկապես կարծում եմ, որ նա ուր որ է կվերադառնա:

Տեսուչը, որ արդեն ոտքի վրա էր, սիրալիր ձայնով հարցրեց.

- Գիտե՞ք՝ մի բան կա, միսս Դավ, ինչը ինձ խիստ տառորինակ է թվում. նույնիսկ եթե անմիջական հարևանությամբ երեք գուլֆի դաշտ կա, միթե մինչև հիմա հնարավոր չէր դրանցից մեկում գտնել միսս Ֆորթեսբյունին:

- Այնքան էլ տառորինակ չէր լինի, տեսու՛չ, եթե պարզվեր, որ նա առհասարակ գուլֆ չի խաղում:

Մերիի ձայնը չոր էր: Տեսուչը կտրուկ կերպով ասաց.

- Ինձ հստակորեն տեղեկացրել են, որ նա գուլֆ է խաղում:

- Նա վերցրել է իր գուլֆի մականներն ու հայտարարել խաղալու մտադրության մասին: Բնականաբար, իր մեքենայով է այնտեղ գնացել:

Տեսուչը հայացքը հառել էր նրան՝ ընկալելով ենթատեքստը:

- Ո՞ւմ հետ է նա խաղում: Գիտե՞ք:

- Կարծում եմ՝ դա կարող է լինել միսթր Վիվիան Դյուրուան:

Նիլը բավարարվեց՝ ասելով. «Հասկանալի է»:

- Գլեդիսին Ձեզ մոտ կուղարկեմ: Պետք է որ մահու չափ վախեցած լինի: - Դռան մոտ Մերին մի պահ կանգ առավ, ապա ասաց. - Խորհուրդ չէի տա չափից շատ առաջնորդվել իմ ասածներով: Ես չարամիտ արարած եմ:

Նա դուրս եկավ: Տեսուչ Նիլը նայեց փակ դռանն ու մտքերի մեջ ընկավ: Չարությունից էր դրդված, թե ոչ, այն, ինչ նա պատմեց, չէր կարող մտածելու տեղիք չտալ: Եթե միսթր Ֆորթեսքյուին միտումնավոր կերպով թունավորել էին, ինչը կարծես գրեթե վստահաբար այդպես էր, ապա Կենու տնակի իրադրությունն ավելի քան խոստումնալից էր թվում: Շարժառիթները գետնին թափված էին:

## ԳԼՈՒԽ 5

Աղջիկը, որ սենյակ մտավ ակնհայտ դժկամությամբ, անհրապույր էր ու վախեցած. նա հաջողեցրել էր թեթևակիորեն անխնամ տեսք ունենալ՝ չնայած բարձր հասակին և մուգ կարմիր նրբագեղ համազգեստին:

Թախանձալից հայացքը տեսուչի վրա սևեռելով՝ նա անմիջապես ասաց.

- Ես ոչինչ չեմ արել: Իսկապես: Ոչինչ չգիտեմ դրա մասին:

- Ամեն բան կարգին է,- ի սրտե ասաց Նիլը:

Նրա ծայնը փոքր-ինչ փոխվել էր: Այն ավելի ուրախ ու զգալիորեն ավելի առօրեական հնչեցնող ուներ: Նա ուզում էր, որ այս վախկոտ նապաստակը՝ Գլեդիսը, հանգիստ զգար իրեն:

- Նստե՛ք այստեղ,- շարունակեց նա:- Ես ընդամենն ուզում եմ իմանալ այս առավոտվա նախաճաշի մասին:

- Ես ընդհանրապես ոչինչ չեմ արել:

- Դե՛, Դուք եք նախաճաշի սեղանը գցել, այնպես չէ՛:

- Այո՛, արել եմ դա:

Նույնիսկ սա դժկամությամբ ընդունեց: Նրա տեսքը թե՛ մեղավոր էր, թե՛ սարսափահար, բայց տեսուչ Նիլը սովոր էր նման տեսքով վկաներին: Նա շարունակեց զվարթորեն՝ փորձելով անել այնպես, որ աղջիկն ավելի անկաշկանդ զգար իրեն, հարցեր տվեց. ո՞վ էր առաջինը իջել, իսկ ո՞վ էր հաջորդը:

Էլեյն Ֆորթեսքյուն առաջինն էր իջել նախաճաշելու: Նա ներս էր մտել հենց այն պահին, երբ Քրամփը սրճամանն էր բերում: Միսիս Ֆորթեսքյուն հաջորդն էր իջել, այնուհետև՝ միսիս Վալը, և ամենավերջում՝ տանտերը: Նրանք ինքնասպասարկվել էին: Թեյը, սուրճը և տաք ուտեստնե-



րը դրված էին էլեկտրական սալիկների վրա՝ օժանդակ սեղանին:

Տեսուչը նրանից գրեթե որևէ կարևոր տեղեկություն չստացավ, որի մասին արդեն չիմանար: Մնունդն ու խմիչքը համապատասխանում էին Մերի Դավի նկարագրածին: Տանտերը, միսիս Ֆորթեսքյուն և միսս էլեյնը սուրճ էին խմել, իսկ միսիս Վալը՝ թեյ: Ամեն ինչ ավելի քան սովորականի պես էր եղել:

Նիլը հարցեր տվեց նրան իր մասին, և սրանց նա ավելի պատրաստակամորեն պատասխանեց: Սկզբում աշխատել էր մասնավոր ոլորտում, իսկ հետո տարբեր սրճարաններում: Այնուհետև մտածել էր, որ կցանկանար կրկին մասնավոր ծառայության անցնել և սեպտեմբերին Կենու տնակ էր եկել: Երկու ամիս էր՝ այստեղ էր:

- Եվ սա Ձեզ դ՞րս է գալիս:

- Դե, կարծում եմ՝ ամեն ինչ կարգին է: Ապա հավելեց.- Ուրքերդ այնքան էլ ծանրաբեռնված չեն... բայց ազատություն էլ շատ չես ստանում...

- Պատմե՞ք ինձ միսթր Ֆորթեսքյուի հագուստի... նրա կոստյումների մասին: Ո՞վ էր հետևում դրանց: Խոզանակում և նման բաներ անում:

Գլեդիսը փոքր-ինչ նեղսրտած տեսք ընդունեց:

- Դա միսթր Քրամփի պարտականությունն էր: Սակայն մեկընդմեջ ինձ էր ստիպում անել դա:

- Ո՞վ է խոզանակել ու արդուկել այն կոստյումը, որ միսթր Ֆորթեսքյուն այսօր էր հագել:

- Չեմ հիշում, թե որ մեկն էր նրա հագին: Այնքան շատ ունի:

- Նրա կոստյումներից մեկի գրպանում երբևէ հացահատիկ գտել եք:

- Հացահատիկ:

Աղջիկը տարակուսած տեսք ուներ:

- Տարեկան՝ ավելի ստույգ:

- Տարեկանն: Հացը, այո՛: Սև հացի նման մի բան է... միշտ մտածել եմ, որ զզվելի համ ունի:

- Դա տարեկանից պատրաստված հացն է: Տարեկանը բուն հացահատիկն է: Ձեր տանտիրոջ պիջակի գրպանում դրա որոշ քանակություն է հայտնաբերվել:

- Նրա պիջակի գրպանում:

- Այո՛: Դուք գիտե՞ք՝ դրանք ինչպես են հայտնվել այնտեղ:

- Ձեմ կարող ասել, վստահաբար: Երբևէ չեմ տեսել դրանցից:

Տեսուչն այլևս ոչինչ չկարողացավ կորզել նրանից: Ընդամենը մի պահ նա կասկածեց՝ արդյոք աղջիկը գիտե՞ր ավելին, քան ցանկանում էր խոստովանել: Նա, անկասկած, շփոթված էր ու պաշտպանողական կեցվածքով, բայց, ընդհանուր առմամբ, տեսուչը վերագրեց դա ոստիկանության հանդեպ բնական վախին:

Երբ նա վերջապես բաց թողեց նրան, աղջիկը հարցրեց.

- Դա իսկապես ճիշտ է, այո՛: Նա մահացել է:

- Այո՛, մահացել է:

- Խիստ հանկարծակի, այնպես չէ՞: Գրասենյակից զանգելիս ասել են, որ նա ինչ-որ նոպա է ունեցել:

- Այո՛... նոպա է եղել:

- Ծանոթուհիներիցս մեկը նոպաներ էր ունենում, - ասաց Գլեդիսը: - Ցանկացած պահի վրա էին հասնում: Միշտ վախենում էի:

Մի պահ այդ հիշողությունն ասես օգնեց նրան հաղթահարել իր իսկ վախերը:

Տեսուչ Նիլն ուղղվեց դեպի խոհանոց:

Նրան անհապաղ ու տագնապալից ընդունելության արժանացրին: Մարմնեղ մի կին՝ կարմրադեմ ու գրտնակով զինված, սպառնալից կերպով քայլեց նրան ընդառաջ:

- Ոստիկանությունը, պահ,- ասաց նա:- Եկել են այստեղ ու ինչէր են խոսում: Ասեմ՝ իմանաք, նման բան չկա: Այն ամենը, ինչ ես ուղարկել եմ ճաշասենյակ, եղել է ճիշտ այնպես, ինչպես պիտի լիներ: Եկել են ու ասում են, թե թունավորել եմ տանտիրոջը: Ես ձեզ դատի կտամ՝ ոստիկան լինեք, թե ոչ: Այս տանը երբևէ փչացած ուտեստ չի մատուցվել:

Որոշ ժամանակ անցավ, մինչև տեսուչ Նիլին հաջողվեց հանդարտեցնել իր գործի զայրացած վարպետին: Սերժանտ Հեյը քմծիծաղով նայեց մթերանոցից, և տեսուչ Նիլը եզրակացրեց, որ նա արդեն դիմակայել էր միսիս Քրամփի ցասումնալի գրոհին:

Տեսարանն ավարտվեց հեռախոսազանգով:

Նիլը դուրս եկավ նախասրահ՝ տեսնելով, որ Մերի Դավը պատասխանել է զանգին: Նա ինչ-որ բան էր գրի առնում նոթատետրում: Գլուխը թեքելով՝ նա ուսի վրայով ասաց.

- Հեռագիր է:

Հեռախոսազանգն ավարտվեց, նա կախեց խոսափողն ու տեսուչին փոխանցեց այն նոթատետրը, որտեղ գրում էր: Հաղորդագրությունը Փարիզից էր, և դրանում ասվում էր.

*Ֆորթեսբյու, Կենու տնակ, Բեյդոն Հիթ, Սարի: Ցավոք, նամակդ ուշ էր հասել: Վաղը մոտավորապես թեյի ժամին քեզ հետ կլինեմ: Հույս ունեմ՝ ընթրիքին հորթի տապակա կլինի: Լանս:*

Տեսուչ Նիլը բարձրացրեց հոնքերը:

- Նշանակում է՝ անառակ որդուն տուն էին կանչել,- ասաց նա:

## ԳԼՈՒԽ 6

Այն պահին, երբ Ռեքս Ֆորթեսքյուն վերջին անգամ թեյ էր խմում, Լանս Ֆորթեսքյուն ու նրա կինը, Ելիսեյան դաշտերի ծառերի տակ նստած, նայում էին անցորդներին:

- Այնքան հեշտ է ասել՝ «նկարագրիր նրան», Պատ: Նկարագրությունների հարցում ես բանի պետք չեմ: Ինչ ես ուզում իմանալ: Շեֆը ծեր սրիկա է, դե, գիտես: Բայց դա քեզ չի անհանգստացնի, այնպես չէ: Պետք է որ քիչ թե շատ սովորած լինես դրան:

- Ա՛հ, այո՛,- ասաց Պատը:- Այո՛, ինչպես դու ես ասում, ընտելացել եմ դրան:

Նա փորձում էր այնպես անել, որ ծայնի մեջ որոշակի հուսահատություն չհնչեր: Թերևս, մտածում էր նա, ամբողջ աշխարհն է սրիկաներով լցված. կամ գուցե միայն իր բախտը չէր բերել:

Բարձրահասակ, երկար ոտքերով աղջիկը գեղեցիկ չէր, բայց կենսական ուժն ու բարեսրտությունը հմայք էին տալիս նրան: Լավ շարժումն ուներ և սքանչելիորեն փայլուն շագանակագույն մազեր: Հնարավոր է՝ ձիերի հետ երկարատև շփումների հետևանքով ազնվացեղ զամբիկի տեսք էր ձեռք բերել:

Ձիարշավների աշխարհի խարդախությունները հայտնի էին նրան. այժմ կարծես պետք է բախվեր ֆինանսական աշխարհի սրիկայությանը: Չնայած այդ ամենին՝ նրա սկեսրայրը, որին դեռ չէր հանդիպել, օրենքի տեսանկյունից ազնվության հիմնասյուն էր: Այս բոլոր մարդիկ, որ գլուխ էին գովում իրենց «խելացի գործերով», նույնն էին. տեսականորեն նրանց միշտ հաջողվում էր մնալ օրենքի շրջանակում: Բայցևայնպես, նրան թվում էր, որ իր Լանսը, որին սիրում էր, և որը, պետք էր խոստովանել, անցյալում

դուրս էր եկել այդ օղապատից, ուներ ազնվություն, ինչից այս հաջողակ խարդախների մեծ մասը զուրկ էր:

- Նկատի չունեն,- ասաց Լանսը,- որ նա դրամաշորթ է, ոչ մի նման բան: Սակայն նա գիտի՝ ինչպես խորամանկությամբ հաջողի:

- Երբեմն,- ասաց Պատը,- ինձ թվում է՝ ատում եմ այն մարդկանց, որոնք խորամանկությամբ են հաջողության հասնում:- Ապա հավելեց.- Դու սիրում ես նրան:- Սա հարց չէր, այլ պնդում:

Լանսը մի պահ մտորեց դրա շուրջ, իսկ հետո ծայնի զարմացած հնչերանգով ասաց.

- Գիտե՞ս, սիրելի՛ս, կարծում եմ՝ այդպես է:

Պատը ծիծաղեց: Լանսը թեքեց գլուխը՝ նրան նայելու: Նա կկոցեց աչքերը: Ինչ անուշիկ էր նա: Սիրում էր նրան: Այս ամենն արժեր հանուն նրա:

- Ինչ-որ առումով,- ասաց Լանսը,- այնտեղ վերադառնալը սոսկալի է, հասկանում ես: Քաղաքի կյանքը: 5:18-ին տանը լինելը: Այդպիսի կյանքն իմը չէ: Ես ինձ անհամեմատ հարմարավետ եմ զգում կյանքի անդունդում հայտնվածների մեջ: Սակայն երևի մարդ երբեմն պետք է խարիսխ գցի: Իսկ քեզ հետ՝ ձեռքս բռնած, այդ գործընթացը կարող է նույնիսկ միանգամայն հաճելի լինել: Եվ քանի որ հայրիկը փոխել է միտքը, պետք է օգուտ քաղել դրանից: Պետք է ասել, որ զարմացա, երբ նրա նամակը ստացա... Ով՞ ով, բայց որ Փերսիվալը կփչացներ իր հեղինակությունը: Փերսիվալը՝ փոքրիկ լավ տղան: Ասեմ քեզ՝ Փերսին միշտ է խորամանկ եղել: Այո՛, նա միշտ էր խորամանկ:

- Չեմ կարծում, որ քո եղբայր Փերսիվալը դուր կգա ինձ,- ասաց Պատրիսիա Ֆորթեսբյուն:

- Թող որ ասածս քեզ նրա դեմ չտրամադրի: Փերսին և ես երբեք հաշտ չենք եղել. ահա և վերջ: Ես իմ գրպանի

փողը քամուն էի տալիս, նա խնայում էր իրենը: Ես ունեի վատահամբավ, բայց հետաքրքիր ընկերներ, Փերսիվալը, այսպես կոչված, «արժեքավոր շփումներ» էր հաստատում: Նա և ես հակադիր բևեռներ էինք: Ես միշտ նրան անճարակ եմ համարել, իսկ նա... գիտես, երբեմն ինձ թվում էր, որ նա նույնիսկ ատում էր ինձ: Չգիտեմ, թե ինչու...

- Ինձ թվում է՝ հասկանում եմ:

- Իսկապես, սիրելիս: Դու այնքան խելացի ես: Գիտես՝ միշտ կասկածել եմ... անհնարին բան եմ ասելու, բայց...

- Դե՛: Ասա՛:

- Հետաքրքիր է՝ արդյոք Փերսիվալն էր կանգնած չեկի հետ կապված այդ գործի հետևում (դե, գիտես, երբ ծերուկը դուրս շարտեց ինձ) և չէր գժվում, որ ես արդեն մասնաբաժին ունեի ընկերությունում, ու չէր կարող ժառանգությունից զրկել ինձ: Որովհետև տարօրինակն այն է, որ ես չէի կեղծել այդ չեկը, թեև, իհարկե, ոչ ոք չէր հավատա ինձ այն բանից հետո, որ ես փող էի թոցրել դրամարկդից ու խաղադրույք կատարել ձիու վրա: Ես լիովին վատահ էի, որ տեղը կղնեմ այդ գումարը, և այսպես թե այնպես կարելի է ասել՝ դա իմ փողն էր: Իսկ ինչ վերաբերում է չեկին, ո՛չ: Չգիտեմ՝ այս անհեթեթ միտքը որտեղից է գլխումս ծագել, թե Փերսիվալն է արել դա... բայց ինչ-որ պատճառով այն կա:

- Իսկ նա ինչ օգուտ ուներ դրանից: Դա քո հաշվին էր դուրս գրվել:

- Գիտեմ: Անմտություն է, այնպես չէ՛:

Պատը կտրուկ թեքվեց նրա կողմը:

- Ուզում ես ասել՝ նա արել է դա, որ քեզ դուրս շարտեն ընկերությունից:

- Կասկածներ ունեի: Դե լավ, նման բան ասելը ստորություն է: Մոռացիր: Հետաքրքիր է՝ ծերուկ Փերսիվալն ինչ կասի, երբ տեսնի անառակ որդու վերադարձը: Նրա

բաց, եփած կոկոռշի նման աչքերը ճակատը կթռչեն:

- Նա գիտի, որ գալիս ես:

- Չեմ զարմանա, եթե ոչնչից էլ տեղյակ չլինի: Հայրիկը բավական տարօրինակ հումորի զգացում ունի, հասկանում ես:

- Բայց ինչ է արել եղբայրդ, որ այդպես հունից հանել է հորդ:

- Հենց դա կուզեի իմանալ: Ինչ-որ բան կատաղեցրել է հայրիկին, որ այդպիսի նամակներ է գրել ու ուղարկել ինձ:

- Երբ ստացար նրա առաջին նամակը:

- Պետք է որ չորս... ո՛չ, հինգ ամիս առաջ: Զգուշավոր նամակ էր, բայց հստակորեն սպիտակ դրոշ բարձրացնող: «Ավագ եղբայրդ բազմաթիվ առումներով չի արդարացրել իրեն»: «Երևում է՝ վերջ ես տվել երիտասարդական մոլորություններին անձնատուր լինելուն ու հանդարտվել»: «Կարող եմ խոստանալ, որ արժանի ֆինանսական փոխհատուցում կլինի»: «Սիրով կընդունեմ քեզ և կնոջդ»: Գիտե՞ս, սիրելիս, կարծում եմ՝ քեզ հետ ամուսնությունս մեծ դեր ունի այստեղ: Ծերուկը տպավորվել է, որ ես ամուսնացել եմ ինձնից մի դաս վերև կնոջ հետ:

Պատը ծիծաղեց:

- Ինչ: Հասարակության տականք արիստոկրատների դասի:

Լանսը քմծիծաղ տվեց:

- Ճիշտ այդպես: Սակայն հասարակության տականքները տպավորություն չեն գործում՝ ի տարբերություն արիստոկրատների: Դու պիտի Փերսիվալի կնոջը տեսնես: Նա այն տեսակից է, որ ասում է. «Փոխանցե՛ք պահածոները, խնդրում եմ», և խոսում է փոստային նամականիշի մասին:

Պատին սա չծիծաղեցրեց: Նա մտածում էր այն ընտանիքի կանանց մասին, որի որդու հետ ամուսնացել էր: Հարցի այս կողմը Լանսը հաշվի չէր առել:

- Իսկ քոյրդ,- հարցրեց Պատը:

- Էլեյնը: Ա՛հ, նա կարգին աղջիկ է: Բավական երիտա-  
սարդ էր, երբ ես հեռացա տնից: Ինչ-որ առումով եռան-  
դուն աղջիկ էր, բայց գուցե տարիքի հետ դա անցած լինի:  
Ջանք չի խնայում այն ամենի համար, ինչ անում է:

Դա այնքան էլ հուսադրող չէր: Պատն ասաց.

- Նա երբեք չի գրել քեզ... քո հեռանալուց հետո:

- Ես հասցե չեմ թողել: Թեև, միևնույն է, նա չէր գրի:  
Մենք միմյանց կապված ընտանիք չենք:

- Ամենևին:

Լանսը թռուցիկ հայացք նետեց նրան:

- Անհանգիստ ես: Ընտանիքիս պատճառով: Կարիք  
չկա: Մենք չենք ապրելու նրանց հետ, ոչ մի նման բան:  
Մենք մեր փոքրիկ տունը կունենանք ինչ-որ մի տեղ: Ձիեր,  
շներ, ինչ կամենաս:

- Բայց 5:18-ը, միևնույն է, կլինի:

- Ինձ համար՝ այո՛: Քաղաք գնալ-գալը՝ ինչպես հարկն  
է պճնված: Բայց մի անհանգստացիր, անուշիկս, նույնիսկ  
Լոնդոնի շրջակայքում գյուղական կղզյակներ կան: Իսկ  
վերջերս զգում եմ, որ ֆինանսական գործերի ավյունն է  
արթնացել իմ մեջ: Ի վերջո, դա իմ արյան մեջ է՝ ընտանի-  
քիս երկու կողմից:

- Մորդ հազիվ ես հիշում, այնպես չէ՛:

- Նա միշտ անհավանականորեն ծեր էր թվում ինձ:  
Ի հարկե, նա ծեր էր: Գրեթե հիսուն տարեկան էր, երբ Էլեյ-  
նը ծնվեց: Անթիվ զնգզնգուն բաներ էր հագնում, պառկում  
բազմոցին և ասպետների ու լեդիների մասին պատմութ-  
յուններ կարդում ինձ համար, որոնք մահու չափ ձանձրաց-  
նում էին ինձ: Թենիսոնի «Արքայի հովվերգերը»<sup>1</sup>: Երևի սի-

1 Ալֆրեդ Լորդ Թենիսոնի (1809-1892) «Արքայի հովվերգերը»  
տասներկու պոեմից կազմված շարք է, որ պատմում է Արթուր



րում էի նրան... Նա չափազանց... անգույն էր, հասկանում  
ես: Հետ նայելով եմ հասկանում դա:

- Դու կարծես առանձնապես չես սիրում որևէ մեկին,-  
կշտամբանքով ասաց Պատը:

Լանսը բռնեց նրա ձեռքն ու սեղմեց ափի մեջ:

- Ես քեզ եմ սիրում,- ասաց նա:

---

Թագավորի, նրա թագավորության, ասպետների մասին: Այդ աս-  
պետներից էին նաև Փերսիվալն ու Լանսելոթը:

## ԳԼՈՒԽ 7

Հեռագիրը դեռ տեսուչ Նիլի ձեռքում էր, երբ լսեց շքամուտքին մոտեցող մեքենայի ձայնը, որ արգելակեց անիվների անփույթ ճռոցով:

Մերի Դավն ասաց.

- Միսիս Ֆորթեսյուն կլինի:

Տեսուչ Նիլը քայլեց դեպի շքամուտքը: Աչքի պոչով նայելով՝ նա տեսավ, թե ինչպես Մերի Դավն աննկատորեն տարրալուծվեց հետին պլանում ու չքացավ: Ակնհայտորեն նա մտադիր չէր մասնակցություն ունենալ առաջիկա տեսարանին: Նրբանկատության ու խոհեմության ուշագրավ դրսևորում... ինչպես նաև զարմանալիորեն բացակայող հետաքրքրասիրության: Կանանց մեծ մասը, մտածեց տեսուչ Նիլը, կմնար...

Շքամուտքին հասնելուն պես՝ նա նկատեց ծառայապետին՝ Քրամփին, որ առաջ էր գալիս նախասրահի խորքից: Նշանակում է՝ նա էլ էր լսել մեքենայի ձայնը:

Մեքենան «Ռոլս Բենթլիի» երկդուռ սպորտային մոդելներից էր: Երկու մարդ դուրս եկավ դրանից և դեպի տուն քայլեց: Երբ նրանք հասան դռանը, այն բացվեց: Զարմացած Ադել Ֆորթեսյուն ակնապիշ նայեց տեսուչ Նիլին:

Տեսուչն անմիջապես հասկացավ, որ նա իսկապես գեղեցիկ կին է, ինչպես նաև ընկալեց Մերի Դավի դիտարկման իմաստը, որն այն ժամանակ ցնցել էր իրեն: Ադել Ֆորթեսյուն սեքսուալ էր: Կազմվածքով ու տեսակով նա հիշեցնում էր շիկահեր միսս Գրովնորին, բայց եթե միսս Գրովնորը շքեղության մարմնացում էր դրսից և առաքինության՝ ներսից, ապա Ադել Ֆորթեսյուն ամբողջությամբ շքեղություն էր: Նրա գրավչությունն ակնհայտ էր, ոչ թե անորսալի: Այն պարզապես ասում էր յուրաքանչյուր

տղամարդու. «Ահա ես: Ես կին եմ»: Նրա ամեն մի խոսքի, շարժման ու շնչի մեջ սեքսուալություն էր ներծծված, սակայն, այս ամենով հանդերձ, նրա աչքերում ինչ-որ խորամանկ, գնահատողական բան կար: Ադել Ֆորթեսքյուն, մտածեց տեսուչը, սիրում է տղամարդկանց, բայց փող՝ էլ ավելի:

Նրա հայացքն անցավ կնոջ թիկունքում կանգնած կերպարանքին, որ նրա գուլֆի մականներն էր տանում: Այս տեսակը քաջածանոթ էր տեսուչին: Այսպիսիները կենտրոնանում էին հարուստ տարեցների երիտասարդ կանանց վրա: Միսթր Վիվիան Դյուբուան, եթե սա նա էր, ուներ այն անբնական առնականությունը, որն իրականում հեռու է դրանից: Նա այն տղամարդկանցից էր, որոնք «հասկանում» են կանանց:

- Միսիս Ֆորթեսքյու:

- Այո՛: Նրա կապույտ աչքերը չռվել էին: Բայց ես չեմ ճանաչում...

- Ես տեսուչ Նիլն եմ: Ցավում եմ, բայց վատ լուր ունեմ Ձեզ համար:

- Ուզում եք ասել... կողոպուտ... նման մի բան:

- Ո՛չ, ոչ մի նման բան: Դա կապված է Ձեր ամուսնու հետ: Այսօր առավոտյան նրա ինքնազգացողությունը կտրուկ վատացել է:

- Ռեքսը: Հիվանդ է:

- Առավոտյան տասնմեկն անց կեսից փորձում էինք կապ հաստատել Ձեզ հետ:

- Որտեղ է նա: Այստեղ: Թե՛ հիվանդանոցում:

- Նրան Սենթ Ջուդս հիվանդանոց են տեղափոխել: Վախենամ՝ պետք է պատրաստվեք վատագույնին:

- Միթե ուզում եք ասել... ո՛չ... որ նա մեռած է:

Նա երերալով փոքր-ինչ առաջ թեքվեց և բռնեց տեսու-

չի ձեռքը: Բեմականացման մեջ իր դերը խաղացողի ծանր զգացողությամբ տեսուչն օգնեց նրան նախասարահ հասնել: Քրամփը պատրաստակամորեն պտտվում էր նրանց շուրջը:

- Նրան բրենդի է պետք,- ասաց նա:

Միսթր Դյուբուան խոսեց կրծքային ձայնով.

- Ճիշտ է, Քրամփ: Բրենդի բերե՛ք:- Ապա դիմեց տեսուչին.- Այստեղ:

Նա ձախակողմյան մի դուռ բացեց: Շարանը ներս անցավ. տեսուչը և Ադել Ֆորթեսքյուն, Վիվիան Դյուբուան ու Քրամփը՝ գրաֆինով ու երկու բաժակով:

Ադել Ֆորթեսքյուն ընկղմվեց ծալովի բազկաթոռի մեջ՝ աչքերը ձեռքով ծածկելով: Նա վերցրեց տեսուչի առաջարկած բաժակը, մի փոքրիկ կում արեց, ապա մի կողմ հրեց այն:

- Չեմ ուզում,- ասաց նա:- Ես լավ եմ զգում: Բայց ասացե՛ք ինձ՝ ի՞նչ է եղել: Ենթադրում եմ՝ կաթվամձ: Խեղճ Ռեքս:

- Կաթված չի եղել, միսիս Ֆորթեսքյու:

- Ասացի՞ք՝ Դուք տեսուչ եք:- Հարց տվողը միսթր Դյուբուան էր:

Նիլը թեքվեց նրա կողմը:

- Ճիշտ այդպես,- սիրալիրորեն պատասխանեց նա:- Տեսուչ Նիլը՝ Քրեական հետախուզության բաժանմունքից:

Նա տեսավ՝ ինչպես նրա մուգ աչքերը տագնապով լցվեցին: Միսթր Դյուբուային դուր չէր գալիս Քրեական հետախուզության բաժանմունքի տեսուչի հայտնվելը: Ամենևին դուր չէր գալիս:

- Ի՞նչ է կատարվում,- հարցրեց նա:- Ինչ-որ բան այն չէ՞... հը՛:

Միանգամայն անգիտակցաբար նա փոքր-ինչ հետ

քաշվեց դեպի դուռը: Տեսուչ Նիլը նկատեց այդ շարժումը:

- Ցավում եմ,- ասաց նա միսիս Ֆորթեսքյուին,- ստիպված եմք լինելու հետաքննություն անցկացնել:

- Հետաքննություն: Ուզում եք ասել... ինչ եք ուզում ասել:

- Վախենամ՝ այս ամենը մեծ անհանգստություն կպատճառի Ձեզ, միսիս Ֆորթեսքյու:- Տեսուչի խոսքը սահուն էր:- Ցանկալի կլիներ հնարավորինս շուտ պարզել, թե հատկապես ինչ է կերել կամ խմել միսթեր Ֆորթեսքյուն այս առավոտ գրասենյակ գնալուց առաջ:

- Ուզում եք ասել՝ նրան թունավորել են:

- Դե՛, այո՛, կարծես թե:

- Չեմ հավատում: Օ՛, նկատի ունեք՝ սննդային թունավորում:

Վերջին բառերն ասելիս նրա ծայնը կես օկտավայով իջավ: Տեսուչ Նիլը՝ անկյանք դեմքով, նույն մեղմ ծայնով ասաց.

- Մադամ: Ըստ Ձեզ՝ ես ինչ նկատի ունեի:

Ադելն անտեսեց այս հարցը՝ շտապ առաջ անցնելով.

- Բայց մենք բոլորս լավ ենք:

- Դուք կարող եք խոսել ընտանիքի բոլոր անդամների անունից:

- Դե՛... ո՛չ... բնականաբար... չեմ կարող:

Դյուբուան, խիստ ցուցադրաբար իր ժամացույցին նայելով, ասաց.

- Ստիպված եմ հեռանալ, Ադել: Սարսափելի ցավում եմ: Դու լավ կլինես, այնպես չէ՛: Նկատի ունեմ՝ այստեղ են սպասուհիները, փոքրիկ Դավը և մյուսները...

- Օ՛, Վիվիան, մի՛ գնա: Մի՛ գնա:

Դա ասես իսկական ողբագին ճիչ լիներ, բայց հակառակ ազդեցությունը թողեց միսթեր Դյուբուայի վրա: Նրա նահանջն արագացավ:

- Սաստիկ ցավում եմ, հոգյակս: Կարևոր հանդիպում ունեմ: Ի դեպ, ես Դորմի Հաուսում եմ ապրում, տեսուհի: Եթե... ըրը... հարկավոր լինեմ ինչ-որ բանի համար:

Տեսուհի Նիլը գլխով արեց: Նա ցանկություն չունեի միսթր Դյուբուային հետ պահելու: Բայցևայնպես, հասկացավ, թե որն էր միսթր Դյուբուայի հեռանալու իրական պատճառը: Միսթր Դյուբուան փախչում էր անախորժությունից:

Փորձելով կարգավորել իրավիճակը՝ Ադել Ֆորթեսբյուն ասաց.

- Տուն վերադառնալն ու այնտեղ ուստիկանությանը գտնելն այնպիսի մեծ ցնցում է:

- Կասկած չունեմ դրանում: Բայց հասկանում եք՝ հարկավոր էր գործել արագ, որպեսզի անհրաժեշտ նմուշները վերցնեինք սննդամթերքից, սուրճից, թեյից և այլն:

- Թեյից և սուրճից: Բայց միթե դրանցից թունավորվում են: Ենթադրում եմ՝ այն սարսափելի խոզապուխտն է, որը մեզ երբեմն մատուցում են: Երբեմն այն բոլորովին ուտելի չէ:

- Մենք դա կպարզենք, միսիս Ֆորթեսբյու: Մի անհանգստացեք: Դուք կգարմանայիք՝ իմանալով, թե ինչեր կարող են պատահել: Մի անգամ մատնոցուկից<sup>1</sup> թունավորման դեպք ենք ունեցել: Պարզվել էր՝ կծվիչի<sup>2</sup> փոխարեն սխալմամբ մատնոցուկի տերևներ էին քաղել:

- Կարծում եք՝ այստեղ նման բան կարող էր լինել:

- Դիտարկումից հետո ավելի պարզ կլինի, միսիս Ֆորթեսբյու:

- Դիա... ա՛հ, հասկանալի է:

---

1 Խուլածաղիկազգիների ընտանիքին պատկանող բույս:

2 Խաչածաղկավորների ընտանիքին պատկանող բազմամյա խոտաբույս, որ օգտագործվում է որպես համեմունք:

Ադել Ֆորթեսքյուն դողաց: Տեսուչը շարունակեց.

- Ձեր տան շուրջքուրը բազմաթիվ կենիներ կան, այնպես չէ՞, մադան: Ենթադրում եմ՝ հնարավոր չէ, որ դրանց հատապտուղները կամ տերևները խառնվեին ինչ-որ բանի հետ, այո՞:

Տեսուչն ուշադիր հետևում էր նրան: Ադել Ֆորթեսքյուն ապշահար նայում էր նրան:

- Կենու հատապտուղները: Դրանք թունավոր են:

Նրա զարմանքը փոքր-ինչ չափազանցված միամտությամբ ու անմեղությամբ դրսևորվեց:

- Հայտնի է, որ երեխաներ են կերել դրանք՝ դժբախտ հետևանքներով:

Ադելը գլուխը ձեռքերի մեջ առավ:

- Այլևս անկարող եմ խոսել սրա մասին: Ես պետք է անեմ սա: Ուզում եմ գնալ ու պառկել: Այլևս չեմ դիմանում: Միսթր Փերսիվալ Ֆորթեսքյուն ամեն ինչ կկազմակերպի... ես չեմ կարող... չեմ կարող... ինձ հարցուփորձ անելն արդար չէ:

- Մենք հնարավորինս շուտ կապ կհաստատենք միսթր Ֆորթեսքյունի հետ: Ցավոք, նա Անգլիայի հյուսիսում է:

- Օ՛, այո՞, մոռացել էի:

- Եվս մեկ բան կա, միսիս Ֆորթեսքյու: Ձեր ամուսնու գրպանում քիչ քանակությամբ հացահատիկ է եղել: Չէիք կարող որևէ կերպ բացատրել դա:

Նա թափ տվեց գլուխը: Բավական շվարած տեսք ուներ:

- Ինչ-որ մեկը կատակի համար գաղտնաբար կլցնե՞ր դրանք:

- Չեմ հասկանում՝ ինչո՞ւ պիտի այդպես կատակեին:

Տեսուչ Նիլը նույնպես չէր հասկանում: Նա ասաց.

- Առայժմ Ձեզ չեմ անհանգստացնի, միսիս Ֆորթեսք-

յու: Սպասուհիներից մեկին Ձեզ մոտ ուղարկեմ: Կամ միսս Դավին:

- Ինչ,- ցրված կերպով արտաբերեց նա:

Տեսուչին հետաքրքրեց՝ ինչի մասին էր նա մտածում:

Պայուսակի մեջ փորփրելով՝ Ադելը թաշկինակ հանեց: Նրա ծայրը դողում էր:

- Այնքան սարսափելի է,- անվստահորեն ասաց նա:- Միայն հիմա եմ սկսում ընկալել դա: Մինչև այս պահը ես իսկապես բթացած էի: Խեղճ Ռեքս: Իմ սիրելի խեղճ Ռեքս:

Նա հեկեկում էր գրեթե համոզիչ կերպով:

Տեսուչ Նիլը մի քանի վայրկյան նրբանկատորեն հետևեց նրան:

- Գիտեմ՝ հանկարծակի էր,- ասաց նա:- Ինչ-որ մեկին Ձեզ մոտ կուղարկեմ:

Նա ուղղվեց դեպի դուռը, բացեց և դուրս եկավ: Մի պահ կանգ առավ, ապա հետ նայեց սենյակի կողմը:

Ադել Ֆորթեսքյուն շարունակում էր թաշկինակը պահել աչքերի մոտ: Դրա ծայրերը կախված էին, բայց ամբողջությամբ չէին ծածկում նրա բերանը: Նրա շուրթերին թույլ ժպիտ կար:

բժանակցել է 1915-2050 կայմ



## ԳԼՈՒԽ 8

- Ես վերցրի այն ամենը, ինչ հնարավոր էր, սըր,- զեկուցեց սերժանտ Հեյը:- Մուրաբա, մի կտոր ազդրապուխտ: Թեյի, սուրճի և շաքարի նմուշներ, թեև չգիտեմ՝ դրանք ինչով օգտակար կլինեն: Բուն եփուկները, իհարկե, արդեն թափել էին, բայց մի հանգամանք կա: Սուրճից բավականաչափ ավելցուկ էր մնացել, որը ժամը տասնմեկի ընդմիջման ժամանակ սպասավորներն էին խմել իրենց սենյակում: Կարծում եմ՝ դա կարևոր է:

- Այո՛, կարևոր է: Վկայում է այն մասին, որ եթե նա սուրճից է թունավորվել, ապա այն հենց բաժակի մեջ է լցված եղել:

- Ներկաներից մեկի կողմից: Ճիշտ այդպես: Ես զգուշորեն հարցուփորձ եմ արել կենու հետ կապված՝ հատապտուղների ու տերևների. տանը դրանցից չեն տեսել: Գրպանի հացահատակից նույնպես ոչ ոք կարծես տեղյակ չէ... Դա պարզապես հիմարություն է թվում նրանց: Ինձ՝ նույնպես: Նա նման չէր սննդային տարօրինակ վարք ունեցող այն մարդկանց, որ ինչ ձանձրալի բան ասես կուտեն, քանի դեռ այն եփված չէ: Քրոջս ամուսինն է այդպիսին: Հում գազար, հում ոլոռ, հում շաղգամ: Բայց նույնիսկ նա հում հացահատիկ չի ուտում: Ախր ինչի՞ համար. դրանից ստամոքսդ կարող է սարսափելիորեն ուռչել:

Հնչեց հեռախոսի զանգը. տեսուչը գլխով արեց, և սերժանտ Հեյը նետվեց պատասխանելու: Նրան հետևելով՝ Նիլը պարզեց, որ գլխավոր վարչությունից էին գծի մեջ: Կապ էր հաստատվել միսթր Փերսիվալ Ֆորթեսքյուի հետ, որ անմիջապես Լոնդոն էր վերադառնում:

Հազիվ էր տեսուչը կախել հեռախոսը, երբ մի մեքենա մոտեցավ շքամուտքին: Քրամփը քայլեց դեպի դուռը և

բացեց այն: Շենքին կանգնած կնոջ ձեռքերը լիքն էին կապոցներով: Քրամփը վերցրեց դրանք:

- Շնորհակալ եմ, Քրամփ: Կվճարե՞ս տաքսու համար, այո: Հիմա թեյ կխմե՞ի: Միսիս Ֆորթեսքյուն կամ միսս Էլեյնը տա՞նն են:

Ծառայապետը վարանեց՝ ուսի վրայով հետ նայելով:

- Վատ լուր ունենք, մե՛ն,- ասաց նա:- Տանտիրոջն է վերաբերում:

- Միսթո Ֆորթեսքյուի՞ն:

Նիլն առաջ եկավ: Քրամփն ասաց.

- Սա միսիս Փերսիվալն է, սըր:

- Ի՞նչ է եղել: Ի՞նչ է պատահել: Դժբախտ պատահա՞ր:

Պատասխանը տալիս տեսուչն արագորեն զննեց նրան: Միսիս Ֆորթեսքյուն գիրուկ կին էր՝ դժգոհություն արտահայտող բերանով: Տեսուչը եզրակացրեց, որ նա մոտ երեսուն տարեկան էր: Նրա հարցերի մեջ որոշակի անհամբերություն կար: Մի միտք առկայծեց տեսուչի գլխում. այս կինը պետք է որ չափից դուրս ծանձրանալիս լիներ:

- Ցավում եմ, որ ստիպված եմ ասել Ձեզ. այսօր առավոտյան միսթո Ֆորթեսքյուին ծանր վիճակում տեղափոխել են հիվանդանոց, և նա մահացել է:

- Մահացել է: Ուզում եք ասել՝ մեռա՞ծ է:- Նորությունն ակնհայտորեն ավելի աղմկահարույց էր, քան նա ակնկալում էր:- Աստված իմ, այ քեզ անակնկալ: Ամուսինս մեկնել է: Պետք է կապ հաստատեք նրա հետ: Հյուսիսում ինչ-որ տեղ է: Կարծում եմ՝ գրասենյակում կիմանան, թե որտեղ: Նա ստիպված կլինի հոգալ ամեն բանի համար: Ինչ լինում է, միշտ ամենաանհարմար պահին է լինում, այնպես չէ:

Մի պահ նա դադար տվեց՝ մտովի ծանրութեթև անելով:

- Թերևս, ամեն ինչ կախված է նրանից, թե հուղարկա-

վորությունը որտեղ կկայանա,- ասաց նա:- Երևի այստեղ:  
Կամ Լոնդոնում:

- Ինչպես ընտանիքն ասի:

- Իհարկե: Ես պարզապես մտածում էի:- Առաջին անգամ նա անմիջական ուշադրություն դարձրեց այն մարդուն, որ խոսում էր իր հետ:- Դուք գրասենյակից եք,- հարցրեց նա:- Բժիշկ չեք, այնպես չէ:

- Ես ոստիկանության սպա եմ: Միսթր Ֆորթեսբյուրի մահը չափազանց հանկարծակի էր և...

Կինն ընդհատեց նրան.

- Ուզում եք ասել՝ սպանե՞լ են նրան:

Այդ բառն առաջին անգամ էր արտաբերվում: Նիլն ուշադիր զննեց նրա հարցատենչ դեմքը:

- Իսկ ինչո՞ւ եք այդպես կարծում, մադամ:

- Դե՛, մարդկանց երբեմն սպանում են: Դուք ասացիք «հանկարծակի»: Բացի դրանից՝ Դուք ոստիկանությունից եք: Նրան տեղեկացրե՞լ եք: Ի՞նչ է ասել:

- Բոլորովին չեմ հասկանում՝ ո՞ւմ եք ակնարկում:

- Ադելին, իհարկե: Միշտ ասում էի Վալին, որ նրա հայրը խելքը գցել է իրենից այդքան երիտասարդ կնոջ հետ ամուսնանալով: Չկա ավելի հիմար մարդ, քան ծեր հիմարն է: Գլուխը կորցրել էր այդ սարսափելի արարածի համար: Ահա և հետևանքը... Ա՛յ թե փորձանքի մեջ ենք բոլորս ընկել: Թերթերում լուսանկարներ կտպվեն, լրագրողներ կգան:

Նա լռեց՝ ակնհայտորեն պատկերացնելով ապագան մի շարք անմշակ, գունագեղ նկարների տեսքով: Տեսուչի կարծիքով դա, այնուամենայնիվ, ամենատհաճ հեռանկարը չէր: Միսիս Փերսիվալը դարձյալ դիմեց նրան.

- Ի՞նչ էր դա: Մկնդե՞ղ:

Ձայնի զսպող հնչերանգով տեսուչ Նիլն ասաց.

- Մահվան պատճառը դեռևս հաստատված չէ: Դիա-  
հերձում ու հետաքննություն պիտի լինի:

- Բայց Դուք արդեն գիտեք, այնպես չէ: Այլապես այս-  
տեղ չէիք գա:

Նրա գիրուկ, փոքր-ինչ հիմարավուն դեմքին անսպա-  
սելիորեն խորաթափանցություն հայտնվեց:

- Ենթադրում եմ՝ հարցուփորձ արել եք, թե նա ինչ էր  
կերել ու խմել: Երեկ ընթրիքին: Այսօր նախաճաշին: Եվ  
հիարկե, բոլոր խմիչքների մասին:

Տեսուչն ասես տեսնում էր՝ ինչպես էր նրա վառ երևա-  
կայությունը մի տարբերակից մյուսին անցնում: Նա զգու-  
շորեն ասաց.

- Հնարավոր է՝ միսթր Ֆորթեսքյուի ինքնազգացողու-  
թյունը վատացել է մի բանի պատճառով, որը նա կերել է  
նախաճաշին:

- Նախաճաշին:- Նա կարծես զարմացած էր:- Դա բարդ  
է: Չեմ պատկերացնում՝ ինչպես...

Միսիս Փերսիվալը լռեց ու թափ տվեց գլուխը:

- Չեմ պատկերացնում՝ ինչպես կարող էր անել դա, ու-  
րեմն... միայն եթե ինչ-որ բան է լցրել սուրճի մեջ, երբ էլեյ-  
նը և ես չէինք նայում...

Ցածր մի ձայն մեղմորեն խոսեց նրանց կողքին.

- Ձեր թեյը պատրաստ է, գրադարանում է, միսիս Վալ:  
Միսիս Վալը ցնցվեց:

- Օ՛, շնորհակալ եմ, միսս Դավ: Այո՛, մի բաժակ թեյը  
տեղին կլիներ: Իսկապես տապալված եմ զգում ինձ: Դուք  
ինչ կասեք... միսթր... տեսուչ...

- Շնորհակալ եմ, առայժմ ոչ:

Գիրուկը վարանեց, ապա դանդաղ հեռացավ:

Հենց որ նա անհետացավ դռնից, Մերի Դավը ցածրա-  
ձայն փնթփնթաց.

- Կարծում եմ՝ նա գաղափար չունի զրպարտություն հասկացության մասին:

Տեսուչ Նիլը չպատասխանեց:

Մերի Դավը շարունակեց.

- Կարո՞ղ եմ որևէ բանով օգտակար լինել Ձեզ:
- Որտե՞ղ կարող եմ գտնել սպասուհուն՝ Էլենին:
- Ես Ձեզ նրա մոտ կուղեկցեմ: Քիչ առաջ վերև բարձրացավ:

\* \* \*

Պարզվեց՝ Էլենը խոժոռադեմ, բայց անվախ կին էր: Նրա դժգոհ ծերունական դեմքը հաղթականորեն նայում էր տեսուչին:

- Վրդովեցուցիչ է, սըր: Երբևէ մտքովս չէր անցնի, որ կապրեմ այնքան, մինչև հայտնվեմ մի տան մեջ, որտեղ նման բան է տեղի ունենում: Սակայն ինչ-որ առումով էլ չէի ասի, թե զարմացած եմ: Վաղուց պետք է հայտնեի, որ ուզում եմ ազատվել աշխատանքից, և դա փաստ է: Ինձ դուր չի գալիս այս տանը գործածվող լեզուն, թե որքան են խմում. այստեղ կատարվող բաները հակակրելի են ինձ համար: Միսիս Քրամփի դեմ ոչինչ չունեմ, բայց Քրամփն ու այդ Գլեդիս աղջիկը չգիտեն, թե պատշաճ ծառայությունն ինչ է նշանակում: Բայց ամենից առավել անպարկեշտություններն են հուզում ինձ:

- Ավելի ստույգ կասե՞ք՝ ինչ անպարկեշտությունների մասին եք խոսում:

- Շուտով կիմանաք, եթե դեռ տեղյակ չեք: Ամբողջ տունն է դրա մասին բամբասում: Նրանց տեսել են այստեղ, այնտեղ ու ամենուր: Ձևացնում են, թե գոլֆ են խաղում... կամ թենիս... Ես նույնպես տեսել եմ... իմ աչքով... այս տանը: Գրադարանի դուռը բաց էր, և նրանք այնտեղ էին, համբուրվում էին ու քսմավում:

Պառավաճ օրհորդի մաղձը մահացու էր: Տեսուչ Նիլն իսկապես ավելորդ էր համարում ասել՝ «Ո՞ւմ նկատի ունեք», բայց, այնուամենայնիվ, տվեց այդ հարցը:

- Ո՞ւմ պետք է նկատի ունենայի: Տանտիրուհուն և այն տղամարդուն: Չէին էլ ամաչում: Բայց եթե ինձ հարցնեք, տանտերը գլխի էր ընկել: Ինչ-որ մեկին վարձել էր, որ հետևեր նրանց: Ամուսնալուծություն. ահա թե ինչպես դա պիտի ավարտվեր: Փոխարենը բանը հասավ սրան:

- Այսպես ասելով՝ ի՞նչ նկատի ունեք...

- Դուք հարցեր եք տալիս, սըր, թե տանտերն ինչ է կերել ու խմել, և ով է դրանք տվել նրան: Նրանք միասին են գործել, սըր. ահա թե ինչ կասեմ: Նա ինչ-որ տեղից թույնն է ճարել, իսկ տիկինը տանտիրոջն է տվել այն. այդպես է եղել, կասկած չունեմ:

- Տանը երբևէ կենու հատապտուղներ տեսնի եք... կամ ինչ-որ տեղ գցած:

Մանր աչքերը հետաքրքրասիրությունից փայլեցին:

- Կենո: Չզվելի թույն է: Երբ երեխա էի, մայրիկս ասում էր. «Ձեռք չտաս այդ հատապտուղներին»: Դրանցից են օգտագործել, սըր:

- Դեռ հայտնի չէ, թե ինչ է օգտագործվել:

- Երբևէ չեմ տեսել, որ նա կենիների հետ խաղա:- Էլենի ձայնում հիասթափություն հնչեց:- Ո՛չ, չեմ կարող ասել, որ նման բան է աչքովս ընկել:

Նիլը հարցրեց նրան Ֆորթեսքյուի գրպանում հայտնաբերված հացահատիկի մասին, բայց այս անգամ ևս ձեռնունայն մնաց:

- Ո՛չ, սըր, ոչինչ չգիտեմ այդ մասին:

Տեսուչը շարունակեց հարցուփորձը, բայց առանց օգուտ քաղելու: Վերջապես նա հարցրեց՝ կարո՞ղ է արդյոք տեսնել միսս Ռեմսթրոմին:

Էլենը թերահավատ տեսք ուներ:

- Ես կարող եմ հարցնել նրան, բայց նա ամեն մեկի հետ չի հանդիպի: Գիտե՞ք՝ նա չափազանց ծեր կին է և մի քիչ տարօրինակ:

Տեսուչը համառոտ, և Էլենը բավական դժկամորեն առաջնորդեց նրան միջանցքով ու կարճ սանդղավանդակն ի վեր դեպի մի սենյակ, որը, ինչպես Նիլը մտածեց, հավանաբար նախատեսված էր եղել որպես մանկասենյակ:

Էլենին հետևելիս միջանցքի պատուհանից նա հայացք գցեց դեպի դուրս և տեսավ սերժանտ Հեյին, որ կենու մոտ կանգնած զրուցում էր մի տղամարդու հետ, հավանաբար, այգեպանի:

Էլենը թակեց դուռը և պատասխան լսելով՝ բացեց այն ու ասաց.

- Ոստիկանությունից մի ջենթլմեն է եկել, որ կցանկանար զրուցել Ձեզ հետ, մի՞սս:

Պատասխանը կարծես դրական էր, քանի որ Էլենը հետ քաշվեց և ձեռքի շարժումով ցույց տվեց Նիլին, որ ներս մտնի:

Սենյակը, ուր նա մտավ, անասելիորեն գերկահավորված էր: Տեսուչն այնպիսի զգացողություն ուներ, որ տեղափոխվել էր ոչ միայն էդուարդյան, այլ նաև վիկտորիանական ժամանակներ: Գազի վառարանին մոտ քաշած սեղանի կողքին նստած էր մի ծեր կին, որ պասյանսի խաղաքարտեր էր բացում: Նրա հագին կարմրաշագանակագույն զգեստ էր, իսկ նոսր, ուղիղ հարդարած ճերմակ մազերը երկու կողմից թափվում էին դեմքին:

Առանց վեր նայելու և խաղն ընդհատելու՝ նա անհամբերությամբ ասաց.

- Դե՛, ներս եկեք, ներս եկեք: Նստե՛ք, եթե կամենում եք: Հրավերն ընդունելն այնքան էլ հեշտ չէր, քանի որ բո-

լոր աթոռները ծածկված էին կրոնական բնույթի բրոշյուրներով ու գրքույկներով:

Երբ նա թեթևակիորեն մի կողմ տարավ դրանք բազմոցի վրայից, միսս Ռեմսբրոթմը կտրուկ կերպով ասաց.

- Հետաքրքրվի՞մ եք միսիոներական գործունեությամբ:

- Դե՛, վախենամ՝ ոչ այնքան, մադամ:

- Վատ է: Պետք է հետաքրքրվեիք: Ահա թե որտեղ է քրիստոնեական ոգին մեր օրերում: Աֆրիկայի խորքերում: Անցյալ շաբաթ մի երիտասարդ սևամորթ հոգևորական էր այստեղ եկել: Իսկական քրիստոնյա էր:

Տեսուչ Նիլը փոքր-ինչ դժվարանում էր բառեր գտնել:

Ծեր կինն էլ ավելի շփոթեցրեց նրան՝ վրա տալով.

- Ես ռադիո չունեմ:

- Ներեցե՞ք:

- Օ՛, մտածեցի՝ գուցե ռադիոյի արտոնագրի համար եք եկել: Կամ մեկ այլ հիմար ձևաթղթով: Դե՛, հարգելիս, ինչ է եղել:

- Ցավով հայտնում եմ Ձեզ, միսս Ռեմսբրոթմ, որ Ձեր փեսայի՝ միսթր Ֆորթեսքյուի ինքնազգացողությունն այսօր առավոտյան անսպասելիորեն վատացել է, և նա մահացել է:

Միսս Ռեմսբրոթմը՝ առանց հուզմունքի նշույլի, շարունակեց խաղալ պասյանսը՝ պարզապես իբրև զրույցի շարունակություն նկատելով.

- Մեծամտությունն ու հպարտության մեղքը վերջապես սպանեցին նրան: Դե՛, այդ օրը պիտի գար:

- Հուսով եմ՝ դա մեծ հարված չէ Ձեզ համար:

Ակնհայտորեն այդպես չէր, բայց տեսուչն ուզում էր լսել, թե նա ինչ կասեր:

Միսս Ռեմսբրոթմը, ակնոցի վերևից հատու հայացք նետելով, ասաց.



- Եթե նկատի ունեք, որ ես վշտացած չեմ, ապա միանգամայն ճիշտ եք: Ռեքս Ֆորթեսքյուն միշտ է մեղսավոր եղել, և ես երբեք չեմ սիրել նրան:

- Նրա մահն այնքան հանկարծակի էր...

- Ինչպես վայել է անաստվածին,- գոհունակությամբ ասաց ծեր լեդին:

- Հնարավոր է, որ նրան թունավորել են...

Տեսուչը դադար տվեց՝ տեսնելու, թե իր ասածն ինչ ազդեցություն թողեց:

Կարծես թե ազդեցություն չկար: Միսս Ռեմսբոթոմը պարզապես քրթմնջաց.

- Կարմիր յոթնոցը սև ութնոցի վրա: Հիմա կարող եմ անցնել թագավորին:

Ըստ երևույթին, տեսուչի լռությունից ցնցվելով՝ նա քարացավ՝ խաղաքարտն օդում պահած, և կտրուկ ասաց.

- Դե, ինչ եք ակնկալում, որ ասեմ: Ես չեմ թունավորել նրան, եթե դա եք ուզում իմանալ:

- Պատկերացում ունեք, թե ով կարող է արած լինել:

- Խիստ անտեղի հարց է,- խայթեց ծեր լեդին:- Այս տանն իմ հանգուցյալ քրոջ երկու զավակներն են ապրում: Ես հրաժարվում եմ հավատալուց, որ նա, ում երակներում Ռեմսբոթոմների արյունն է հոսում, կարող է մեղավոր լինել սպանության մեջ: Չէ՞ որ Դուք սպանության մասին եք խոսում, այո՞:

- Ես նման բան չասացի, մադամ:

- Բնականաբար սպանություն է: Ժամանակին շատերն են ցանկացել սպանել Ռեքսին: Նա սկզբունքներից զուրկ մարդ էր: Իսկ ինչպես ասում են՝ հին մեղքերը երկար ստվերներ են գցում:

- Որևէ հստակ մարդու մտաբերում եք:

Միսս Ռեմսրոթոնը հավաքեց խաղաքարտերը և ուռքի ելավ: Նա բարձրահասակ կին էր:

- Կարծում եմ՝ լավ կանեք, եթե հիմա գնաք,- ասաց նա:

Նա խոսում էր առանց գայրույթի, բայց որոշակիորեն սառը, եզրափակող հնչերանգով:

- Եթե Ձեզ հետաքրքրում է իմ կարծիքը,- շարունակեց նա,- ապա հավանաբար սպասավորներից մեկն է եղել: Ծառայապետն իսկական սրիկայի տեսք ունի, իսկ այն աղախնի խելքը վստահաբար տեղը չէ: Մնաք բարով:

Տեսուչ Նիլն ականա խոնարհաբար դուրս եկավ: Անկասկած, ծեր լեդին արտասովոր էր: Նրանից ոչինչ չէիր կորզի:

Աստիճաններով քառակուսի նախասրահ իջնելով՝ նա անսպասելիորեն հայտնվեց մի բարձրահասակ թխահեր աղջկա դեմ դիմաց: Նրա հագին խոնավ անջրանցիկ վերարկու էր, և նա շփոթահար հարցական հայացքով ականապիշ նայում էր տեսուչին:

- Ես քիչ առաջ եմ վերադարձել,- ասաց նա:- Եվ ինձ ասացին... հայրիկի մասին... որ նա մահացել է:

- Ցավում եմ՝ դա ճիշտ է:

Աղջիկը հետ գցեց ձեռքը՝ ասես կուրորեն հենարան փնտրելով: Նա դիպավ կաղնեփայտե կոմոդին և դանդաղ, ընդարմացած նստեց դրա վրա:

- Օ՛, ո՛չ,- արտաբերեց նա:- Ո՛չ...

Արցունքի երկու կաթիլ դանդաղ հոսեց նրա այտերի վրայով:

- Սարսափելի է,- ասաց նա:- Մտքովս անգամ չէր անցնում, որ սիրում եմ նրան... Ինձ թվում էր՝ ատում եմ նրան... Բայց այդպես չէ, այլապես ինձ համար միևնույն կլիներ: Իսկ ինձ համար միևնույն չէ:

Աղջիկը նստած էր այդտեղ՝ հայացքն իր դիմաց հա-

նաձ, և կրկին նրա աչքերը արցունքով լցվեցին ու հոսեցին այտերի վրայով:

Շուտով նա նորից խոսեց՝ գրեթե շնչակտուր.

- Սոսկալին այն է, որ սրանով ամեն ինչ կարգավորվում է: Նկատի ունեմ՝ հիմա Ջերալդը և ես կարող ենք ամուսնանալ: Ես կարող եմ անել այն, ինչ ուզում եմ: Բայց ինձ համար անտանելի է, որ դա այս ձևով է լինում: Ես չեմ ուզում հորս մեռած տեսնել... Օ՛, չեմ ուզում: Ա՛հ, հայրիկ, հայրիկ...

Կենու տնակ գալուց ի վեր առաջին անգամ տեսուչ Նիլը ցնցվեց նրանից, ինչը կարծես անկեղծ վիշտ էր հանգուցյալի համար:

## ԳԼՈՒԽ 9

- Հավանաբար կինն է,- ասաց կոմիսարի տեղակալը, որ ուշադրությամբ լսել էր տեսուչ Նիլի զեկույցը:

Այն գործի գերազանց ամփոփ նկարագիրն էր՝ հակիրճ, բայց առանց կարևոր մանրամասները բաց թողնելու:

- Այո՛,- կրկնեց կոմիսարի տեղակալը,- կարծես թե կինն է: Դուք ինչ եք կարծում, հը՛, Նիլ:

Տեսուչ Նիլն ասաց, որ իրեն նույնպես թվում է, թե կինն է: Մտքում նա ցինիկաբար ասում էր, որ սովորաբար կինն է լինում կամ ամուսինը՝ կախված հանգամանքներից:

- Նա բավականաչափ հնարավորություն ուներ: Իսկ դրդապատճառ:- Կոմիսարի տեղակալը դադար տվեց:- Դրդապատճառ կամ:

- Օ՛, կարծում եմ՝ այո՛, սը՛ր: Այդ միսթր Դյուբուան, դե, գիտեք:

- Մտածում եք՝ նա նոյնպես ներքաշված է սրա մեջ:

- Ո՛չ, չէի ասի, սը՛ր:- Տեսուչ Նիլը ծանրությեթև արեց այդ միտքը:- Սեփական կաշին չափազանց թանկ է նրա համար: Գուցեև կռահել է, թե ինչ կար նրա մտքում, բայց չեմ պատկերացնում, որ ինքը դրդեր դրան:

- Մի՞թե այդքան զգուշավոր է:

- Չափից դուրս զգուշավոր:

- Լավ, հապճեպ եզրակացություններ չանենք, բայց սա կարծես աշխատող վարկած է: Իսկ ինչ կասեք մյուս երկուսի մասին, որոնք դա անելու առիթ էին ունեցել:

- Դուստրն ու հարսն են: Դուստրը կապ է ունեցել մի երիտասարդի հետ. հայրը դեմ է եղել նրանց ամուսնությանը: Իսկ այդ երիտասարդը, անկասկած, առանց փողի չէր ամուսնանա նրա հետ: Ահա դատեր դրդապատճառը: Ինչ վերաբերում է հարսին, չէի ցանկանա որևէ բան ասել:

Դեռ բավականաչափ տեղեկություններ չունեմ նրա մասին: Սակայն այս երեքից ցանկացածը կարող էր թունավորել նրան, և չեմ պատկերացնում, թե ուրիշ մեկն ինչպես կարող էր անել դա: Աղախինը, ծառայապետը, խոհարարը. բոլորն էլ գբաղվել են նախաճաշով կամ մատուցել, բայց չեմ պատկերացնում՝ ինչպես կարող էր նրանցից մեկը համոզված լինել, որ տաքսինը բաժին կհասնի հենց Ֆորթեսքյուն և ոչ մյուսներին: Այսինքն՝ եթե տաքսին է եղել:

- Հաստատապես տաքսին է,- ասաց կոմիսարի տեղակալը:- Քիչ առաջ եմ ստացել նախնական հաշվետվությունը:

- Նշանակում է՝ այս հարցը լուծված է,- ասաց տեսուչ Նիլը:- Կարող ենք անցնել առաջ:

- Իսկ ինչպե՞ս են սպասավորները:

- Ծառայապետն ու աղախինը նյարդային էին թվում: Դրանում արտասովոր բան չկա: Հաճախ է պատահում: Խոհարարը կատաղած է, իսկ սպասուհին՝ խոժոռ, բայց գոհ: Փաստացի, բոլորի պահվածքը միանգամայն բնական է ու սովորական:

- Ուրիշ մեկը կամ, որին ինչ-որ առումով կասկածելի եք համարում:

- Կարծում եմ՝ ո՛չ, սըր:- Անկախ իր կամքից՝ տեսուչ Նիլը վերհիշեց Մերի Դավին և նրա առեղծվածային ժպիտը: Դրանում վստահաբար հազիվ նկատելի, բայց ևս այնպես որոշակի թշնամանք կար: Բարձրաճայն նա ասաց.- Հիմա, երբ գիտենք, որ տաքսին է, պետք է փաստեր գտնենք, թե ինչպես են այն ձեռք բերել կամ պատրաստել:

- Ճիշտ այդպես: Դե՛, ի գործ, Նիլ: Ի դեպ, միսթր Փերսիվալ Ֆորթեսքյուն այժմ այստեղ է: Ես մեկ-երկու բառ փոխանակեցի նրա հետ, և նա սպասում է Ձեզ: Մյուս որդու տեղը նույնպես պարզել ենք: Նա Փարիզում է՝ Բրիս-

տողում, այսօր ժամանում է: Ենթադրում եմ՝ կդիմավորե՞ք նրան օդանավակայանում:

- Այո՛, սըր, հենց դա էլ մտածում էի...

- Դե՛, լավ կանեի՞ք՝ հիմա տեսնեի՞ք Փերսիվալ Ֆորթեսքյունին: - Կոմիսարի տեղակալը քթի տակ ծիծաղեց: - Խստաբարո Փերսի. ահա թե ով է նա:

Միսթր Փերսիվալ Ֆորթեսքյուն երեսունն անց բարեկազմ, վայելչատես տղամարդ էր՝ գունատ մազերով ու թարթիչներով և փոքր-ինչ բծախնդիր խոսքով:

- Սոսկալի ցնցում էր ինձ համար, տեսո՞ւյ Նիլ, ինչպես կարող եք պատկերացնել:

- Անկասկած, միսթր Ֆորթեսքյու,- ասաց տեսուչ Նիլը:

- Միայն կարող եմ ասել, որ հայրս միանգամայն լավ էր, երբ նախանցյալ օրը հեռացա տնից: Սննդային թունավորումը, կամ ինչ էլ եղած լինի, շատ հանկարծակի էր:

- Հանկարծակի էր, այո՛: Բայց դա սննդային թունավորում չէր, միսթր Ֆորթեսքյու:

Փերսիվալն ապշահար նայեց նրան ու խոժոռվեց:

- Միթե: Ուրեմն ահա թե ինչու...- Նա ընդհատեց խոսքը:

- Ձեր հայրը,- ասաց տեսուչ Նիլը,- թունավորվել է տաք սինի ընդունումից:

- Տոքսին: Երբևէ չեմ լսել դրա մասին:

- Ենթադրում եմ՝ քչերն են լսել: Դա մի թույն է, որը խիստ անսպասելի ու սաստիկ ներգործություն է թողնում:

Փերսիվալն էլ ավելի խոժոռվեց:

- Ուզում եք ասել, տեսո՞ւյ, որ ինչ-որ մեկը միտումնավոր կերպով թունավորե՞լ է հորս:

- Կարծես թե, այո՛, սըր:

- Սարսափելի է:

- Իսկապես, միսթր Ֆորթեսքյու:

Փերսիվալը քրթմնջաց.

- Հիմա եմ հասկանում հիվանդանոցի վերաբերմունքը... ինձ այստեղ ուղարկելը:- Նա կտրուկ կերպով դադար տվեց, ապա շարունակեց հարցական հնչերանգով.- Հուղարկավորությունը:

- Հետաքննությունը նշանակված է վաղը՝ դիահերձումից հետո: Ընթացակարգը զուտ ձևական բնույթ է կրելու, իսկ հետաքննությունը կհետաձգվի:

- Հասկանալի է: Սովորաբար այդպես է լինում:

- Մեր օրերում՝ այո՛, սր՛ր:

- Կարո՞ղ եմ հարցնել՝ որևէ միտք, կասկած ունե՞ք, թե ով... ես իսկապես...- նրա խոսքը կրկին կիսատ մնաց:

- Դեռ բավական վաղ է դրա համար, մի՞սթր Ֆորթեսքյու,- մոթմոթաց Նիլը:

- Թերևս, ճիշտ եք:

- Այնուամենայնիվ, օգտակար կլինեիք մեզ, մի՞սթր Ֆորթեսքյու, եթե որոշ չափով ծանոթացնեիք Ձեր հոր կտակով սահմանված դրույթներին: Կամ կարող եք կապել ինձ նրա փաստաբանի հետ:

- Նրա փաստաբանները Բեդքորդ Սքուեյրի «Բիլինգսլի, Հորսթորփ և Ուոլթերս» ընկերությունից են: Ինչ վերաբերում է նրա կտակին, ապա կարծում եմ՝ ես կարող եմ քիչ թե շատ ներկայացնել դրա հիմնական դրույթները:

- Բարի՛ եղեք, մի՞սթր Ֆորթեսքյու: Ցավոք, սա պետք է անել. կարգն է այդպիսին:

- Երկու տարի առաջ հայրս երկրորդ անգամ ամուսնացավ և այդ առիթով նոր կտակ կազմեց,- հստակորեն ասաց Փերսիվալը:- Հայրս հարյուր հազար ֆունտ թողնում է կնոջը և հիսուն հազար քրոջս՝ Էլեյնին: Մնացածի ժառանգորդը ես եմ՝ առանց նվիրագրերի ու պարտավորությունների: Ես, իհարկե, արդեն իսկ ընկերության բաժնետեր եմ:

- Ձեր եղբայրը՝ Լանսելոթ Ֆորթեսբյուն, ժառանգության չունի:

- Ո՛չ, հայրս և եղբայրս վաղուց են օտարացել միմյանցից:

Նիլը հատու հայացք գցեց նրա վրա, բայց Փերսիվալը կարծես լիովին համոզված էր իր պնդման մեջ:

- Այսպիսով,- ամփոփեց տեսուչ Նիլը,- երեք մարդ է կտակից շահում՝ միսիս Ֆորթեսբյուն, միսս Էլեյն Ֆորթեսբյուն և Դոփ:

- Չեմ կարծում, թե ես առանձնապես կշահեմ,- հառաչեց Փերսիվալը:- Ժառանգության հարկեր գոյություն ունեն, դե, գիտեք, տեսուչ: Իսկ վերջերս հայրս... դե՛, կարող եմ միայն ասել, որ նա խիստ անշրջահայաց էր իր որոշ ֆինանսական գործարքներում:

- Վերջին շրջանում Դոփ և Ձեր հայրը համաձայնության չէինք գալիս բիզնեսը վարելու հարցում:- Տեսուչ Նիլը փորձեց այս հարցը մեղմորեն հնչեցնել:

- Ես հայտնեցի նրան իմ տեսակետը, բայց, ավանդ...- Փերսիվալը թոթվեց ուսերը:

- Փոքր-ինչ հարկադրանքով հայտնեցիք, այո՛,- հարցրեց Նիլը:- Իրականում, եթե իրերն իրենց անուններով կոչենք, իսկական աղմուկ բարձրացրիք, այնպես չէ:

- Չէի ասի, տեսուչ:- Փերսիվալի ճակատը զայրույթից շիկնեց:

- Այդ դեպքում հնարավոր է՝ այլ հարցի շուրջ եք վիճել Ձեր հոր հետ, միսթր Ֆորթեսբյու:

- Վե՛ճ չի եղել, տեսուչ:

- Միանգամայն վստամի եք դրանում, միսթր Ֆորթեսբյու: Լավ, էական չէ: Ինչպես հասկացա, Ձեր հայրը և եղբայրը դեռ չէին շփվում:

- Ճիշտ այդպես:



- Այդ դեպքում գուցե ասե՞ք ինձ, թե սա ինչ է նշանակում:

Նիլը փոխանցեց նրան հեռախոսային հաղորդագրությունը, որը Մերի Դավն էր գրի առել:

Փերսիվալը կարդաց այն և զարմանքի ու վրդովմունքի բացականչություն արձակեց: Նա թերահավատ էր ու զայրացած:

- Չեմ հասկանում, իսկապես չեմ կարողանում հասկանալ: Հավատս չի գալիս:

- Բայցևայնպես, կարծես թե սա ճիշտ է, մի՞սթր Փերսիվալ: Ձեր եղբայրն այսօր ժամանում է Փարիզից:

- Ախր սա տարօրինակ է, ավելի քան զարմանալի: Ո՛չ, ես իսկապես չեմ հասկանում:

- Ձեր հայրը Ձեզ ոչինչ չէր ասել սրա մասին:

- Իհարկե՛ ոչ: Ինչպիսի անարգալից վերաբերմունք կանչել Լանսին, այն էլ՝ իմ թիկունքում:

- Ենթադրում եմ՝ Դուք գաղափար չունեք, թե ինչու է նման բան արել:

- Բնականաբար չգիտեմ: Այս ամենը բնորոշ է վերջին շրջանում նրա պահվածքին... Իսենթ: Անպատասխանատու: Պետք է վերջ տալ դրան... Ես...

Փերսիվալը վճռականորեն դադար տվեց: Նրա դեմքին հայտնված գույնը կրկին հետ քաշվեց:

- Ես մոռացել էի...- ասաց նա:- Մի պահ մոռացել էի, որ հայրս մահացել է:

Տեսուչ Նիլը կարեկցանքով թափ տվեց գլուխը:

Փերսիվալ Ֆորթեսքյուն պատրաստվեց հեռանալու: Գլխարկը վերցնելիս նա ասաց.

- Չանգեք ինձ, եթե ինչ-որ հարցով կարող եմ օգնել: Թեև ենթադրում եմ...- նա լռեց,- Դուք գալի՞ր եք Կենու տնակ:

- Այ՛ր, մի՛սթըր Ֆորթեսքյու: Իմ մարդկանցից մեկը հիմա հերթապահում է այնտեղ:

Փերսիվալը զգվանքից սարսռաց:

- Այս ամենն առավել քան տհաճ է: Ո՞ւմ մտքով կանցնե՞ր, որ նման բան կպատահի մեզ հետ...

Նա հառաչեց և դեպի դուռն ուղղվեց:

- Օրվա մեծ մասը գրասենյակում կլինեմ: Այնտեղ անելիքների պակաս չկա: Բայց երեկոյան Կենու տնակ կգնամ:

- Լավ, սը՛ր:

Փերսիվալ Ֆորթեսքյուն դուրս եկավ:

- Խստաբարո Փերսի,- մոթմոթաց Նիլը:

Սերժանտ Հեյը, որ աննկատ նստած էր պատի մոտ, վեր նայեց ու հարցրեց՝ «Սը՛ր»:

Նիլից պատասխան չստանալուց հետո նա նորից հարցրեց.

- Ի՞նչ եք մտածում այս ամենի մասին, սը՛ր:

- Չգիտեմ,- ասաց Նիլը, ապա ցածրաձայն մեջբերեց.- «Նրանք բոլորը շատ տհաճ մարդիկ են»:

Սերժանտ Հեյը փոքր-ինչ տարակուսած տեսք ուներ:

- Ալիսը հրաշքների աշխարհում,- ասաց Նիլը:- Ի՞նչ է, չգիտե՞ս Ալիսին, Հեյ:

- Դասականների՞ց է, այ՛ր, սը՛ր,- հարցրեց Հեյը:- Երրորդ ալիքի թողարկումներից կլինի: Ես չեմ լսում Երրորդ ալիքը:

Այս գիրքը թվայնացրել է 1915.info կայքը:  
Կայքում կարող եք գտնել բազմաթիվ այլ անվճար գրքեր ինչպես նաև ցանկության և հնարավորության դեպքում կարող եք աջակցել մեզ օգնելով ավելի շատ գրքեր թվայնացնել:

## ԳԼՈՒԽ 10

Լը Բուրժեից մեկնելուց մոտ հինգ րոպե էր անցել, երբ Լանս Ֆորթեսքյուն բացեց «Դեյլի Մեյլի» մայրցամաքային հրատարակության իր օրինակը: Մեկ-երկու րոպե անց նա սարսափած բացականչեց: Պատը, որ նստած էր նրա կողքին, հարցականորեն թեքեց գլուխը:

- Հայրիկի մասին է,- ասաց Լանսը:- Նա մահացել է:

- Մահացել է: Հայրդ:

- Այո՛, կարծես թե գրասենյակում նրա ինքնազգացողությունը հանկարծակիորեն վատացել է, նրան Սենթ Ջուդս հիվանդանոց են տեղափոխել, որտեղ շուտով մահացել է:

- Սիրելիս, այնքան եմ ցավում: Ինչ է եղել. կաթվամբ:

- Երևի: Այդպես է թվում:

- Նախկինում երբևէ կաթված ունեցել է:

- Ո՛չ: Որքան ինձ է հայտնի:

- Ինձ թվում էր՝ առաջին կաթվածից երբեք չեն մահանում:

- Իսեղճ ծերուկ,- ասաց Լանսը:- Երբևէ չէի մտածել, որ առանձնակի սիրում եմ նրան, բայց, չգիտես ինչու, հիմա, երբ նա մահացած է...

- Դու, իհարկե, սիրել ես նրան:

- Բոլորը քեզ պես հիանալի բնավորություն չունեն, Պատ: Ինչ արած, հաջողությունը կարծես նորից երես թեքեց ինձնից:

- Այո՛: Տարօրինակ է, որ դա հիմա պատահեց: Հենց այն պահին, երբ դու պատրաստվում էիր տուն վերադառնալու:

Լանսը կտրուկ թեքեց գլուխը նրա կողմը:

- Տարօրինակ: Ինչ նկատի ունես՝ ասելով տարօրինակ, Պատ:

Պատը թեթևակի զարմանքով նայեց նրան:

- Դե՛, զուգադիպության նման մի բան:

- Ուզում ես ասել՝ ինչ էլ որ ձեռնարկում եմ, մի բան այնպես չի լինում:

- Ո՛չ, սիրելիս, դա չէի ուզում ասել: Միայն թե գոյություն ունի այնպիսի երևույթ, ինչպիսին անհաջողությունների շղթան է:

- Այո՛, ենթադրաբար:

- Այնքան եմ ցավում,- կրկնեց Պատը:

Երբ նրանք ժամանեցին Հիթրոու և սպասում էին ինքնաթիռից իջնելուն, ավիաընկերության աշխատակիցը հստակ ձայնով հայտարարեց.

- Միսթր Լանսելոթ Ֆորթեսքյուն ինքնաթիռում է:

- Այստեղ եմ,- ասաց Լանսը:

- Կանցնե՞ք այս կողմ, միսթր Ֆորթեսքյու:

Լանսը և Պատը նրա հետևից դուրս եկան ինքնաթիռից՝ առաջ անցնելով մյուս ուղևորներից: Վերջին շարքում նստած մի զույգի կողքով անցնելիս նրանք լսեցին՝ ինչպես տղամարդը շշնջաց կնոջը.

- Երևի հայտնի մաքսանենգներ են: Բռնել են հանցանքի վայրում:

\* \* \*

- Անհավանական է,- ասաց Լանսը:- Պարզապես անիրական:- Նա աչքերը հառել էր սեղանի մյուս կողմում նստած տեսուչ Նիլին:

Տեսուչ Նիլը կարեկցանքով գլխով արեց:

- Տաքսին... կենու հատապտուղներ... այս ամենն ինչոր մելոդրամայի է նման: Թերևս, այսպիսի բաներն ավելի քան սովորական են Ձեզ համար, տեսուչ: Ձեր ամենօրյա

աշխատանքի մասն են: Բայց թունավորումը խելքից դուրս հեռու է թվում մեր ընտանիքից:

- Նշանակում է՝ Դուք բոլորովին պատկերացում չունեք, թե ով կարող էր թունավորած լինել Ձեր հորը:

- Ի սեր Աստծո, ո՛հ: Ենթադրաբար հայրիկը բազմաթիվ թշնամիներ էր ձեռք բերել բիզնեսում, որոնցից շատերը կցանկանային նրա կաշին քերթել, ֆինանսապես նվաստացնել նրան և նման այլ բաներ: Բայց թունավորում: Համենայն դեպս, ես իրազեկ չէի լինի: Քանի տարի է՝ արտասահմանում եմ, և ինձ քիչ բան է հայտնի տան իրադարձությունների մասին:

- Հենց դա էլ ուզում էի հարցնել Ձեզ, միսթր Ֆորթեսքյու: Ձեր եղբոր ասածից հասկանում եմ, որ Ձեր և Ձեր հոր միջև տարիներ շարունակ շփում չի եղել: Կպատմե՞ք ինձ՝ ինչ հանգամանքներ են ստիպել Ձեզ տուն վերադառնալ հիմա:

- Անշուշտ, տես՛ո՛ւ: Ես լուր ստացա հորիցս... թույլ տվեք՝ հիշեմ, պետք է որ մոտ... այո՛, վեց ամիս առաջ: Ամուսնությունիցս շատ չանցած... Հայրս նամակ էր գրել և ակնարկում էր, որ կցանկանար՝ անցյալը թողնենք անցյալում: Առաջարկում էր՝ տուն վերադառնամ և աշխատեմ ընկերությունում: Նրա արտահայտությունները բավական մշուշոտ էին, և ես իսկապես համոզված չէի, որ ուզում եմ նրա ասածն անել: Այնուամենայնիվ, ի վերջո, ես եկա Անգլիա... այո՛, օգոստոսին՝ երեք ամիս առաջ: Նրա հետ հանդիպեցի Կենու տնակում, և նա, պետք է ասեմ, իրապես շահավետ առաջարկ արեց ինձ: Ես ասացի նրան, որ պետք է մտածեմ և խորհրդակցեմ կնոջս հետ: Նա լիակատար ըմբռնումով վերաբերվեց դրան: Ես վերադարձա Արևելյան Աֆրիկա, քննարկեցի դա Պատի հետ: Վերջնարդյունքում որոշեցի ընդունել հայրիկի առաջարկը: Պետք է

գործերս ավարտին հասցնեի այնտեղ, բայց համաձայնեցի անել դա մինչև նախորդ ամսվա վերջը: Ես ասացի նրան, որ հեռագիր կուղարկեմ՝ Անգլիա ժամանման ստույգ ամսաթվով:

Տեսուչ Նիլը հազաց:

- Ձեր ժամանումը կարծես թե հանկարծակիի է բերել Ձեր եղբորը:

Լանսն անսպասելիորեն քմծիծաղ տվեց: Նրա բավական գրավիչ դեմքն իսկական չարաճճի կրակով բռնկվեց:

- Ձեմ կարծում՝ ծերուկ Փերսին որևէ բան է իմացել սրա մասին,- ասաց նա:- Այդ ժամանակ նա արձակուրդն էր անցկացնում Նորվեգիայում: Եթե ինձ հարցնեք, հայրիկը դիտավորյալ էր հենց այդ պահին ընտրել: Նա Փերսիի թիկունքում էր գործում: Իրականում հիմնավոր կասկած ունեմ, որ ինձ առաջարկ անելուն հորս դրդել էր բուռն վեճը խեղճ ծերուկ Փերսիի կամ Վալի հետ, ինչպես ինքն է նախընտրում, որ կոչեն իրեն: Վալը, կարծում եմ, փորձել է փոքրիշատե կառավարել հայրիկին: Դե, հայրիկը երբեք նման բան չէր հանդուրժի: Թե կոնկրետ որն էր վեճի պատճառը, չգիտեմ, բայց նա կատաղած էր: Եվ ինձ թվում է՝ հրաշալի միտք է համարել ինձ այստեղ բերելն ու դրանով խեղճ ծերուկ Վալի ծրագրերը խափանելը: Թեկուզ միայն այն պատճառով, որ նա երբևէ առանձնապես չի համակրել Փերսիի կնոջը, իսկ իմ ամուսնությունից բավական գոհ էր սնորհստական առումով: Նրա պատկերացմամբ՝ սա լավ կատակ կլիներ. ինձ տուն բերել և Փերսիին կանգնեցնել կայացած փաստի առաջ:

- Որքան ժամանակ մնացիք Կենու տնակում այդ առիթով:

- Օ՛, մեկ կամ երկու ժամից ոչ ավելի: Նա չխնդրեց, որ գիշերեմ այնտեղ: Վստահ եմ՝ ամբողջ միտքն այն էր, որ իմ

միջոցով նա յուրատեսակ գաղտնի հարձակում էր պատրաստում Փերսիի թիկունքում: Կարծում եմ՝ նա չէր ուզում, որ նույնիսկ սպասավորները խոսեին այդ մասին: Ինչպես ասացի, կանգ առանք այնտեղ, որ ես մտածեմ դրա շուրջ, խոսեմ Պատի հետ, իսկ հետո գրեմ նրան որոշմանս մասին, ինչն էլ արեցի: Ես գրեցի նրան ժամանմանս մոտավոր ամսաթիվը և վերջապես երեկ հեռագիր ուղարկեցի Փարիզից:

Տեսուչ Նիլը գլխով արեց:

- Հեռագիր, որը չափազանց զարմացրեց Ձեր եղբորը:

- Չեմ էլ կասկածում: Սակայն, ինչպես միշտ, Փերսին շահում է: Ես չափից դուրս ուշացա:

- Այո՛, - մտազբաղ համաձայնեց տեսուչ Նիլը, - Դուք չափից դուրս ուշ եկաք: - Ապա շտապեց շարունակել. - Օգոստոսին՝ Ձեր այցի ժամանակ, ընտանիքի մյուս անդամներից որևէ մեկին հանդիպել եք:

- Խորթ մայրս էր ներկա մեր թեյախմությանը:

- Նախկինում երբևէ հանդիպել էիք նրան:

- Ո՛չ: - Նա կրկին անսպասելիորեն քմծիծաղ տվեց: - Հայրիկը, անկասկած, գիտեր ինչպես ընտրություն անել: Նա պետք է որ առնվազն երեսուն տարի երիտասարդ լինի նրանից:

- Ներեցեք, որ հարցնում եմ, բայց Ձեր հոր երկրորդ ամուսնությունը չի վշտացրել Ձեզ կամ Ձեր եղբորը:

Լանսը զարմացած տեսք ուներ:

- Ինձ, իհարկե, չի վշտացրել, և կարծում եմ՝ Փերսիվալին նույնպես: Ի վերջո, մեր մայրը մահացել է, երբ մենք մոտ... անհ, տասը, տասներկու տարեկան էինք: Իրականում ինձ զարմացնում է այն, որ հայրիկն ավելի վաղ չի ամուսնացել:

Տեսուչ Նիլը շշնջաց.

- Քեզնից շատ ավելի երիտասարդ կնոջ հետ ամուսնանալը կարելի է ռիսկային համարել:

- Իմ սիրելի եղբայրն է դա ասել Ձեզ: Իսկը նրա ոճով է: Փերսին գրպարտանքների վարպետ է: Այդպիսին է իրերի դասավորությունը, տեսուհի: Խորթ մայրս է կասկածվում հորս թունավորելու մեջ:

Տեսուհ Նիլի դեմքին դատարկ արտահայտություն հայտնվեց:

- Դեռ վաղ է որոշակի պատկերացում կազմելու համար, միսթր Ֆորթեսքյու,- սիրալիրորեն ասաց նա:- Դե ինչ, կարող եմ հարցնել, թե ինչ ծրագրեր ունեք:

- Ծրագրեր:- Լանսը մտքերի մեջ ընկավ:- Ենթադրում եմ՝ ստիպված կլինեմ նոր ծրագրեր կազմել: Որտեղ է ընտանիքը: Բոլորը Կենու տնակում են:

- Այո:

- Ճիշտ կլինի՝ անմիջապես այնտեղ գնամ:- Նա թեքվեց կնոջ կողմը:- Լավ կանեիր՝ հյուրանոց գնայիր, Պանտ:

- Ո՛չ, ո՛չ, Լանս,- շտապեց առարկել կինը,- ես քեզ հետ կգամ:

- Ո՛չ, սիրելիս:

- Բայց ես ուզում եմ:

- Իսկապես կնախընտրեի, որ չգայիր: Գնա և մնա... օ, այնքան վաղուց չեմ մնացել Լոնդոնում... «Բարնսում»: «Բարնս» հյուրանոցը հաճելի ու հանգիստ վայր էր: Ենթադրում եմ՝ դեռ այդպես է:

- Օ՛, այո, միսթր Ֆորթեսքյու:

- Լավ, Պանտ: Ես քեզ այնտեղ կտեղավորեմ, եթե սենյակ ունենան, ապա Կենու տնակ կգնամ:

- Բայց ինչո՞ւ չեմ կարող քեզ հետ գալ, Լանս:

Լանսի դեմքը հանկարծ մոռայլվեց:

- Անկեղծ ասած, Պանտ, վստահ չեմ, որ ինձ գրկաբաց



կընդունեն: Հայրիկն էր ինձ հրավիրել, բայց հայրիկը մահացած է: Ես չգիտեմ, թե ով է հիմա այդ տան տերը: Գուցե Փերսին կամ թերևս Ադելը: Ինչ էլ որ լինի, նախքան քեզ այնտեղ տանելը՝ ես կցանկանայի տեսնել, թե ինձ ինչպիսի ընդունելության կարժանացնեն: Բացի դրանից...

- Բացի դրանից՝ ի՞նչ:

- Ես չեմ ուզում քեզ տանել մի տուն, որտեղ թունավորող անձ է ազատորեն շրջում:

- Օ՛, ինչպիսի անհեթեթություն:

- Երբ հարցը վերաբերում է քեզ,- պնդեց Լանսը,- ես ռիսկի չեմ դիմում:

## ԳԼՈՒԽ 11

Միսթըր Դյուբուան վրդովված էր: Նա զայրույթով պատահոտեց Ադել Ֆորթեսքյուի նամակը և թղթի համար նախատեսված աղբամանի մեջ գցեց: Ապա զգուշավորության պոռթկումով դուրս քաշեց պատառիկները, լուցկի վառեց ու մոխրի վերածեց դրանք: Նա փնթփնթաց.

- Ինչո՞ւ են կանայք այսքան ապուշ դարձել: Միթե տարրական ողջամտություն էլ չկա...

Մյուս կողմից, մտածեց միսթըր Դյուբուան, կանայք երբևէ ողջամտությամբ աչքի չեն ընկել: Թեև նա մեկ անգամ չէ, որ օգտվել էր դրա պակասից, այժմ դա նյարդայնացնում էր նրան: Ինքն անձամբ նախազգուշական բոլոր միջոցառումները ձեռնարկել էր: Եթե միսիս Ֆորթեսքյուն զանգեր, հրահանգված էր ասել, որ նա տանը չէր: Ադել Ֆորթեսքյուն արդեն երեք անգամ զանգել էր նրան, իսկ հիմա նամակ էր գրել: Ընդհանուր առմամբ, գրելն էլ ավելի վատ էր: Նա մի պահ մտորեց, ապա մոտեցավ հեռախոսին.

- Կարո՞ղ եմ խոսել միսիս Ֆորթեսքյուի հետ, խնդրեմ: Այո՞, միսթըր Դյուբուան է:

Մի քանի վայրկյան անց լսվեց նրա ձայնը.

- Վիվիան, վերջապես:

- Այո՞, այո՞, Ադել, բայց զգուշ եղիր: Որտեղի՞ց ես խոսում:

- Գրադարանից:

- Վստահ ես, որ ոչ ոք ականջ չի դնում նախասրահից:

- Ինչո՞ւ պիտի նման բան անեն:

- Դե՛, երբեք չես իմանա: Ոստիկանությունը դեռ տանն է:

- Ո՛չ, գնացել են, համենայն դեպս՝ առայժմ: Օ՛, Վիվիան, սիրելիս, սարսափելի է:

- Այ՛ր, այ՛ր, չեմ կասկածում, որ այդպես է: Բայց լսիր, Ադել, մենք պետք է զգույշ լինենք:

- Օ՛, իհարկե, սիրելիս:

- <Եռախոսով ինձ «սիրելիս» մի անվանիր: Դա վտանգավոր է:

- Մի քիչ շատ չեմ խուճապի մատնվում, Վիվիան: Ի վերջո, մեր օրերում բոլորն են իրար «սիրելիս» ասում:

- Այ՛ր, այ՛ր, այդպես էլ կա: Բայց լսիր: Մի զանգիր ինձ ու մի գրիր:

- Ախր, Վիվիան...

- Միայն որոշ ժամանակով, հասկանո՞ւմ ես: Մենք պետք է զգույշ լինենք:

- Ա՛հ: Լավ:- Նրա ձայնի մեջ վիրավորանք հնչեց:

- Ադել, լսիր: Քեզ գրած նամակներս... Դու իսկապես այրել ես դրանք, այնպես չէ՞:

Մի ակնթարթ վարանելուց հետո Ադել Ֆորթեսբյուն պատասխանեց.

- Բնականաբար: Ես քեզ ասել էի, որ կանեմ դա:

- Ուրեմն ամեն բան կարգին է: Դե՛, հիմա կախում եմ խոսափողը: Չզանգես ինձ ու չգրես: Երբ ժամանակը գա, ես իմաց կտամ իմ մասին:

Միսթր Դյուբուան կախեց խոսափողը հեռախոսի լծակային հոսանքափոխարկիչի վրա: Մտազբաղ շոյեց այտը: Այդ ակնթարթային վարանումը դուր չէր գալիս նրան: Ադելն այրել էր նամակները: Բոլոր կանայք նույնն են: Նրանք խոստանում են այրել իրերը, իսկ հետո չեն անում դա:

Նամակներ, մտածում էր միսթր Դյուբուան, կանայք միշտ են ուզում, որ նամակներ գրես իրենց: Ինքը փորձում էր զգույշ լինել, բայց երբեմն անհնար է խուսափել դրանից: Կոնկրետ ինչ էր գրել Ադել Ֆորթեսբյունին ուղղված քիչ նա-

մակներում: «Սովորական դատարկաբանություն», - ընկճված մտածեց նա: Սակայն միթե դրանցում չկային որոշակի բառեր կամ արտահայտություններ, որոնք ոստիկանությունը կարողանար խեղաթուրել այնպես, որ ըստ իրենց ցանկության մեկնաբանվեին: Նա հիշեց Էդիթ Թոմփսոնի գործը: Թվում էր՝ իր նամակները բավականաչափ անվտանգ էին, բայց նա չէր կարող համոզված լինել: Նրա անհանգստությունն աճում էր: Նույնիսկ եթե Ադելը դեռ չէր այրել իր նամակները, խելքը կհերիքեր, որ հիմա այրեր: Թե՛ դրանք արդեն ոստիկանության ձեռքում էին: Հետաքրքիր է՝ որտե՞ղ էր պահում դրանք: Թերևս, վերնահարկի իր հյուրասենյակում: Այն փոքրիկ անարժեք գրասեղանում, որը, հավանաբար, Լյուդովիկոս XIV-ի շրջանի հնության նմանվածք էր: Մի անգամ Ադելն ինչ-որ բան էր ասել իրեն դրա գաղտնի դարակի մասին: Գաղտնի դարակ: Դրանով ոստիկանությանը երկար չես մոլորեցնի: Թեև հիմա տանը ոստիկաններ չկային: Նա այդպես ասաց: Առավոտյան այնտեղ էին եղել, իսկ հիմա բոլորը հեռացել էին:

Մինչև այժմ նրանք հավանաբար զբաղված էին եղել թունավորման հնարավոր աղբյուրը սննդի մեջ փնտրելով: Հույս ուներ՝ նրանք չէին խուզարկել սենյակները մեկը մյուսի հետևից: Թերևս դա անելու համար նրանք ստիպված կլինեին թույլտվություն խնդրել կամ խուզարկության հրամանագիր ստանալ: Գուցե եթե ինքը գործեր հիմա, անհապաղ...

Նրա մտքում հստակորեն երևաց տան պատկերը: Վրա էր հասնում մթնշաղը: Թեյ էին մատուցելու կամ գրադարանում, կամ հյուրասենյակում: Բոլորը կհավաքվեին ներքևի հարկում, իսկ սպասավորները թեյ կխմեին իրենց սենյակում: Վերնահարկում ոչ ոք չէր լինի: Ինքը հեշտությամբ կանցներ պարտեզով՝ կենու ցանկապատերի երկայն-

քով, որոնք այդքան հիանալի թաքստոց էին ապահովում: Պատշգամբում փոքրիկ կողմնային դուռ կար: Այն միայն քնելուց առաջ էին կողպում: Կարելի էր ներս սողոսկել դրանով և պահը որսալով՝ աննկատելիորեն բարձրանալ վերնահարկ:

Վիվիան Դյուբուան ծանրութեթև արեց հետագա անելիքները: Եթե Ֆորթեսքյուի մահը վերագրվեր սրտի նոպային կամ կաթվածին, ինչպես վստահաբար պետք է լիներ, իրավիճակը միանգամայն այլ կլիներ: Այս պարագայում...

- Ավելի լավ է արածի համար զղջալ, քան չարածի, - քրթմնջաց նա:

\* \* \*

Մերի Դավը դանդաղ իջավ լայն աստիճաններով: Մի պահ նա կանգ առավ սանդղահարթակի պատուհանի մոտ, որից նախորդ օրը հետևել էր՝ ինչպես է տեսուչ Նիլը ժամանում: Այժմ դուրս նայելով՝ մարող լույսի ներքո տղամարդու կերպարանք նշմարեց, որը նույն պահին չքացավ՝ շրջանցելով կենու ցանկապատը: Մերի Դավը մտածեց՝ արդյոք դա Լանսելոթ Ֆորթեսքյուն էր՝ անառակ որդին: Գուցե մեքենան դարպասի մոտ էր թողել և թափառում էր պարտեզում՝ հիշելով հին ժամանակները, նախքան կղիմակայեր ամենայն հավանականությամբ իր հանդեպ թշնամանքով լցված ընտանիքին: Մերի Դավը որոշակի կարեկցանք զգաց նրա հանդեպ: Թույլ ժպիտը շուրթերին՝ նա շարունակեց իջնել սանդուղքով: Նախասրահում նա բախվեց Գլեդիսին, որ նյարդային ցատկ արեց նրան տեսնելով:

- Քիչ առաջ լսված ձայնը հեռախոսի զանգն էր, - հարցրեց Մերին: - Ո՞վ էր:

- Օ՛, սխալ հեռախոսահամար էին հավաքել: Կարծում

էին, թե լվացքատնից ենք:- Թվում էր՝ Գլեդիսը խոսում էր շունչը պահած ու շտապողաբար:- Իսկ դրանից առաջ միսթոր Դյուբուան էր զանգել: Տանտիրուհու հետ էր ուզում խոսել:

- Հասկանալի է:

Մերին շարունակեց ընթացքը նախասրահով: Գլուխը շրջելով՝ նա ասաց.

- Կարծում եմ՝ թեյի ժամն է: Դեռ չե՞ք մատուցել այն:

- Միթե արդեն չորսն անց կես է, միսս,- հարցրեց Գլեդիսը:

- Հինգից քսան է պակաս: Հիմա մատուցե՛ք այն, լմվ:

Այնուհետև Մերի Դավը մտավ գրադարան, որտեղ Ադել Ֆորթեսքյուն, բազմոցին նստած, հայացքը չէր կտրում կրակից՝ մատների մեջ խաղացնելով փոքրիկ ժանյակազարդ թաշկինակը: Ադելը կամակորուքյամբ հարցրեց.

- Որտե՞ղ է թեյը:

- Ուր որ է ներս կբերվի,- պատասխանեց Մերի Դավը:

Բուխարուց մի ծղան էր ընկել, ու Մերի Դավը ծնկի իջավ ճաղավանդակի մոտ և ունեւիով իր տեղը օգեց այն՝ ևս մեկ փայտի կտոր ու մի քիչ ածուխ ավելացնելով:

Գլեդիսի՝ խոհանոց մտնելուն պես միսիս Քրամփը՝ կարմրած ու ցասումնալից դեմքով, հայացքը բարձրացրեց սեղանից, որի վրա խմոր էր հունցում խոր ամանի մեջ:

- Գրադարանի զանգը հնչում է ու հնչում: Թեյը մատուցելու ժամանակն է, այ աղջիկ:

- Լավ, լավ, միսիս Քրամփ:

- Երեկոյան ես դեռ Քրամփին կասեմ,- մոթմոթաց միսիս Քրամփը:- Անարգանքի սյունին կգամեմ նրան:

Գլեդիսն անցավ մթերանոց: Նա չէր կտրտել սենդվիչները: Դե՛, չէր էլ պատրաստվում կտրտելու դրանք, հենց այդպես: Առանց դրանց էլ ուտելիքը լիքն էր, այնպես չէ՛:

Երկու տորթ, թխվածքաբլիթներ, սքոններ<sup>1</sup> ու մեղր: Թարմ տնական կարագ սև շուկայից: Այդ ամենը բավական էր, որ ինքը նեղություն չքաշեր լուխկով կամ ֆուա-գրայով<sup>2</sup> սենդվիչներ պատրաստելու համար: Մտածելու այլ բաներ ուներ: Միսիս Քրամփը պարզապես կատաղած էր, և դա միայն այն պատճառով, որ կեսօրին միսթր Քրամփը դուրս էր եկել: Դե, միթե նրա հանգստյան օրը չէր: Միանգամայն ճիշտ է վարվել՝ մտածեց Գլեդիսը: Խոհանոցից միսիս Քրամփը ձայն տվեց նրան.

- Թեյնիկն այնպես է եռում, որ կափարիչը կթռչի: Երբևէ այդ թեյը կպատրաստես:

- Գալիս եմ:

Գլեդիսն արագորեն աչքաչափով թեյ գցեց արծաթե մեծ թրմելու թեյամանի մեջ, տարավ այն խոհանոց ու եռացրած ջուր լցրեց վրան: Թրմելու թեյամանն ու թեյնիկը դրեց հսկայական արծաթե սկուտեղի վրա և ամբողջը տարավ գրադարան՝ տեղավորելով բազմոցի կողքի սեղանիկին: Ապա շտապեց մյուս սկուտեղի հետևից, որի վրա քաղցրեղենն էր: Հազիվ էր նախասրահի հասցրել այն, երբ ցնցվեց պապենական ժամացույցի անսպասելի, ականջ ծակող ձայնից, որ պատրաստվում էր զարկելու:

Գրադարանում Ադել Ֆորթեսքյուն գանգատվեց Մերի Դավին.

- Որտե՞ղ են բոլորն այսօր:

- Ես իսկապես չգիտեմ, միսիս Ֆորթեսքյու: Միսս Ֆորթեսքյուն քիչ առաջ է եկել: Միսիս Փերսիվալն էլ կարծես նամակներ է գրում իր սենյակում:

---

1 Բրիտանական խմորեղեն, որը սովորաբար պատրաստում են ցորենի կամ վարսակի ալյուրով: Այս բովիկները հաճախ մատուցվում են թեյի հետ:

2 Սագի կամ բադի՝ հատուկ ձևով պատրաստված լյարդ:

Ադելը բորբոքվեց.

- Նամակներ, նամակներ: Այդ կինը երբեք չի դադարում նամակներ գրել: Նա նման է իր խավի բոլոր մարդկանց: Անսահման ցնծություն է ապրում, երբ մահ կամ դժբախտություն է լինում: Նողկալի է. ահա թե ինչ կասեմ դրան: Պարզապես նողկալի:

Մերին նրբանկատորեն շնջաց.

- Ես կասեմ նրան, որ թեյը պատրաստ է:

Դռանը հասնելով՝ նա փոքր-ինչ հետ քաշվեց. էլեյն Ֆորթեսքյուն էր սենյակ մտնում:

- Տուրտ է,- ասաց էլեյնը և թրմփոցով նստեց բուխարու մոտ՝ ձեռքերը շփելով կրակի բոցերի դիմաց:

Մերին մի պահ կանգ առավ նախասրահում: Կոմոդներից մեկի վրա դրված էր քաղցրեղենի մեծ սկուտեղը: Նախասրահում մթնում էր, ուստի Մերին վառեց լույսը: Այդ ընթացքում նրան թվաց՝ վերնահարկի միջանցքից լսեց Ջենիֆեր Ֆորթեսքյուի ոտնաձայները: Սակայն ոչ ոք չիջավ աստիճաններով, և Մերին բարձրացավ ու քայլեց միջանցքում:

Փերսիվալ Ֆորթեսքյուն և նրա կինն առանձին բնակարան էին զբաղեցնում տան մի թևում: Մերին թակեց հյուրասենյակի դուռը: Միսիս Փերսիվալը նախընտրում էր, որ դուռը թակեին. այս հանգամանքը մշտապես Քրամփի մեջ քամահրանք էր արթնացնում նրա հանդեպ: Նրա ձայնն աշխուժորեն հնչեց.

- Մտե՛ք:

Մերին բացեց դուռը և շնջաց.

- Թեյն ուր որ է կմատուցվի, միսիս Փերսիվալ:

Նա փոքր-ինչ զարմացած էր Ջենիֆեր Ֆորթեսքյուին դրսի հագուստով տեսնելով: Հենց այդ պահին նա հանում էր իր երկար, ուղտի բրդից վերարկուն:



- Չգիտեի, որ դուրս եք եկել,- ասաց Մերին:

Միսիս Փերսիվալը թեթևակիորեն հևում էր:

- Օ՛, ես ընդամենը պարտեզում էի, այդքան բան: Պարզապես օդ շնչելու: Թեև սաստիկ ցուրտ էր: Ես ուրախությամբ կիջնեմ բուխարու մոտ: Կենտրոնական ջեռուցումն ինչպես հարկն է չի աշխատում: Թող ինչ-որ մեկն այդ մասին խոսի այգեպանների հետ, միսս Դավ:

- Ինքս կխոսեմ,- խոստացավ Մերին:

Ջենիֆեր Ֆորթեսքյուն վերարկուն գցեց աթոռներից մեկի վրա ու Մերիի հետևից դուրս եկավ սենյակից: Աստիճանների վրա Մերին մի կողմ քաշվեց՝ նրան առաջ թողնելով: Ի զարմանս իրեն՝ Մերին նկատեց, որ քաղցրեղենի սկուտեղը դեռ նախասրահում էր: Նա պատրաստվում էր մթերանոց գնալու և Գլեդիսին ծայն տալու, երբ Ադել Ֆորթեսքյուն հայտնվեց գրադարանի դռան մոտ՝ նյարդայնացած հարցնելով.

- Թեյի համար մեզ երբևէ ինչ-որ բան կմատուցվի՞:

Մերին արագորեն վերցրեց սկուտեղը և տարավ այն գրադարան՝ եղած-չեղածը դասավորելով բուխարու մոտից ցածր սեղանների վրա: Այն պահին, երբ դատարկ սկուտեղը ձեռքին՝ նա կրկին նախասրահ դուրս եկավ, հնչեց շքամուտքի զանգը: Սկուտեղը ցած դնելով՝ Մերին գնաց անձամբ դուռը բացելու: Եթե դա վերջապես անառակ որդին էր, ապա բավական հետաքրքիր կլիներ տեսնել նրան: «Որքան տարբեր է մյուս Ֆորթեսքյուններից», - մտածեց Մերին՝ բացելով դուռը և նայելով նիհարավուն թուխ դեմքին ու զավեշտալիորեն ծոմոած բերանին: Մերին հանգիստ հարցրեց.

- Միսթր Լանսելոթ Ֆորթեսքյոն:

- Ինքն անձամբ:

Մերին հայացք գցեց նրա թիկունքի կողմը:

- Ձեր ճամպրուկը:

- Ես վճարել ու բաց եմ թողել տաքսին: Սա է ունեցածս:

Նա միջին չափի, ճարմանդով մի պայուսակ վերցրեց գետնից: Մտքում թեթևակիորեն զարմանալով՝ Մերին ասաց.

- Օ՛, Դուք տաքսիով եք եկել: Մտածեցի՝ գուցե ուտքով մոտեցած լինեք: Իսկ Ձեր կի՞նը:

Դեմքը փոքր-ինչ խոժոռելով՝ Լանսը պատասխանեց.

- Կինս չի գալու: Առնվազն հիմա:

- Հասկանալի է: Եկեք այս կողմ, լավ, մի՛սթթեք Ֆորթսքոյու: Բոլորը գրադարանում են, թեյ են խմում:

Մերին տարավ նրան գրադարանի դռան մոտ և թողեց այնտեղ: Ինչ հմայիչ անձնավորություն է Լանսելոթ Ֆորթսքոյուն՝ մտածեց նա: Այդ մտքին հաջորդեց երկրորդը: Հավանաբար բազմաթիվ կանայք նույնպես այդկերպ են մտածել:

\* \* \*

- Լանս:

Էլեյնը նետվեց նրան ընդառաջ: Նա ձեռքերը եղբոր վզով գցեց ու դպրոցական աղջնակի անկաշկանդությամբ գրկեց նրան, ինչը բավական անսպասելի էր Լանսի համար:

- Ողջո՛ւյն: Ահա և ես:

Նա մեղմորեն ազատվեց Էլեյնի գրկից:

- Իսկ նա Ջենիֆերն է:

Ջենիֆեր Ֆորթսքոյուն, հետաքրքրությունից այրվելով, նայում էր նրան:

- Վախենամ՝ Վալը ստիպված է եղել մնալ քաղաքում, ասաց նա: Այնքան շատ անելիքներ կան, դե, գիտեք: Պատրաստություններ տեսնել և նման բաներ անել: Իհար-

կե, այդ ամենը թափվում է Վալի ուսերին: Նա պետք է հոգա ամեն ինչի համար: Չեք էլ պատկերացնի, թե ինչի միջով ենք բոլորս անցնում:

- Պետք է որ սարսափելի լինի Ձեզ համար,- լրջորեն ասաց Լանսը:

Նա թեքվեց դեպի բազմոցին նստած կինը, որը, մեղրն ու սքոնը ձեռքում, լուռ ու գնահատողաբար նայում էր նրան:

- Դե, իհարկե,- բացականչեց Ջենիֆերը,- Դուք ծանոթ չեք Ադելի հետ, այնպես չէ:

- Ա՛հ, ծանոթ եմ,- շշնջաց Լանսը՝ Ադել Ֆորթեսքյուի ձեռքը բռնելով:

Մինչ Լանսը վերևից նայում էր նրան, Ադելի կոպերը թրթռացին: Նա ձախ ձեռքից ցած դրեց սքոնը, որ ուտում էր, և թեթևակիորեն կարգի բերեց մագերը: Դա մի կանացի ժեստ էր՝ նշանավորումն այն բանի, որ սենյակում գեղեցկատես տղամարդ էր հայտնվել: Իր թավ, մեղմ ձայնով նա ասաց.

- Նստե՛ք կողքիս՝ բազմոցին, Լանս:- Ադելը մի բաժակ թեյ լցրեց նրա համար:- Այնքան ուրախ եմ, որ եկել եք,- շարունակեց նա:- Մեզ այնքան պետք է, որ տանը ևս մեկ տղամարդ լինի:

- Թույլ տվեք օգնել՝ ինչով կարողանամ,- ասաց Լանսը:

- Դե, գիտեք... թեև գուցե դեռ չգիտեք... ոստիկանությունն էր այստեղ եկել: Նրանք կարծում են... նրանք կարծում են...- նա խոսքը կիսատ թողեց և անզուսպ ճչաց.- Օ՛, սարսափելի է: Սարսափելի:

- Գիտեմ:- Լանսը լուրջ էր ու կարեկցանքով լի:- Փաստացի, նրանք ինձ դիմավորեցին Լոնդոնի օդանավակայանում:

- Ոստիկանությունն է դիմավորել Ձեզ:

- Այր:

- Ինչ են ասել Ձեզ:

- Դե,- բողոքեց Լանսը,- նրանք պատմեցին ինձ այն, ինչ տեղի է ունեցել:

- Նրան թունավորել են,- ասաց Ադելը,- ահա թե ինչ են մտածում, ինչ են ասում: Ոչ թե սննդային թունավորում, այլ իրական՝ ինչ-որ մեկի կողմից: Ես կարծում եմ, իսկապես համոզված եմ, որ նրանք մեզնից մեկին են կասկածում:

Հանկարծ Լանսի դեմքին վաղանցուկ ժպիտ հայտնվեց:

- Դա նրանց գործն է,- սփոփեց նա:- Մեր անհանգստանալուց օգուտ չկա: Ինչ սքանչալի թեյ է: Վաղուց լավ անգլիական թեյ չէի խմել:

Շատ շուտով մյուսները վարակվեցին նրա տրամադրությամբ: Ադելն անսպասելիորեն հարցրեց.

- Իսկ Ձեր կինը... միթե Դուք ամուսնացած չեք, Լանս:

- Այր, ամուսնացած եմ: Կինս Լոնդոնում է:

- Իսկ չե՞ք պատրաստվում... ավելի լավ չէ՞ր լինի այստեղ բերել նրան:

- Ծրագրեր կազմելու համար բավականաչափ ժամանակ կա,- նկատեց Լանսը:- Պատը... Պատը լավ է զգում իրեն այնտեղ, որտեղ հիմա է:

- Միթե նկատի ունես...- կտրուկ կերպով ասաց Էլեյնը,- միթե մտածում ես...

- Այս շուկլադե տորթն ինչ հրաշալի տեսք ունի,- շտապեց ընդհատել նրան Լանսը:- Պետք է մի քիչ փորձեմ:

Իր համար մի շերտ կտրելով՝ նա հարցրեց.

- Մորաքույր Էֆին դեռ ո՞րք է:

- Օ՛, այր, Լանս: Նա չի իջնում ու չի ուտում մեզ հետ, բայց միանգամայն լավ է զգում իրեն: Միայն թե անչափ տարօրինակ է դարձել:

- Նա միշտ է տարօրինակ եղել,- ասաց Լանսը:- Թեյից հետո կբարձրանամ նրան տեսնելու:

- Մարդ իսկապես մտածում է, որ այդ տարիքում նրան ապաստանի նման մի բան է պետք,- մոթմոթաց Ջենիֆեր Ֆորթեսքյուն:- Նկատի ունեմ՝ մի վայր, որտեղ ինչպես հարկն է հոգ կտանեն նրան:

- Աստված օգնական ծեր կանանց համար նախատեսված այն հաստատությանը, որ իր շարքերը կընդունի մորաքույր Էֆիին,- ասաց Լանսը, ապա հավելեց.- Ո՛վ է այն իբր թե ամոթխած աղջիկը, որ ներս թողեց ինձ:

Ադելը զարմացած տեսք ուներ:

- Միթե Քրամփը չի բացել դուռը Ձեր առջև: Ծառայապետը: Օ՛, ո՛չ, մոռացել էի, այսօր նրա հանգստյան օրն է: Թեև, անշուշտ, Գլեդիսը...

Լանսը սկսեց նկարագրել.

- Կապույտ աչքեր, մեջտեղից բաժանված վարսեր, մեղմ ձայն, գառան մորթի հագած: Թե ինչ է թաքնված այդ ամենի հետևում, կնախընտրեի չասել:

- Պետք է որ Մերի Դավը լինի,- ասաց Ջենիֆերը:

- Տնային կառավարչուհու պես մի բան է մեզ համար,- նշեց Էլեյնը:

- Իսկապես:

- Նա իրոք չափազանց օգտակար է,- ասաց Ադելը:

- Այո՛,- մտազբաղ համաձայնեց Լանսը:- Այդպես էլ մտածում էի:

- Իսկ ամենալավն այն է,- ասաց Ջենիֆերը,- որ նա իր տեղը գիտի: Երբեք չի չարաշահում այն, եթե հասկանում եք, թե ինչ նկատի ունեմ:

- Խելացի Մերի Դավ,- ասաց Լանսը և շոկոլադե տորթի ևս մեկ կտոր վերցրեց:

## ԳԼՈՒԽ 12

- Եվ այսպես՝ դու կրկին հայտնվեցիր անկոչ հյուրի պես,- ասաց միսս Ռեմսբրոնը:

Լանսը հեզնական ժպտաց նրան:

- Ճիշտ ասածիդ պես, մորաքոյր Էֆի:

- Հը՛մ,- բացասաբար փնջացրեց միսս Ռեմսբրոնը:- Լավ ժամանակ ես ընտրել դրա համար: Հորդ երեկ սպանել են, տունը լիքն է ոստիկաններով, որ ամեն տեղ քթերը խոթում են, նույնիսկ աղբարկղերն են քրքրում: Պատուհանից եմ տեսել նրանց:- Նա լռեց, կրկին փնջացրեց ու հարցրեց.- Կինդ քեզ հե՛տ է:

- Ո՛չ, Պատին Լոնդոնում եմ թողել:

- Խելամիտ է: Քո փոխարեն՝ ես նույնպես նրան այստեղ չէի բերի: Երբեք չես իմանա, թե ինչ կարող է պատահել:

- Ո՞ւմ: Պատին:

- Ցանկացածին,- ասաց միսս Ռեմսբրոնը:

Լանս Ֆորթեսպյուն մտախոհ նրան նայեց:

- Մտքեր ունեն այս ամենի մասին, մորաքոյր Էֆի,- հարցրեց նա:

Միսս Ռեմսբրոնն ուղիղ պատասխան չտվեց:

- Երեկ տեսուչն էր եկել այստեղ, հարցուփորձ էր անում: Ինձնից նա շատ բան չկորզեց: Բայց նա այնքան հիմար չէր, որքան թվում էր, ամենևին:- Ապա որոշակի վրդովմունքով հավելեց.- Ինչ կզգար պապդ, եթե իմանար, որ տանը ոստիկանություն է եղել. դա բավարար կլիներ, որ նա շուռ գար գերեզմանում: Ամբողջ կյանքում Փլիմոթյան եղբայրության խստակրոն անդամ էր: Ա՛յ թե աղմուկ բարձրացրեց, երբ իմացավ, որ ես հաճախում եմ անգլիկան եկեղեցու երեկոյան ժամերգություններին: Իսկ դա

վստահաբար բավականաչափ անմեղ բան էր՝ սպանության հետ համեմատած:

Սովորաբար Լանսը ժպիտով կպատասխաներ սրան, բայց նրա երկար, թուփ դեմքը դեռևս լուրջ էր:

- Գիտե՞ս,- ասաց նա,- այսքան երկար բացակայելուց հետո ես գրեթե ոչնչից տեղյակ չեմ: Ինչ է կատարվում այստեղ վերջին շրջանում:

Միսս Ռեմսբրոթոմն աչքերը վեր պարզեց:

- Անաստված գործեր,- անդրդվելիորեն ասաց նա:

- Այո՛, այո՛, մորաքույր Էֆի, ինչ էլ որ լիներ, դու այդպես կասեիր: Բայց ինչն է ոստիկանությանը մտածել տվել, որ հայրիկին սպանել են այստեղ, այս տանը:

- Ամուսնական հավատարմության խախտումը մի բան է, սպանությունը՝ մեկ այլ բան,- ասաց միսս Ռեմսբրոթոմը:- Չէի ցանկանա նրա մասին այդպես մտածել, իսկապես չէի ցանկանա:

Լանսը զգաստացավ:

- Ադելի՛:

- Բերանիս կողպեք եմ դրել,- ասաց միսս Ռեմսբրոթոմը:

- Դե՛, սիրելի՛ մորաքույր: Դա հրաշալի դարձվածք է, բայց անիմաստ: Ադելը սիրեկանն ունի: Ադելը և իր սիրեկանը մոլեխինդ են լցրել նրա թեյի մեջ: Այսպիսին է իրերի դասավորությունը:

- Խնդրում եմ, մի՛ կատակիր:

- Ես իսկապես չէի էլ կատակում:

- Մի բան կասեմ քեզ,- անսպասելիորեն ասաց միսս Ռեմսբրոթոմը:- Կարծում եմ՝ այդ աղջիկն ինչ-որ բան գիտի:

- Ո՞ր աղջիկը,- զարմացավ Լանսը:

- Այն մեկը, որ քիթը վեր է քաշում,- պատասխանեց միսս Ռեմսբրոթոմը:- Այն մեկը, որ կեսօրից հետո պետք է թեյ բարձրացնեն ինձ համար, բայց չբերեց: Ասում են՝

դուրս է եկել առանց թույլտվության: Չէի զարմանա, եթե ոստիկանություն գնացած լիներ: Ո՞վ է դուռը բացել քո առաջ:

- Որքան հասկանում եմ՝ Մերի Դավ անունով մեկը: Խոնարհ ու հեզ, բայց ոչ անկեղծ: Նա է ոստիկանություն գնացել:

- Նա չէր գնա ոստիկանություն,- ասաց միսս Ռեմսթրոմը:- Ո՛չ, այն հիմար աղախնին նկատի ունեմ: Ամբողջ օրը վախկոտի պես ցնցվում է ու ցատկում: «Ի՛նչ է պատահել քեզ,- հարցրի ես:- Խիղճդ է տանջում»: Նա պատասխանեց. «Ես ոչինչ չեմ արել... երբեք նման բան չէի անի»: «Հուսով եմ,- ասացի,- բայց հիմա քեզ ինչ-որ բան է անհանգստացնում, այնպես չէ՞»: Ապա նա սկսեց քիթը վեր քաշել ու ասաց՝ չի ցանկացել որևէ մեկին փորձանքի մեջ զգել, վստահ էր, որ այդ ամենը պետք է սխալմունք եղած լիներ: Ես ասացի նրան. «Դե՛, այ՛ աղջիկ, ստի ոտքը կարճ է»: Ահա թե ինչ ասացի: «Գնա՛ ոստիկանություն և պատմիր նրանց ինչ գիտես,- ասացի,- որովհետև ճշմարտությունը կոծկելը երբեք լավ բանի չի բերել, որքան էլ այն տհաճ լինի»: Հետո նա անհեթեթություններ դուրս տվեց այն մասին, որ չի կարող գնալ ոստիկանություն, որ իրեն երբեք չեն հավատա, և ի՛նչ պիտի ասեր: Ի վերջո, ասաց, որ, այնուամենայնիվ, ինքն ընդհանրապես ոչինչ չգիտի:

- Չես կարծում,- կմկմաց Լանսը,- որ նա պարզապես փորձում է կարևորություն տալ իր անձին:

- Ո՛չ: Կարծում եմ՝ նա վախեցած էր: Ինձ թվում է՝ ինչ-որ բան է տեսել կամ լսել, որ նրան պատկերացում է տվել այս ամենի մասին: Գուցե դա կարևոր է կամ էլ բնավ նշանակություն չունի:

- Միթե կարծում ես, որ նա ինքը կարող էր ոխ պահած լինել հայրիկի դեմ...- Լանսը խոսքն ընդհատեց:



Միսս Ռեմսբրոթոմը վճռականորեն թափ էր տալիս գլուխը:

- Նա այն աղջիկներից չէ, որին հայրդ անգամ չնչին ուշադրության կարժանացներ: Ոչ մի տղամարդ չի նկատի նրան, խեղճ աղջիկ: Ա՛հ, ինչ արած, կհամարձակվեմ ասել, որ այդպես միայն ավելի լավ կլինի նրա հոգու համար:

Լանսին չէր հետաքրքրում Գլեդիսի հոգին: Նա հարցրեց.

- Կարծում ես՝ նա ոստիկանական բաժանմունք է վազել:

Մորաքույր Էֆին աշխուժորեն գլխով արեց:

- Այո՛, հնարավոր է՝ չցանկանար ինչ-որ բան ասել նրանց այս տանը՝ վախենալով, որ ականջ կդնեն:

- Ըստ քեզ՝ նա կարո՞ղ էր տեսած լինել ինչ-որ մեկին ուտելիքի մեջ գաղտնաբար որևէ բան լցնելիս,- հարցրեց Լանսը:

Մորաքույր Էֆին սուր հայացք գցեց նրա վրա:

- Հնարավոր է, այնպես չէ՛:

- Այո՛, ենթադրում եմ:- Ներում հայցող հնչերանգով Լանսը հավելեց.- Այս ամենը դեռ այնքան խելքից դուրս է թվում: Ասես դետեկտիվ պատմություն լինի:

- Փերսիվալի կինը հիվանդանոցի բուժքույր է,- ասաց միսս Ռեմսբրոթոմը:

Այս ակնարկն այնքան կտրված թվաց մինչև այդ ասվածից, որ Լանսը շփոթված նայեց նրան:

- Հիվանդանոցի բուժքույրերը սովոր են դեղերի հետ գործ ունենալուն,- բացատրեց միսս Ռեմսբրոթոմը:

Լանսը թերահավատ տեսք ընդունեց:

- Այդ նյութը... տաքսինը... օգտագործվում է բժշկության մեջ:

- Որքան գիտեմ, կենու հատապտուղներից են ստանում այն: Երբեմն երեխաներն ուտում են այդ հատապտուղներից,- ասաց միսս Ռեմսբոթոմը,- և ծանր հիվանդանում: Մի դեպք եմ հիշում, երբ երեխա էի: Դա մեծ տպավորություն էր թողել ինձ վրա: Այդպես էլ չմոռացա: Հիշողություններդ երբեմն օգուտ են տալիս:

Լանսը կտրուկ բարձրացրեց գլուխը և ապշահար նայեց նրան:

- Մի բան է բնական կապվածությունը,- ասաց միսս Ռեմսբոթոմը,- ինչին, հուսով եմ, անմասն չեմ, իսկ մեղսավորությունը չեմ հանդուրժի: Մեղսավորությունը պետք է արմատախիլ արվի:

\* \* \*

- Գնացել է՝ առանց ինձ մի բառ ասելու,- ասաց միսիս Քրամփը՝ բարձրացնելով կարմրած, ցասումնալից դեմքը խմորից, որն այժմ գրտնակում էր սեղանի վրա:- Ծլկել է՝ առանց որևէ մեկին ասելու: Խորամանկ. ահա թե ով է այդ աղջիկը: Խորամանկ: Վախեցել է, որ իրեն հետ կպահեն, իսկ ես կկանգնեցնեի նրան, եթե ձեռքս ընկներ: Ա՛յ քեզ բան: Տանտերը մահացել է, տուն է եկել միսթր Լանսը, որ քանի տարի այստեղ չէր եղել, ու ես ասում եմ Քրամփին. «Հանգստյան օր լինի, թե ոչ, ես գիտեմ իմ պարտականությունները: Այսօր երեկոյան սառը ընթրիք չի մատուցվի, ինչպես մյուս հինգշաբթիներին, այլ տեղը տեղին ճաշկերույթ կլինի: Արտասահմանից ջենթլմեն է գալիս իր կնոջ հետ, որ նախկինում արիստոկրատի հետ է ամուսնացած եղել. ամեն ինչ պետք է հավուր պատշաճի արվի»: Դուք գիտեք ինձ, մի՛սս, գիտեք, որ արժանապատվորեն եմ կատարում աշխատանքս:

Մերի Դավը՝ այս խոստովանության հասցեատերը, մեղմորեն գլխով արեց:

- Իսկ Քրամփն ինչ է ասում:- Չայրույթից միսիս Քրամփի ձայնը բարձրացավ:- «Սա իմ հանգստյան օրն է, և ես դուրս եմ գալիս»։ ահա թե ինչ է ասում: «Թքած արիստոկրատիայի վրա», - ասում է: Հարգանք սեփական աշխատանքի նկատմամբ. Քրամփը զուրկ է սրանից: Այնպես որ, նա գնում է, և ես ասում եմ Գլեդիսին, որ այսօր երեկոյան պետք է մենակ գործը գլուխ բերի: Նա էլ, թե. «Լավ, միսիս Քրամփ», իսկ հետո, հենց գլուխս թեքում եմ, գողեգող հեռանում է: Համենայն դեպս, այսօր նրա հանգստյան օրը չէ: Ուրբաթն է նրա ազատ օրը: Չգիտեմ՝ հիմա ինչպես ենք գլուխ հանելու: Փառք Աստծո, միսթր Լանսը կնոջն իր հետ չի բերել:

- Գլուխ կհանենք, միսիս Քրամփ,- Մերիի ձայնը միաժամանակ և՛ հանգստացնող էր, և՛ տիրական,- եթե միայն մի քիչ պարզեցնենք ճաշացանկը:- Նա մի քանի առաջարկ արեց: Միսիս Քրամփը, դժկամորեն համաձայնելով, գլխով արեց:- Այդքանը ես միանգամայն հեշտությամբ կկարողանամ մատուցել,- ամփոփեց Մերին:

- Ուզում եք ասել՝ Դոնք կսպասարկեք սեղանը,- թերահավատորեն հարցրեց միսիս Քրամփը:

- Եթե Գլեդիսը ժամանակին չվերադառնա:

- Նա չի վերադառնա,- ասաց միսիս Քրամփը:- Թրև է գալիս ինչ-որ տեղ՝ փողը խանութներում վատնելով: Ի դեպ, նրա կյանքում երիտասարդ կա, միսս, թեև նրան նայելիս մտքովդ չի անցնի: Ալբերտ է անունը: Գարնանն ամուսնանալու է. ինքն է ասել ինձ: Այս աղջիկները չգիտեն, թե ինչ է ամուսնացած լինելը: Այ թե ինչերի միջով եմ անցել Քրամփի հետ:- Նա հառաչեց, ապա անցավ իր սովորական ձայնին.- Թեյի մասին ինչ կասեք, միսս: Ո՞վ է սպասքը հավաքելու սեղանից ու լվանալու:

- Ես,- պատասխանեց Մերին:- Հիմա կգնամ ու կանեն դա:

Գրադարանի լույսերը վառած չէին, թեև Ադել Ֆորթեսքյուն դեռ նստած էր բազմոցին՝ թեյի սկուտեղի մոտ:

- Վառեն լույսերը, միսիս Ֆորթեսքյու,- հարցրեց Մերին: Ադելը չպատասխանեց:

Մերին վառեց լույսերը և գնաց պատուհանի մոտ՝ բացելով վարագույրները: Միայն այն ժամանակ, երբ նա թեքեց գլուխը, տեսավ կնոջ դեմքը, որ թիկունքով հենվել էր բարձերին: Կողքին կեսը կերած, մեղրով պատված սքոնն էր, իսկ թեյի բաժակը դեռ կիսով չափ լիքն էր: Ադել Ֆորթեսքյուի մահը վրա էր հասել արագ ու անսպասելիորեն:

\* \* \*

- Դե՛,- անհամբերությամբ հարցրեց տեսուչ Նիլը:

Բժիշկը շտապեց պատասխանել.

- Ցիանիդ... գուցե կալիումի ցիանիդ... թեյի մեջ:

- Ցիանիդ,- մոթմոթաց Նիլը:

Բժիշկը թեթևակի հետաքրքրասիրությամբ նայեց նրան:

- Սա խիստ հուզել է Ձեզ... որևէ հատուկ պատճառ կա...

- Նա էր սպանության կասկածյալը,- պատասխանեց Նիլը:

- Իսկ պարզվեց՝ նա զոհ է: Հը՛մ: Ստիպված եք լինելու նորից մտածել, այնպես չէ՛:

Նիլը գլխով արեց: Դեմքը դառնություն էր արտահայտում, իսկ ծնոտը չարագուշակորեն ձգվել էր:

Թունավորել են: Ուղիղ իր քթի տակ: Տաքսին՝ Ռեքս Ֆորթեսքյուի առավոտյան սուրճի մեջ, ցիանիդ՝ Ադել Ֆոր-

թեսքյուի թեյի: Եվ կրկին նեղ ընտանեկան գործ: Կամ այդպես էր թվում:

Ադել Ֆորթեսքյուն, Ջենիֆեր Ֆորթեսքյուն, Էլեյն Ֆորթեսքյուն և նոր ժամանած Լանս Ֆորթեսքյուն էին միասին թեյել գրադարանում: Լանսը բարձրացել էր միսս Ռեմսթրթոմի մոտ, Ջենիֆերը գնացել էր իր հյուրասենյակ՝ նամակներ գրելու, վերջինը Էլեյնն էր դուրս եկել գրադարանից: Ըստ Էլեյնի՝ Ադելը լիովին առողջ էր և վերջին բաժակ թեյն էր լցնում իր համար:

Վերջին բաժակ թեյը: Այո՛, այդ թեյը, անշուշտ, վերջինն էր եղել նրա համար:

Իսկ դրան հաջորդած ժամանակահատվածը, թերևս, քսան ռոպե է տևել, մինչև Մերի Դավը մտել է սենյակ ու հայտնաբերել դիակը:

Եվ այդ քսան ռոպեում...

Տեսուչ Նիլը քթի տակ հայիոյեց ու դուրս եկավ խոհանոց:

Խոհանոցի սեղանի կողքի աթոռին իր զանգվածեղ մարմնով նստած միսիս Քրամփը, որի մարտականության հետքը չէր մնացել՝ ասեղով պայթեցրած փուչիկի պես, գրեթե չչարժվեց, երբ տեսուչը մտավ:

- Որտե՞ղ է այդ աղջիկը: Դեռ չի՞ վերադարձել:

- Գլեդիսը: Ո՛չ... չի վերադարձել: Կասկածում եմ, որ մինչև տասնմեկը վերադառնա:

- Ասում եք՝ նա է պատրաստել թեյը և ներս տարել այն:

- Ես մատով չեմ կպել դրան, սը՛ր, Աստված վկա: Ավելին՝ չեմ հավատում, որ Գլեդիսը որևէ անթույլատրելի բան կաներ: Գլեդիսը նման բան չէր անի: Նա բավական լավ աղջիկ է, սը՛ր... մի քիչ հիմարավուն է, այդքան բան... չար չէ:

Ո՛չ, տեսուչ Նիլը չէր կարծում, որ Գլեդիսը չար է: Նա

Գլեդիսին թունավորող չէր համարում: Ինչ էլ որ լիներ, ցիանիդը թեյամանում չէր հայտնաբերվել:

- Բայց ինչն է ստիպել նրան այսպես անսպասելիորեն հեռանալ: Ասացի՞ք՝ նրա հանգստյան օրը չէ:

- Այո՛, սըր, վաղն է նրա հանգստյան օրը:

- Քրամփը...

Միսիս Քրամփի մարտականությունը հանկարծ վերականգնվեց: Նա բարձրացրեց զայրալից ձայնը.

- Չփորձե՞ք որևէ բան վերագրել Քրամփին: Քրամփը սրա հետ կապ չունի: Նա դուրս է եկել տնից ժամը երեքին, և հիմա ես շնորհակալ եմ նրան, որ այդպես է արել: Նա նույնքան հեռու է այս ամենից, որքան ինքը միսթր Փերսիվալը:

Փերսիվալ Ֆորթեսպյուն քիչ առաջ էր վերադարձել Լոնդոնից, և նրան դիմավորել էին երկրորդ ողբերգության ցնցող լուրով:

- Ես չէի մեղադրում Քրամփին, - մեղմորեն նկատեց Նիլը: - Պարզապես հետաքրքիր էր՝ նա ինչ-որ բան իմացել է Գլեդիսի ծրագրերի մասին:

- Նրա հագին իր լավագույն նեյլոնե զուգագուլպան էր, - ասաց միսիս Քրամփը: - Ինչ-որ բան կար մտքին: Ինձ չես խաբի: Թեյի համար սենդվիչները նույնպես չէր պատրաստել: Օ՛, այո՛, ինչ-որ բան էր մտքին դրել: Երբ վերադառնա, ինչ մտածում եմ, երեսին կասեմ:

«Եթե վերադառնա...»:

Տագնապի աղոտ մի զգացում տիրեց Նիլին: Այն թոթափելու համար նա բարձրացավ Ադել Ֆորթեսպյուի ննջասենյակ: Շքեղ սենյակ էր՝ վարդագույն դիպակից վարագույրներով և հսկայական ոսկեզօծ մահճակալով: Մի կողմում դուռ կար, որ տանում էր հայելիներով երեսպատած լոգասենյակ՝ խլորձի վարդագույն երանգով ճենապակյա

խոր լոգարանով: Լոգասենյակից այն կողմ Ռեքս Ֆորթեսըյուի հանդերձասենյակն էր, որտեղ մուտք կար միջսենյակային դռնով: Նիլը վերադարձավ Ադելի ննջասենյակ, ապա մյուս կողմի դռնով մտավ նրա հյուրասենյակը:

Սենյակը կահավորված էր ամպիր ոճով՝ հատակին վարդանախշ գորգով: Նիլն ընդամենը թուուցիկ հայացքով անցավ այդ սենյակով, որը մանրակրկիտորեն զննել էր նախորդ օրը՝ հատուկ ուշադրություն դարձնելով փոքր նրբաոճ գրասեղանին:

Սակայն հանկարծ նրա ուշադրությունը գրավեց մի բան, որից քարացավ: Վարդանախշ գորգի կենտրոնում փոքր ցեխագուղձ էր:

Նիլը մոտեցավ և բարձրացրեց այն: Ցեխը դեռ թաց էր:

Նա շուրջը նայեց... այլ ոտնահետքեր չէին երևում... մեն-միայն թաց հողի այս պատառիկն էր:

\* \* \*

Տեսուչը զննեց Գլեդիսի ննջասենյակը: Տասնմեկն անց էր, Քրամփը եկել էր կես ժամ առաջ, բայց Գլեդիսի հետքը դեռ չկար: Տեսուչ Նիլը շուրջը նայեց: Ինչպիսին էլ եղած լիներ Գլեդիսի մասնագիտական պատրաստվածությունը, բնույթով նա թափթփված էր: Տեսուչ Նիլը եզրակացրեց, որ նա հազվադեպ էր հավաքում անկողինը, գրեթե չէր բացում պատուհանները: Թեև Գլեդիսի անձնական սովորություններն այս պահին նրան չէին հուզում: Փոխարենը նա մանրակրկիտորեն զննեց նրա ունեցած-չունեցածը:

Այն բաղկացած էր հիմնականում էժան ու խղճուկ քրջերից: Քիչ բան կար, որ դիմացկուն էր կամ լավորակ: Հասակն առած էլենը, որին օգնության էր կանչել, օգտակար չէր: Նա չգիտեր՝ Գլեդիսն ինչ հագուստ ուներ կամ չու-

ներ: Չէր կարող ասել՝ բացակայում էր որևէ բան, թե ոչ: Հազուստից ու ներքնազգեստից տեսուչն անցավ կոմո-  
դի պարունակությանը: Այնտեղ էր Գլեդիսը պահում իր  
գանձերը: Կային պատկերազարդ բացիկներ ու թերթերի  
կտրանքներ, գործվածքի նախշեր, դիմահարդարման և  
մաշկի խնամքի, դերձակության և նորաձևության խոր-  
հուրդներ:

Տեսուչ Նիլը խնամքով տեսակավորեց դրանք: Բացիկ-  
ների վրա հիմնականում պատկերված էին տարբեր վայ-  
րերից տեսարաններ, որտեղ, ենթադրաբար, Գլեդիսն  
անցկացրել էր իր արձակուրդները: Բացիկներից երեքը  
ստորագրված էին «Բերտով»: Բերտը հավանաբար այն  
երիտասարդն էր, որի մասին հիշատակել էր միսիս Քրամ-  
փը: Առաջին բացիկի վրա ոչ այնքան գրագիտորեն գրված  
էր. «Ամենայն բարիք: Շատ եմ կարոտում քեզ: Հավերժ քո-  
նը՝ Բերտ»: Երկրորդում գրված էր. «Այստեղ բազմաթիվ  
սիրունիկ աղջիկներ կան, բայց ոչ մեկը եղունգդ չարժե:  
Շուտով կհանդիպենք: Չմոռանաս մեր ժամադրության մա-  
սին: Եվ հիշիր, որ դրանից հետո... ամեն ինչ լավ կլինի, և  
մենք հավիտյան երջանիկ կապրենք»: Երրորդում պարզա-  
պես ասվում էր. «Չմոռանաս: Ես վստահում եմ քեզ: Սի-  
րով՝ Բ.»:

Այնուհետև Նիլն աչքի անցկացրեց թերթերի կտրանք-  
ները և տեսակավորեց երեք կույտով: Դերձակության ու  
զեղեցկության խորհուրդներ, կինոաստղերի մասին նյու-  
թեր. ըստ երևույթին Գլեդիսը նրանց մեծ երկրպագուն էր,  
ինչպես նաև կարծես թե հափշտակված էր գիտության  
վերջին հրաշքներով: Կտրանքներ կային թռչող ափսեների,  
գաղտնի գենքերի, ռուսների կողմից կիրառվող ճշմար-  
տության շիճուկների մասին և պնդումներ, թե ամերիկացի  
բժիշկներն ինչ-որ անհավանական դեղեր են հայտնագոր-



ծել: Քսաներորդ դարի ողջ վիուկությունը, ինչպես Նիլն էր մտածում: Սակայն սենյակում չկար մի բան, որը հուշում տար նրան՝ կապված աղջկա անհետացման հետ: Նա օրագիր չուներ, թեև այնպես չէ, որ տեսուչը դրա հույսն ուներ: Դրա հավանականությունն աննշան էր: Չկար անավարտ նամակ, բացարձակապես ոչ մի գրառում այն մասին, որ նա կարող էր Ռեքս Ֆորթեսքյուի մահվանն առնչվող ինչ-որ բան տեսած լինել: Ինչ էլ որ Գլեդիսը տեսած լիներ, ինչ էլ որ իմանար, դա հաստատող փաստ չկար: Միայն գուշակել կարելի էր, թե ինչու էր թեյի երկրորդ սկուտեղը մնացել նախասրահում, իսկ Գլեդիսն ինքը այդպես անսպասելիորեն չքացել:

Հառաչելով Նիլը դուրս եկավ սենյակից՝ դուռը հետևից փակելով:

Մինչ նա պատրաստվում էր իջնելու փոքրիկ պտուտակաձև սանդուղքով, ստորին սանդղահարթակից վազող ոտնաձայներ լսեց:

Աստիճանների ներքևից նրան նայեց սերժանտ Հեյի մտահոգ դեմքը: Սերժանտը փոքր-ինչ հևում էր:

- Սըր,- հրատապ ասաց նա:- Սըր: Մենք գտել ենք նրան:

- Գտել եք:

- Սպասուհին է գտել, սըր... Էլենը... հիշել է, որ ներս չի բերել լվացքապարանից կախած հագուստը... հետնամուտքից ոչ հեռու: Այնպես որ, նա լապտերով դուրս է եկել լվացքը ներս բերելու և ոտքը դեմ է առել դիակի... աղջկա դիակի... նրան խեղդամահ են արել՝ զուգազուլպայով կոկորդը սեղմած... ես կասեի՝ մի քանի ժամ է, ինչ մահացած է: Եվ, սըր, սա ինչ-որ չար կատակ է... նրա քիթը սեղմված էր լվացքի ամրակով...

## ԳԼՈՒԽ 13

Գնացքով ճամփորդող հասակն առած լեղին երեք թերթի առավոտյան համարներ էր գնել, և դրանցից յուրաքանչյուրը, որ կարդացել, ծալել ու մի կողմ էր դրել, նույն գլխագիրն ուներ: Խոսքն այլևս թերթերի անկյուններում թաքնված փոքր հոդվածների մասին չէր: Գլխագրային աղաղակող հայտարարություններ էին Կենու տնակի եռակի ողբերգության մասին:

Հասակն առած լեղին նստած էր մեջքն ուղիղ, նայում էր գնացքի պատուհանից՝ շուրթերը սեղմած, ճերմակավարդագույն կնճռոտ դեմքի անհանգիստ ու դժգոհ արտահայտությամբ: Միսս Մարփիլը մեկնել էր Սենթ Մերի Միդից առավոտյան գնացքով, հանգուցակայարանում տեղփոխ արել և շարունակել ճանապարհը դեպի Լոնդոն, որտեղ մետրոյի օղակաձև գծով հասել լոնդոնյան մեկ այլ կայարան, իսկ այնտեղից՝ Բեյդոն Հիթ:

Կայարանում նա տաքսի կանգնեցրեց և խնդրեց տանել իրեն Կենու տնակ: Այնքան հմայիչ, այնքան անմեղ, փափկամազիկ, ճերմակ ու վարդագույն դեմքով տատիկ էր միսս Մարփիլը, որ ենթադրածից անհամեմատ հեշտությամբ մուտք գործեց այն տունը, որն այժմ գրեթե վերածվել էր պաշարված ամրոցի: Ճիշտ է, ոստիկանությունը որոշակի հեռավորության վրա էր պահում լրագրողների ու լուսանկարիչների բանակը, բայց միսս Մարփիլին առանց կասկածի թույլ տվեցին ներս անցնել. որևէ մեկի մտքով չէր անցնի, որ նա ոչ այլ ոք չէր, եթե ոչ ընտանիքի տարեց ազգականներից մեկը:

Միսս Մարփիլը վճարեց տաքսու վարորդին ստույգ հաշված մանրադրամով և սեղմեց շքամուտքի զանգի կոճակը: Քրամփը բացեց այն, և միսս Մարփիլն իր հմուտ աչքով

գնահատեց նրան: «Հայացքը փախցնում է,- մտածեց նա:-  
Ընդ որում՝ մահու չափ վախեցած է»:

Քրամփը տեսավ բարձրահասակ, տարիքն առած կնոջ՝  
հնաոճ թվիդե պիջակով ու կիսաշրջագեստով, երկու  
շարՖով ու թռչնափետուրով զարդարված փոքրիկ Ֆետրե  
գլխարկով: Ծեր լեդիի ձեռքին տարողունակ պայուսակ էր,  
իսկ ոտքերի մոտ՝ հին, բայց լավորակ ճամպուրկ: Լեդիին  
տեսնելուն պես Քրամփը ճանաչեց նրան և իր ձայնին հնա-  
րավորինս հարգալից հնչեցրանգ հաղորդելով՝ ասաց.

- Այո՛, մադամ:

- Կարո՞ղ եմ տեսնել տանտիրուհուն, խնդրեմ,- հարցրեց  
միսս Մարփը:

Քրամփը հետ քաշվեց՝ թույլ տալով, որ նա ներս մտնի:  
Ծառայապետը վերցրեց ճամպուրկը և խնամքով տեղավո-  
րեց նախասրահում:

- Դե՛, մադամ,- վարանեց նա,- չգիտեմ, թե ում...

Միսս Մարփին օգնության հասավ նրան:

- Ես եկել եմ խոսելու այն խեղճ աղջկա մասին, որին  
սպանել են: Գլեդիս Մարտինի:

- Ա՛հ, հասկանալի է, մադամ: Դե՛, այդ դեպքում...- Նա  
խոսքը կիսատ թողեց՝ նայելով գրադարանի դռան կողմը,  
որտեղից հենց այդ պահին մի բարձրահասակ երիտա-  
սարդ կին էր դուրս եկել:- Սա միսիս Լանս Ֆորթեսքյուն է,  
մադամ,- ասաց նա:

Պատն առաջ եկավ, և նա ու միսս Մարփը միմյանց  
նայեցին: Միսս Մարփը զարմանքի թեթևակի զգացողութ-  
յուն ապրեց: Նա չէր սպասում, որ այս տանը կտեսներ  
Պատրիսիա Ֆորթեսքյուի նման մեկին: Տան ներքին հար-  
դարանքն այնպիսին էր, ինչպիսին ինքն էր պատկերաց-  
րել, բայց Պատը, չգիտես ինչու, չէր համապատասխանում  
դրան:

- Գլեդիսի հարցով է, մադամ,- պատրաստակամորեն  
ասաց Քրամփը:

Պատը փոքր-ինչ անվճռականորեն ասաց.

- Կգամք այստեղ: Մենք լիովին մենակ կլինենք:

Նա դեպի գրադարան առաջնորդեց միսս Մարփլին:

- Կամ մեկը, ում հատկապես կցանկանայիք տեսնել,-  
հարցրեց Պատը,- որովհետև ես գուցե առանձնապես օգ-  
տակար չլինեմ: Հասկանո՞ւմ եք՝ ամուսինս և ես ընդամենը  
մի քանի օր առաջ ենք վերադարձել Աֆրիկայից: Մենք իս-  
կապես գրեթե տեղյակ չենք տնային գործերին: Բայց ես  
կարող եմ գնալ տալիս կամ տեգրակնոջս հետևից:

Միսս Մարփլը հայացք զցեց աղջկան և համակրանք  
զգաց նրա հանդեպ: Նրա լրջությունն ու պարզությունը  
դուր եկան նրան: Ինչ-որ անհասկանալի պատճառով ցա-  
վում էր նրա համար: Միսս Մարփլն աղոտ զգացողու-  
թյուն ուներ, որ նրան ավելի կհամապատասխաներ հնա-  
մաշ չթից, ձիերից ու շներից կազմված հետին պլանը, քան  
այս հարուստ կահավորմամբ տան ներքին հարդարան-  
քը: Սենթ Մերի Միդի շրջակայքում անցկացվող պոնիներ-  
ի ցուցադրությունների և ջիմխանաների<sup>1</sup> ժամանակ միսս  
Մարփլը բազմաթիվ Պատերի էր հանդիպել և լավ գիտեր  
նրանց: Նա իրեն ազատ զգաց այս փոքր-ինչ տխրադեմ  
աղջկա հետ:

- Իրականում ամեն ինչ ավելի քան պարզ է,- ասաց  
միսս Մարփլը՝ զգուշորեն հանելով ձեռնոցներն ու մատ-  
ներն ազատելով դրանցից:- Հասկանո՞ւմ եք, ես թերթերում  
եմ կարդացել, որ Գլեդիս Մարտինին սպանել են: Իսկ ես,  
իհարկե, ամեն բան գիտեմ նրա մասին: Նա մեր կողմերից  
է: Ըստ էության, ես եմ պատրաստել նրան տնային սպա-

---

<sup>1</sup> Ձիասպորտի տեսակ, որն առավել հաճախ կրում է խաղային բնույթ:

սակազմում աշխատանքին: Եվ երբ այս սարսափելի բանը պատահեց նրա հետ, ես մտածեցի... դե՛, մտածեցի, որ պարտավոր եմ գալ ու տեսնել՝ արդյոք կարո՞ղ եմ օգտակար լինել:

- Այո՛,- ասաց Պատը:- Իհարկե: Հասկանում եմ:

Եվ դա ճիշտ էր: Միսս Մարփիի քայլը բնական ու անհրաժեշտ էր թվում:

- Կարծում եմ՝ շատ լավ է, որ եկել եք,- ասաց Պատը:- Ոչ ոք կարծես կարգին չի ճանաչում նրան: Նկատի ունեմ՝ ինչ ազգականներ ունի և նման այլ բաներ:

- Բնականաբար չէին իմանա,- նկատեց միսս Մարփիլը:- Նա ազգականներ չունի: Որբանոցից էր ինձ մոտ եկել: Սենթ Ֆեյթսից: Այնտեղ ամեն ինչ հիանալիորեն է կազմակերպված, բայց, ցավոք, դրամական միջոցները սուղ են: Մենք հնարավոր ամեն բան անում ենք աղջիկների համար, փորձում ենք լավ ուսում տալ և այլն: Գլեդիսն ինձ մոտ եկավ, երբ տասնյոթ տարեկան էր, և ես սովորեցրի նրան ինչպես սպասարկել սեղանը, մաքուր պահել արծաթեղենն ու մնացյալը: Իհարկե, նա երկար չմնաց: Նրանցից ոչ մեկը երկար չի մնում: Մի քիչ փորձառություն ձեռք բերելուն պես նա գնաց ու աշխատանք գտավ սրճարանում: Աղջիկները գրեթե միշտ դրան են ձգտում: Դե՛, նրանք կարծում են՝ դա ավելի ազատ ու ուրախ կյանք է: Գուցե այդպես է: Իսկապես չգիտեմ:

- Ես անգամ չեմ տեսել նրան,- ասաց Պատը:- Սիրունիկ էր:

- Օ՛, ո՛չ,- պատասխանեց միսս Մարփիլը,- ամենևին: Աղետոհիդներ ուներ և լիքը պզուկներ: Բացի դրանից՝ ցավալիորեն հիմար էր: Չեմ կարծում,- մտախոհ շարունակեց միսս Մարփիլը,- որ շատ ընկերներ ձեռք բերած լիներ: Նա չափազանց հետաքրքրված էր տղամարդկանցով, խեղճ

աղջիկ: Բայց տղամարդիկ առանձնակի ուշադրություն  
չէին դարձնում նրան, իսկ մյուս աղջիկներն ավելի շատ  
օգտագործում էին նրան:

- Ինչ դաժան է հնչում,- ասաց Պատը:

- Այո՛, սիրելիս,- համաձայնեց միսս Մարփիլը,- վախե-  
նամ՝ կյանքը դաժան բան է: Մարդ իսկապես չգիտի ինչ  
անել Գլեդիսի նմանների հետ: Նրանք հաճույքով կինո են  
գնում ու այլ նման վայրեր, բայց միշտ մտածում են անհա-  
վանական բաների մասին, որոնք չեն կարող կատարվել  
իրենց հետ: Գուցե դա յուրատեսակ երջանկություն է: Սա-  
կայն նրանք հիասթափվում են: Կարծում եմ՝ սրճարանա-  
յին ու ռեստորանային կյանքը հիասթափեցրել է Գլեդիսին:  
Ոչ մի դյուֆիչ, հետաքրքիր բան տեղի չէր ունենում նրա  
հետ, և պարզապես անընդհատ ոտքի վրա էր: Հնարավոր  
է՛ այդ պատճառով է նա կրկին անցել մասնավոր ծառա-  
յության: Տեղյակ եք, թե նա որքան ժամանակ էր այստեղ:

Պատը թափ տվեց գլուխը:

- Կարծում եմ՝ ոչ վաղուց: Ընդամենը մեկ կամ երկու  
ամիս:- Պատը լռեց, ապա շարունակեց.- Այնքան սարսա-  
փելի ու անիմաստ է թվում, որ նա ներքաշվել է սրա մեջ:  
Ենթադրաբար, ինչ-որ բան է տեսել կամ նկատել:

- Իրականում լվացքի ամրակն էր անհանգստացրել  
ինձ,- իր մեղմ ձայնով ասաց միսս Մարփիլը:

- Լվացքի ամրակը:

- Այո՛: Թերթերում եմ կարդացել դրա մասին: Դա ճիշտ  
է, այո՛: Այն, որ երբ գտել են նրան, քթին լվացքի ամրակ է  
եղել:

Պատը գլխով արեց: Միսս Մարփիլի վարդագույն այտե-  
րը մզացան:

- Ահա թե ինչն այդքան զայրացրեց ինձ, հասկանո՞ւմ  
եք, սիրելիս: Որքան դաժան, անարգալից քայլ է: Դա ինձ

որոշակի պատկերացում տվեց մարդասպանի մասին: Այլ քեզ բան: Հասկանում եք, մարդու արժանապատվությանը վիրավորանք հասցնելը մեղք է: Հատկապես եթե արդեն սպանել ես նրան:

Պատը խոսեց անշտապ.

- Կարծես թե հասկանում եմ, թե ինչ նկատի ունեք: Նա ոտքի ելավ: - Ինձ թվում է՝ լավ կանեք՝ հանդիպեք տեսուչ Նիլի հետ: Նա է վարում այս գործը և հիմա այստեղ է: Կարծում եմ՝ կհավանեք նրան: Բարեհոգի մարդ է: - Հանկարծ Պատի մարմնով սարսուռ անցավ: - Այս ամենը սոսկալի մղձավանջ է: Անիմաստ: Խենթ: Խելքից-մտքից դուրս:

- Գիտե՞ք՝ ես այդպես չէի ասի,- առարկեց միսս Մարվիլը: - Ո՛չ, նման բան չէի ասի:

Տեսուչ Նիլը հոգնատանջ տեսք ուներ: Երեք մահ, և ամբողջ երկրի մամուլն աղմուկ-աղաղակով ընկել էր դրանց հետքին: Գործը, որ կարծես քաջաձանոթ ձևով էր ընթանում, հանկարծ դուրս էր եկել վերահսկողությունից: Ադել Ֆորթեսքյուն, որ համապատասխանում էր կասկածյալի դերին, այժմ սպանության անըմբռնելի գործի երկրորդ գոհն էր: Այդ ճակատագրական օրվա ավարտին կոմիսարի տեղակալը կանչել էր Նիլին, և տղամարդիկ մինչև ուշ գիշեր զրուցել էին:

Չնայած իր հուսահատությանը կամ ավելի ճիշտ՝ դրանից հետո՝ տեսուչ Նիլը ներքուստ թեթևակի գոհունակություն էր զգում: Կնոջ և սիրեկանի մոդելը չափազանց հեշտ ու հարմար էր: Այն մշտապես անվստահություն էր ներշնչել նրան: Եվ հիմա այդ անվստահությունն արդարացված էր:

- Ամեն ինչ միանգամայն այլ տեսք է ստանում,- ասաց կոմիսարի տեղակալը՝ իր սենյակում հետուառաջ քայլե-

լով ու խոժոռվելով:- Ինձ թվում է, Նիլ, մենք գործ ունենք հոգեպես անհավասարակշիռ մեկի հետ: Նախ՝ ամուսինը, ապա՝ կինը: Սակայն հանգամանքներն ինքնին ցույց են տալիս, որ ներսից են գործել: Ամեն բան այնտեղ է՝ ընտանիքում: Նախաճաշին Ֆորթեսքյուի հետ նստածներից մեկն է տաքսին լցրել նրա սուրճի կամ ուտելիքի մեջ, այն օրն ընտանիքի հետ թեյ խմողներից մեկն է կալիումի ցիանիդ լցրել Ադել Ֆորթեսքյուի բաժակի մեջ: Նա, ում վստահում են, ով մնում է աննկատ, ընտանիքի անդամներից մեկը: Նրանցից ո՞վ, Նիլ:

Տեսուչ Նիլը չորությամբ ասաց.

- Փերսիվալը տանը չէր, այնպես որ, նա կրկին կասկածից դուրս է: Նա կրկին դուրս է կասկածից,- կրկնեց տեսուչ Նիլը:

Կոմիսարի տեղակալը սուր հայացք գցեց նրա վրա: Այդ կրկնության մեջ կար մի բան, որ գրավել էր նրա ուշադրությունը:

- Ինչ կա Ձեր մտքին, Նիլ: Խոսե՛ք, բարեկամս:

Տեսուչ Նիլն անվրդով տեսք ուներ:

- Ոչինչ, սըր: Միտք է, ոչ ավելի: Միայն կասեմ, որ ամեն ինչ չափազանց հարմար է դասավորվում նրա համար:

- Չափից դուրս հարմար, այնպես չէ՞: Կոմիսարի տեղակալը մտքերի մեջ ընկավ և թափ տվեց գլուխը:- Կարծում եք՝ նա կարող էր ինչ-որ կերպ գլուխ բերել դա: Չեմ պատկերացնում ինչպես, Նիլ: Ո՛չ, չեմ պատկերացնում:- Ապա հավելեց.- Բացի դրանից՝ նա զգուշավոր տիպ է:

- Բայց և բավական խելացի, սըր:

- Կանայք Ձեր մտքով չեն անցնում: Այդպես է: Այնուամենայնիվ, կանայք մատնանշվում են: Էլեյն Ֆորթեսքյուն և Փերսիվալի կինը: Նրանք ներկա էին եղել նախաճաշին և թեյախմությանը: Նրանցից յուրաքանչյուրը կարող էր անել



դա: Հոգեկան խանգարման որևէ դրսևորում ունեն: Էհ, դա ոչ միշտ է երևում: Հնարավոր է՝ ինչ-որ բան լինի նրանց բժշկական քարտերում:

Տեսուչ Նիլը չպատասխանեց: Մտածում էր Մերի Դավի մասին: Նրան կասկածելու հստակ պատճառ չկար, բայց տեսուչի մտքերն այդպերպ էին գործում: Նրա մեջ ինչ-որ անբացատրելի բան կար, որը չէր գոհացնում տեսուչին: Հազիվ նկատելի թշնամական բերկրանք. սա էր նրա վերաբերմունքը Ռեքս Ֆորթեսքյուի մահից հետո: Ինչպիսին էր նրա կեցվածքը հիմա: Նրա վարվեցողությունն ինչպես միշտ օրինակելի էր: Հրճվանք այլևս չկար՝ մտածեց տեսուչը: Թերևս, թշնամանք նույնպես, բայց միթե մեկ կամ երկու անգամ վախ չէր նշմարել նրա դեմքին: Գլեդիս Մարտինի մահվան մեջ հենց ինքն էր մեղավոր: Աղջկա՝ մեղավոր մարդուն բնորոշ սաստիկ հուզմունքն ինքը վերագրել էր ոստիկանության հետ առնչվելիս առաջացող բնական նյարդային վիճակին: Ինքն այնքան հաճախ էր բախվել նման մեղավոր նյարդայնության: Այս դեպքում միայն դա չէր: Գլեդիսը տեսել կամ լսել էր մի բան, որը կասկածներ էր արթնացրել նրա մեջ: Հնարավոր է՝ մանրուք էր եղել, այնքան մշուշոտ ու անորոշ մի բան, որ նա չէր էլ ցանկացել խոսել դրա մասին: Իսկ հիմա խեղճ փոքրիկ նապաստակը հավիտյան չէր խոսի:

Տեսուչ Նիլը որոշակի հետաքրքրությամբ նայում էր ծեր լեդիի նուրբ, լուրջ դեմքին, որ այժմ Կենու տնակում կանգնել էր իր առջև: Սկզբում նա երկմտանքի մեջ էր, թե ինչպես վարվեր նրա հետ, բայց հետո արագ որոշում կայացրեց: Միսս Մարփլն օգտակար կլիներ իրեն: Նա ուղղամիտ, անբասիր ազնվության տեր մարդ էր և, ինչպես տարեց լեդիների մեծ մասը, ազատ ժամանակի պակաս չուներ, իսկ չամուսնացած կնոջ հոտառությամբ ընկնում էր բամբա-

սանքների պատահիկների հետքին: Սպասավորներից ու գուցե նաև Ֆորթեպյու ընտանիքի կանանցից նա կկորզեր տեղեկություններ, որ ինքը և իր ոստիկանները երբեք չէին կարողանա ստանալ: Խոսքուզրույցներ, ենթադրություններ, հիշողություններ, ասվածի և արվածի կրկնություններ. այս ամենից նա կգատեր էական փաստերը: Այնպես որ, տեսուչ Նիլը բարեհաճ էր:

- Ձեր այստեղ գալը չափազանց սիրալիր քայլ է, միսս Մարփլ,- ասաց նա:

- Դա իմ պարտքն էր, տեսուչ Նիլ: Այդ աղջիկն ապրել էր իմ տանը: Ինչ-որ առումով պատասխանատվություն եմ զգում նրա հանդեպ: Նա շատ հիմար աղջիկ էր, դե, գիտե՞ք:

Տեսուչ Նիլը երախտագիտությամբ նրան նայեց:

- Այո՛, - ասաց նա, - ճիշտ այդպես:

Նա անցել է բուն գործին՝ մտածեց տեսուչը:

- Նա չէր իմանա ինչպես վարվել,- շարունակեց միսս Մարփլը:- Նկատի ունեմ՝ եթե ինչ-որ բան տեղի ունենար: Աստված իմ, ինչ սարսափելի ձևով եմ մտքերս արտահայտում:

Տեսուչ Նիլն ասաց, որ իր համար ամեն ինչ հասկանալի էր:

- Նա ունակ չէր առողջ դատելու՝ ինչն է կարևոր, ինչը՝ ոչ, դա՛մ եք ուզում ասել, այո՛:

- Օ՛, այո՛, հենց այդպես, տեսուչ:

- Երբ ասացիք, որ նա հիմար էր...- Տեսուչ Նիլը խոսքը կիսատ թողեց:

Միսս Մարփլը շարունակեց թեման.

- Նա դյուրահավատ էր: Այն աղջիկներից էր, որ խնայողություններ ունենալու դեպքում ամբողջը կտան դրամաշորթի: Իհարկե, նա խնայողություններ չուներ, քանի որ

միշտ վատնում էր իր փողն ամենաանպետք հագուստի վրա:

- Ինչ կասեք տղամարդկանց մասին,- հարցրեց տեսուչը:  
- Նա փափագում էր երիտասարդ տղայի,- ասաց միսս Մարփիլը:- Փաստացի, կարծում եմ՝ դա էր նրա՝ Սենթ Մերի Միդից հեռանալու իրական պատճառը: Մրցակցությունն այնտեղ չափազանց սուր է: Տղամարդիկ այնքան քիչ են: Նա իսկապես հույսեր էր կապում ձկներ առաքող երիտասարդի հետ: Ֆրեդը հաճելի խոսքեր էր գտնում բոլոր աղջիկների համար, բայց, բնականաբար, առանց այլ մտքի: Դա բավականին վշտացրել էր խեղճ Գլեդիսին: Այնուամենայնիվ, որքան հասկանում եմ, ի վերջո, նա իր համար գտել էր մի երիտասարդի:

Տեսուչ Նիլը գլխով արեց:

- Այդպես է թվում: Որքան գիտեմ, անունն Ալբերտ էվանս է: Կարծես թե ինչ-որ հանգստի ճամբարում է ծանոթացել նրա հետ: Երիտասարդը մատանի կամ որևէ նման բան չի տվել նրան, այնպես որ, աղջիկը գուցե հորինել է այդ ամենը: Նա լեռնային ինժեներ է. Գլեդիսն այդպես է ասել խոհարարին:

- Խիստ անհավանական է թվում,- նկատեց միսս Մարփիլը,- թեև կհամարձակվեմ ասել, որ հենց երիտասարդն է նրան այդպես ներկայացել: Ինչպես ասացի, նա կհավատար ցանկացած բանի: Այդ երիտասարդին ընդհանրապես չեք կապում այս գործի հետ:

Տեսուչ Նիլը թափ տվեց գլուխը:

- Ո՛չ: Ինձ չի թվում, որ գործն այսկերպ խճճվի: Նա կարծես երբևէ չի այցելել նրան: Ժամանակ առ ժամանակ բացիկ է ուղարկել, սովորաբար ինչ-որ նավահանգստից... հնարավոր է՝ չորրորդ ինժեներ է բալթյան երթուղու նավերից մեկում:

- Դէ,- ասաց միսս Մարփիլ,- ուրախ եմ, որ նա փոքրիկ սիրավեպ է ունեցել: Քանի որ նրա կյանքն ընդհատվել է այս ձևով...- Նա սեղմեց շուրթերը:- Գիտե՞ք, տեսո՞ւյ, սա շատ, շատ է զայրացնում ինձ:- Ապա շարունակեց՝ ավելացնելով այն, ինչ քիչ առաջ Պատ Ֆորթեսքյուին էր ասել.- Հատկապես լվացքի ամրակը: Դա իսկապես մեղք է:

Տեսույ Նիլը հետաքրքրությամբ նրան նայեց:

- Գիտեմ, թե ինչ նկատի ունեք, միսս Մարփիլ,- ասաց նա:

Միսս Մարփիլը, ասես ներում հայցելով, հազաց:

- Կցանկանայի իմանալ... գուցե դա հանդգնություն է իմ կողմից... եթե միայն կարողանայի իմ համեստ ու, վախենամ, խիստ կանացի օգնությունը տրամադրել Ձեզ: Այս մարդասպանը չարագործ է, տեսո՞ւյ Նիլ, իսկ չարիքը չափտի անպատիժ մնա:

- Մեր օրերում այս համոզմունքը հնացել է, միսս Մարփիլ,- փոքր-ինչ մոռյվելով ասաց տեսույ Նիլը:- Այնպես չէ, որ ես համամիտ չեմ Ձեզ հետ:

- Ես կարող եմ իջևանել կայարանամերձ հյուրանոցում կամ «Գոլֆում», - անվճռականորեն հայտարարեց միսս Մարփիլը,- և որքան գիտեմ, այս տանն ապրում է միսս Ռեմսբրոմը, որը հետաքրքրված է օտարերկրյա առաքելություններով:

Տեսույ Նիլը գնահատողաբար նայեց միսս Մարփիլին:

- Այո՛: Գուցե Դուք ինչ-որ բան բացահայտեք: Չէի ասի, թե առանձնակի հաջողություն եմ ունեցել այդ լեդիի հարցում:

- Դուք իսկապես սիրալիր եք, տեսո՞ւյ Նիլ,- ասաց միսս Մարփիլը:- Այնքան ուրախ եմ, որ ինձ ընդամենը սենսացիաների հետևից ընկած մեկը չեք համարում:

Տեսույ Նիլը փոքր-ինչ անսպասելիորեն ժպտաց: Նրա

մտքով անցավ, որ միսս Մարփին ամենևին չէր համապատասխանում վրիժառու կնոջ մասին համընդհանուր պատկերացմանը: Եվ այնուամենայնիվ, թերևս, նա հենց այդպիսին էր:

- Թերթերի հաշվետվությունները,- ասաց միսս Մարփիլ,- հաճախ այնքան աղմկահարույց են: Բայց, վախենամ, հազիվ թե նույնքան ստույգ են, որքան ցանկալի կլիներ:- Նա հարցական հայացք գցեց տեսուչ Նիլի վրա:- Եթե մարդ վստահ լիներ, որ միայն սառը փաստերն են իր ձեռքի տակ:

- Դրանք առանձնապես սառը չեն,- ասաց Նիլը:- Ավելորդ սենսացիան մի կողմ թողած՝ դրանք հետևյալն են: Միսթեր Ֆորթեսքյուն մահացել է իր գրասենյակում տաքսինից թունավորման հետևանքով: Տաքսինը ստացվում է կենու հատապտուղներից ու տերևներից:

- Ավելի քան նպաստավոր է,- նկատեց միսս Մարփիլը:

- Հնարավոր է,- համաձայնեց տեսուչ Նիլը,- բայց դրա հետ կապված ապացույց չունենք: Այսինքն՝ դեռևս չունենք:- Նա շեշտեց դա, քանի որ կարծում էր՝ հենց այս հարցում միսս Մարփիլը կարող էր օգտակար լինել: Եթե տանը կենու հատապտուղներից ինչ-որ եփուկ էին պատրաստել, ապա առավել հավանական է, որ միսս Մարփիլը կգտներ դրա հետքերը: Նա այն տատիկներից էր, որ տնական լիկյորներ, քաղցր թրմօղիներ և բուսական թեյեր են պատրաստում: Նա տեղյակ կլիներ դրանց պատրաստման և դրանցից ազատվելու ձևերին:

- Իսկ միսս Ֆորթեսքյուն:

- Միսս Ֆորթեսքյուն ընտանիքի հետ թեյ էր խմում գրադարանում: Վերջին մարդը, որ թողել էր սենյակն ու թեյի սեղանը, միսս Էլեյն Ֆորթեսքյուն էր՝ նրա խորթ դուստրը: Վերջինս պնդում է, որ երբ ինքը դուրս էր գա-

լիս սենյակից, միսիս Ֆորթեսքյուն ևս մեկ բաժակ թեյ էր լցնում իր համար: Մոտ քսան կամ երեսուն բուպե անց միսս Դավը՝ տնային կառավարչուհին, ներս էր մտել՝ թեյի սկուտեղը տանելու: Միսիս Ֆորթեսքյուն նստած էր եղել բազմոցին՝ մահացած: Նրա կողքին քառորդ չափ լիքը թեյի բաժակն էր, իսկ դրա նստվածքի մեջ կալիումի ցիանիդ կար:

- Որը, ինչքան գիտեմ, գրեթե անմիջապես է ներգործում,- ասաց միսս Մարփը:

- Ճիշտ այդպես:

- Այնքան վտանգավոր նյութ է,- շնչաց միսս Մարփը:- Դրանով կրետների բներն են մաքրում, բայց ես միշտ խիստ զգուշությամբ եմ օգտվում դրանից:

- Դուք ճիշտ եք,- ասաց տեսուչ Նիլը:- Այդ նյութից մի փաթեթ կար այգեպանի խորդանոցում:

- Կրկին ավելի քան նպաստավոր է,- ասաց միսս Մարփը, ապա հավելեց.- Միսիս Ֆորթեսքյուն ինչ-որ բան կերել էր:

- Օ՛, այո, նրանք բավական ճոխ թեյախմություն են արել:

- Ենթադրում եմ՝ տորթով: Հաց ու կարագով: Գուցե սքոններով: Ջեմ: Մեղր:

- Այո, կային մեղր ու սքոններ, շոկոլադե տորթ ու ռուլետ և զանազան այլ բաներով լցված ափսեներ:- Տեսուչը հետաքրքրասիրությամբ նայեց նրան:- Կալիումի ցիանիդը թեյի մեջ էր, միսս Մարփը:

- Ա՛հ, այո, այո: Լիովին հասկանում եմ դա: Այսպես ասած, ամբողջական պատկերն էի փորձում ստանալ: Դա բավական կարևոր է, չե՞ք կարծում:

Տեսուչը թեթևակի տարակուսանքով նայեց նրան: Միսս Մարփի այտերը վարդագույն էին, աչքերը՝ պսպղուն:

- Իսկ երրորդ մահը, տեսուչ Նիլ:

- Դե՛, այստեղ նույնպես փաստերը բավականաչափ ակնհայտ են թվում: Աղջիկը՝ Գլեդիսը, ներս է տարել թեյի սկուտեղը, ապա մյուս սկուտեղն է բերել, բայց թողել է այն նախասրահում: Ըստ երևույթին, ամբողջ օրը բավական ցրված է եղել: Դրանից հետո ոչ ոք չի տեսել նրան: Խոհարարը՝ միսիս Քրամփը, հապճեպ եզրակացություն է արել, որ աղջիկը երեկոյան դուրս է եկել՝ առանց որևէ մեկին ասելու: Կարծես թե նրա մտածածը հիմնվել էր այն հանգամանքի վրա, որ աղջկա հագին լավ զուգագուլպաներ էին եղել, ինչպես նաև նրա լավագույն կոշիկները: Այս հարցում, սակայն, պարզվեց՝ միսիս Քրամփը սխալվել էր: Աղջիկն ակնհայտորեն հանկարծ հիշել էր, որ ներս չի բերել լվացքապարանին չորացող հագուստը: Նա դուրս էր վազել դրանց հետևից, հավանաբար հավաքել կեսը, երբ ինչ-որ մեկը հանկարծակիի էր բերել նրան՝ զուգագուլպան վզի շուրջը գցելով և... դե՛, այդքան բան:

- Դրսից մեկն է եղել,- հարցրեց միսս Մարփը:

- Հնարավոր է,- պատասխանեց տեսուչ Նիլը:- Բայց գուցեև ներսից մեկն է եղել: Մեկը, որ սպասել է աղջկա հետ մենակ լինելու հնարավորությանը: Երբ առաջին անգամ հարցաքննեցինք աղջկան, նա հուզված էր, նյարդային, բայց, վախենամ, այդ պահին ամենևին չէինք գիտակցում դրա կարևորությունը:

- Ա՛հ, բայց ինչ իմանայիք,- բացականչեց միսս Մարփը,- չե՛ որ մարդիկ այնքան հաճախ են իսկապես մեղավորու շփոթված տեսք ունենում ոստիկանության կողմից հարցաքննվելիս:

- Հարցը հենց դա է: Բայց այս անգամ, միսս Մարփ, մի փոքր ավելին էր դրանից: Ինձ թվում է՝ այդ աղջիկը՝ Գլեդիսը, ինչ-որ մեկին տեսել էր որևէ գործողություն կատա-

րելիս, ինչն անհասկանալի էր թվացել իրեն: Կարծում եմ՝ դա հստակ բան չի եղել: Այլապես նա կխոսեր: Բայց ենթադրաբար այդ մասին հայտնել է վերոնշյալ անձին: Այդ մարդն էլ հասկացել է, որ Գլեդիսը վտանգավոր է:

- Եվ այսպիսով՝ Գլեդիսին խեղդամահ են արել ու ամրակով սեղմել քիթը,- քրթմնջաց միսս Մարփիլը:

- Այո՛, զագրելի երանգ: Զզվելի, ծաղրական երանգ: Ընդամենը խիզախության սոսկալի, ավելորդ ցուցադրություն:

Միսս Մարփիլը թափ տվեց գլուխը:

- Հազիվ թե հնարավոր լինի դա ավելորդ համարել: Այս ամենը տեղավորվում է սխեմայի մեջ, այնպես չէ՛:

Տեսուչ Նիլը հետաքրքրասիրությամբ նրան նայեց:

- Ես բոլորովին չեմ հասկանում Ձեզ, միսս Մարփիլ: Ինչ սխեմայի մասին եք խոսում:

Այդ պահին միսս Մարփիլը հուզմունքից շփոթվեց:

- Դե՛, նկատի ունեմ՝ կարծես... ուզում եմ ասել՝ այստեղ որոշակի հաջորդականություն է դիտարկվում, հասկանո՞ւմ եք... դե՛, փաստերից չես փախչի, այնպես չէ՛:

- Չեմ կարծում, թե առհասարակ հասկանում եմ Ձեզ:

- Դե՛, նկատի ունեմ... նախ՝ միսթր Ֆորթեսքյուն: Ռեքս Ֆորթեսքյուն: Նրան սպանել են իր քաղաքային գրասենյակում: Ապա՝ միսիս Ֆորթեսքյուն, որ այստեղ գրադարանում նստած թեյ է խմել: Մեղր ու սքոններ էին դրված եղել սեղանին: Իսկ հետո՝ խեղճ Գլեդիսը՝ լվացքի ամրակը քթին: Պարզապես ամբողջին համապատասխանելու համար: Այն անչափ համակրելի միսիս Լանս Ֆորթեսքյուն ասաց ինձ, որ սա խելքից-մտքից դուրս է, բայց ես չէի կարող համաձայնել նրա հետ. միթե՛ հենց խելքն ու միտքը չեն աչքի զարնում:

Տեսուչ Նիլն անշտապ ասաց.

- Չեմ կարծում...



Միսս Մարփիլը շտապեց շարունակել:

- Ենթադրում եմ՝ Դուք մոտ երեսունհինգ կամ երեսունվեց տարեկան եք, այնպես չէ՞, տեսուհի Նիլ: Կարծում եմ այն ժամանակ, երբ Դուք փոքրիկ տղա էիք, մանկական բանաստեղծությունների նկատմամբ հակադրության ավիք էր բարձրացել: Բայց նա, ով մեծացել է «Սագ մայրիկով»<sup>1</sup>... նրա համար դրանք իսկապես հույժ կարևոր են, ճիշտ չէ՞: Ինձ հետաքրքրում էր՝ արդյոք...- Միսս Մարփիլը լռեց, ապա կարծես քաջություն հավաքելով՝ խիզախորեն շարունակեց.- Իհարկե, գիտեմ, որ նման բան ասելը մեծագույն հանդգնություն է իմ կողմից:

- Խնդրում եմ, ասացե՛ք այն, ինչ կամենում եք, միսս Մարփիլ:

- Դե՛, Դուք անչափ սիրալիր եք: Կասեմ: Թեև, ինչպես ասացի, կանեմ դա սաստիկ ամոթով, քանի որ գիտեմ՝ ես ծեր եմ, փոքր-ինչ անգետ, և հավանաբար գաղափարս որևէ արժեք չունի: Բայցևայնպես, ուզում եմ հարցնել՝ Դուք քննել եք կեռնեխների հարցը:

---

<sup>1</sup> Սագ մայրիկի կերպարը հաճախ է հանդիպում ֆրանսիական և անգլո-ամերիկյան մանկական գրականության մեջ: Հատկապես մեծ տարածում է ստացել 1760 թվականին Անգլիայում լույս տեսած «Սագ մայրիկի մեղեդիները» ժողովածուն՝ կազմված հիսուներկու մանկական բանաստեղծություններից:

## ԳԼՈՒԽ 14

Մոտ տասը վայրկյան տեսուչ Նիլը ծայրաստիճան զարմանքով նայում էր միսս Մարփիին: Նրա առաջին միտքն այն էր, որ ծեր լեդին խելքը թոցրել է:

- Կեռնեխների՛,- կրկնեց նա:

Միսս Մարփին աշխուժորեն գլխով արեց:

- Այո՛,- ասաց նա և անմիջապես արտասանեց.

*Երգի՛ր երգը վեց պենսի,  
Գրպանի՛ տարեկանով լի,  
Կարկանդակի մեջ թխված  
Քսանչորս սև կեռնեխի:*

*Կարկանդակը կտրեցին,  
Թռչունները երգեցին,  
Մի՞թե խորտիկն այս նրբին  
Վայել չէր թագավորին:*

*Թագավորը գրասենյակում  
Իր գումարներն էր հաշվում,  
Թագուհին հյուրասենյակում  
Մեղր ու հաց էր ուտում:*

*Աղախինը պարտեզում  
Հագուստեղենն էր կախում,  
Երբ մի թռչնակ հարձակվեց,  
Քիթը կտցեց ու պոկեց:*

- Տեր Աստված,- արտաբերեց տեսուչ Նիլը:

- Չէ՛ որ ամեն ինչ համընկնում է,- ասաց միսս Մարփիլը:-

Նրա գրպանում տարեկան էր եղել, այնպես չէ: Թերթերից մեկում էր այդպես գրված: Մյուսներում պարզապես հացահատիկի մասին էր ասվում, ինչը ցանկացած բան կարող է նշանակել: «Ֆարմըրզ Գլորի» կամ եգիպտացորենի փաթիլներ... կամ հենց եգիպտացորեն... բայց այնտեղ տարեկան էր...

Տեսուչ Նիլը գլխով արեց:

- Տեսնում եք,- հաղթական ասաց միսս Մարփիլը:- Ռեքս Ֆորթեսքյու: «Ռեքս» նշանակում է «թագավոր»: Իր գրասենյակում: Իսկ միսիս Ֆորթեսքյուն թագուհին է հյուրասենյակում, որ մեղր ու հաց էր ուտում: Եվ այսպիսով, բնականաբար, մնում էր միայն այդ լվացքի ամրակը դնել խեղճ Գլեդիսի քթին:

Տեսուչ Նիլը հարցրեց.

- Ուզում եք ասել, որ այս ամենը խենթ խարդավամնք է:

- Դե՛, պետք չէ հապճեպ եզրակացություններ անել, բայց այս գործը, անշուշտ, չափազանց տարօրինակ է: Իսկ Դուք իսկապես պետք է հարցումներ անեք կեռնեխների մասին: Որովհետև պետք է կեռնեխներ լինեն:

Հենց այս պահին էր, որ սերժանտ Հեյը սենյակ մտնելուն պես իսկույն ևեթ ասաց.

- Սըր:

Տեսնելով միսս Մարփիլին՝ նա խոսքը կիսատ թողեց: Տեսուչ Նիլը սթափվելով ասաց.

- Շնորհակալություն, միսս Մարփիլ: Ես կզբաղվեմ այդ հարցով: Քանի որ Դուք հետաքրքրված եք աղջկանով, գուցե ցանկանաք աչքի անցկացնել նրա սենյակի իրերը: Սերժանտ Հեյը քիչ անց ցույց կտա դրանք:

Միսս Մարփիլը, հասկանալով, որ ինքն ազատ է, դողդոջուն քայլքով դուրս եկավ:

- Կեռնեխներ,- քթամնջաց տեսուչ Նիլը:

Սերժանտ Հեյն ապշահար նրան նայեց:

- Այո՛, Հեյ, ի՞նչ է եղել:

- Սը՛ր,- տագնապալից կրկնեց սերժանտ Հեյը:- Սրան նայե՛ք:

Նա մի իր հանեց՝ փոքր-ինչ կեղտոտ թաշկինակով փաթաթված:

- Թփուտից եմ գտել սա,- ասաց սերժանտ Հեյը:- Հետնակողմի պատուհաններից մեկից կարող էին նետած լինել:

Նա իրը ցած գցեց գրասեղանի վրա՝ տեսուչի դիմաց, որ առաջ թեքվեց ու մեծ հուզմունքով գննեց այն: Յուցանմուշը գրեթե լիքը մուրաբայի բանկա էր:

Տեսուչը լուռ նայում էր դրան: Նրա դեմքը տարօրինակորեն անկենդան ու հիմար տեսք ուներ: Իրականում դա նշանակում էր, որ տեսուչ Նիլի միտքը դարձյալ սուրում էր երևակայության ճանապարհով: Նրա գլխում մի շարժանկար էր ձև ստանում: Նա տեսնում էր մուրաբայի նոր բանկա, ձեռքեր, որ զգուշորեն հանում էին դրա կափարիչը, մի քիչ մուրաբա վերցնում, խառնում տաքսինով պատրաստուկի հետ և կրկին լցնում բանկայի մեջ, հարթեցնում մակերեսն ու զգուշորեն փակում կափարիչով: Այստեղ նրա մտքերը կանգ առան, և նա հարցրեց սերժանտ Հեյին.

- Նրանք մուրաբան չե՞ն դատարկում բանկայից ու մատուցում նորաճ ամանների մեջ:

- Ո՛չ, սը՛ր: Պատերազմի ժամանակ, երբ ամեն բան սուղ էր, մուրաբան իր բանկայով մատուցելը սովորություն դարձավ, որը շարունակվում է մինչև օրս:

Նիլը մոթմոթաց.

- Դա, իհարկե, հեշտացրել է գործը:

- Ավելին,- շարունակեց սերժանտ Հեյը,- միսթր Ֆորթեսքյուն միակն էր, որ մուրաբա էր ուտում նախաճաշին

(և միսթր Փերսիվալը, երբ տանն էր լինում): Մյուսները ջեմ կամ մեղր էին ուտում:

Նիլը գլխով արեց:

- Այո՛, դա գործն էլ ավելի պարզ է դարձրել, այնպես չէ՛:

Այս կարճատև դադարից հետո նրա մտքի շարժանկարը շարունակվեց: Այժմ նա տեսնում էր նախաճաշի սեղանը: Ռեքս Ֆորթեսքյուն մեկնում էր ձեռքը մուրաբայի բանկային, մի գդալ լիքը վերցնում դրանից ու քսում իր տոստի և կարագի վրա: Այդպես շատ ավելի հեշտ էր, քան նրա սուրճի բաժակի մեջ թույնն աննկատ լցնելու դիսկին դիմելը: Պարզ ու հուսալի մեթոդ: Իսկ հետո՛: Եվս մեկ դադար ու ոչ այնքան հստակ պատկեր: Բանկան փոխարինվում է մեկ ուրիշով, որից ճիշտ նույնքան մուրաբա էր վերցրած: Իսկ հետո՛ բաց պատուհան: Մի ձեռք կտրուկ շարժումով պատուհանից թփերի մեջ է շարտում թունոտ բանկան: Ո՛ւմ ձեռքը:

Տեսուչ Նիլը գործնական ձայնով ասաց.

- Դե՛, բնականաբար, լաբորատոր հետազոտության կհանձնենք սա: Տեսնենք՝ արդյոք մուրաբայի մեջ տաքսինի հետքեր կան: Չենք կարող հապճեպ եզրակացություններ անել:

- Ոչ մի դեպքում, սըր: Այնտեղ կարող են նաև մատնահետքեր լինել:

- Ամենայն հավանականությամբ, ոչ այն, որ մեզ պետք են,- մռայլորեն նկատեց տեսուչ Նիլը:- Իհարկե, այնտեղ կլինեն Գլեդիսի, Քրամփի և անձամբ Ֆորթեսքյուի մատնահետքերը: Հնարավոր է նաև՝ միսիս Քրամփինը, նպարեղենի խանութի վաճառողինը և էլի մի քանիսինը: Եթե ինչ-որ մեկը տաքսին է լցրել սրա մեջ, ապա հոգ կտաներ, որ բանկայով մեկ իր մատնահետքերը չթողներ: Ինչ էլ որ լինի, ինչպես ասացի, չպետք է հապճեպ եզրակացություններ անել: Ինչպե՛ս են այստեղ մուրաբան պատվիրում և որտե՛ղ են պահում:

Ջանասեր սերժանտ Հեյը նախապատրաստվել էր այս տեսակ հարցերին պատասխանելուն:

- Մուրաբան և ջեմը բերվում են խմբաքանակով՝ ամեն անգամ վեց բանկա: Երբ բանկան սկսում է դատարկվել, նորն են տանում մթերանոց:

- Դա նշանակում է,- ասաց տեսուչ Նիլը,- որ բանկայի մեջ կարող էին թույն լցնել այն նախաճաշին մատուցելուց դեռ մի քանի օր առաջ: Եվ ցանկացածը, որը տանն էր կամ տուն մտնելու հնարավորություն ուներ, կարող էր անել դա:

«Տուն մտնելու հնարավորություն»։ այս արտահայտությունը փոքր-ինչ շփոթեցրեց սերժանտ Հեյին: Նա չէր հասկանում, թե իր վերադասի միտքն ինչպես էր գործում:

Մինչդեռ Նիլին սեփական կանխադրույթը տրամաբանական էր թվում:

Եթե մուրաբան նախապես էր թունավորվել, ապա դա վստահաբար բացառում էր այն անձանց, որոնք ճակատագրական օրը նստած էին նախաճաշի սեղանի շուրջը:

Իսկ դա նոր ու հետաքրքրաշարժ հնարավորություններ էր բացում:

Նա մտովի ծրագրում էր հարցաքննություններ տարբեր մարդկանց հետ... այս անգամ դրանք միանգամայն այլ անկյունից կվարեր:

Նրա միտքը բաց կլիներ նորի համար...

Նա նույնիսկ կդիտարկեր այն ծեր միսս... ինչ էր նրա անունը... մանկական բանաստեղծության վարկածը: Քանզի կասկած չկար, որ մանկական բանաստեղծությունը բավական ապշեցուցիչ ձևով համընկնում էր այս ամենին: Այն համապատասխանում էր մի հարցով, որն ի սկզբանե էր հուզում նրան: Տարեկանով լի գրպանը:

- Սև կեռնեխներ,- քրթմնջաց տեսուչ Նիլը:

Սերժանտ Հեյի հայացքը սևեռվեց նրա վրա:

- Սա մոշի դոնդող չէ, սըր,- ասաց նա:- Տիտրուսային մուրաբա է<sup>1</sup>:

\* \* \*

Տեսուչ Նիլը գնաց Մերի Դավին որոնելու:

Գտավ նրան առաջին հարկի ննջասենյակներից մեկում էլենին հսկելիս, որ մերկացնում էր մահճակալը մաքուր թվացող սպիտակեղենից: Աթոռի վրա մաքուր սրբիչների կույտ էր դրած:

Տեսուչ Նիլը տարակուսեց:

- Ինչ-որ մեկն է հյուրընկալվելու այստեղ,- հարցրեց նա:

Մերի Դավը ժպտաց նրան: Ի հակադրություն էլենի, որ մռայլ ու դյուրաբորբոք տեսք ուներ՝ Մերին սովորականի պես անվրդով էր:

- Իրականում,- ասաց նա,- հակառակն է:

Տեսուչ Նիլը հետաքրքրասիրությամբ նայեց նրան:

- Սա հյուրերի սենյակն է, որը պատրաստել էինք միսթր Ջերալդ Ռայթի համար:

- Ջերալդ Ռայթ: Ո՞վ է նա:

- Միսս էլեն Ֆորթեսքյուի ծանոթներից մեկն է:- Մերիի ծայնը շրջահայացորեն զուրկ էր զգացմունքներից:

- Նա այստեղ էր գալու... Երբ:

- Կարծես թե միսթր Ֆորթեսքյուի մահվան հաջորդ օրն է ժամանել «Գոլֆ» հյուրանոց:

- Հաջորդ օրը:

- Միսս Ֆորթեսքյուն այդպես ասաց:- Մերիի ծայնը դեռ անդեմ էր:- Նա ասաց ինձ, որ ուզում է՝ միսթր Ռայթը տանը հյուրընկալվի, ուստի պատրաստել էի տվել սենյակը:

---

<sup>1</sup> Սերժանտը կարծում է, որ տեսուչը շփոթել է blackbird (սև կեռնեխ) և blackberry (մոշ) բառերը:

Հիմա... մյուս երկու ողբերգությունից հետո... ավելի նպատակահարմար է, որ նա մնա հյուրանոցում:

- «Գոլֆ» հյուրանոցում:

- Այո՛:

- Անշուշտ,- ամփոփեց տեսուչ Նիլը:

Էլենը հավաքեց անկողինն ու սրբիչները և դուրս եկավ սենյակից:

Մերի Դավը հարցական հայացք գցեց Նիլի վրա:

- Դուք ինչ-որ հարցով էիք ուզում տեսնել ինձ:

Տեսուչ Նիլը սիրալիրորեն ասաց.

- Ամենայն հստակությամբ դեպքերի ստույգ ժամանակացույցը սահմանելը կարևոր է դառնում: Ընտանիքի անդամները փոքր-ինչ մշուշոտ պատասխաններ են տալիս՝ կապված ժամանակի հետ, ինչը, թերևս, հասկանալի է: Մյուս կողմից՝ Դուք, միսս Դավ, գերճշգրիտ էիք Ձեր պնդումներում:

- Ինչը կրկին կարելի է հասկանալ:

- Այո՛.. թերևս... անկասկած, ես պետք է շնորհավորեմ Ձեզ նրա համար, թե ինչպես եք ղեկավարում այս տունը՝ չնայած... դե՛, խուճապին... որ այս վերջին մահերն են առաջացրել:- Նա լռեց, ապա հետաքրքրվեց.- Ինչպե՛ս եք դա արել:

Տեսուչը խորագիտորեն հասկացել էր, որ Մերի Դավի անթափանց զրահի միակ ճեղքը նրա գոհունակությունն էր իր իսկ գործիմացությունից: Պատասխանելիս նա փոքր-ինչ ուղղվեց:

- Քրամփները, իհարկե, ուզում էին անմիջապես հեռանալ:

- Մենք չէինք կարող դա թույլ տալ:

- Գիտեմ, բայց ես նաև ասացի նրանց, որ միսթեր Ֆորթեսըյուն, ամենայն հավանականությամբ... դե՛, շոայլ կլինի



նրանց հանդեպ, ովքեր ազատել են իրեն անհարմարությունից:

- Իսկ էլե՞նը:

- Էլենը հեռանալու ցանկություն չունի:

- Էլենը հեռանալու ցանկություն չունի,- կրկնեց Նիլը:-

Նրա նյարդերն ամուր են:

- Նա հաճույք է ստանում աղետներից,- ասաց Մերի Դավը:- Ինչպես միսիս Փերսիվալը. նրա համար աղետը բավականություն պատճառող դրամա է:

- Հետաքրքիր է: Կարծում եք՝ միսիս Փերսիվալին դուր էին գալիս այս ողբերգությունները:

- Ո՛չ... իհարկե ոչ: Դա արդեն չափազանց է: Միայն կասեի, որ դրանք հնարավորություն տվեցին նրան... դե... դիմակայելու դրանց...

- Իսկ Ձեզ վրա ինչպե՞ս են ազդել դրանք, միսս Դավ:

Մերի Դավը թոթվեց ուսերը:

- Հաճելի փորձառություն չէր,- չորությամբ պատասխանեց նա:

Տեսուչ Նիլը կրկին բռուն ցանկություն զգաց՝ ջարդելու այս երիտասարդ կնոջ սառը պատնեշը, պարզելու, թե ինչն էր լռության մատնված նրա բարեխիղճ ու բանիմաց կեցվածքի հետևում:

Մինչդեռ նա ընդամենն առանց ձևականության ասաց.

- Դե ինչ... համառոտակի կրկնենք տեղերն ու ժամերը. վերջին անգամ Դուք տեսել եք Գլեդիս Մարտինին նախասրահում թեյից առաջ, և դա հինգին քսանհինգ պակամս էր:

- Այո՛, ես ասացի նրան, որ ներս տանի թեյը:

- Դուք ինքներդ որտեղի՞ց էիք գալիս:

- Վերնահարկից... ինձ թվացել էր՝ մի քանի րոպե առաջ հեռախոսազանգ եմ լսել:

- Ենթադրաբար, Գլեդիֆսն էր պատասխանել զանգին:
- Այո՛: Մխալ հեռախոսահամար էին հավաքած եղել: Ինչ-որ մեկը Բեյդոն Հիթի լվացքատունն էր հարցրել:
- Եվ դրանից հետո չեք տեսել նրան:
- Մոտ տասը թույն անց նա սկուտեղը գրադարան էր տարել:
- Դրանից հետո՞ է միսս Էլեյն Ֆորթեսքյուն այնտեղ մտել:
- Այո՛, մոտ երեք կամ չորս թույն անց: Այդ ժամանակ ես բարձրացա միսիս Փերսիվալի մոտ՝ ասելու, որ թեյը պատրաստ է:
- Միջոտ եք այդպես անում:
- Օ՛, ո՛չ... ամեն մեկը գալիս է թեյելու, երբ ինքն է կամենում... բայց միսիս Ֆորթեսքյուն հարցրեց, թե որտեղ են բոլորը: Ինձ թվացել էր, թե լսել եմ՝ ինչպես էր միսիս Փերսիվալն իջնում... բայց սխալվել էի...
- Նիլն ընդհատեց նրան: Սա նոր բան էր:
- Ուզում եք ասել՝ վերնահարկից ինչ-որ ոտնաձայներ եք լսել:
- Այո՛... կարծում էի՝ աստիճանների գլխից: Սակայն ոչ ոք չեկավ, ուստի ես բարձրացա: Միսիս Փերսիվալն իր ննջասենյակում էր: Նա քիչ առաջ էր ներս մտել: Զբոսանքի էր դուրս եկել...
- Զբոսանքի... հասկանալի է: Ժամը քանիսն էր...
- Օ՛, մոտավորապես հինգը՝ կարծում եմ...
- Իսկ միսթր Լանսելոթ Ֆորթեսքյուի ժամանումը... Երբ էր:
- Կրկին իջնելուցս մի քանի թույն անց... ինձ թվացել էր՝ նա ավելի վաղ է ժամանել, բայց...
- Տեսուչ Նիլը նորից ընդհատեց նրան:
- Ինչո՞ւ էիք մտածում, որ նա ավելի վաղ է ժամանել:

- Որովհետև ինձ թվացել էր՝ նկատել եմ նրան սանդղա-  
հարթակի պատուհանից:

- Նկատի ունե՞ք՝ պարտեզում:

- Այո՛, ինչ-որ մեկն աչքովս ընկավ կենու ցանկապատից  
այն կողմ, և ես մտածեցի, որ հավանաբար նա է:

- Սա այն ժամանակ էր, երբ Դուք իջնում էիք աստի-  
ճաններով միսիս Փերսիվալ Ֆորթեսքյուին թեյի մասին  
հայտնելուց հետո՛:

Մերին ուղղեց նրան.

- Ո՛չ, այդ ժամանակ չէր... ավելի վաղ էր... երբ առաջին  
անգամ էի իջնում:

Տեսուչ Նիլը սևեռուն հայացքով նայում էր նրան:

- Համոզված եք դրանում, մի՞սս Դավ:

- Այո՛, լիովին վստահ եմ: Ահա թե ինչու զարմացա նրան  
տեսնելիս... երբ նա իսկապես դռան զանգը տվեց:

Տեսուչ Նիլը թափ տվեց գլուխը: Ձայնի մեջ թաքցնելով  
ներքին հուզմունքը՝ նա ասաց.

- Այն մարդը, որին տեսել եք պարտեզում, չէր կարող միսթ  
Լանսելոթ Ֆորթեսքյուն լինել: Նրա գնացքը, որ պետք է ժա-  
մաներ 4:28-ին, ինը րոպե ուշացել էր: Նա հասել է Բեյդոն Հիթ  
կայարան 4:37-ին: Միսթ Ֆորթեսքյուն ստիպված էր եղել մի  
քանի րոպե սպասել տաքսիի համար. այդ գնացքը միշտ մար-  
դաշատ է լինում: Իրականում նրա՝ կայարանից հեռանալիս  
գրեթե հինգից քառորդ էր պակաս (հինգ րոպե անց այն բա-  
նից, երբ Դուք պարտեզում տեսել եք այդ տղամարդուն), իսկ  
այնտեղից մեքենայով տասը րոպեի ճանապարհ է: Նա վճա-  
րել է տաքսու վարորդին դարպասի մոտ ամենաշուտը հինգից  
հինգ պակաս: Ո՛չ, Դուք Լանսելոթ Ֆորթեսքյուին չեք տեսել:

- Ես համոզված եմ, որ տեսել եմ ինչ-որ մեկին:

- Այո՛: Ինչ-որ մեկին տեսել եք: Արդեն մթնում էր: Դուք  
հստակ չե՞ք տեսել այդ տղամարդուն:

- Օ՛, ո՛չ, ես չէի կարող տեսնել նրա դեմքը կամ նման բաներ... միայն կազմվածքը. բարձրահասակ էր ու սլացիկ: Մենք սպասում էինք Լանսելոթ Ֆորթեսքյուին, ուստի ես եզրակացրի, որ դա նա էր:

- Նա ո՞ր ուղղությամբ էր գնում:

- Կենու ցանկապատի երկայնքով դեպի տան արևելյան կողմը:

- Այնտեղ կողմնային դուռ կա: Այն կողպվում է:

- Գիշերը, երբ տան բոլոր դռներն են կողպվում:

- Ով ասես կարող է մտնել այդ կողմնային դռնից՝ տան անդամներից աննկատ մնալով:

Մերի Դավը մտքերի մեջ ընկավ:

- Կարծում եմ՝ այո՛:- Ապա շտապեց հավելել.- Ուզում եք ասել՝ այն մարդը, որի ոտնաձայներն ավելի ուշ լսեցի վերնահարկից, կարող էր այդպէրպէս ներս մտնել: Թաքնվել վերնահարկում:

- Նման մի բան:

- Բայց ո՞վ:

- Դա դեռ պետք է պարզել: Շնորհակալություն, մի՛սս Դավ: Երբ նա շրջվեց, որ դուրս գա, տեսուչ Նիլը ձայնի անտարբեր հնչերանգով հարցրեց.

- Ի դեպ, ինչ-որ բան կարո՞ղ եք հայտնել ինձ կեռնեխների մասին:

Թվաց, թե նա առաջին անգամ հանկարծակիի բերեց Մերի Դավին: Նա կտրուկ կերպով շրջվեց:

- Ես... Ի՞նչ ասացիք:

- Ես պարզապես հարցնում էի կեռնեխների մասին:

- Նկատի ունե՞ք...

- Սև կեռնեխներին,- հաստատեց տեսուչ Նիլը:

Նրա դեմքին հիմարագույն արտահայտություն էր հայտնվել:

- Նկատի ունեք ամառվա այն անհեթեթ պատմությունը: Բայց դա վստահաբար չի կարող...- Նա խոսքը կիսատ թողեց:

Տեսուչ Նիլը սիրալիրորեն ասաց.

- Այդ մասին որոշակի խոսակցություններ կային, բայց ես վստահ էի, որ Դուք հստակորեն կներկայացնեիք դա ինձ:

Մերի Դավը վերագտել էր իր հանգիստ ու գործնական կեցվածքը:

- Կարծում եմ՝ դա հիմար ու չար կատակ էր,- ասաց նա:- Այստեղ՝ միսթր Ֆորթեսքյուի աշխատասենյակի գրասեղանի վրա, չորս սատկած կեռնեխ էին դրել: Ամառ էր, պատուհանները բաց էին, և մենք մտածեցինք, որ դրա հեղինակն այգեպանի տղան էր, բայց նա պնդում էր, որ երբևէ նման բան չի արել: Սակայն, փաստացի, դրանք այգեպանի կրակած կեռնեխներն էին, որ կախված էին հատապտուղների թփերի մոտ:

- Եվ ինչ-որ մեկը կտրել-իջեցրել էր դրանք ու դրել միսթր Ֆորթեսքյուի գրասեղանին:

- Այո՛:

- Որևէ պատճառ կ'արդրա հիմքում... սև կեռնեխները կապ ունեին ինչ-որ բանի հետ:

Մերին թափ տվեց գլուխը:

- Չեմ կարծում:

- Միսթր Ֆորթեսքյուն ինչպե՞ս ընդունեց դա: Զայրացավ:

- Բնակաբար զայրացած էր:

- Բայց ոչ հավասարակշռությունից դուրս եկամ:

- Իսկապես չեմ կարող մտաբերել:

- Հասկանալի է,- ասաց տեսուչ Նիլը:

Նա այլևս ոչինչ չասաց: Մերի Դավը կրկին շրջվեց,

բայց այս անգամ, ինչպես տեսուչին թվաց, փոքր-ինչ դժկամորեն, ասես կցանկանար իմանալ ավելին, թե ինչ կար իր մտքին: Իսկ տեսուչ Նիլն ապերախտաբար միայն զայրույթ էր զգում միսս Մարփիի հանդեպ: Նա հուշել էր իրեն, որ կեռնեխներ պիտի լինեին, և այդպես էլ կար. ահա դրանք: Ճիշտ է՝ քսանչորսը չէին, բայց քանակը կարելի էր խորհրդանշական անվանել:

Դեպքը վաղուց էր եղել՝ ամռանը, և տեսուչ Նիլը չէր պատկերացնում, թե սխեմայի որ մասում էր այն տեղավորվում: Նա թույլ չէր տա, որ այս ցնորական կեռնեխները շեղեին իրեն տրամաբանորեն ու սթափ կերպով հետաքննելուց. սպանությունը կատարվել էր ողջամիտ մարդասպանի կողմից ողջամիտ պատճառով, բայց այս պահից ի վեր ինքը պետք է հաշվի առներ գործի ավելի խելացնոր հեռանկարները:

Թվացնույրել 5 1915. շո 50 կաթի

## ԳԼՈՒԽ 15

- Ներողություն եմ խնդրում, միսս Ֆորթեսքյու, Ձեզ կրկին անհանգստացնելու համար, բայց ես ուզում եմ ամբողջական, լիարժեք հստակություն մտցնել այս հարցում: Որքան գիտենք, Դուք վերջին մարդն եք... ավելի ճիշտ՝ նախավերջինը... որ ողջ է տեսել միսիս Ֆորթեսքյուին: Մոտավորապես հինգն անց քսան էր, երբ Դուք դուրս եկաք հյուրասենյակից:

- Մոտավորապես,- պատասխանեց Էլեյնը:- Չեմ կարող ճշգրտորեն ասել:- Ապա պաշտպանողաբար հավելեց.- Ոչ ոք անընդհատ ժամացույցին չի նայում:

- Ո՛հ, իհարկե, ոչ: Այն ընթացքում, երբ բոլորը հեռացել էին, և Դուք մենակ էիք միսիս Ֆորթեսքյուի հետ, ինչի՞ մասին էիք զրուցում:

- Միթե կարևոր է, թե մենք ինչի մասին էինք զրուցում:

- Գուցեն ոչ,- ասաց տեսուչ Նիլը,- բայց հնարավոր է, որ դա որևէ հուշում տա ինձ, թե ինչ կար միսիս Ֆորթեսքյուի մտքին:

- Ուզում եք ասել... նա կարող էր ինքն անել դա:

Տեսուչ Նիլը նկատեց, որ Էլեյնի դեմքը պայծառացավ: Դա ավելի քան հարմար լուծում կլիներ ընտանիքի տեսանկյունից: Տեսուչ Նիլը վայրկյան իսկ չէր հավատում դրան: Ըստ նրա՝ Ադել Ֆորթեսքյուն այն մարդկանցից չէր, որ ինքնասպանություն են գործում: Նույնիսկ եթե նա թունավորած լիներ ամուսնուն և համոզված լիներ, որ իր հանցանքն ուր որ է հայտնի կդառնա, նրա մտքով չէր անցնի վերջ տալ սեփական կյանքին: Նա լավատեսական վստահություն կունենար, որ եթե անգամ իրեն դատեին սպանության մեղադրանքով, ապա, ինքը, անկասկած, կարդարացվեր: Այնուամենայնիվ, տեսուչը դեմ չէր, որ Էլեյն Ֆոր-

թեսքյուն հույս տածեր այդ վարկածի նկատմամբ: Ուստի միանգամայն ճշմարտացիորեն նկատեց.

- Առնվազն կա դրա հավանականությունը, միսս Ֆորթեսքյու: Հիմա գուցե պատմե՞ք ինձ, թե ինչի մասին էիք խոսում:

- Իրականում իմ գործերից,- կմկմաց էլեյնը:

- Ձեր գործերի, այն է...- Նա հարցական հնչերանգով դադար տվեց. նրա դեմքին բարի արտահայտություն էր հայտնվել:

- Ես... ընկերներիցս մեկը վերջերս մեր կողմեր է ժամանել, ու ես հարցնում էի Ադելին՝ արդյոք չէ՞ր առարկի, որ խնդրեի նրան մեր տանը հյուրընկալվել:

- Ա՛հ: Իսկ ո՞վ է այդ ընկերը:

- Միսթեր Ջերալդ Ռայթը: Նա ուսուցիչ է: Նա... «Գոլֆ» հյուրանոցում է իջևանել:

- Նա, ինչ է, Ձեր մտերիմ ընկերն է:

Տեսուչ Նիլը բարի քեռու պես ժպտաց, ինչն առնվազն տասնհինգ տարով ծերացրեց նրան:

- Մենք, ինչ է, շուտով հետաքրքիր հայտարարություն կլսենք:

Քիչ էր մնում նա զղջար՝ տեսնելով աղջկա ձեռքի անշնորհք շարժումը և նրա շիկնած դեմքը: Նա տեղը տեղին սիրահարված էր այդ երիտասարդին:

- Մենք... մենք դեռևս նշանված չենք և, բնականաբար, հենց հիմա չենք կարող հայտարարել դրա մասին, բայց... դե՛, այո՛, կարծում եմ՝ կանենք դա... նկատի ունեմ՝ մենք պատրաստվում ենք ամուսնանալու:

- Շնորհավորանքներս,- սիրալիրորեն ասաց տեսուչ Նիլը:- Ասում եք՝ միսթեր Ռայթը «Գոլֆ» հյուրանոցում է իջևանել: Որքան՞ ժամանակ է այնտեղ:

- Ես հեռագրեցի նրան, երբ հայրիկը մահացավ:



- Եվ նա անմիջապես եկավ: Հասկանալի է,- ասաց տեսուի Նիլը:

Նրա սիրելի արտահայտությունը բարեհամբույր ու հանգստացնող ձևով հնչեց:

- Ինչ ասաց միսիս Ֆորթեսքյուն՝ ի պատասխան Ձեր ընկերոջ գալու խնդրանքի:

- Օ՛, ասաց, որ ամեն բան կարգին է, ես կարող եմ ընդունել, ում կամենամ:

- Ուրեմն նա սիրալիր էր:

- Ոչ այնքան: Նկատի ունեմ՝ նա ասաց...

- Եվ, էլ ինչ նա ասաց:

Էլեյնը կրկին շիկնեց:

- Ա՛հ, ինչ-որ հիմարություն այն մասին, որ կարող էի շատ ավելի լավ ընտրություն կատարել ինձ համար: Դա Ադելին բնորոշ խոսք էր:

- Դե լավ,- սփոփեց տեսուի Նիլը,- ազգականներն ասում են նման բաներ:

- Այո՛, այո՛, այդպես էլ կա: Սակայն մարդիկ հաճախ դժվարանում են... ըստ արժանվույն գնահատել Ջերալդին: Հասկանո՞ւմ եք՝ նա խելացի է, բազմաթիվ արտասովոր ու առաջադեմ մտքեր ունի, որոնք դուր չեն գալիս մարդկանց:

- Այդ պատճառով լեզու չէր գտնում Ձեր հոր հետ:

Էլեյնը կաս-կարմիր կտրեց:

- Հայրիկը խիստ կանխակալ էր ու անարդարացի: Նա վիրավորեց Ջերալդի զգացմունքները: Փաստացի, Ջերալդն այնքան էր վշտացել հորս վերաբերմունքից, որ հեռացավ, ու մի քանի շաբաթ լուր չունեի նրանից:

Եվ, ամենայն հավանականությամբ, մինչև օրս լուր չէիք ստանա նրանից, եթե Ձեր հայրը չմահանար ու լիքը փող չթողներ Ձեզ՝ մտածեց տեսուի Նիլը, իսկ բարձրաձայն հարցրեց.

- Դուք և միսիս Ֆորթեսքյուն այլ թեմայով չզրուցեցիք:  
- Ո՛չ: Կարծես թե:  
- Դա մոտավորապես հինգն անց քսանհինգին էր, իսկ միսիս Ֆորթեսքյուն մեռած են գտել վեցից հինգ պակաս: Այդ կես ժամում Դուք չե՞ք վերադարձել սենյակ:

- Ո՛չ:

- Ինչո՞վ էիք զբաղված:

- Ես... կարճ զբոսանքի էի դուրս եկել:

- Դեպի «Գոլֆ» հյուրանոց:

- Ես... դե՛, այո՛, բայց Ջերալդն այնտեղ չէր:

Տեսուչ Նիլը կրկին ասաց. «Հասկանալի է», բայց այս անգամ իբրև նշան, որ աղջիկն ազատ է: Էլեյն Ֆորթեսքյուն ոտքի ելավ ու հարցրեց.

- Վերջ:

- Այսքանն էր, շնորհակալ եմ, միսս Ֆորթեսքյու:

Երբ նա դեպի դուրս ուղղվեց, Նիլն անփութորեն հարցրեց.

- Ձեզ ինչ-որ բան հայտնի է կեռնեխների մասին:

Էլեյնն ապշահար նայեց նրան:

- Կեռնեխների: Նկատի ունե՞ք կարկանդակի մեջ թխվածներին:

Դրանք պետք է կարկանդակի մեջ լինեին՝ մտածեց տեսուչ Նիլը, իսկ բարձրաձայն ընդամենը հարցրեց.

- Ե՞րբ էր դա:

- Օ՛, երեք կամ չորս ամիս առաջ... մի քանիսն էլ հայրիկի գրասեղանին էին: Նա կատաղած էր:

- Կատաղած էր, այո՛: Շամտ հարցեր տվեց:

- Այո՛... բնականաբար... բայց մենք չկարողացանք պարզել, թե ով էր դրանք այնտեղ դրել:

- Պատկերացում ունե՞ք, թե ինչու էր նա այդպես զայրացել:

- Դե՛, դա նողկալի արարք է, այնպես չէ՛:

Նիլը մտազբաղ նայեց նրան, բայց աղջկա դեմքին խորամանկության նշույլ չկար: Տեսուհն ասաց.

- Ա՛հ, ևս մի բան, միսս Ֆորթեսքյու: Դուք տեղյակ եք՝ Ձեր խորթ մայրը երբևէ կտակ կազմե՛լ է:

- Գաղափար չունեմ... երևի: Մարդիկ սովորաբար անում են դա, այնպես չէ՛:

- Պետք է անեն, բայց ոչ միշտ են զբաղվում դրանով: Դուք ինքներդ կտակ կազմե՛լ եք, միսս Ֆորթեսքյու:

- Ո՛չ... ո՛չ... մինչև օրս ես թողնելու բան չունեի... հիմա, իհարկե...

Նրա աչքերում տեսուչը տեսավ կարգավիճակի փոփոխության գիտակցումը:

- Այո՛,- ասաց նա: - Հիսուն հազար ֆունտը մեծ պատասխանատվություն է. դա շատ բան է փոխում, միսս Ֆորթեսքյու:

\* \* \*

Էլեյն Ֆորթեսքյուի՝ սենյակից դուրս գալուց հետո տեսուչ Նիլը մի քանի րոպե մնաց նստած՝ մտախոհ իր դիմաց նայելով: Անկասկած, մտորելու նոր նյութ ուներ: Մերի Դավի պնդումը, որ մոտավորապես չորսն անց երեսունհինգին պարտեզում ինչ-որ տղամարդու է տեսել, նոր հնարավորություններ էր ի հայտ բերում: Իհարկե, եթե Մերի Դավը ճշմարտությունն էր ասում: Տեսուչ Նիլը սովորություն չունեի ենթադրելու, որ դիմացինը չի ստում: Սակայն նրա պնդումը բոլոր կողմերից վերլուծելով՝ չտեսավ որևէ իրական պատճառ, որի համար նա կստեր: Տեսուչը հակված էր մտածելու, որ Մերի Դավը ճշմարտությունն էր ասում, երբ խոսում էր պարտեզում տղամարդու տեսնելու մասին: Միանգամայն պարզ էր, որ դա չէր կարող Լանսելոթ Ֆոր-

թեսքյուն լինել, թեև նման հանգամանքներում Մերի Դավի  
այդ ենթադրությունը լիովին բնական էր: Այդ տղամարդը  
Լանսելոթ Ֆորթեսքյուն չէր, բայց նույն հասակն ու կազմ-  
վածքն ուներ, իսկ եթե այդ ժամին պարտեզում տղամարդ  
էր եղել, ավելին՝ շարժվել էր գաղտագողի՝ դատելով նրա-  
նից, թե ինչպես էր թաքնվել կենու ցանկապատի հետևում,  
ապա դա, անկասկած, նոր ուղղություն էր տալիս մտքե-  
րին:

Ի լրումն այս հայտարարության՝ Մերի Դավը պնդում  
էր նաև, որ ոտնաձայներ էր լսել վերնահարկում: Դա իր  
հերթին կապվում էր մեկ այլ հանգամանքի հետ՝ փոքր ցե-  
խագուղձի, որ ինքը գտել էր Ադել Ֆորթեսքյուի հանդեր-  
ձասենյակում: Տեսուչ Նիլի միտքը կանգ առավ այդ սեն-  
յակի փոքր նրբաճաշակ գրասեղանի վրա: Անտիկ նմուշի  
գեղեցիկ նմանվածք էր՝ հեշտ հայտնաբերվող գաղտնի  
դարակով: Այդ դարակում երեք նամակ կար՝ գրված Վի-  
վիան Դյուբուայից Ադել Ֆորթեսքյուին: Իր կարիերայի ըն-  
թացքում անթիվ-անհամար զանազան սիրային նամակ-  
ներ էին անցել տեսուչ Նիլի ձեռքի տակով: Նա ծանոթ էր  
կրքոտ, հիմար, զգացմունքային և նվնվան նամակների:  
Եղել էին նաև զգուշավոր նամակներ: Տեսուչ Նիլը հակ-  
ված էր վերոնշյալ երեք նամակը վերջին տեսակին դասե-  
լու: Նույնիսկ եթե դրանք կարդային ապահարզանի հար-  
ցով զբաղվող դատարանում, ապա կարող էին որակվել  
որպես ընդամենը պլատոնական ընկերությունից ոգեշնչ-  
ված գրվածքներ: Թեև այս դեպքում... «Պլատոնական ըն-  
կերություն. չէ մի չէ»,- աննրբանկատորեն մտածեց տեսուչ  
Նիլը: Նամակները գտնելուն պես Նիլն ուղարկել էր դրանք  
Սքոթլենդ Յարդ, քանի որ այդ ժամանակ հիմնական հար-  
ցը հետևյալն էր. արդյոք դատախազությունն առկա ապա-  
ցույցները բավարար էր համարում Ադել Ֆորթեսքյուի կամ

նրա և Վիվիան Դյուբուայի դեմ գործ հարուցելու համար: Ամեն ինչ վկայում էր, որ կինն է թունավորել Ռեքս Ֆորթեսբյուին՝ իր սիրեկանի հանցակցությամբ կամ առանց դրա: Չնայած զգուշավորությանը՝ այս նամակներից միանգամայն պարզ էր, որ Վիվիան Դյուբուան նրա սիրեկանն էր, բայց որքան տեսուչ Նիլն էր հասկանում, ձևակերպումներում չկար հանցանքի դրդելու որևէ նշան: Գուցե եղել էր բանավոր դրդում, բայց Վիվիան Դյուբուան չափազանց զգուշավոր էր նման բանը թղթին հանձնելու համար:

Տեսուչ Նիլը գլխի էր ընկնում, որ Վիվիան Դյուբուան խնդրել է Ադել Ֆորթեսբյուին ոչնչացնել իր նամակները, և որ Ադել Ֆորթեսբյուն վստահեցրել է նրան, որ արել է դա:

Դե ինչ, այժմ նրանք ստիպված էին ևս երկու մահվան հետ առնչվել: Իսկ դա նշանակում էր կամ պետք է նշանակեր, որ Ադել Ֆորթեսբյուն չէր սպանել ամուսնուն:

Եթե միայն (տեսուչ Նիլը նոր վարկած էր դիտարկում)... Ադել Ֆորթեսբյուն ցանկացել է ամուսնանալ Վիվիան Դյուբուայի հետ, իսկ Վիվիան Դյուբուայի ուզածը ոչ թե Ադել Ֆորթեսբյուն, այլ նրա հարյուր հազար ֆունտն էր, որ նա կստանար ամուսնու մահվան դեպքում: Հավանաբար միսթր Դյուբուան ենթադրել է, որ Ռեքս Ֆորթեսբյուի մահը կվերագրվեր բնական պատճառների: Սրտի նոպայի կամ կաթվածի պես մի բանի: Ի վերջո, մի ամբողջ տարի բոլորը կարծես անհանգստանում էին Ռեքս Ֆորթեսբյուի առողջական վիճակի համար (տեսուչ Նիլի մտքով իմիջիայլոց անցավ, որ պետք է զբաղվի այդ հարցով: Ենթագիտակցաբար զգում էր, որ դա կարող էր ինչ-որ առումով կարևոր լինել): Նախորդ միտքը շարունակելով՝ Ռեքս Ֆորթեսբյուի մահն ըստ ծրագրի չէր ընթացել: Ախտորոշումը տրվել էր առանց ժամանակ կորցնելու՝ թունավորում, ինչպես նաև ճշգրտորեն նշվել թույնը:

Ենթադրենք՝ Ադել Ֆորթեսքյուն և Վիվիան Դյուբուան մեղավոր էին, ինչ վիճակում նրանք կլինեին այդ ժամանակ: Վիվիան Դյուբուան կսարսափեր, իսկ Ադել Ֆորթեսքյուն կկորցներ գլուխը: Նա կարող էր հիմարություններ ասել կամ անել: Կարող էր զանգել Դյուբուային, չմտածված բաներ խոսել, այնպես որ, միսթթ Դյուբուան հասկանար՝ այդ ամենը գուցե հասներ Կենու տնակում ապրողներից մեկի ականջին: Ո՞րը կլիներ Վիվիան Դյուբուայի հաջորդ քայլը:

Դեռ վաղ էր փորձել պատասխանել այդ հարցին, բայց տեսուչ Նիլը վճռեց առաջիկայում հարցումներ անել «Գոլֆ» հյուրանոցում՝ ճշտելու, թե արդյոք միսթթ Դյուբուան իր համարում էր եղել չորսն անց տասնհինգից վեցն ընկած ժամանակահատվածում: Վիվիան Դյուբուան բարձրահասակ էր ու թխահեր, ինչպես Լանս Ֆորթեսքյուն: Նա կարող էր պարտեզով սողոսկել դեպի կողմնային դուռը, բարձրանալ վերնահարկ, իսկ հետո՝ Փնտրել նամակներն ու հայտնաբերել, որ դրանք այլևս չկան: Սպասել այնտեղ հավանաբար այնքան, մինչև տեսադաշտում մարդ չլիներ, ապա իջներ գրադարան, երբ թեյախմությունն ավարտվել էր, և Ադել Ֆորթեսքյուն մենամկ էր:

Սակայն այս ամենը չափից դուրս արագ էր...

Նիլը հարցաքննել էր Մերի Դավին և Էլեյն Ֆորթեսքյուին: Այժմ պետք էր տեսնել, թե Փերսիվալ Ֆորթեսքյուի կինն ինչ ասելիք ուներ:

## ԳԼՈՒԽ 16

Տեսուչ Նիլը գտավ միսիս Փերսիվալին վերնահարկի իր հյուրասենյակում նամակներ գրելիս: Նա փոքր-ինչ նյարդայնորեն ոտքի ելավ, երբ տեսուչը ներս մտավ:

- Կամ մի բան... ինչով...

- Խնդրում եմ, նստե՛ք, միսիս Ֆորթեսբյու: Ընդամենը մի քանի հարց կցանկանայի տալ Ձեզ:

- Ա՛հ, այո՛: Իհարկե, տեսուչ: Այս ամենն այնքան սարսափելի է, այնպես չէ՛: Սոսկալի է:

Նա բավական դյուրագրգիռ ձևով նստեց բազկաթոռներից մեկին: Տեսուչ Նիլը տեղավորվեց նրա կողքին՝ նստելով ուղիղ թիկնակով աթոռին: Նա սկսեց ավելի ուշադիր զննել միսիս Փերսիվալին, քան մինչև այդ պահն էր արել: Ինչ-որ առումով միջակ կին էր՝ մտածեց նա: Բացի դրանից՝ այնքան էլ երջանիկ չէր: Անհամբեր, դժգոհ, սահմանափակ մտահորիզոնով. բայցև, հնարավոր էր, որ նա բանիմաց էր ու հմուտ՝ որպես հիվանդանոցի բուժքույր: Ճիշտ է՝ հարուստ տղամարդու հետ ամուսնությամբ նա ազատ ժամանակ էր ձեռք բերել, բայց այդ ազատ ժամանակը չէր գոհացրել նրան: Նրա զբաղմունքը հագուստ գնելն էր, վեպեր կարդալն ու քաղցրավենիք ուտելը, բայց Նիլը հիշում էր այն անհագ հուզմունքը, որ համակել էր նրան Ռեքս Ֆորթեսբյուի մահվան գիշերը, և ըստ նրա՝ դա ոչ այնքան զազրելի հրճվանք էր, որքան գաղտնիքի բացահայտում նրա կյանքը շրջապատող ձանձրույթի անբերրի անապատներում: Տեսուչի քննող հայացքի ներքո նրա կոպերը թրթռացին ու կախվեցին: Այդկերպ նա միաժամանակ և՛ նյարդային, և՛ մեղավոր տեսք ստացավ, թեև Նիլը վստահ չէր, որ իրականում այդպես է:

- Վախենան,- հանգստացնելով խոսեց տեսուչը,- մենք

ստիպված ենք նորից ու նորից հարցեր տալ մարդկանց: Դա պետք է որ հոգնեցուցիչ լինի բոլորիդ համար: Ես իսկապես գիտակցում եմ դա, բայց, հասկանում եք, այնքան բան է կախված իրադարձությունների ճշգրիտ ժամանակագրությունից: Որքան հասկանում եմ, Դուք բավականաչափ ուշ եք իջել թեյելու: Փաստացի, միսս Դավն է եկել Ձեր հետևից:

- Այո: Այդպես է: Նա եկավ և ասաց, որ թեյը մատուցված է: Գաղափար չունեի, որ այդքան ուշ էր: Նամակներ էի գրում:

Տեսուչ Նիլը հպանցիկ հայացք գցեց գրասեղանին:

- Հասկանալի է,- ասաց նա:- Չգիտես ինչու ինձ թվացել էր, թե դուրս էիք եկել զբոսնելու:

- Նա է այդպես ասել: Այո... դե, Դուք ճիշտ եք: Ես նամակներ էի գրում, բայց հետո սկսեցի խեղդվել տոթից, գլխացավ զգացի, ուստի դուրս եկա և... ըրր... գնացի զբոսնելու: Ընդամենը պարտեզով շրջելու:

- Հասկանալի է: Ինչ-որ մեկին չհանդիպեցիք:

- Հանդիպել:- Միսիս Փերսիվալը սևեռուն հայացքով նայում էր նրան:- Այսինքն:

- Պարզապես հետաքրքիր էր՝ Ձեր զբոսանքի ընթացքում ինչ-որ մեկին տեսել եք, կամ որևէ մեկը տեսել է Ձեզ:

- Այգեպանին եմ տեսել հեռվից. ահա և վերջ:- Նա կասկածանքով նայում էր տեսուչին:

- Այնուհետև Դուք տուն մտաք, բարձրացաք այստեղ՝ Ձեր սենյակ, և հենց այն պահին, երբ հանում էիք Ձեր վերնահագուստը, միսս Դավը եկավ՝ հայտնելու, որ թեյը պատրաստ է:

- Այո: Այո, և ես իջա:

- Իսկ ովքեր էին այնտեղ:

- Ադելն ու Էլեյնը, մի քանի բոպե անց էլ Լանսը ժամա-



նեց: Տեգրս, դե գիտեք: Նա, ով Քենիայից է վերադարձել:

- Իսկ հետո բոլորդ թե՛յ խմեցիք:

- Այո՛, թեյեցինք: Հետո Լանսը բարձրացավ մորաքույր Էֆիի մոտ, իսկ ես եկա այստեղ՝ նամակներն ավարտելու: Էլեյնը մնաց այնտեղ Ադելի հետ:

Տեսուչը քաջալերաբար գլխով արեց:

- Այո՛: Ձեր հեռանալուց հետո միսս Ֆորթեսքյուն կարծես հինգից տասը ընդամենը մնացել է միսիս Ֆորթեսքյուլի հետ: Ձեր ամուսինը դեռ տուն չէր վերադարձել:

- Օ՛, ո՛չ: Փերսին... Վալը... մինչև վեցն անց կես կամ յոթը տանը չէր: Ստիպված էր եղել քաղաքում մնալ:

- Նա գնացքո՞վ էր վերադարձել:

- Այո՛: Կայարանից տաքսի էր նստել:

- Գնացքով վերադառնալն անսովոր էր նրա համար:

- Երբեմն նա այդպես է անում: Ոչ այնքան հաճախ: Կարծում եմ՝ քաղաքի այնպիսի հատվածներում էր եղել, որտեղ մեքենան կայանելը բավական բարդ է: Նրա համար ավելի հեշտ էր գնացք նստել Քենոն Սթրիթից և այդպես տուն վերադառնալ:

- Հասկանալի է,- ասաց տեսուչ Նիլն ու շարունակեց.- ես հարցրի Ձեր ամուսնուն՝ արդյոք միսիս Ֆորթեսքյուն կտակ թողել է մահից առաջ: Նա ասաց, որ հազիվ թե: Երևի Դուք նոյնպես պատկերացում չունեք դրա մասին:

Ի զարմանս Նիլի՝ Ջենիֆեր Ֆորթեսքյուն աշխուժորեն գլխով արեց:

- Ա՛հ, այո՛,- ասաց նա:- Ադելը կազմել է կտակ: Նա է ասել ինձ:

- Իսկապե՞ս: Ե՞րբ է դա եղել:

- Ոչ այնքան վաղուց: Կարծես թե մոտ մեկ ամիս առաջ:

- Անչափ հետաքրքիր է,- ասաց տեսուչ Նիլը:

Միսիս Փերսիվալն անհամբերությամբ առաջ թեքվեց:

Այժմ նրա դեմքը կենդանությամբ էր լցվել: Բացառիկ տեղեկություն հայտնելն ակնհայտորեն բավականություն էր պատճառում նրան:

- Վալը չգիտեր սրա մասին,- ասաց նա:- Ոչ ոք չգիտեր: Ես միայն պատահամար եմ իմացել: Փողոցում էի: Նոր էի դուրս եկել գրենական պիտույքների խանութից, երբ տեսա Ադելին փաստաբանական գրասենյակից դուրս գալիս: «Անսել և Ուորալից», դե, գիտեք, որ Հայ Սթրիթում է:

- Ահա թե ինչ: Տեղական փաստաբանական ընկերությունից:

- Այո: Եվ ես հարցրի Ադելին. «Այդ ինչ էիր անում այնտեղ»: Իսկ նա ծիծաղեց ու ասաց. «Միթե դա հետաքրքրում է քեզ»: Այնուհետև, երբ քայլում էինք միասին, նա ասաց. «Կասեմ քեզ, Ջենիֆեր: Ես կտակ եմ կազմում»: «Դե,- ասացի ես,- ինչու ես դա անում, Ադել, դու հիվանդ չես, ոչ էլ նման մի բան, այնպես չէ»: Եվ նա ասաց, որ բնականաբար հիվանդ չէ: Երբևէ ավելի լավ չի զգացել իրեն: Սակայն յուրաքանչյուր ոք պետք է կտակ կազմի: Ասաց, որ չի գնա Լոնդոն այդ ինքնահավան ընտանեկան փաստաբանի՝ միսթր Բիլինգսլիի մոտ: Ասաց, որ այդ ծեր մատնիչը կգնար ու կպատմեր դա ընտանիքին: «Ո՛հ,- ասաց նա,- իմ կտակն իմ անձնական գործն է, Ջենիֆեր, ես կանեմ դա իմ ձևով, և ոչ ոք չի իմանա դրա մասին»: «Լավ, Ադել,- ասացի:- Ես ոչ մեկին չեմ ասի»: Նա ասաց. «Հոգ չէ, եթե ասես: Դու չգիտես՝ ինչ կա այնտեղ»: Բայցևայնպես, ես ոչ ոքի չասացի: Ո՛հ, նույնիսկ Փերսիվալին: Ես իսկապես կարծում եմ, որ կանայք պետք է սատարեն միմյանց, այնպես չէ, տեսուհի Նիլ:

- Անշուշտ, դա խիստ նրբանկատ վերաբերմունք է Ձեր կողմից, միսիս Ֆորթեսքյու,- դիվանագիտորեն նկատեց տեսուհի Նիլը:

- Իհարկե, ես բնույթով չար չեմ,- ասաց Ջենիֆերը:-

Առանձնակի համակրանք չէի տաձում Ադելի հանդեպ, ինձ ճիշտ հասկացե՛ք: Միշտ մտածում էի, որ նա այն կանանցից է, որ ոչնչի առաջ կանգ չեն առնի իրենց ուզածին հասնելու համար: Հիմա նա մեռած է, և գուցե ես սխալվել եմ նրա հարցում, խնդճ արարած:

- Դե ինչ, անչափ շնորհակալ եմ, մի՛սիս Ֆորթեսքյու, ինձ այսքան օգտակար լինելու համար:

- Շնորհակալության կարիք չկա: Ես միայն ուրախ եմ ուժերիս ներածի չափով օգնելու համար: Այս ամենն այնքան սարսափելի է, այնպես չէ՛: Ո՞վ է այն ծեր լեդին, որ ժամանել է այսօր առավոտյան:

- Միսս Մարփլն է: Նրա կողմից սիրալիր քայլ էր այստեղ գալը՝ հաղորդելու մեզ այն տեղեկությունները, որոնք հայտնի են իրեն աղջկա՝ Գլեդիսի մասին: Կարծես թե Գլեդիս Մարտինը ժամանակին ծառայության է եղել նրա մոտ:

- Իսկապես: Ինչ հետաքրքիր է:

- Եվս մի բան կա, մի՛սիս Փերսիվալ: Դուք ինչ-որ բան գիտե՞ք կեռնեխների մասին:

Ջենիֆեր Ֆորթեսքյուն ուժգին ցնցվեց: Նա վայր գցեց պայուսակն ու կռացավ այն հատակից վերցնելու:

- Կեռնեխների՞, տեսու՛յ: Կեռնեխների՞: Ինչ տեսակի կեռնեխների:

Խոսելիս նրա շունչը փոքր-ինչ կտրվում էր: Թեթևակի ժպտալով՝ տեսույ Նիլն ասաց.

- Սովորական կեռնեխների: Կենդանի թե մեռած կամ, ասենք, խորհրդանշական:

Ջենիֆեր Ֆորթեսքյուն կտրուկ ասաց.

- Չգիտեմ, թե ինչ նկատի ունեք: Չեմ հասկանում՝ ինչի մասին եք խոսում:

- Այսինքն՝ Ձեզ ոչինչ հայտնի չէ՛ կեռնեխների մասին, մի՛սիս Ֆորթեսքյու:

Նա պատասխանեց առանց շտապելու.

- Ենթադրում եմ՝ նկատի ունեք նրանք, որ ամռանը գտել էինք կարկանդակի մեջ: Այդ ամենն անհեթեթություն էր:

- Մի քանիսն էլ գրադարանի սեղանին էին թողել, այնպես չէ՛:

- Դա տխմարագույն խաղարկային կատակ էր: Չգիտեմ, թե ով է պատմել Ձեզ դրա մասին: Միսթթր Ֆորթեսքյուն՝ սկեսրայրս, բարկացած էր:

- Միայն բարկացած էր: Ուրիշ ոչինչ:

- Օ՛: Հասկանում եմ, թե ինչ նկատի ունեք: Այո՛, երևի... ճիշտ որ: Նա հարցրեց մեզ՝ տանը կողմնակի անձինք եղել են:

- Կողմնակի անձինք:- Տեսուչ Նիլը բարձրացրեց հոնքերը:

- Դե՛, նա էր այդպես ասում,- պաշտպանողաբար նկատեց միսիս Փերսիվալը:

- Կողմնակի անձինք,- մտազբաղ կրկնեց տեսուչ Նիլը: Այնուհետև հարցրեց.- Նա ինչ-որ առումով վախեցած տեսք ուներ:

- Վախեցած: Չեմ հասկանում, թե ինչ եք ուզում ասել:

- Նյարդային էր: Նկատի ունեմ՝ կողմնակի անձանց պատճառով:

- Այո՛: Իսկապես, բավական նյարդային էր: Իհարկե, այնքան էլ լավ չեմ հիշում: Մի քանի ամիս առաջ էր, դե, գիտեք: Կարծում եմ՝ դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ հիմար խաղարկային կատակ: Գուցե Քրամփն է արել դա: Ես, իրոք, մտածում եմ, որ Քրամփը խիստ անհավասարակշիռ մարդ է, և լիովին համոզված եմ, որ նա խմում է: Ժամանակ առ ժամանակ իսկական անպատկառի պես է պահում իրեն: Երբեմն հարց եմ տալիս ինքս ինձ՝ արդյոք նա կարող էր

քեն պահել միսթը Ֆորթեսքյուի դեմ: Կարծում եք՝ դա հնարավոր է, տեսուհի:

- Ամեն ինչ հնարավոր է,- պատասխանեց տեսուհի Նիլը և դուրս եկավ:

\* \* \*

Փերսիվալ Ֆորթեսքյուն Լոնդոնում էր, բայց տեսուհը գտավ Լանսելոթին գրադարանում՝ իր կնոջ հետ նստած: Նրանք շախմատ էին խաղում:

- Չէի ցանկանա խանգարել Ձեզ,- ներողություն հայցելով՝ ասաց Նիլը:

- Մենք պարզապես ժամանակ ենք սպանում, տեսուհի, այնպես չէ՛, Պան:

Պատը գլխով արեց:

- Հավանաբար այն հարցը, որ կտամ, մի փոքր հիմար կհամարեք,- սկսեց Նիլը:- Ձեզ որևէ բան հայտնի է կեռնեխների մասին, միսթը Ֆորթեսքյու:

- Կեռնեխների: Լանսը զարմացած տեսք ուներ:- Ինչպիսի կեռնեխների: Բուն թռչունների՞ն նկատի ունեք:

Տեսուհի Նիլը խոսեց անսպասելի, զինաթափ անող ժպիտով.

- Ինքս էլ վստահ չեմ՝ խոսքն ինչի մասին է, միսթը Ֆորթեսքյու: Պարզապես կեռնեխների մասին հիշատակում է ասպարեզ եկել:

- Տեր Աստված:- Լանսելոթը հանկարծ ասես զգաստացավ:- Միթե «Կեռնեխներ» հին հանքի հետ է կապված:

Տեսուհի Նիլը կտրուկ հարցրեց.

- «Կեռնեխներ» հանք: Ինչ է դա:

Լանսը տարակուսանքով խոժոռվեց:

- Բանն այն է, տեսուհի, որ ինքս էլ շատ բան չեմ հիշում:

Ընդամենն աղոտ հիշողություն ունեմ հայրիկի անցյալից ինչ-որ մութ գործարքի վերաբերյալ: Աֆրիկայի արևմտյան ափին էր դա: Կարծես թե մորաքույր Էֆին մի անգամ նրա երեսով տվեց դա, բայց որևէ հստակ բան չեմ հիշում այդ մասին:

- Մորաքույր Էֆին: Միսս Ռեմսբորթմը, այո՛:

- Այո՛:

- Ես կհարցնեմ նրան այդ մասին,- ասաց տեսուչ Նիլը: Ապա թախիծով հավելեց.- Այդ ծեր լեդին բավական ահարկու է, միսթեր Ֆորթեսքյու: Մշտապես նյարդային վիճակի մեջ է գցում ինձ:

Լանսը ծիծաղեց:

- Այո՛: Մորաքույր Էֆին, անկասկած, տարօրինակ կերպար է, բայց նա կարող է օգտակար լինել Ձեզ, եթե ճիշտ կողմից մոտենաք: Հատկապես, եթե պատրաստվում եք անցյալը փորփրելու: Նա գերազանց հիշողություն ունի, գերագույն հաճույքով հիշում է ցանկացած բան, որ ինչ-որ կերպ հակված է վնաս հասցնելու:- Նա մտազբաղ հավելեց.- Մի բան էլ կա: Այստեղ գալուց կարճ ժամանակ անց ես բարձրացա նրան տեսնելու: Փաստացի, այն օրվա թեյախմությունից անմիջապես հետո: Եվ նա խոսում էր Գլեդիսի մասին: Այն աղախնի, որին սպանել են: Բնականաբար, մենք դեռ չգիտեինք, որ նա մեռած է: Սակայն մորաքույր Էֆին լիովին համոզված էր, որ Գլեդիսն իմացել է մի բան, ինչը չի հայտնել ոստիկանությանը:

- Ըստ երևույթին, դա միանգամայն անվիճելի է,- ասաց տեսուչ Նիլը:- Նա այլևս չի ասի դա, խեղճ աղջիկ:

- Այո՛: Կարծես թե մորաքույր Էֆին խորհուրդ է տվել նրան, որ պատմի այն, ինչ գիտի: Ափսո՛ս, աղջիկը չի լսել նրան:

Տեսուչ Նիլը գլխով արեց: Հոգեպես տրամադրվելով

հանդիպմանը՝ նա ներթափանցեց միսս Ռեմսբորնի ամրոց: Ի զարմանս իրեն՝ միսս Մարփլին այնտեղ էր: Երկու լեդիները քննարկում էին օտարերկրյա առաքելությունները:

- Ես գնամ, տեսո՛ւ: Միսս Մարփլը շտապեց ոտքի ելնել:

- Կարիք չկա, մադամ,- ասաց տեսուչ Նիլը:

- Ես խնդրել եմ միսս Մարփլին այս տանը հյուրընկալվել,- ասաց միսս Ռեմսբորնը:- Ինչ իմաստ կա փող ծախսելու այդ անհեթեթ հյուրանոցում՝ «Գոլֆում»: Սպեկուլյանտների որջ. ահա թե ինչ է դա: Ամբողջ երեկո հարբեցողությամբ ու թղթախաղերով են զբաղվում: Ավելի լավ է՝ քրիստոնյային հարիր տանն ապրի: Հարևան սենյակն ազատ է: Վերջին անգամ դոկտոր Մարի Փիթերսն է զբաղեցրել այն:

- Դուք չափազանց սիրալիր եք,- ասաց միսս Մարփլը,- բայց ես իսկապես կարծում եմ, որ չպետք է ներխուժեմ այն տունը, որտեղ սուգն է տիրում:

- Սո՛ւգ: Անհեթեթություն,- բացականչեց միսս Ռեմսբորնը:- Այս տանն ո՛վ լաց կլինի Ռեքսի համար: Կամ Ադելի: Թե՛ ոստիկանությունն է անհանգստացնում Ձեզ: Որևէ առարկություն ունե՞ք, տեսո՛ւ:

- Բոլորովին, մադամ:

- Տեսա՞ք,- ասաց միսս Ռեմսբորնը:

- Դուք չափազանց սիրալիր եք,- երախտագիտորեն կրկնեց միսս Մարփլը:- Գնամ ու զանգեմ հյուրանոց՝ ամրագրումս չեղարկելու:

Նա դուրս եկավ սենյակից, և միսս Ռեմսբորնը կտրուկ կերպով դիմեց տեսուչին.

- Դե՛, ի՛նչ է Ձեր ուզածը:

- Կցանկանայի իմանալ՝ կարո՞ղ եք արդյոք որևէ բան պատմել ինձ «Կեռնեխներ» հանքի մասին, մադամ:

Միսս Ռեմսբրոնն անսպասելի, ականջ ծակող քրքիչ արձակեց:

- Վահ: Դուք պարզել եք դա, այո: Հասկացել եք այն օրը տված ակնարկս: Դե՛, ի՞նչ եք ուզում իմանալ դրա մասին:

- Ինչ որ պատմեք, մադամ:

- Շատ բան չեմ կարող պատմել: Դա վաղուց էր... քսան-քսանհինգ տարի կլինի: Ինչ-որ կոնցեսիա՝ կամ նման մի բան էր Արևելյան Աֆրիկայում: Փեսաս ու Մաքթենգի ազգանունով մեկն էին ներգրավվել գործում: Նրանք գնացել էին այնտեղ՝ միասին հանքը հետազոտելու, և Մաքթենգին տենդից մահացել էր: Ռեքսը տուն վերադարձավ և ասաց, որ մշակման համար նախատեսված այդ հանքավայրը կամ կոնցեսիան, ինչ էլ դա կոչեք, անարժեք էր: Այդքանն է իմացածս:

- Ինձ թվում է՝ Դուք մի փոքր ավելին գիտեք, մադամ, - համառոտ Նիլը:

- Մնացյալը բամբասանք է: Օրենքի մարդիկ չեն սիրում բամբասանքներ. ինձ այդպես են ասել:

- Մենք դեռևս դատարանում չենք, մադամ:

- Դե՛, ես չեմ կարող վստահաբար ինչ-որ բան ասել: Մաքթենգիներն աղմուկ բարձրացրին: Այդքանը գիտեմ: Նրանք պնդում էին, որ Ռեքսը դրամ է շորթել Մաքթենգից: Կհամարձակվեմ ասել, որ դա ճիշտ է: Նա խելացի, միջոցների մեջ խտրություն չդնող մարդ էր, բայց կասկած չունեմ՝ ինչ էլ որ արել է, եղել է օրենքի շրջանակում: Նրանք չկարողացան որևէ բան ապացուցել: Միսիս Մաքթենգին անհավասարակշիռ կին էր: Եկավ այստեղ ու վրե-

---

1 Պայմանագիր, որով պետությանը պատկանող հողը, ընդերքի հարստությունը, ձեռնարկությունը և այլ օբյեկտներ հանձնվում են շահագործման:



ժի սպառնալիքներ տեղաց: Ասաց՝ Ռեքսն է սպանել իր ամուսնուն: Հիմար, մելոդրամատիկ վայնասուն: Կարծում եմ՝ խելքը գցել էր... իրականում դրանից շատ չանցած՝ կարծես թե հոգեբուժարան ընկավ: Այստեղ էր քարշ տվել իր երկու երեխաներին, որ մահու չափ վախեցած տեսք ունեին: Ասում էր՝ իր երեխաներին կդաստիարակի այնպես, որ մեծանալով վրեժ լուծեն: Նման մի բան: Այդ ամենը խեղկատակություն էր: Դե՛, այսքանն էր ասելիքս: Եվ իմացե՛ք՝ «Կեռնեխներ» հանքի դեպքը միակ խարդախությունը չէր նրա կյանքում: Շատ ավելին կգտնեք, եթե փնտրեք: Ինչպե՛ս տեղեկացաք «Կեռնեխների» մասին: Դեպի Մաքթենզիներին տանող հետքի՞ եք դուրս եկել:

- Տեղյակ չե՞ք, թե ինչ պատահեց ընտանիքի հետ, մահան՞:

- Գաղափար չունեմ,- ասաց միսս Ռեմսբրոթոմը:- Հիշե՛ք, չեմ կարծում, որ Ռեքսը սպանեց Մաքթենզիին, բայց կարող էր թողնել, որ նա մահանա: Տիրոջ առաջ դա նույն բանն է, բայց ոչ օրենքի: Եթե նա արել է դա, ապա ստացել է իր արժանի պատիժը: Աստծու աղացները դանդաղ են աղում, բայց մանրամաղ: Լավ կանեք՝ հիմա գնաք, այլևս ոչինչ չեմ կարող ասել Ձեզ, իսկ հարցեր տալու իմաստ չկա:

- Անչափ շնորհակալ եմ այն ամենի համար, ինչ պատմեցիք ինձ,- ասաց տեսուչ Նիլը:

- Այդ կնոջը՝ Մարփիին, հեն ուղարկեք,- նրա հետևից կանչեց միսս Ռեմսբրոթոմը:- Նա թեթևամիտ է՝ անգլիկան եկեղեցու մյուս հետևորդների պես, բայց գիտի ինչպես խելամտորեն բարեգործական հաստատություն վարել:

Տեսուչ Նիլը երկու հեռախոսազանգ կատարեց. առաջինը՝ «Անսել և Ուորալ», երկրորդը՝ «Գոլֆ» հյուրանոց, ապա կանչեց սերժանտ Հեյին և ասաց, որ կարճ ժամանակով դուրս է գալիս տնից:

- Պետք է այց կատարեմ փաստաբանական գրասենյակ, դրանից հետո, եթե հրատապ բան լինի, կարող եք գտնել ինձ «Գոլֆ» հյուրանոցում:

- Այո, սըր:

- Եվ պարզեք այն ամենը, ինչ կարող եք, կեռնեխների մասին,- հավելեց Նիլը՝ ուսի վրայից նայելով:

- Կեռնեխների, սըր,- կրկնեց սերժանտ Հեյը՝ լիակատար տարակուսանքի մեջ հայտնվելով:

- Հենց դա էր ասածս... ոչ թե մոշի դոնդողի, այլ կեռնեխների:

- Շատ լավ, սըր,- շփոթված ասաց սերժանտ Հեյը:

## ԳԼՈՒԽ 17

Տեսուչ Նիլը եկավ այն եզրակացության, որ միսթր Անսելն այն փաստաբաններից էր, որոնց ավելի հեշտ է վախեցնել, քան իրենք կարող են ահաբեկել: Լինելով փոքր և ոչ այնքան հաջողակ ընկերության ներկայացուցիչ՝ նա ձգտում էր ոչ թե պաշտպանել սեփական իրավունքները, այլ հնարավոր ամեն ձևով աջակցել ոստիկանությանը:

Այո՛, ասաց նա, ինքը կտակ էր կազմել երջանկահիշատակ միսիս Ֆորթեսքյուի համար: Մոտ հինգ շաբաթ առաջ էր նա իր գրասենյակ այցելել: Դա բավական տարօրինակ էր թվացել իրեն, բայց, բնականաբար, ոչինչ չէր ասել: Տարօրինակ բաներն անպակաս են փաստաբանական գործից, և, իհարկե, տեսուչը կհասկանար, որ մարդ իրավունք ունի գործելու սեփական հայեցողությամբ և այլն, և այլն: Տեսուչ Նիլը գլխով արեց՝ որպես համաձայնության նշան: Նա արդեն պարզել էր, որ միսթր Անսելը նախկինում որևէ իրավական գործով չէր զբաղվել ո՛չ միսիս Ֆորթեսքյուի, ո՛չ ընտանիքի մյուս անդամների համար:

- Հասկանալի է,- ասաց միսթր Անսելը,- որ նա չէր ցանկացել այս հարցով դիմել իր ամուսնու իրավաբանական ընկերությանը:

Ավելորդ ձևակերպումները մի կողմ թողած՝ փաստերը պարզ էին: Ադել Ֆորթեսքյուն կազմել էր կտակ՝ մահից հետո իր ողջ ունեցվածքը թողնելով Վիվիան Դյուբուային:

- Թեև ես ենթադրում էի,- ասաց միսթր Անսելը՝ հարցական հայացք գցելով տեսուչ Նիլի վրա,- որ նա իրականում առանձնապես բան չուներ թողնելու:

Տեսուչ Նիլը գլխով արեց: Այն պահին, երբ Ադել Ֆորթեսքյուն կազմել էր իր կտակը, սա ավելի քան ճիշտ էր:

Սակայն դրանից ի վեր մահացել էր Ռեքս Ֆորթեսքյուն, և Ադել Ֆորթեսքյուն հարյուր հազար ֆունտ էր ժառանգել, ու, ենթադրաբար, այդ հարյուր հազար ֆունտը (ժառանգության հարկը հանած) այժմ պատկանում էր Վիվիան Էդուարդ Դյուբուային:

\* \* \*

Տեսուչ Նիլը գտավ Վիվիան Դյուբուային «Գոլֆ» հյուրանոցում նյարդային վիճակում իրեն սպասելիս: Դյուբուան պատրաստվում էր մեկնելու, ավելին՝ նրա ճամպրուկները հավաքած էին, երբ հեռախոսազանգ ստացավ տեսուչ Նիլից մնալու խնդրանքով: Տեսուչ Նիլը սիրալիրորեն էր ասել դա՛ գրեթե ներողություն հայցելով: Բայցևայնպես, հարգալից խոսքերի հետևում հրաման էր թաքնված: Վիվիան Դյուբուան առարկել էր, բայց չէր պնդել:

Այժմ նա ասաց.

- Հուսով եմ՝ հասկանում եք, տեսուչ Նիլ, որ այստեղ մնալը խիստ անհարմարություն է պատճառում ինձ: Ես իսկապես շտապ գործ ունեմ, որով պետք է զբաղվեմ:

- Չգիտեի, որ Դուք ինչ-որ գործ եք վարում, միսթր Դյուբուա,- զվարթորեն ասաց տեսուչ Նիլը:

- Վախենամ՝ մեր օրերում ոչ ոք չի կարող նույնքան անգործ լինել, որքան կցանկանար երևալ:

- Միսիս Ֆորթեսքյուի մահը պետք է որ մեծ ցնցում լիներ Ձեզ համար, միսթր Դյուբուա: Դուք լավագույն ընկերներ էիք, այնպես չէ՛:

- Այո՛,- համաձայնեց Դյուբուան,- նա սքանչելի կին էր: Մենք հաճախ էինք միասին գոլֆ խաղում:

- Կարծում եմ՝ շատ կկարոտեք նրան:

- Այո, անկասկած:- Դյուբուան հառաչեց:- Այս ամենն այնքան սոսկալի է, չափից դուրս:

- Որքան գիտեմ, նրա մահվան օրը Դուք զանգել էիք նրան, այդպես է:

- Միթե: Հիմա իսկապես չեմ հիշում:

- Մոտ չորսին, որքան հասկանում եմ:

- Այո՛, հնարավոր է:

- Չե՞ք հիշում՝ ինչի մասին էիք զրուցում, միսթր Դյուբուա:

- Ոչ մի էական բանի: Կարծես թե հարցրի նրան՝ ինչպես է զգում, և արդյոք որևէ նորություն կա՞՞ կապված նրա ամուսնու մահվան հետ. քիչ թե շատ պայմանական հարցուփորձ:

- Հասկանալի է,- ասաց տեսուչ Նիլը, ապա հավելեց.- Իսկ հետո դուրս եկաք զրոսնելի՞:

- Ըրը... այո՛, այո՛... ես... կարծես թե: Համենայն դեպս, ոչ թե զրոսնեցի, այլ գոլֆի դաշտում մի քանի գնդակ զցեցի անցքերի մեջ:

Տեսուչ Նիլը մեղմորեն ասաց.

- Ես այդպես չեմ կարծում, միսթր Դյուբուա... Ոչ այդ օրը... Հյուրանոցի դռնապանը նկատել է՝ ինչպես եք քայլում Կենու տնակ տանող ճանապարհով:

Նրանց հայացքները հանդիպեցին, ապա Դյուբուան կրկին նյարդայնորեն փախցրեց աչքերը:

- Վախենամ՝ չեմ մտաբերում, տեսուչ:

- Գուցե իրականում այցելել եք միսիս Ֆորթեսբյուին:

Դյուբուան վճռական ասաց.

- Ո՛չ: Ո՛չ, ես չեմ արել նման բան: Ես այդ տանը մոտ չեմ գնացել:

- Այդ դեպքում ո՞ր եք գնացել:

- Օ՛, ես... քայլել եմ ճանապարհով՝ հասնելով մինչև «Երեք աղավնիներ», ապա շրջվել ու վերադարձել գոլֆի դաշտով:

- Միանգամայն համոզված եք, որ չեք գնացել Կենու տնակ:

- Լիովին, տեսո՞ւյ:

Տեսուչը թափ տվեց գլուխը:

- Դե՛, վերջ տվեք, մի՛սթո՞ր Դյուբուա,- ասաց նա,- Դուք գիտեք, որ ավելի լավ է՝ անկեղծ լինեք մեզ հետ: Հավանաբար բավական անմեղ պատճառ եք ունեցել այնտեղ գնալու համար:

- Ասում եմ Ձեզ՝ այդ օրը չեմ այցելել միսիս Ֆորթեսյուին:

Տեսուչ Նիլը ոտքի ելավ:

- Գիտե՞ք, մի՛սթո՞ր Դյուբուա,- սիրալիրորեն ամփոփեց նա,- կարծում եմ՝ ստիպված կլինենք ցուցմունք խնդրել Ձեզնից, և Դուք խելամիտ կվարվեք, եթե վկայությունը կազմելու ժամանակ օգտվեք Ձեր փաստաբանի ներկայության իրավունքից:

Գույնը թռավ միսթո՞ր Դյուբուայի դեմքից՝ հիվանդագին կանաչավուն երանգ թողնելով:

- Դուք սպառնում եք ինձ,- ասաց նա:- Սպառնում եք:

- Ո՛չ, ո՛չ, ոչ մի նման բան:- Տեսուչ Նիլը խոսում էր ցնցված ձայնով:- Մեզ արգելված է այդպիսի բան անել: Ընդհակառակը: Նույնիսկ Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն փաստի վրա, որ որոշակի իրավունքներ ունեք:

- Ես կապ չունեմ այդ ամենի հետ, ասում եմ Ձեզ: Կապ չունեմ:

- Վերջ տվեք, մի՛սթո՞ր Դյուբուա, այդ օրը՝ մոտավորապես չորսն անց կեսին, Դուք եղել եք Կենու տնակում: Գիտե՞ք՝ մեկը նայել է պատուհանից ու տեսել Ձեզ:

- Ես միայն պարտեզում եմ եղել: Տուն չեմ մտել:

- Մի՛թե,- հարցրեց տեսուչ Նիլը:- Վստահ եք: Ձեք մտել կողմնային դռնով ու աստիճաններով բարձրացել միսիս

Ֆորթեպյուի հյուրասենյակ: Դուք ինչ-որ բան էիք փնտրում գրասեղանի մեջ, այնպես չէ:

- Ենթադրում եմ՝ դրանք Ձեզ մոտ են,- խոժոռված ասաց Դյուբուան:- Նշանակում է՝ այդ հիմար Ադելը պահել էր դրանք... երդվում էր, որ այրել է... Բայց դրանք այն չեն նշանակում, ինչ մտածում եք:

- Դուք չեք հերքում, միսթր Դյուբուա, որ միսիս Ֆորթեպյուի մտերիմ ընկերն էիք, այնպես չէ:

- Ո՛չ, իհարկե, ոչ: Ինչպե՞ս կարող եմ հերքել, եթե նամակները Ձեզ մոտ են: Միակ ասածս այն է, որ կարիք չկա դրանց տակ ինչ-որ չարագուշակ իմաստ փնտրելու: Վայրկյան իսկ չմտածեք, որ մեր... նրա... մտքով երբևէ անցել է ազատվել Ռեքս Ֆորթեպյուից: Ի սեր Աստծո, ես այդպիսի մարդ չեմ:

- Իսկ գուցե նա էր այդպիսի կին:

- Անհեթեթություն,- բացականչեց միսթր Դյուբուան,- չէ որ նրան նույնպես սպանել են:

- Օ՛, այո՛, այո՛:

- Դե, միթե բնական չէ ենթադրել, որ նույն մարդն է սպանել ամուսնուն և նրան:

- Հնարավոր է: Անկասկած, կարող է այդպես լինել: Բայց կան նաև այլ բացատրություններ: Օրինակ (ասածս խիստ պայմանական է, միսթր Դյուբուա)՝ հնարավոր է, որ միսիս Ֆորթեպյուն ազատվել է ամուսնուց, իսկ դրանից հետո ինքն է որոշակիորեն վտանգավոր դարձել մեկ ուրիշի համար: Մեկի, ով գուցե չի օգնել նրան կատարել հանցանքը, բայց ով առնվազն դրդել է նրան և, այսպես ասած, շարժառիթ տվել: Գիտե՞ք, նա գուցեև վտանգ է ներկայացրել իրենից հենց այդ մարդու համար:

Դյուբուան կմկմաց.

- Դուք չչ-չեք կարող գործն իմ դեմ շուռ տալ: Ձեք կարող:

- Գիտե՞ք՝ նա կտակ է գրել,- հարցրեց տեսուչ Նիլը:- Իր ամբողջ փողը Ձեզ է թողել: Այն ամենը, ինչ ունեք:

- Ինձ այդ փողը պետք չէ: Ոչ մի պեննի:

- Իհարկե, դա այնքան էլ շատ չէ,- ասաց տեսուչ Նիլը:- Ձարդեղեն ու մորթիներ, բայց կանխիկ գումարը կարծես թե քիչ է:

Դյուբուան, զարմանքից ծնոտը կախ, նայեց նրան:

- Բայց ինձ թվում էր՝ նրա ամուսինը...

Նրա խոսքը կտրուկ ընդհատվեց:

- Մի՞թե, մի՞սթր Դյուբուա,- ասաց տեսուչ Նիլը, որի ձայնն այժմ անողոք էր հնչում:- Շատ հետաքրքիր է: Ես էլ մտածում էի՝ արդյոք Դուք ծանոթ եք Ռեքս Ֆորթեսբլուի կտակի պայմաններին...

\* \* \*

«Գոլֆ» հյուրանոցում տեսուչ Նիլի երկրորդ գրույցը միսթր Ջերալդ Ռայթի հետ էր: Միսթր Ջերալդ Ռայթը նիհար, խելացի ու մեծամիտ երիտասարդ էր: Տեսուչ Նիլը նկատեց, որ նա կազմվածքով բավական նման էր Վիվիան Դյուբուային:

- Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել, տեսուչ Նիլ,- հարցրեց նա:

- Ինձ թվում էր՝ Դուք կարող էիք օգնել մեզ որոշ տեղեկություններով, միսթր Ռայթ:

- Տեղեկություններով: Իսկապես: Հազիվ թե:

- Խոսքը Կենու տնակում տեղի ունեցած վերջին իրադարձությունների մասին է: Դուք, իհարկե, լսել եք դրանց մասին:

Տեսուչ Նիլը հարցը հնչեցրեց թեթևակի հեգնանքով: Միսթր Ռայթը տիրական ժպտաց:

- «Լսելը» հազիվ թե տեղին բառ է: Թերթերը լցված են



դրանցով կարծես գրելու ուրիշ բան չկա: Անհավատալի է, թե որքան արյունարբու է մեր հանրային մամուլը: Այս ինչ ժամանակներում ենք ապրում: Մի կողմից՝ միջուկային զենքեր են ստեղծվում, մյուս կողմից՝ մեր թերթերը հաճույք են ստանում դաժան սպանությունների մասին լուրերից: Բայց Դուք ասացիք, որ հարցեր ունեք ինձ տալու: Իսկապես չեմ հասկանում, թե ինչ կարող եք հարցնել: Ես ոչինչ չգիտեմ Կենու տնակի այս պատմության մասին: Իրականում Մեն կղզում էի այն ժամանակ, երբ սպանել են միսթր Ռեքս Ֆորթեսբյուին:

- Դրանից շատ չանցած՝ Դուք ժամանել եք այստեղ, ճիշտ է, միսթր Ռայթ: Դուք կարծես թե հեռագիր էիք ստացել միսս Էլեյն Ֆորթեսբյուից:

- Մեր ոստիկանությունն ամեն ինչ գիտի, այնպես չէ: Այո, Էլեյնը կանչեց ինձ: Բնականաբար, ես անմիջապես եկա:

- Եվ որքան հասկանում եմ, դուք շուտով ամուսնանալու եք:

- Ճիշտ այդպես, տեսուչ Նիլ: Հուսով եմ՝ առարկություն չունեք:

- Դա բացառապես միսս Ֆորթեսբյուի գործն է: Որքան հասկանում եմ, Ձեր կապը որոշ ժամանակ առաջ է ձևավորվել: Ավելի ստույգ՝ վեց կամ յոթ ամիս առաջ:

- Միանգամայն ճիշտ եք:

- Դուք և միսս Ֆորթեսբյուին նշանվել եք: Միսթր Ֆորթեսբյուին համաձայնություն չէր տվել ձեր ամուսնությանը, տեղեկացրել էր Ձեզ, որ եթե դուատրը, իր կամքին դեմ գնալով, ամուսնանար, ապա կզրկեր նրան ցանկացած եկամուտից: Դրանից հետո, որքան հասկանում եմ, Դուք չեղարկել եք նշանադրությունն ու մեկնել:

Ջերալդ Ռայթը փոքր-ինչ ափսոսանքով ժպտաց:

- Չափազանց թերի շարադրանք էր, տեսուչ Նիլ: Իրականում ես հալածվեցի իմ քաղաքական հայացքների պատճառով: Ռեքս Ֆորթեսքյուն կապիտալիստների վատագույն տեսակից էր: Բնական է, որ ես չէի կարող զոհել քաղաքական համոզմունքներս հանուն փողի:

- Բայց Դուք դեմ չէք ամուսնանալ մի կնոջ հետ, որ նորերս հիսուն հազար ֆունտ է ժառանգել:

Ջերալդ Ռայթի դեմքին թույլ գոհունակ ժպիտ հայտնվեց:

- Ամենևին, տեսուչ Նիլ: Փողը կօգտագործվի ի շահ համայնքի: Բայց Դուք վստահաբար այստեղ չէք եկել՝ քննարկելու իմ ֆինանսական դրությունը, ոչ էլ քաղաքական համոզմունքները:

- Ո՛չ, միսթեր Ռայթ: Ես ուզում էի խոսել Ձեզ հետ մի քանի պարզ փաստի մասին: Ինչպես տեղյակ եք, միսիս Ադել Ֆորթեսքյուն մահացել է ցիանիդով թունավորումից նոյեմբերի հինգի երեկոյան: Քանի որ այդ օրը Դուք Կենու տնակի մոտակայքում եք եղել, ես մտածեցի, որ գուցե գործի հետ կապված ինչ-որ բան տեսած կամ լսած լինեք:

- Իսկ ինչից եք ենթադրում, որ ես, ինչպես Դուք եք ասում, այդ ժամանակ Կենու տնակի մոտակայքում եմ եղել:

- Հենց այդ օրը, միսթեր Ռայթ, Դուք դուրս եք եկել հյուրանոցից չորսն անց քառորդին: Ապա քայլել եք Կենու տնակ տանող ճանապարհով: Բնական է ենթադրել, որ Դուք այնտեղ էիք գնում:

- Մտքովս անցել էր դա,- ասաց Ջերալդ Ռայթը,- բայց անիմաստ համարեցի: Ես արդեն պայմանավորվել էի հանդիպել միսս Ֆորթեսքյուին... Էլեյնին... Ժամը վեցին

հյուրանոցում: Ես զբոսնեցի գլխավոր ճանապարհից ճյուղավորվող նրբանցքով և վերադարձա «Գոլֆ» հյուրանոց ժամը վեցից անմիջապես առաջ: Էլեյնը չէր եկել հանդիպմանը: Ինչը միանգամայն բնական է տվյալ հանգամանքներում:

- Ինչ-որ մեկը տեսել է Ձեզ այդ զբոսանքի ժամանակ, միսթր Ռայթ:

- Ճանապարհին կարծես թե մի քանի մեքենա անցավ կողքովս: Ծանոթ մարդու չտեսա, եթե դա նկատի ունեք: Նրբանցքը գրեթե չէր տարբերվում միջգյուղային ճանապարհից և չափազանց ցեխոտ էր մեքենաների համար:

- Այսպիսով՝ չորսն անց քառորդին հյուրանոցից դուրս գալու պահից մինչև ժամը վեցը, երբ վերադարձել եք, միայն Ձեր խոսքի վրա կարող եմ հիմնվել, թե որտեղ եք եղել:

Ջերալդ Ռայթը շարունակում էր տիրականորեն ժպտալ:

- Դա խիստ մտահոգիչ է երկուսիս համար էլ, տեսուհի, բայց, ինչ արած:

Տեսուհի Նիլը ցածրաձայն ասաց.

- Այսինքն՝ եթե ինչ-որ մեկն ասում է, որ նայել է սանդղահարթակի պատուհանից և տեսել Ձեզ Կենու տնակի պարտեզում մոտավորապես չորսն անց երեսունհինգին...- Նա դադար տվեց՝ նախադասությունը կիսատ թողնելով:

Ջերալդ Ռայթը բարձրացրեց հոնքերը և թափ տվեց գլուխը:

- Այդ ժամին տեսանելիությունը պետք է որ սարսափելի լիներ,- ասաց նա:- Կարծում եմ՝ ցանկացածի համար բարդ կլիներ դա պնդելը:

- Դուք ծանոթ եք միսթր Վիվիան Դյուբուայի հետ, որ նույնպես այստեղ է իջևանել:

- Դյուբուա: Դյուբուա: Ո՛հ, չեմ կարծում: Դա այն բարձ-

րահասակ թխահերն է, որ թավշակաշվե կոշիկների հիանալի ճաշակ ունի:

- Այո՛: Նա նույնպես այդ օրը դուրս էր եկել հյուրանոցից զբոսնելու և քայլել Կենու տնակի կողմը: Պատահաբար նրան չէք տեսել ճանապարհին:

- Ո՛չ: Ո՛չ: Չեմ տեսել:

Առաջին անգամ Ջերալդ Ռայթի դեմքին անհանգստության նշույլներ երևացին: Տեսուչ Նիլը մտազբաղ ասաց.

- Այնքան էլ հաճելի օր չէր զբոսանքի համար, հատկապես մթնելուց հետո՝ ցեխոտ նրբանցքում: Հետաքրքիր է՝ որտեղից այդքան եռանդ բուրրին:

\* \* \*

Երբ տեսուչ Նիլը վերադարձավ տուն, նրան դիմավորեց սերժանտ Հեյը՝ գոհունակ տեսքով:

- Ես պարզել եմ կեռնեխների մասին, սըր,- ասաց նա:

- Պարզել եք, այո՛:

- Այո՛, սըր, դրանք կարկանդակի մեջ էին եղել: Սառը կարկանդակի, որ թողել էին կիրակնօրյա ընթրիքի համար: Ինչ-որ մեկի ձեռքը հասել էր այդ կարկանդակին, որ դրված էր մառանում կամ մեկ այլ տեղում: Կտրել էին կեղևը, հանել էին հորթի մսով խճողակը, և ինչ եք կարծում՝ փոխարենն ինչ էին դրել: Գարշահոտ կեռնեխներ, որ վերցրել էին այգեպանի խորդանոցից: Չար կատակ են խաղացել, այնպես չէ՛:

- «Միթե խորդիկն այս նրբին վայել չէր թագավորին», - մեջբերեց տեսուչ Նիլը:

Նա հեռացավ՝ թողնելով սերժանտ Հեյին ապշահար իր հետևից նայելիս:

## ԳԼՈՒԽ 18

- Մեկ րոպե սպասիր,- ասաց միսս Ռեմսբորթոմը:- Ուր որ է կավարտեմ այս պասյանսը:

Թագավորին՝ իր անբաժան շքախմբով հանդերձ, նա տեղափոխեց դատարկված հատվածը, կարմիր յոթնոցը դրեց սև ութնոցի վրա, ագուռի չորսնոցը, հինգնոցը և վեցնոցը գցեց դեն նետած խաղաքարերի մեջ, ևս մի քանի արագ տեղափոխություն արեց ու գոհունակությամբ դեպի հետ թեքվեց:

- Կրկնակի ջոկեր,- ասաց նա:- Հաճախ չէ, որ այսպես է դուրս գալիս:

Նա բավականությամբ հենվել էր աթոռի թիկնակին, ապա բարձրացրեց հայացքը՝ նայելով բուխարու մոտ կանգնած աղջկան:

- Այսպիսով՝ դու Լանսի կինն ես,- ասաց նա:

Պատը, որին կանչել էին վերնահարկ՝ ներկայանալու միսս Ռեմսբորթոմին, գլխով արեց.

- Այո՛:

- Բարձրահասակ աղջիկ ես,- նկատեց միսս Ռեմսբորթոմը,- և առողջ տեսք ունես:

- Ես իսկապես առողջ եմ:

Միսս Ռեմսբորթոմը գոհունակությամբ գլխով արեց:

- Փերսիվալի կինն ասես խմորից լինի,- ասաց նա:- Չափից շատ քաղցրեղեն է ուտում և բավականաչափ մարմնամարզություն չի անում: Դե՛, նստիր, զավակս, նստիր: Որտե՞ղ ես ծանոթացել քրոջորդուս հետ:

- Քենիայում եմ հանդիպել նրան. ընկերներիս էի հյուրընկալվել այնտեղ:

- Որքան հասկանում եմ, նախկինում ամուսնացած ես եղել:

- Այո: Երկու անգամ:

Միսս Ռեմսբոթոմը խոր փնչոց արձակեց:

- Ենթադրում եմ՝ ամուսնալուծվել ես:

- Ո՛չ,- առարկեց Պատր: Նրա ձայնը փոքր-ինչ դողաց:-  
Նրանք երկուսն էլ... մահացել են: Առաջին ամուսինս ռազ-  
մական օդաչու էր: Զոհվել է պատերազմում:

- Իսկ երկրորդը: Թո՛ւյլ տուր՝ հիշեմ... ինչ-որ մեկը  
պատմել էր ինձ: Նա ինքնասպանություն էր գործել հրագե-  
նով, այնպես չէ՛:

Պատը գլխով արեց:

- Քո մեղքով:

- Ո՛չ,- ասաց Պատը,- ես մեղավոր չեի:

- Զհարշավներով էր զբաղվում, այո՛:

- Այո՛:

- Կյանքում չեմ եղել ձհարշավարանում,- ասաց միսս  
Ռեմսբոթոմը:- Այդ բոլոր խաղաղույքներն ու թղթախաղե-  
րը սատանայի գործիքներն են:

Պատը չպատասխանեց:

- Ոտքս թատրոնից կամ կինոյից ներս չեի դնի,- ասաց  
միսս Ռեմսբոթոմը:- Ա՛հ, ինչ արած, ներկայիս աշխարհը  
փչացել է: Այս տանն ինչ մեղք ասես գործում էին, բայց Տե-  
րը վերջ տվեց դրան:

Պատը դարձյալ դժվարացավ որևէ բան ասել: Նա  
մտածում էր՝ արդյոք Լանսի մորաքույր Էֆիի խելքը տեղում  
էր: Սակայն ծեր լեդիի խորաթափանց հայացքը թեթևակի  
շփոթմունքի մեջ գցեց նրան:

- Որքան բան է քեզ հայտնի այն ընտանիքի մասին, որ-  
տեղ մտել ես,- հարցրեց մորաքույր Էֆին:

- Ենթադրաբար,- պատասխանեց Պատը,- այնքան, որ-  
քան նոր ընտանիք մտնող յուրաքանչյուրին:

- Հը՛մ, դրանում ճշմարտության հատիկ կա: Ահա քեզ

ինչ կասեմ: Քույրս հիմար էր, փեսաս՝ սրիկա, Փերսիվալը ստորաքարշ է, իսկ քո Լանսը միշտ ընտանիքի վատ տղան էր:

- Կարծում եմ՝ այս ամենն անհեթեթություն է,- վճռակա- նորեն ասաց Պատրը:

- Գուցե ճիշտ ես,- անսպասելիորեն համաձայնեց միսս Ռեմսբրոնը:- Չի կարելի պարզապես պիտակներ կպցնել մարդկանց: Միայն թե մի՛ թերագնահատիր Փերսիվալին: Կա միտում, որ նա, ում լավ պիտակավորում են, նաև հիմար է համարվում: Փերսիվալն ամենևին հիմար չէ: Նա բավական խելացի է՝ կեղծ բարեպաշտի պես: Երբեք չեմ սիրել նրան: Նկատի՛ ունեցիր, որ ես չեմ վստահում Լանսին և հավանություն չեմ տալիս նրա քայլերին, բայց չեմ կարող չսիրել նրան... Նա անշրջահայաց երիտասարդ է... միշտ է այդպիսին եղել: Հոգ տար նրան և հետևիր, որ չհատի կարմիր գիծը: Ասա՛ նրան, որ չթերագնահատի Փերսիվալին, սիրելի՛ս: Ասա՛ նրան՝ չհավատա Փերսիվալի ոչ մի խոսքին: Այս տանը բոլորը ստախոսներ են:- Ծեր լեղին գոհունակությամբ հավելեց.- Կրակ և ծծումբ կտեղա նրանց վրա:

\* \* \*

Տեսուչ Նիլն ավարտում էր հեռախոսազրույցը Աքոթլանդ Յարդի հետ:

Կոմիսարի տեղակալը հեռախոսագծի մյուս կողմում ասաց.

- Մենք ամեն բան կանենք, որ այդ տեղեկությունը ստանանք Ձեզ համար. շրջաբերականներ կուղարկենք բոլոր մասնավոր հոգեբուժարաններին: Իհարկե, գուցե նա արդեն մեռած է:

- Հնարավոր է: Դա վաղուց էր:

Հին մեղքերը երկար ստվերներ են գցում: Միսս Ռեմսբրոթոմն էր ասել դա... և դա արել էր արտահայտիչ ձևով... ասես ինչ-որ բան էր ակնարկում իրեն:

- Անհավանական վարկած է,- ասաց կոմիսարի տեղակալը:

- Համամիտ եմ, սր՛ր: Բայց չեմ կարծում, որ կարող ենք ամբողջությամբ անտեսել այն: Համընկնումները չափից շատ են...

- Այո՛... այո՛... տարեկանը... կեռնեխները... սպանվածի անունը...

Նիլն ասաց.

- Ես ուշադրությունից բաց չեմ թողնում նաև մյուս տողերը... Դյուբուան հնարավոր տարբերակ է... ինչպես և Ռայթը: Այդ աղջիկը՝ Գլեդիսը, կարող էր նկատած լինել նրանցից յուրաքանչյուրին կողմնային դռան մոտ... հնարավոր է՝ նախասրահում է թողել թեյի սկուտեղը և դուրս եկել՝ տեսնելու, թե ով կա այնտեղ ու ինչ է անում: Ով էլ որ եղած լիներ, տեղնուտեղը խեղդամահ է արել նրան, այնուհետև քարշ տվել մարմինը լվացքապարանի մոտ և ամրակր նրա քթին դրել...

- Խելագարություն է, անընդունելի: Բացի դրանից՝ զգվելի է:

- Այո՛, սր՛ր: Հենց դա էր հուզել ծեր լեդիին: Միսս Մարփին նկատի ունեմ: Համակրելի լեդի է և անչափ խորաթափանց: Նա այս տուն է տեղափոխվել... որպեսզի մոտ լինի ծեր միսս Ռեմսբրոթոմին... և չեմ կասկածում, որ նա կիմանա այն ամենը, ինչ կատարվում է այստեղ:

- Ո՛րն է Ձեր հաջորդ քայլը, տեսու՛ր:

- Ես հանդիպում ունեմ լոնդոնյան փաստաբանների հետ: Ուզում եմ մի փոքր ավելին պարզել Ռեքս Ֆորթեսքյուի գործերի վերաբերյալ: Ու թեև դա հին պատմություն է, ուզում եմ ավելին իմանալ «Կեռնեխներ» հանքի մասին:



Միսթր Բիլինգսլին՝ «Բիլինգսլի, Հորսթորփ և Ուոլթերս»-ից, բարեկիրթ մարդ էր, որի հաշվենկատությունը սովորաբար քողարկվում էր խաբուսիկ հարգալից վարվեցողությամբ: Սա տեսուչ Նիլի երկրորդ գրույցն էր նրա հետ, և այս անգամ միսթր Բիլինգսլիի հաշվենկատությունը պակաս աչքի զարնող էր, քան նախորդ դեպքում: Կենու տնակի եռակի ողբերգությունը խաթարել էր նրա մասնագիտական գաղտնապահությունը: Այժմ նա միայն ձգտում էր իր ձեռքի տակ եղած բոլոր փաստերը ոստիկանության առաջ դնել:

- Այս ամբողջ գործը չափազանց արտասովոր է,- ասաց նա:- Ծայրաստիճան արտասովոր գործ է: Իմ մասնագիտական կարիերայում նման բան չեմ մտաբերում:

- Անկեղծ ասած, միսթր Բիլինգսլի,- ասաց տեսուչ Նիլը,- ցանկացած օգնությունից չէինք հրաժարվի:

- Դուք կարող եք հույս դնել ինձ վրա, սիրելի՛ սըր: Ես միայն ուրախ կլինեմ ուժերիս ներածի չափով օգնել Ձեզ:

- Նախ՝ թո՛ւյլ տվեք հարցնել Ձեզ՝ որքան լավ էիք ճանաչում հանգուցյալ միսթր Ֆորթեսբյուին և որքան էիք տեղեկացված նրա ընկերության գործերից:

- Ես բավականաչափ լավ էի ճանաչում Ռեքս Ֆորթեսբյուին: Այսինքն՝ պետք է ասել, որ, դե՛, տասնվեց տարի է, ինչ ծանոթ եմք: Նկատի՛ ունեցեք, որ մեր փաստաբանական ընկերությունը միակը չէ, որի ծառայություններից նա օգտվել է, բնավ:

Տեսուչ Նիլը գլխով արեց: Նա գիտեր դա: «Բիլինգսլի, Հորսթորփ և Ուոլթերս»-ի փաստաբանները վարում էին Ռեքս Ֆորթեսբյուի, այսպես ասած, պատկառելի գործերը: Իր պակաս պատկառելի գործերի համար նա վարձում էր մի քանի այլ, ոչ այնքան բարեխիղճ ընկերությունների:

- Դե, ինչ եք ուզում իմանալ,- շարունակեց միսթր Բիլինգսլին:- Ես արդեն պատմել եմ Ձեզ նրա կտակի մասին: Փերսիվալ Ֆորթեսքյուն է ժառանգորդը՝ առանց նվիրագրերի ու պարտավորությունների:

- Հիմա ինձ նրա կնոջ կտակն է հետաքրքրում,- ասաց տեսուչ Նիլը:- Որքան հասկանում եմ, միսթր Ֆորթեսքյունի մահից հետո նա հարյուր հազար ֆունտ էր ժառանգել, այո՞:

Բիլինգսլին գլխով արեց:

- Չգալի գումար է,- ասաց նա,- և մի գաղտնիք ասեմ Ձեզ, տեսուչ, ընկերությունը դժվարությամբ կկարողանար վճարել դա:

- Նշանակում է՝ ընկերությունը չէր բարգավաճում:

- Անկեղծորեն,- ասաց միսթր Բիլինգսլին,- միայն թե մեր մեջ մնա, այն ինքնահոսի է մատնվել, և վերջին մեկուկես տարում այդ վիճակում է:

- Ինչ-որ հատուկ պատճառ կա՞ր:

- Այն էլ ինչպիսի: Ես կասեի՝ պատճառն ինքը Ռեքս Ֆորթեսքյուն էր: Նախորդ տարի Ռեքս Ֆորթեսքյուն խելագարի պես էր պահում իրեն: Լավ բաժնետոմսերը վաճառում էր, ռիսկայինները՝ գնում, շարունակ պարծենում էր դրանով, ինչն անչափ զարմանալի էր: Խորհուրդ չէր լսում: Փերսիվալը՝ որդին, դե, գիտեք, եկել էր այստեղ՝ համոզելու, որ գործի դնեմ ազդեցությունս իր հոր վրա: Հավանաբար նա փորձել էր ու անտեսվել: Դե, ես արեցի այն, ինչ կարող էի, բայց Ֆորթեսքյուն չէր լսում բանակա-նության ձայնը: Ինձ իսկապես թվում էր, որ նա ուրիշ մարդ է դարձել:

- Բայց, որքան հասկանում եմ, նա ճնշված չէր,- ասաց տեսուչ Նիլը:

- Ո՛չ, ո՛չ: Ընդհակառակը: Խանդավառ էր, բարձրախոս:

Տեսուչ Նիլը գլխով արեց: Նրա գլխում արդեն իսկ ձև

ստացած միտքն էլ ավելի էր ամրապնդվում: Կարծես թե սկսում էր հասկանալ Փերսիվալի և հոր միջև տարածայնության պատճառները: Միսթր Բիլինգսլին շարունակում էր.

- Իսկ կնոջ կտակի մասին ինձ հարցնելն անօգուտ է: Ես չեմ կազմել նրա կտակը:

- Այո՛: Գիտեմ,- ասաց Նիլը:- Պարզապես ճշտում եմ՝ նա թողնելու բան ունե՛ր: Մի խոսքով՝ հարյուր հազար ֆունտ:

Միսթր Բիլինգսլին ուժգին թափ էր տալիս գլուխը:

- Ո՛չ, ո՛չ, իմ սիրելի՛ սըր: Այստեղ Դուք սխալվում եք:

- Ուզում եք ասել՝ այդ հարյուր հազար ֆունտը կենդանության օրոք միայն աստիճանաբար էր անցնելու նրան:

- Ո՛չ, ո՛չ, գումարն անմիջապես անցնելու էր նրան: Սակայն կտակում ժառանգության այդ հարցը կարգավորող մի կետ կար: Ըստ դրա՝ Ֆորթեսքյուի կինը չէր ժառանգելու գումարը, եթե ամուսնու մահից հետո մեկ ամիս չապրեր: Կարելի է ասել՝ այդ կետը բավական տարածված է մեր օրերում: Այն գործողության մեջ է մտել՝ կապված ավիաթռիչքների անհստակությունների հետ: Երբ երկու մարդ ավիապատահարի զոհ է դառնում, չափազանց բարդ է որոշելը, թե ով է ժառանգը, և բազմաթիվ տարօրինակ խնդիրներ են ծագում:

Տեսուչ Նիլի հայացքը գամվել էր նրան:

- Նշանակում է՝ Ադել Ֆորթեսքյուն չուներ հարյուր հազար ֆունտ որևէ մեկին թողնելու համար: Իսկ ի՞նչ է լինում այդ փողը:

- Այն վերադառնում է ընկերությանը: Կամ ավելի ստույգ՝ ժառանգորդին:

- Իսկ ժառանգորդը միսթր Փերսիվալ Ֆորթեսքյունն է:

- Ճիշտ այդպես,- ասաց Բիլինգսլին,- փողն անցնում է Փերսիվալ Ֆորթեսքյուին: Եվ, հաշվի առնելով ընկերու-

յան ներկայիս վիճակը,- անշրջահայացորեն հավելեց նա,-  
ես կասեի՝ նա դրա կարիքն ունի:

\* \* \*

- Դուք՝ ոստիկանների, ինչեր ասես որ չեք ուզում իմա-  
նալ,- ասաց տեսուչ Նիլի ընկեր բժիշկը:

- Վերջ տուր, Բո՛ր, խոսի՛ր:

- Լավ, քանի որ մենք երկուսով ենք, և դու բարեբախ-  
տաբար չես կարող հղում անել ինձ: Բայց պետք է ասել, որ  
քո միտքը բացարձակապես ճիշտ է, գիտե՛ս: Ուշ սիֆիլի-  
տիկ պսիխոզ՝ դատելով ամեն ինչից: Ընտանիքը կասկա-  
ծել է դա և ցանկացել, որ բժիշկը զննի նրան: Նա հրաժար-  
վել է: Այն դրսևորվում է ճիշտ նկարագրաճիդ պես: Դատո-  
ղության կորուստ, մեծության մոլուցք, նյարդայնության ու  
զայրույթի ուժգին նուպաներ, պարծենկոտություն, համոզ-  
մունք, որ ինքը ֆինանսական հանճար է: Այս հիվանդույթ-  
յունն ունեցող ցանկացած մարդ կարճ ժամանակում վճա-  
րունակ ընկերությունը հիմնահատակ կավերի, եթե նրան  
չկանգնեցնեն... իսկ դա անելը հեշտ չէ, հատկապես, եթե  
այդ մարդը գիտի, թե ինչ կա ձեր մտքին: Այո՛... Ես կասեի՝  
Ձեր ընկերների բախտը մի քիչ բերել է, որ նա մահացել է:

- Նրանք իմ ընկերները չեն,- ասաց տեսուչ Նիլը: Ապա  
կրկնեց այն, ինչ ասել էր ժամանակին.- «Նրանք բոլորը  
շատ տհաճ մարդիկ են...»:

Այս գիրքը թվայնացրել է 1915.info կայքը:  
Կայքում կարող եք գտնել բազմաթիվ այլ  
անվճար գրքեր ինչպես նաև ցանկության և  
հնարավորության դեպքում կարող եք  
աջակցել մեզ օգնելով ավելի շատ գրքեր  
թվայնացնել:

## ԳԼՈՒԽ 19

Ամբողջ Ֆորթեսքյու ընտանիքը ժողովվել էր Կենու տնակի հյուրասենյակում: Փերսիվալ Ֆորթեսքյուն, բուխարու դարակին հենված, դիմում էր հավաքվածներին:

- Ամեն ինչ կարգին է,- ասում էր Փերսիվալը,- բայց ընդհանուր իրավիճակը բոլորովին գոհացուցիչ չէ: Ոստիկանները գնում-գալիս են ու մեզ ոչինչ չեն ասում: Կարելի է ենթադրել, թե որոշակի ուղղությամբ հետաքննություն են վարում: Մինչդեռ սայլը տեղից չի շարժվում: Չես կարող ծրագրեր կազմել, ապագայի համար պատրաստություն տեսնել:

- Նրանք հաշվի չեն առնում մյուսներին,- ասաց Ջենիֆերը:- Այս ամենը հիմարություն է:

- Կարծես թե մեզ բոլորիս դեռ արգելված է հեռանալ տնից,- շարունակեց Փերսիվալը:- Բայցևայնպես, մենք մեր մեջ կարող ենք քննարկել ապագայի ծրագրերը: Ինչ կասես, Էլեյն: Որքան հասկանում եմ, պատրաստվում ես ամուսնանալու... Ինչ էր նրա անունը... Ջերալդ Ռայթի հետ: Մտածել ես, թե երբ:

- Հնարավորինս շուտ,- պատասխանեց Էլեյնը:

Փերսիվալը խոժոռվեց:

- Նկատի ունես՝ վեց ամսից:

- Ո՛հ: Ինչո՞ւ պիտի վեց ամիս սպասենք:

- Կարծում եմ՝ այդպես ավելի պատշաճ կլիներ,- ասաց Փերսիվալը:

- Անմտություն է,- առարկեց Էլեյնը:- Մեկ ամիս: Ավելի երկար չենք սպասի:

- Դե՛, որոշողը դու ես,- ասաց Փերսիվալը:- Իսկ ամուսնությունից հետո որո՞նք են ձեր ծրագրերը, եթե ունեք այդպիսիք:

- Մենք մտածում ենք դպրոց հիմնելու մասին:

Փերսիվալը թափ տվեց գլուխը:

- Մեր օրերում դա խիստ ռիսկային մտահղացում է: Հայրենական աշխատուժի պակասը, բանիմաց ուսուցիչների գտնելու դժվարությունը... իրականում ասածդ լավ է հնչում, Էլեյն: Բայց քո փոխարեն՝ մեկ անգամ էլ կմտածեի:

- Մենք արդեն մտածել ենք: Ջերալդը կարծում է, որ այս երկրի ապագայի հիմքում ճիշտ կրթությունն է:

- Վաղը չէ մյուս օրը հանդիպելու եմ միսթր Բիլինգսլիի հետ,- ասաց Փերսիվալը:- Պետք է տարբեր ֆինանսական հարցեր քննարկենք: Նա առաջարկում էր, որ, եթե ցանկանաս, հայրիկի թողած փողը վերածես տրաստի քո և երեխաներիդ համար: Մեր օրերում դա ամենահուսալի տարբերակն է:

- Ես չեմ ուզում նման բան անել,- ասաց Էլեյնը:- Փողը պետք կլինի մեզ դպրոցը բացելու համար: Մի հարմար տուն կա. լսել ենք՝ այն վաճառվում է: Քորնուոլում է: Տարածքը գեղեցիկ է, տունը՝ բավական լավը: Ստիպված կլինենք էլի կառուցապատում անել՝ մի քանի թև ավելացնելով:

- Ուզում ես ասել... ուզում ես ասել՝ ամբողջ փողդ հանելու ես բիզնեսից: Իսկապես, Էլեյն, չեմ կարծում, որ խելամտորեն ես վարվում:

- Ես կասեի՝ շատ ավելի խելամիտ է փողը վերցնելը, քան թողնելը,- պնդեց Էլեյնը:- Ամենուրեք բիզնեսներ են սնանկանում: Նախքան հայրիկի մահն ինքդ էիր ասում, Վալ, որ ընկերության գործերը բավական վատ վիճակում են:

- Մարդիկ ասում են նման բաներ,- խուսափողաբար նկատեց Վալը,- բայց պետք է ասեմ, Էլեյն, որ ողջ կապիտալդ հանելն ու դպրոցի գնման, կահավորման և ղեկա-

վարման մեջ անշահավետ կերպով ներդնելը խենթություն է: Եթե չհաջողվի, ինչ կլինի: Առանց գրոշի կմնաս:

- Այն կհաջողի,- համառեց էլեյնը:

- Ես քեզ հետ եմ:- Խոսողը Լանսն էր, որ, բազկաթոռին փռված, քաջալերում էր քրոջը:- Փորձիր, էլեյն: Իմ կարծիքով այդ դպրոցը հույժ տարօրինակ կլինի, բայց դա է քո ուզածը... քո և Ջերալդի: Եթե նույնիսկ կորցնես փողդ, այնուամենայնիվ, գոհունակություն կզգաս, որ արել ես այն, ինչ ցանկացել ես:

- Քեզնից այլ բան հնարավոր չէր սպասել, Լանս,- թթված նկատեց Փերսիվալը:

- Գիտեմ, գիտեմ,- ասաց Լանսը:- Ես փողը մսխող անառակ որդին եմ: Բայց և այնպես, կարծում եմ՝ ես ավելի շատ ուրախություն եմ քաղել կյանքից, քան դու, Փերսի, ծերուկ:

- Դա կախված է նրանից, թե ինչն ես ուրախություն անվանում,- սառը նկատեց Փերսիվալը:- Հերթը քո ծրագրերինն է, Լանս: Ենթադրում եմ՝ Քենիա ես վերադառնալու... կամ Կանադա... Էվերեստն ես բարձրանալու կամ էլ ուրիշ արտառոց մի բան ես անելու:

- Իսկ ինչն է քեզ ստիպում այդպես մտածել,- հարցրեց Լանսը:

- Դե, դու երբևէ առանձնակի չես սիրել տնային կյանքն Անգլիայում, ճիշտ չէ:

- Մարդ փոխվում է, երբ մեծանում է,- ասաց Լանսը:- Մարդ խարխիս է գցում: Գիտեմ ինչ, իմ ընկեր Փերսի, չեմ համբերում, թե երբ եմ փորձելու ինձ լուրջ գործարարի դերում:

- Միթե ուզում ես ասել...

- Ուզում եմ ասել՝ քեզ հետ զբաղվելու եմ ընկերության գործերով, ծերուկ:- Լանսը հեգնական ժպտաց:- Օ՛, իհարկե, դու ես ավագ գործընկերը: Քոնն է առյուծի բաժինը: Ես

ընդամենն աննշան կրտսեր գործընկեր եմ: Բայց ես բաժնետոմսեր ունեմ, ինչն իրավունք է տալիս ինձ մասնակցելու գործին, այնպես չէ:

- Դե, այո՛... բնականաբար, եթե ասածդ դա է: Թեև, վստահեցնում եմ քեզ, սիրելիս, դա անչափ կձանձրացնի քեզ:

- Ո՞վ իմանա: Չեմ կարծում, թե կձանձրանամ:

Փերսիվալը խոժոռովեց:

- Միթե լուրջ ես ասում, Լանս, որ բիզնեսի մեջ ես մտնում:

- Ներգրավվելու եմ գործում: Այո՛, հենց դա էլ անելու եմ:

Փերսիվալը թափ տվեց գլուխը:

- Գիտե՞ս՝ գործերը չափազանց վատ վիճակում են: Ինքը շուտով կհասկանաս դա: Հնարավոր է՝ միայն Էլեյնի մասնաբաժինը կարողանանք հատկացնել, եթե նա պնդում է:

- Տեսնո՞ւմ ես, Էլեյն,- ասաց Լանսը:- Տեսնո՞ւմ ես՝ ինչ խելացի էիր վարվում՝ պնդելով, որ տեր կանգնես փողիդ, քանի դեռ այն կա:

- Իսկապես, Լանս,- զայրացավ Փերսիվալը,- քո կատակները տհաճ են:

- Ես կարծում եմ, Լանս, որ պետք է ավելի զգույշ լինես խոսքիդ մեջ,- խոսեց Ջենիֆերը:

Փոքր-ինչ հեռու՝ պատուհանի մոտ նստած՝ Պատը մեկամեկ զննում էր նրանց: Եթե Լանսը սա էր նկատի ունեցել՝ ասելով, որ Փերսիվալի պոչը կտրորի, ապա նա հասնում էր իր նպատակին: Փերսիվալի կուռ հավասարակշռությունը խախտվել էր: Նա կրկին զայրույթով վրա տվեց.

- Լո՛րջ ես խոսում, Լանս:

- Միանգամայն լուրջ եմ:

- Դու գիտես, որ դա չի գործի: Շատ չանցած՝ մինչև կոկորդի կուշտ կլինես դրանից:

- Ի՛նչ ես ասում: Մտածի՛ր, թե դա ինչ հիանալի փոփո-



խություն կլինի ինձ համար: Քաղաքային գրասենյակ, ներսուդուրս անող մեքենագրուիներ: Շիկահեր քարտուղարուի կունենամ՝ միսս Գրովնորի պես... միսս Գրովնոր էր, այնպես չէ: Ենթադրում եմ՝ արդեն ձեռքդ ես գցել նրան: Բայց ես ճիշտ նրա պես մեկին կգտնեմ: «Այո՛, միսթր Լանսելոթ: Ո՛չ, միսթր Լանսելոթ: Ձեր թեյը, միսթր Լանսելոթ»:

- Օ՛, հերիք է քեզ հիմարի պես պահես,- վրա տվեց Փերսիվալը:

- Ինչո՞ւ ես այդքան բարկանում, իմ սիրելի՛ եղբայր: Միթե անհամբերությամբ չես սպասում, թե երբ եմ քեզ հետ կիսելու քաղաքային հոգսերդ:

- Դու գաղափար անգամ չունես, թե ինչ քառսի մեջ է ամեն ինչ:

- Ամեննին: Ստիպված կլինես լուսավորել ինձ:

- Նախ՝ պետք է հասկանաս, որ նախորդ վեց ամսում... ո՛չ, ավելի երկար ժամանակ՝ մեկ տարում, հայրիկն իր նման չէր: Ֆինանսական առումով ինչ անհավատալի, հիմար բան ասես, որ չի արել: Վաճառել է լավ բաժնետոմսերը, գնել ռիսկայինները: Երբեմն իսկապես ահռելի գումարներ էր քամուն տալիս: Կարելի է ասել՝ պարզապես հաճույքի համար էր ծախսում:

- Փաստորեն,- ասաց Լանսը,- այն, որ նրա թեյի մեջ տաքսին է եղել, միայն օգուտ է տվել ընտանիքին:

- Ձևակերպումդ զգվելի է, բայց, իրականում, միանգամայն ճիշտ ես: Դա միակ բանն է, որ փրկել է մեզ սնանկացումից: Սակայն մենք պետք է ծայրաստիճան զուսպ լինենք և որոշ ժամանակ զգուշություն պահպանենք:

Լանսը թափ տվեց գլուխը:

- Համաձայն չեմ: Զգուշությունը երբեք ու ոչ մեկին բարիք չի բերում: Պետք է ռիսկի դիմել, նախաձեռնել: Գնալ մե՞ծ նպատակի հետևից:

- Համամիտ չեմ,- ասաց Փերսիվալը:- Զգուշություն և խնայողություն: Սա է մեր նշանաբանը:

- Ոչ իմը,- ընդդիմացավ Լանսը:

- Հիշիր, դու ընդամենը կրտսեր գործընկեր ես,- ասաց Փերսիվալը:

- Լավ, լավ: Բայց ես, միևնույն է, ձայնի իրավունք ունեմ:

Փերսիվալը հուզված վիճակում հետուառաջ էր քայլում սենյակում:

- Անօգուտ է, Լանս: Ես սիրում եմ քեզ և մնացյալը...

- Միթե,- ընդմիջեց Լանսը: Փերսիվալը կարծես չլսեց նրան:

- ...բայց ես իսկապես չեմ կարծում, որ մենք լեզու կգտնենք իրար հետ: Մենք ծայրահեղ տարբեր հայացքներ ունենք:

- Հնարավոր է՝ դա մեր առավելությունն է,- ասաց Լանսը:

- Միակ խելամիտ լուծումը,- ասաց Փերսիվալը,- բաժնետիրությանը վերջ դնելն է:

- Դու պատրաստվում ես գնելու իմ բաժինը. դա՛ է մտքիդ:

- Եղբայր, մեր այսպիսի գաղափարական տարբերության պայմաններում դա միակ խելամիտ քայլն է:

- Եթե դու դժվարանում ես վճարել էլեյնին ժառանգության իր մասը, ինչպե՞ս ես իմ բաժնետոմսերի ձեռքբերումը գլուխ բերելու:

- Դե՛, նկատի չունեի կանխիկ գումարով,- ասաց Փերսիվալը:- Մենք կարող էինք... ըըը... բաշխել բաժնետոմսերը:

- Ինչի շնորհիվ քեզ կհասնեն ամենահուսալի բաժնետոմսերը, իսկ ինձ, ենթադրաբար, ամենառիսկայինները, որոնցից փորձում ես ազատվել:

- Դու կարծես հենց դրանք ես նախընտրում,- ասաց Փերսիվալը:

Լանսն անսպասելիորեն քմծիծաղ տվեց:

- Ինչ-որ առումով դու ճիշտ ես, Փերսի, ծերուկ: Բայց ես չեմ կարող ամբողջովին իմ ճաշակի թելադրանքով շարժվել: Հիմա կա Պատը, որի մասին պիտի մտածեմ:

Տղամարդիկ նայեցին նրա կողմը: Պատը բացեց բերանը, բայց նորից փակեց: Ինչ խաղ էլ որ Լանսը խաղում էր, լավ կլիներ՝ ինքը չմիջամտեր: Այն, որ ինչ-որ հատուկ բան կար Լանսի մտքին, նա լիովին վստահ էր, բայց դեռևս համոզված չէր, թե որն է նրա իրական նպատակը:

- Հերթով թվարկիր դրանք, Փերսի,- ծիծաղեց Լանսը:- Կեղծ ադամանդի հանքեր, անմատչելի սուտակներ, նավթային կոնցեսիաներ, որտեղ նավթ չկա: Միթե քեզ թվում է, որ ես այնքան հիմար եմ, որքան թվում եմ:

Փերսիվալն ասաց.

- Իհարկե, որոշ բաժնետոմսեր խիստ ռիսկային են, բայց հիշիր, հնարավոր է՝ պարզվի, որ դրանք չափազանց արժեքավոր են:

- Արդեն ուրիշ երգ ես երգում, այո,- ասաց Լանսը հեգնական ժպիտով:- Մտադիր ես հայրիկի վերջին ռիսկային ձեռքբերումներն առաջարկել ինձ՝ «Կեռնեխներ» հին հանքն ու նմանատիպ բաներն էլ վրադիր: Ի դեպ, տեսուչը հարցրել է քեզ այդ «Կեռնեխներ» հանքի մասին:

Փերսիվալը խոժոռովեց:

- Այո, հարցրել է: Չեմ պատկերացնում, թե ինչ էր ուզում իմանալ դրա մասին: Ես շատ բան չէի կարող ասել նրան: Դու և ես երեխա էինք այդ ժամանակ: Միայն աղոտ կերպով հիշում եմ, որ հայրիկը մեկնել էր այնտեղ և վերադառնալով ասել, որ ամենն ապարդյուն էր:

- Ինչ էր դա... ոսկու հանք:

- Կարծես թե: Հայրիկը վերադարձել էր միանգամայն վստահ, որ այնտեղ ոսկի չկար: Եվ հաշվի առ, նա այն մարդը չէր, որ կսխալվեր:

- Ո՞վ էր այդ գործի մեջ ներքաշել նրան: Ոմն ՄաքՔենզի, այնպես չէ՞:

- Այո՛: ՄաքՔենզին մահացել էր այնտեղ:

- ՄաքՔենզին մահացել էր այնտեղ,- մտազբաղ կրկնեց Լանսը:- Ինչ-որ սարսափելի տեսարան չեղանկ: Կարծես թե հիշում եմ... Միսիս ՄաքՔենզի, այնպես չէ՞: Նա այստեղ էր եկել: Աղմուկ էր բարձրացրել ու գոռգոռում էր հայրիկի վրա: Անեծքներ էր թափում նրա գլխին: Եթե ճիշտ եմ հիշում, մեղադրում էր նրան իր ամուսնուն սպանելու մեջ:

- Մի՞թե,- զսպողաբար ասաց Փերսիվալը:- Ես նման բան չեմ մտաբերում:

- Իսկ ես հիշում եմ,- ասաց Լանսը:- Իհարկե, ես քեզ-նից անհամեմատ փոքր էի: Գուցե այդ պատճառով էր դա ինձ գրավել: Լինելով երեխա՝ դա տպավորել էր ինձ՝ որպես դրամայով լի մի պատմություն: Որտե՞ղ էր «Կեռնեխներ» հանքը: Արևմտյան Աֆրիկայում:

- Կարծես թե՛ այո՛:

- Ես պետք է աչքի անցկացնեմ այդ կոնցեսիան,- ասաց Լանսը,- երբ գրասենյակ գամ:

- Կարող ես լիովին վստահ լինել,- կրկնեց Փերսիվալը,- որ հայրիկը չէր սխալվել: Եթե նա վերադարձել էր՝ ասելով, որ այնտեղ ոսկի չկա, ուրեմն՝ ոսկի չկար:

- Հավանաբար ճիշտ ես այս հարցում,- համաձայնեց Լանսը:- Խեղճ միսիս ՄաքՔենզի: Հետաքրքիր է՝ ինչ եղան նա և այն երկու երեխաները, որոնց բերել էր իր հետ: Զավեշտալի է. հիմա նրանք պետք է որ հասուն մարդիկ լինեն:

## ԳԼՈՒԽ 20

Փայնվուդ մասնավոր հոգեբուժարանի այցելուների սրահում դեմառդեմ նստած էին տեսուչ Նիլն ու մի ավեհեր ծեր կին: Հելեն ՄաքՔենզին վաթսուներեք տարեկան էր, թեև ավելի երիտասարդ տեսք ուներ: Բաց կապույտ աչքեր ուներ, բացակա հայացք և թույլ, անվճռական կզակ: Ձգված վերին շրթունքը մերթընդմերթ ցնցվում էր: Նրա ծնկին մի մեծ գիրք կար, և տեսուչ Նիլի հետ խոսելիս նա նայում էր դրան: Տեսուչ Նիլի մտքում դեռ այն զրույցն էր, որ քիչ առաջ ունեցել էր բժիշկ Քրոսբիի՝ հաստատության ղեկավարի հետ:

- Իհարկե, նա կամավոր բուժառու է,- ասել էր դոկտոր Քրոսբին,- առանց հավաստագրի:

- Նշանակում է՝ նա վտանգավոր չէ:

- Օ՛, ո՛չ: Առավել հաճախ նա նույնքան առողջ դատողություն ունի, որքան Դուք կամ ես: Հիմա նրա լավ ժամանակահատվածներից մեկն է, այնպես որ, կարող եք միանգամայն սովորական մարդու պես զրուցել նրա հետ:

Հաշվի առնելով սա՝ տեսուչ Նիլը զրույցի բռնվելու առաջին փորձն արեց:

- Շատ սիրալիր քայլ էր Ձեզ կողմից ինձ հետ հանդիպելը,- ասաց նա:- Անունս Նիլ է: Եկել եմ Ձեզ հետ խոսելու ոմն միսթր Ֆորթեսքյուի մասին, որ վերջերս է մահացել: Ռեքս Ֆորթեսքյուի: Կարծում եմ՝ այս անունը ծանոթ է Ձեզ:

Միսիս ՄաքՔենզիի հայացքը գամված էր գրքին:

- Չգիտեմ, թե ինչի մասին եք խոսում:

- Միսթր Ֆորթեսքյուի, մադամ: Միսթր Ռեքս Ֆորթեսքյուի:

- Ո՛չ,- ասաց միսիս ՄաքՔենզին:- Վստահաբար, ոչ:

Տեսուչ Նիլը փոքր-ինչ շվարեց: Հետաքրքիր է՝ սա՛ էր

դոկտոր Քրոսբին միանգամայն սովորական անվանում:

- Ինձ թվում է, միսիս ՄաքՔենզի, Դուք երկար տարիներ առաջ եք ճանաչել այդ մարդուն:

- Ամենևին,- ասաց միսիս ՄաքՔենզին:- Դա երեկ էր:

- Հասկանալի է,- ասաց տեսուչ Նիլը՝ ապավինելով իր այս ձևակերպմանը, թեև ոչ այնքան համոզվածությամբ:- Որքան գիտեմ,- շարունակեց նա,- տարիներ առաջ այցելել եք նրան իր կեցավայրում՝ Կենու տնակում:

- Չափազանց ցուցամուլական տուն էր,- նկատեց միսիս ՄաքՔենզին:

- Այո, այո, կարելի է այդպես անվանել: Նա կապ է ունեցել Ձեր ամուսնու հետ, որքան տեղյակ եմ, Աֆրիկայում ինչ-որ հանքի գործով: «Կեռնեխներ» հանք. կարծես թե այդպես էր անունը:

- Ես պետք է գիրքս կարդամ,- ասաց միսիս ՄաքՔենզին:- Ժամանակը սուղ է, իսկ ես պիտի կարդամ գիրքս:

- Այո, մադամ: Այո, լիովին հասկանում եմ:- Հետևեց դադար, ապա տեսուչ Նիլը շարունակեց.- Միսթր ՄաքՔենզին և միսթր Ֆորթեսքյուն միասին ուղևորվել էին Աֆրիկա՝ հանքը հետախուզելու:

- Դա ամուսնուս հանքն էր,- ասաց միսիս ՄաքՔենզին:- Նա էր գտել այն և հրապարակավ հայտնել իր իրավունքները: Նրան փող էր պետք այն կապիտալի վերածելու համար: Նա գնաց Ռեքս Ֆորթեսքյուի մոտ: Եթե ավելի խելացի լինեի, եթե ավելին իմանայի, չէի թողնի, որ նման բան աներ:

- Այո, հասկանում եմ: Իրականությունն այն է, որ նրանք միասին գնացել են Աֆրիկա, և Ձեր ամուսինն այնտեղ մահացել է տենդից:

- Ես պետք է գիրքս կարդամ,- կրկնեց միսիս ՄաքՔենզին:

- Ինչ եք կարծում, միսթր Ֆորթեսքյուն խաբել է Ձեր ամուսնուն «Կեռնեխներ» հանքի հարցում, միսիս ՄաքՔենզի:

Առանց աչքերը գրքից բարձրացնելու՝ միսիս ՄաքՔենզին ասաց.

- Ինչ հիմար եք Դուք:

- Այո՛, այո՛, գուցե... Ախր հասկանում եք, այնքան երկար ժամանակ է անցել, իսկ վաղուց ավարտված պատմության մասին հարցուփորձ անելը բավական բարդ է:

- Ո՞վ ասաց, որ այն ավարտվել է:

- Հասկանալի է: Դուք այդպես չե՞ք կարծում:

- «Ոչ մի հարց լուծված չէ, եթե դրա լուծումը ճիշտ չէ»: Քիփլինգն է ասել դա: Մեր օրերում Քիփլինգին ոչ ոք չի կարդում, բայց նա հզոր մարդ էր:

- Կարծում եք՝ այդ հարցը մոտ ապագայում ճիշտ լուծում կստանամ:

- Ռեքս Ֆորթեսքյուն մեռած է, այնպես չէ: Ինքների այդպես ասացիք:

- Նրան թունավորել են,- ասաց տեսուչ Նիլը:

Միսիս ՄաքՔենզին ծիծաղեց՝ տեսուչին շփոթության մեջ գցելով:

- Ինչպիսի անհեթեթություն: Նա տենդից է մահացել:

- Ես միսթր Ռեքս Ֆորթեսքյուի մասին եմ խոսում:

- Ես նույնպես:- Նա անսպասելիորեն բարձրացրեց գլուխը, և նրա բաց կապույտ աչքերը սևեռվեցին տեսուչի վրա:- Վերջ տվեք, նա իր անկողնում է մահացել, այնպես չէ: Իր անկողնում է մահացել:

- Նա մահացել է Սենթ Ջուդս հիվանդանոցում,- ասաց տեսուչ Նիլը:

- Ոչ ոք չգիտի՝ որտեղ է մահացել ամուսինս,- ասաց միսիս ՄաքՔենզին:- Ոչ ոք չգիտի՝ ինչպես է մահացել կամ

որտեղ է թաղված... Բոլորը գիտեն միայն այն, ինչ Ռեքս Ֆորթեսքյուն է ասել: Իսկ Ռեքս Ֆորթեսքյուն ստախոս էր:

- Կարծում եք՝ կանխամտածված սպանություն է եղել:

- Կանխամտածված սպանություն, կանխամտածված սպանություն, հավերն էլ ձու են ածում, և ինչ:

- Դուք Ռեքս Ֆորթեսքյուին եք պատասխանատու համարում Ձեր ամուսնու մահվան համար:

- Այսօր նախաճաշին ինձ ձու տվեցին,- ասաց միսիս ՄաքՔենզին:- Բավական թարմ էր: Չարմանալի է, այնպես չէ, երբ մարդուն թվում է՝ դա երեսուն տարի առաջ էր:

Նիլը խոր շունչ քաշեց: Քիչ հավանական էր թվում, որ այս տեմպով ինչ-որ բանի կհասնի, բայց նա համառություն ցուցաբերեց:

- Ռեքս Ֆորթեսքյուի մահից մի քանի ամիս առաջ ինչ-որ մեկը սատկած կեռնեխներ էր դրել նրա գրասեղանին:

- Հետաքրքիր է: Շանտ, շանտ հետաքրքիր է:

- Գաղափար ունե՞ք, մադամ, թե ով կարող էր արած լինել դա:

- Գաղափարներից օգուտ չկա: Պետք է գործել: Ես այդպես եմ դաստիարակել նրանց, գիտե՞ք, որ գործեն:

- Ձեր երեխաների մասին եք խոսում:

Միսիս ՄաքՔենզին արագորեն գլխով արեց:

- Այո: Դոնալդի և Ռուբիի: Նրանք ինը և յոթ տարեկան էին, երբ առանց հոր մնացին: Ես ասում էի նրանց: Ամեն օր ասում էի նրանց: Ստիպում էի, որ ամեն երեկո երգվեն:

Տեսուչ Նիլն առաջ թեքվեց:

- Ինչ էիք ստիպում նրանց երգվել:

- Որ կսպանեն նրան, ուրիշ ինչ:

- Հասկանալի է:

Տեսուչ Նիլը խոսեց այնպես, ասես տիկնոջ ասածն աշխարհի ամենատրամաբանական միտքն էր:



- Նրանք արեցին դա:

- Դոնալդը մեկնեց Դյունկերկ: Այնտեղից այլևս չվերադարձավ: Հեռագիր էին ուղարկել ինձ՝ հայտնելով նրա մահվան լուրը. «Խորապես ցավակցում եմք. զոհվել է մարտական գործողության ժամանակ»: Գործողության, հասկանում եք, միայն թե սխալ գործողության:

- Ցավում եմ, մադամ: Իսկ Ձեր դժուարը:

- Ես դուստր չունեմ,- պատասխանեց միսիս ՄաքՔենզին:

- Քիչ առաջ էիք խոսում նրա մասին,- ասաց Նիլը: - Ձեր դուստրը՝ Ռուբին:

- Ռուբի: Այո, Ռուբին:- Նա առաջ թեքվեց:- Գիտե՞ք, թե ինչ եմ արել Ռուբիին:

- Ո՛չ, մադամ: Այդ ի՞նչ եք արել նրան:

Միսիս ՄաքՔենզին հանկարծ անցավ շշուկի.

- Նայե՛ք այստեղ՝ գրքին:

Այդ ժամանակ տեսուչը տեսավ, որ նրա ծնկին Աստվածաշունչ էր: Դա մի հին Աստվածաշունչ էր, և երբ նա բացեց այն, տեսուչ Նիլը տեսավ, որ տարբեր անուններ էին գրված առաջին էջում: Անկասկած, ընտանեկան Աստվածաշունչ էր, որում, հետևելով հին ավանդույթին, շարունակել էին գրել ամեն նոր ծնունդը: Միսիս ՄաքՔենզին նիհար ցուցամատը դրեց վերջին երկու անունների վրա. «Դոնալդ ՄաքՔենզի» և «Ռուբի ՄաքՔենզի»՝ իրենց ծննդյան ամսաթվերով: Սակայն Ռուբի ՄաքՔենզիի անվան վրա հաստ գիծ էր քաշած:

- Տեսնում եք,- հարցրեց միսիս ՄաքՔենզին:- Ես ջնջել եմ նրան գրքից: Հավիտյան հեռացրել եմ նրան: Բարի և չար գործերը գրանցող հրեշտակը նրա անունն այստեղ չի գտնի:

- Դուք ջնջել եք նրա անունը գրքից: Իսկ ինչո՞ւ, մադամ:

Միսիս Մաքթենզին խորամանկ հայացք գցեց նրա վրա:

- Դուք գիտեք՝ ինչու,- պատասխանեց նա:

- Բայց ես չգիտեմ: Իսկապես, մադամ, չգիտեմ:

- Նա չէր պահել հավատը: Գիտե՞ք՝ նա այլևս չէր հավատում:

- Որտե՞ղ է Ձեր դուստրը հիմա, մադամ:

- Ասացի Ձեզ: Ես դուստր չունեմ: Ռուբի Մաքթենզի անունով մարդ այլևս գոյություն չունի:

- Ուզում եք ասել՝ նա մահացել է:

- Մահացել: Կինն անսպասելիորեն ծիծաղեց: Այդպես նրա համար ավելի լավ կլիներ: Շատ ավելի լավ: Շատ, շատ ավելի լավ: Նա հոգոց արձակեց և անհանգիստ թեքվեց նստած տեղում: Այնուհետև վերադառնալով քաղաքավարության կանոններին՝ ասաց.- Ցավում եմ, բայց, վախենամ, իսկապես այլևս չեմ կարող գրուցել Ձեզ հետ: Հասկանո՞ւմ եք, ժամանակը կարճանում է, իսկ ես պետք է գիրքս կարդամ:

Տեսուչ Նիլի հաջորդ հարցերը Միսիս Մաքթենզին անպատասխան թողեց: Նա ընդամենը վրդովմունքի թույլ շարժում արեց և շարունակեց կարդալ Աստվածաշունչը՝ մատը սահեցնելով տողի վրայով:

Նիլը ոտքի ելավ և դուրս եկավ: Նա ևս մեկ կարճ գրույց ունեցավ կառավարչի հետ:

- Ազգականներից որևէ մեկն այցելում է նրան,- հարցրեց նա: Դուստրը՝ օրինակ:

- Կարծես թե նախորդիս ժամանակ դուստրը եկել է տեսակցության, բայց նրա այցն այնքան էր խռովել բուժառուին, որ դատերը խորհուրդ էին տվել այլևս չգալ: Այդ օրից ի վեր ամեն ինչ փաստաբանների միջոցով է կազմակերպվում:

- Իսկ Դուք տեղյակ եք, թե որտեղ է հիմա այդ Ռուբի ՄաքՔենզին:

Կառավարիչը թափ տվեց գլուխը.

- Գաղափար անգամ չունեմ:

- Չգիտեք, օրինակ՝ ամուսնացած է, թե՞ ոչ:

- Չգիտեմ: Միակ բանը, որ կարող եմ անել, տալ այն փաստաբանների հասցեն, որոնք վարում են գործը:

Տեսուչ Նիլն արդեն գնացել էր նրանց հետքերով: Նրանք չէին կարող որևէ բան հայտնել իրեն, կամ իրենք էին այդպես ասում: Միսիս ՄաքՔենզիի համար ստեղծվել էր հավատարմագրային ֆոնդ, որն իրենք էին վարում: Այս համաձայնությունը կնքվել էր տարիներ առաջ, և դրանից հետո նրանք չէին տեսել միսս ՄաքՔենզիին:

Տեսուչ Նիլը փորձեց ստանալ Ռուբի ՄաքՔենզիի նկարագիրը, բայց արդյունքները հուսադրող չէին: Այնքան մեծաթիվ ազգականներ էին տեսակցության գալիս բուժառուներին, որ տարիների ընթացքում դեմքերը խառնվում էին միմյանց՝ հիշողության մեջ նրանց տարբերակելը դժվարին դարձնելով: Հոգեբուժարանում բազում տարիներ աշխատած տնտեսվարուհին կարծես հիշում էր, որ միսս ՄաքՔենզին փոքրամարմին էր ու թխահեր: Միակ բուժքույրը, որ վաղուց էր այդտեղ, մտաբերում էր, որ նա ամրակազմ էր ու շիկահեր:

- Ահա և վերջ,- ամփոփեց տեսուչ Նիլն իր գեկույցը կոմիսարի տեղակալին:- Ունենք մի ամբողջ խենթ մոդել, և ամեն ինչ համապատասխանում է դրան: Դա պետք է ինչ-որ բան նշանակի:

Կոմիսարի տեղակալը մտազբաղ գլխով արեց:

- Կարկանդակի կեռնեխները կապվում են «Կեռնեխներ» հանքի հետ, սպանվածի գրպանի տարեկանը, Ադել Ֆորթեսքյուի թեյի հացն ու մեղրը... (Թեև այս մեկը համո-

զիչ չէ: Ի վերջո, ցանկացածը կարող էր հաց ու մեղր ուտել թեյի հետ: ) Երրորդ սպանությունը, որի դեպքում աղջկան խեղդամահ են արել զուգագուլպայով և լվացքի ամրակով քիթը սեղմել: Այո՛, որքան էլ խենթ լինի, անշուշտ, անհնար է այն անտեսել:

- Մեկ բուպե, սըր,- ասաց տեսուչ Նիլը:

- Ինչ եղավ:

Նիլը խոժոռվեց:

- Հասկանո՞ւմ եք, այն, ինչ քիչ առաջ ասացիք, ճշմարտանման չէր հնչում: Ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ էր: - Նա թափ տվեց գլուխը և հառաչեց: - Ո՛չ: Թե ինչը, չեմ կարողանում որոշել:

## ԳԼՈՒԽ 21

Լանսը և Պատը թափառում էին Կենու տնակը շրջապատող խնամված տարածքում:

- Հուսով եմ՝ չեմ վիրավորի զգացմունքներդ, Լանս,- շնչաց Պատը,- եթե ասեմ, որ երբևէ ավելի սոսկալի պարտեզում չեմ եղել:

- Չես վիրավորի,- ասաց Լանսը:- Միթե այն այդպիսին է: Իսկապես չգիտեմ: Կարծես թե երեք այգեպան ջանասիրաբար մշակում են այն:

- Գուցե հենց դա է խնդիրը,- ասաց Պատը:- Միջոցներ չեն խնայվում, բայց անհատական ճաշակի նշույլ չկա: Ենթադրում եմ՝ այստեղ լավագույն մրտավարդերն ու ծաղկաթմբերն են, որոնք պատրաստվել են ճիշտ եղանակին:

- Իսկ եթե դու անգլիական այգի ունենայիր, Պանտ, ինչ կտնկեիր այնտեղ:

- Իմ պարտեզում,- պատասխանեց Պատը,- կլինեին տուղտավարդեր, ոջլախոտեր և զանգակածաղիկներ, ոչ մի ծաղկաթումբ և այդ սարսափելի կենիներից:

Նա քամահրական հայացք գցեց կենու ցանկապատերին:

- Մտքերի զուգորդում,- հանգիստ նկատեց Լանսը:

- Թունավորողի հետ կապված՝ սարսռազդու մի բան կա,- ասաց Պատը:- Նկատի ունեմ՝ նա հավանաբար նողկալի, վրեժով լի մտքերով է սնում իր հոգին:

- Այսինքն՝ դու այդպես ես պատկերացնում նրան: Հետաքրքիր է: Իսկ ես մտածում եմ գործնական ու սառնարյուն մեկի մասին:

- Թերևս կարելի է այդկերպ նայել դրան,- ամփոփեց Պատը՝ թեթևակի դողալով:- Այնուամենայնիվ, երեք սպանություն գործելը... Ով էլ դա արել է, պետք է որ խելագար լինի:

- Այո,- ցածրաձայն արտաբերեց Լանսը:- Վախենամ, այդպես էլ կա:- Ապա նա հանկարծ պողթեկաց.- Ի սեր Աստ-ծո, Պանտ, հեռացիր այստեղից: Վերադարձիր Լոնդոն: Մեկնիր Դևոնշիր կամ Լճային երկրամաս: Գնա՛ Սթրեթ-Ֆորդ-ըփոն-Էյվոն կամ Նորֆոլկի Բրոդսը<sup>1</sup> տեսնելու: Ոստի-կանությունը չի առարկի քո գնալուն. դու այս ամենի հետ կապ չունես: Դու Փարիզում էիր, երբ հայրիկին սպանեցին, և Լոնդոնում, երբ մյուս երկուսը մահացան: Ասում եմ քեզ՝ այստեղ լինելը մահու չափ անհանգստացնում է ինձ:

Պատը մի պահ լռեց, ապա հանգիստ պատասխանեց.

- Դու գիտես՝ ով է նա, այնպես չէ՛:

- Ո՛չ, չգիտեմ:

- Բայց քեզ թվում է, որ գիտես... Ահա թե ինչու ես վա-խենում ինձ համար... Երանի ասեիր ինձ:

- Ասելու բան չկա: Ես ոչինչ չգիտեմ: Բայց, Աստված վկա, երանի հեռանայիր այստեղից:

- Սիրելիս,- ասաց Պատը:- Ես չեմ հեռանալու: Մնալու եմ այստեղ: Բարիք լինի, թե չարիք: Ահա թե ինչ եմ մտա-ծում:- Նա հավելեց անսպասելիորեն ընդհատուն ձայնով.- Միայն թե ինձ հետ միշտ չարիքն է լինում:

- Ինչ ես խոսում, Պանտ:

- Ես դժբախտություն եմ բերում: Ահա թե ինչ եմ խո-սում: Դժբախտություն եմ բերում ցանկացածին, ում հետ շփվում եմ:

- Իմ պաշտելի՛ հիմարիկ, դու դժբախտություն չես բերել ինձ: Տեսա՛ր՝ ինչպես քեզ հետ ամուսնությունից հետո հայ-րիկը տուն կանչեց ինձ և ցանկացավ հաշտվել ինձ հետ:

- Այո՛, իսկ ի՛նչ եղավ, երբ դու տուն վերադարձար: Ասում

---

<sup>1</sup> Խոսքը բրիտանական Բրոդս ազգային պարկի մասին է, որը հայտնի է իր գեղատեսիլ բնապատկերներով և էկզոտիկ բուսա-կանությամբ:

եմ քեզ, ես դժբախտություն եմ բերում մարդկանց:

- Լսիր, անուշիկս, դու միտքդ ես զբաղեցնում այս ամենով: Դա սնահավատություն է՝ ոչ ավելի, ոչ պակաս:

- Ես անզոր եմ դրա դեմ: Որոշ մարդիկ իսկապես դժբախտություն են բերում: Ես նրանցից մեկն եմ:

Լանսը բռնեց նրա ուսերից և ուժգին ցնցեց նրան:

- Դու իմ Պատն ես, և քո ամուսինը լինելն աշխարհի մեծագույն երջանկությունն է: Այնպես որ, հիմար գլուխդ մտցրո՛ւ դա: - Ապա, երբ խաղաղվեց, ասաց ավելի հանգիստ ծայնով. - Բայց լուրջ եմ ասում, Պատն, չափազանց զգույշ եղիր: Եթե այստեղ խելքը գցած մարդ է շրջում, ես չեմ ուզում, որ դու լինես այն մեկը, որ իր վրա կվերցնի փամփուշտը կամ կխմի մոլեխինդով թուրմը:

- Եթե այդպես ես ասում, ավելի լավ է՝ մոլեխինդով թուրմը խմի:

- Երբ կողքիդ չեմ, այն ծեր լեդիից մի՛ հեռացիր: Ինչ էր անունը... Մարփլ: Ինչ ես կարծում՝ ինչն է մորաքույր Էֆին խնդրել նրան, որ այստեղ մնա:

- Աստված գիտի, թե որն է մորաքույր Էֆիի քայլերի պատճառը: Լանս, որքան ենք մնալու այստեղ:

Լանսը թոթվեց ուսերը:

- Բարդ է ասելը:

- Չեմ կարծում, - ասաց Պատը, - որ այստեղ ուրախ են մեր ներկայության համար: - Բառերն արտաբերելիս նա վարանում էր: - Հիմա այս տունը եղբորդ է պատկանում, այնպես չէ: Չէ՞ որ նա չի ուզում, որ մենք այստեղ լինենք:

Լանսն անսպասելիորեն քրքջաց:

- Իհարկե չի ուզում, բայց ստիպված է մեզ իր կողքին պահել, համենայն դեպս՝ առայժմ:

- Իսկ հետո՞: Ինչ ենք անելու, Լանս: Արևելյան Աֆրիկա ենք վերադառնալու, թե՛ ինչ:

- Դ՛ւմ է քո ցանկությունը, Պ՛ատ:

Պատն աշխուժորեն գլխով արեց:

- Ա՛յ քեզ հաջողություն,- ասաց Լանսը,- որովհետև դա հենց այն է, ինչը ես նույնպես կցանկանայի անել: Հիմա այս երկրի հետ ինձ առանձնապես ոչինչ չի կապում:

Պատի դեմքը պայծառացավ:

- Հիանալի է: Այն օրվա ասածիցդ հետո վախենում էի, որ կցանկանաս այստեղ կանգ առնել:

Լանսի աչքերում դիվային փայլ հայտնվեց:

- Մեր ծրագրերի հետ կապված՝ լեզուդ քեզ կքաշես, Պ՛ատ,- ասաց նա:- Ուզում եմ մի քիչ տրորել իմ սիրելի եղբայր Փերսիվալի պոչը:

- Օ՛, Լանս, զգույշ եղիր:

- Ես զգույշ կլինեմ, անուշիկս, միայն թե չեմ հասկանում՝ ինչնու պիտի ծերուկ Փերսին միշտ ջրից չոր դուրս գա:

\* \* \*

Սիրունիկ կակադուի պես գլուխը թեթևակիորեն մի կողմ թեքած՝ միսս Մարփիլը նստել էր ընդարձակ հյուրասենյակում և լսում էր միսիս Փերսիվալ Ֆորթեսքյուին: Միսս Մարփիլը խիստ անհամատեղելի էր այս հյուրասենյակի հետ: Նրա նիհար, փխրուն կերպարանքն ասես կտրված լիներ հսկայական դիպակե բազմոցից, որը ծածկող բազմերանգ բարձերի արանքում էր տեղավորվել: Միսս Մարփիլը նստած էր չափազանց ուղիղ կեցվածքով. երբ փոքր էր, կեցվածքը շտկող տախտակով նրան սովորեցրել էին մեջքն ուղիղ պահել, այլ ոչ թե փռվել: Նրա կողքին՝ մեծ բազկաթոռին, ընտիր սև զգեստը հագին նստած էր միսիս Փերսիվալը, որ անդադար ու արագ շատախոսում էր: «Ճիշտ խեղճ միսիս Էմերթի՝ բանկի կառավարչի կնոջ պես է», - մտածեց միսս Մարփիլը: Նա հիշեց՝ ինչպես



էր մի օր միսիս Էմեթն այցելել իրեն՝ Հիշատակի օրվա՝ առևտրի կազմակերպումը քննարկելու, և ինչպես նախապատրաստական միջոցառումների շուրջ պայմանավորվելուց հետո միսիս Էմեթը հանկարծ սկսել էր խոսել, խոսել ու խոսել: Սենթ Մերի Միդում միսիս Էմեթը բավական բարդ կարգավիճակ էր զբաղեցնում: Նա դրամական սուղ միջոցներով լեդիների հին գվարդիայից չէր, որ ապրում էին եկեղեցու շրջակայքի կոկիկ տներում և մտերիմ էին տեղական ազնվական ընտանիքների բոլոր ճյուղավորումների հետ, նույնիսկ եթե վերջիններս, ըստ էության, ազնվական չէին: Անհերքելի էր, որ միսթը Էմեթը՝ բանկի կառավարիչը, ամուսնացել էր իրենից ցածր խավի կնոջ հետ, և որպես հետևանք՝ նրա կինը լիովին մեկուսացել էր, որովհետև, բնականաբար, չէր կարող ներգրավվել առևտրական դասի կանանց շրջանակի մեջ: Մտքիզմը բարձրացրել էր իր գարշելի գլուխը և միսիս Էմեթին հարատև միայնության կղզի գցել:

Խոսելու պահանջը տիրել էր միսիս Էմեթին և հենց այդ օրը խորտակել պատնեշները՝ հեղեղի տակ առնելով միսս Մարփլին: Այն ժամանակ նա կարեկցել էր միսիս Էմեթին, իսկ այսօր կարեկցանք էր զգում միսիս Փերսիվալ Ֆորթեսյուի հանդեպ:

Միսիս Փերսիվալ Ֆորթեսյուն դժգոհության բազմաթիվ առիթներ էր ունեցել, և քիչ թե շատ անձանոթ մարդու առաջ դրանք բացելը հսկայական թեթևություն էր պարզևում նրան:

- Իհարկե, երբեք բողոքելու կարիք չեմ ունեցել,- ասաց միսիս Փերսիվալը:- Երբևէ բողոքող տեսակ չեմ եղել:

<sup>1</sup> Բրիտանական համագործակցության երկրներում Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից ի վեր նշվող օր, որի նպատակն է հարգանքի տուրք մատուցել մարտական պարտքը կատարելիս զոհվածների հիշատակին:

Միշտ ասում եմ, որ մարդ պետք է համակերպվի իրավիճակին: Այն, ինչը չես կարող շտկել, պետք է համբերությամբ տանես, և, վստահաբար, երբևէ բառ չեմ ասել որևէ մեկին: Բարդ է հասկանալ, թե ում հետ կարող էի խոսել: Ինչ-որ առումով մարդ մեկուսացած է այստեղ, չափազանց մեկուսացած: Բնականաբար, այս տան մեջ առանձին բնակարան ունենալն անչափ հարմար է և հիանալի խնայողություն է մեզ համար: Սակայն, անշուշտ, դա ամենևին նման չէ քո սեփական տունն ունենալուն: Վստահ եմ՝ կհամաձայնեք ինձ հետ:

Միսս Մարփլն ասաց, որ համամիտ է:

- Բարեբախտաբար, մեր նոր տունը գրեթե պատրաստ է: Միակ խնդիրը ներկարարներն ու գեղազարդողներն են: Այդ մարդիկ այնքան դանդաղաշարժ են: Ամուսնուս, իհարկե, գոհացնում է այստեղ ապրելը: Բայց տղամարդու համար ամեն բան այլ է: Համաձայն չե՞ք:

Միսս Մարփլը համաձայնեց, որ տղամարդկանց դեպքում ամեն ինչ միանգամայն տարբեր էր: Սա կարող էր ասել՝ առանց խղճին դեմ գնալու, քանի որ իսկապես այդպես էր կարծում: Ջենթլմենները, միսս Մարփլի կարծիքով, բացարձակապես այլ դասի էին պատկանում՝ իր սեռի ներկայացուցիչների համեմատ: Նրանց հարկավոր են երկու ծու և խոզապուխտ նախաճաշին, օրական երեք անգամ հագեցած սնունդ, և երբեք պետք չէ հակաճառել նրանց կամ վիճել նրանց հետ ընթրիքից առաջ: Միսիս Փերսիվալը շարունակեց.

- Հասկանո՞ւմ եք, ամուսինս ամբողջ օրը քաղաքում է: Տուն է վերադառնում հոգնած և ուզում է նստել ու կարդալ: Իսկ ես, հակառակը, ողջ օրը մենակ եմ այստեղ՝ բոլորովին զուրկ սրտակից ընկերակցությունից: Այստեղ կատարյալ հարմարավետություն է տիրում և նման բաներ: Սնուն-

դը հոյակապ է: Բայց ես կարծում եմ, որ մարդ կարիք ունի իսկապես հաճելի շփման միջավայրի: Ճիշտն ասած՝ տեղացիներն ինձ նման մարդիկ չեն: Նրանց մի մասին բրիջ խաղացող ցուցամուկներ եմ անվանում: Ոչ այնքան հաճելի բրիջ: Ինքս էլ բուլրի պես հաճույքով մի պարտիա բրիջ կխաղայի, բայց այստեղ խաղացողները չափազանց հարուստ են: Հսկայական խաղադրույքներով են խաղում և մեծ քանակությամբ խմիչք օգտագործում: Իրականում սա այն կյանքն է, որը ես ցոփ ու շվայտ եմ անվանում: Իհարկե, կան նաև փոքրաթիվ... դե՛, նրանց միայն պառավներ կարող ես անվանել, որ, գոգաթիակը ձեռքներին, թրև են գալիս ու այգեգործությամբ զբաղվում:

Միսս Մարփլը փոքր-ինչ մեղավոր տեսք ընդունեց. չէ՛ որ ինքը նույնպես մոլեռանդ այգեգործ էր:

- Չեմ ուզում որևէ բան ասել մահացածի հասցեին, - արագորեն վերսկսեց միսիս Փերսին, - բայց, անկասկած, միսթր Ֆորթեսքյուն (սկեսրայրիս նկատի ունեմ) հիմարություն գործեց՝ երկրորդ անգամ ամուսնանալով: Իմ... դե՛, չեմ կարող նրան սկեսուր անվանել. նա իմ հասակակիցն էր: Ճշմարտությունն այն է, որ նրա ուշքումիտքը տղամարդիկ էին: Պարզապես խելքը գնում էր տղամարդկանց համար: Իսկ ինչպե՛ս էր փող ծախսում: Սկեսրայրս կատարյալ ապուշ էր նրա հարցում: Նրա համար միևնույն էր, թե կինն ինչ գումար էր կիտում: Դա բարկացնում էր Փերսին, իսկապես շատ էր բարկացնում: Փերսին միշտ այնքան զգուշավոր է փողի հետ կապված հարցերում: Տանել չի կարողանում ավելորդ ծախսերը: Եվ գումարած դրան՝ միսթր Ֆորթեսքյուն այնքան տարօրինակ էր ու դյուրագրգիռ՝ զայրույթի սարսափելի պոռթկումներով, փողը ջրի պես վատնելով ռիսկային նախագծերի ներդրումներում: Դե՛... ամենևին հաճելի չէր:

Միսս Մարփիլը խիզախեց նկատել.

- Հավանաբար դա նաև անհանգստացնում էր Ձեր ամուսնուն:

- Օ՛, այո՛: Վերջին մեկ տարում Փերսին իրոք անհանգիստ էր: Դրա պատճառով միանգամայն այլ մարդ էր դարձել: Հասկանում եք, նրա վերաբերմունքն էր փոխվել, նույնիսկ իմ հանդեպ: Երբեմն խոսում էի նրա հետ, իսկ նա չէր պատասխանում:- Միսիս Փերսին հառաչեց, ապա շարունակեց.- Հիմա էլեյնը՝ տալս, դե, գիտեք, շատ տարօրինակ աղջիկ է: Տան երեսը չի տեսնում: Այնպես չէ, որ նա անբարյացակամ է, բայց և չի կարեկցի, հասկանում եք: Երբեք ցանկություն չունի Լոնդոն գնալու և գնումներ անելու, ոչ էլ ցերեկույթի կամ նմանատիպ միջոցառումների հաճախելու: Նրան անգամ հագուստը չի հետաքրքրում:- Միսիս Փերսիվալը կրկին հառաչեց և շնչաց.- Թեև, իհարկե, չեմ ուզում որևէ կերպ բողոքել:- Այդ պահին նա խղճի խայթ զգաց և շտապեց հավելել.- Գուցե տարօրինակ համարեք, որ այսպես խոսում եմ Ձեզ հետ, մինչդեռ Դուք համեմատաբար օտար եք: Ախր իսկապես, այս ամբողջ լարվածությունն ու ցնցումը... կարծում եմ՝ ցնցումն է ամենաէականը: Ուշացած ցնցումը: Ես այնքան նյարդային եմ, որ, հասկանում եք... դե, պարզապես պետք է խոսեմ ինչ-որ մեկի հետ: Դուք ինձ այնպես եք հիշեցնում մի թանկագին ծեր լեդիի՝ միսս Թրեֆուզիս Ջեյմսին: Նա ազդրի կոտրվածք էր ստացել յոթանասունհինգ տարեկանում: Նրան երկարատև խնամք էր պահանջվում, և մենք լավ ընկերներ դարձանք: Հեռանալիս նա աղվեսի մորթուց մուշտակ նվիրեց ինձ, ինչը, կարծում եմ, սիրալիր քայլ էր նրա կողմից:

- Ես հասկանում եմ Ձեր զգացմունքները,- ասաց միսս Մարփիլը:

Այս անգամ ևս նա ճշմարտությունն էր ասում: Միսիս Փերսիվալի ամուսինն ակնհայտորեն հոգնել էր նրանից և գրեթե ուշադրության չէր արժանացնում նրան, իսկ խեղճ կնոջը չէր հաջողվել ընկերանալ տեղացիներից որևէ մեկի հետ: Լոնդոն վազելն ու գնումներ անելը, ցերեկոյթներն ու շքեղ տան մեջ ապրելը չէին փոխհատուցում մարդկային վերաբերմունքի պակասն ամուսնու ընտանիքի հետ հարաբերություններում:

- Հուսով եմ՝ ասածս կոպիտ չեք համարի,- ասաց միսս Մարփիլը տարիքն առած լեդիի մեղմ ձայնով,- բայց կարծում եմ՝ հանգուցյալ միսթր Ֆորթեսքյուն այնքան էլ լավ մարդ չէր:

- Այդպես էլ կար,- ասաց նրա հարսը:- Եթե լիովին անկեղծ լինեմ, սիրելիս, մեր մեջ ասած, նա զգվելի ծերունի էր: Չեմ զարմանում... իսկապես չեմ զարմանում... որ ինչ-որ մեկը հեռացրել է նրան իր ճանապարհից:

- Պատկերացում չունե՞ք, թե ով...- սկսեց միսս Մարփիլը և խոսքը կիսատ թողեց:- Ասոված իմ, գուցե չափտի հարցների դա... անգամ կասկած չունե՞ք, թե ով... ով... դե, ով կարող էր դա լինել:

- Օ՛, կարծում եմ՝ այն սարսափելի մարդը՝ Քրամփն է արել,- պատասխանեց միսիս Փերսիվալը:- Նա վատ վարվեցողություն ունի, այնպես չէ, որ կոպիտ է, հասկանում եք, բայց և այնպես, կոպիտ է: Ավելի ճիշտ՝ հանդուգն:

- Այնուամենայնիվ, ենթադրում եմ՝ պետք է դրդապատճառ լինի:

- Հազիվ թե նման մարդուն առանձնակի դրդապատճառ պետք լինի: Կհամարձակվեմ ասել, որ միսթր Ֆորթեսքյուն շշպոել է նրան ինչ-որ բանի համար: Բացի դրանից՝ կասկածներ ունեմ, որ նա երբեմն չափից շատ է խմում: Մի բանում գրեթե վստահ եմ. նա փոքր-ինչ անհա-

վասարակշիռ մարդ է, հասկանում եք: Ինչպես այն սպասավորը կամ ծառայապետը, ով էլ եղած լիներ, որ շրջել էր տանը՝ բոլորին կրակելով: Իհարկե, եթե լիովին անկեղծ լինեմ Ձեզ հետ, ես իսկապես կասկածում էի, որ Ադելն է թունավորել միսթր Ֆորթեսքյունին: Բայց հիմա, բնականաբար, դուրս է կասկածից, քանի որ նրան նույնպես թունավորել են: Գիտե՞ք, հնարավոր է՝ Ադելը մեղադրել է Քրամփին: Եվ այդ ժամանակ Քրամփը կորցրել է գլուխն ու գուցե ինչ-որ բան գցել սենդվիչների մեջ, իսկ Գլեդիսը տեսել է նրան դա անելիս, ուստի աղջկան նույնպես սպանել է: Նրան այս տանը պահելն առհասարակ վտանգավոր եմ համարում: Աստված իմ, երանի կարողանայի դուրս գալ այստեղից, բայց, ենթադրում եմ, այդ զգվելի ուստիկանները թույլ չեն տա նման բան անել: Նա հանկարծակի մղումով առաջ թեքվեց և գիրուկ ձեռքը դրեց միսս Մարփի բազուկին: Երբեմն ինձ թվում է՝ պետք է հեռանամ... որ եթե այս ամենը շուտով չավարտվի... ես իսկապես կփախչեմ:

Նա հետ թեքվեց՝ զննելով միսս Մարփի դեմքը:

- Բայց, թերևս... դա այնքան էլ խելամիտ չէ:

- Ամենևին... չեմ կարծում, որ դա խելամիտ է... գիտե՞ք՝ ուստիկանությունը շատ չանցած կգտնի Ձեզ:

- Մի՞թե: Մի՞թե կկարողանան: Կարծում եք՝ բավականաչափ խելացի են դրա համար:

- Ուստիկանությանը թերագնահատելը հիմարություն է: Տեսուչ Նիլը բացառիկ խելքի տեր մարդու տպավորություն է թողնում ինձ վրա:

- Օ՛: Իսկ ինձ բավական հիմար էր թվացել:

Միսս Մարփը թափ տվեց գլուխը:

- Ինձ հանգիստ չի տալիս այն զգացողությունը, կնկմաց Ջենիֆեր Ֆորթեսքյուն,- որ այստեղ մնալը վտանգավոր է:

- Նկատի ունե՞ք՝ Ձեզ համար է վտանգավոր:

- Ա... այո... դե, այո...

- Որովհետև Դուք ինչ-որ բան գիտեք:

Թվում էր՝ միսիս Փերսիվալը շունչ էր հավաքում:

- Օ՛, ո՛չ: Բնականաբար ես ոչինչ չգիտեմ: Ի՞նչ պիտի իմանայի: Պարզապես... պարզապես ես նյարդային եմ: Այդ Քրամփը...

Սակայն Քրամփի մասին չէր, որ մտածում էր միսիս Ֆորթեսքյուն. այսպես էր կարծում միսս Մարփիլը՝ հետևելով, թե ինչպես էր Ջենիֆերը սեղմում ու թուլացնում բռունցքները: Միսս Մարփիլը կասկած չուներ, որ Ջենիֆեր Ֆորթեսքյուն սարսափած է մեկ այլ պատճառով:

## ԳԼՈՒԽ 22

Մթնում էր: Միսս Մարփիլը գործվածքի հետ տեղափոխվել էր գրադարանի պատուհանի մոտ: Ապակու միջով նայելով՝ նա տեսավ Պատ Ֆորթեսյուին, որ հետուառաջ էր քայլում բաց պատշգամբում: Միսս Մարփիլը բացեց պատուհանի փականն ու ձայն տվեց արանքից.

- Ներս եկեք, սիրելիս: Դե, եկեք: Այդտեղ, վստահաբար, չափազանց ցուրտ է ու խոնավ, այն էլ՝ առանց վերարկուի:

Պատը հնազանդվեց կանչին: Նա ներս եկավ, փակեց պատուհանն ու վառեց լամպերից երկուսը:

- Այո՛, - ասաց նա, - այնքան էլ հաճելի երեկո չէ: Նա նստեց բազմոցին՝ միսս Մարփիլի կողքին: Ինչ եք գործում:

- Ա՛հ, մանկական պիջակ է, սիրելիս: Նորածնի համար, դե գիտեք: Միշտ ասում եմ երիտասարդ մայրիկներին, որ մանկական պիջակները երբեք շատ չեն լինում: Սա երկրորդ չափսն է: Միշտ երկրորդն եմ գործում: Փոքրիկներն այնքան շուտ են մեծանում առաջին չափսից:

Պատն իր երկար ուղքերը դեպի բուխարին մեկնեց:

- Այսօր հաճելի է այստեղ, - ասաց նա: - Բուխարին, լամպերը և Դուք, որ հագուստ եք գործում մանուկների համար: Ամեն ինչ հարմարավետ ու ընտանեկան է թվում, ինչպես Անգլիայում պիտի լինի:

- Անգլիայում հենց այսպես է, - ասաց միսս Մարփիլը: - Կենու տնակներն այնքան էլ շատ չեն այստեղ, սիրելիս:

- Լավ է, որ այդպես է, - ասաց Պատը: - Չեմ հավատում, որ սա երբևէ երջանիկ տուն է եղել: Չեմ հավատում, որ ինչոր մեկը երբևէ երջանիկ է եղել այստեղ՝ չնայած այն գումարներին, որ նրանք ծախսում են, և այն ամենին, ինչ ունեն:

- Այո՛, - համաձայնեց միսս Մարփիլը, - չէի ապի, որ սա երջանիկ տուն է եղել:



- Հնարավոր է՝ Ադելը երջանիկ է եղել,- ասաց Պատը:-  
Ես, իհարկե, երբեք չեմ հանդիպել նրան, ուստի չգիտեմ,  
բայց Ջենիֆերը բավական դժբախտ է, իսկ Էլեյնը սրտա-  
մաշ է լինում մի երիտասարդի համար, հավանաբար հո-  
գու խորքում իմանալով, որ նա անտարբեր է իր հանդեպ:  
Օ՛ր, ինչպես եմ ուզում փախչել այստեղից:- Նա նայեց միսս  
Մարփին և հանկարծ ժպտաց:- Գիտե՞ք՝ Լանսն ասել է, որ  
հնարավորինս չհեռանամ Ձեզնից: Հավանաբար, մտածում  
է, որ այդպես ապահով կլինեմ:

- Ձեր ամուսինը հիմար չէ,- նկատեց միսս Մարփը:

- Այո՛, Լանսը հիմար չէ: Առնվազն ինչ-որ հարցերում:  
Բայց երանի հստակորեն ասեր ինձ, թե ինչից է վախենում:  
Մի բան է միանգամայն պարզ թվում: Այս տանն ինչ-որ մե-  
կը խելագար է, իսկ խելագարությունը միշտ է սարսափեց-  
նում. չէ՞ որ դու չգիտես, թե խենթ մարդու միտքն ինչպես է  
գործում: Չգիտես՝ որն է նրա հաջորդ քայլը:

- Իմ խեղճ զավակ,- ասաց միսս Մարփը:

- Ա՛հ, ինձ հետ ամեն բան կարգին է, իսկապես: Ես ար-  
դեն կոփված եմ:

Միսս Մարփը զգուշորեն հարցրեց.

- Դուք բավականաչափ դառնություն եք տեսել, այնպես  
չէ՞, սիրելիս:

- Ա՛հ, լավ օրեր նույնպես տեսել եմ: Հրաշալի ման-  
կություն եմ ունեցել Իռլանդիայում՝ ձիավարություններով,  
որսորդությամբ, ապրել հոյակապ, մեծ, բայց անպաճույճ  
տան մեջ՝ միջանցիկ քամիներով ու արևով ողողված: Երբ  
ուրախ մանկություն ես ունենում, ոչ ոք չի կարող խլել այն  
քեզնից, այնպես չէ: Հետո, երբ մեծացա, ամեն բան կար-  
ծես սխալ ընթացավ: Առաջինը, թերևս, պատերազմն էր:

- Ձեր ամուսինը ռազմական օդաչու էր, այնպես չէ՞:

- Այո՛: Մեր ամուսնությունից ընդամենը մեկ ամիս էր

անցել, երբ Դոնի ինքնաթիռը վայր գցեցին:- Նա ակնապիշ նայում էր իր դիմաց՝ բուխարուն:- Սկզբում ինձ թվում էր՝ ես նույնպես ուզում եմ մահանալ: Դա այնքան անարդար, այնքան դաժան էր թվում: Բայցևայնպես... ի վերջո... ես սկսեցի հասկանալ, որ գուցե բարին դա էր: Դոնը հիանալի մարտիկ էր: Քաջ, անհոգ ու զվարթ: Նա օժտված էր այն բոլոր հատկանիշներով, որոնք անհրաժեշտ են պատերազմում: Բայց ես վստահ չեմ, որ խաղաղ ժամանակներում նա ինչ-որ ձևով կգտներ իրեն: Նրա մեջ մի տեսակ... ինչպե՞ս ասեմ... հպարտ անհնազանդություն կար: Նա չէր հարմարվի կամ հիմնավորվի: Կընդդիմանար ամեն ինչին: Նա ինչ-որ առումով... դե՛, ստեղծված չէր հասարակական կյանքի համար: Ո՛չ, նա չէր հարմարվի:

- Ձեր կողմից խոհեմություն է դա հասկանալը, սիրելիս:- Միսս Մարփլը կռացավ գործվածքի վրա, շյուղին օղակ անցկացրեց ու հաշվեց քթի տակ.- Երեքը՝ սովորական, երկուսը՝ հակառակ կողմից, մեկը բաց ենք թողնում, երկուսը՝ միասին գործում:- Ապա բարձրաձայն հարցրեց.- Իսկ Ձեր երկրորդ ամուսինը, սիրելիս:

- Ֆրեդին: Հրազենով ինքնասպանություն գործեց:

- Աստված իմ: Ինչ տխուր է: Ինչպիսի՞ ողբերգություն:

- Մենք երջանիկ էինք միասին,- ասաց Պատը:- Մեր ամուսնությունից մոտ երկու տարի անց ես սկսեցի հասկանալ, որ նա... դե՛, միշտ չէր անկեղծ: Ինչ-որ բաներ բացահայտեցի, որ կատարվում էին: Բայց դա կարևոր չէր, նկատի ունեմ՝ մեզ երկուսիս համար: Որովհետև, գիտե՞ք, Ֆրեդին սիրում էր ինձ, իսկ ես՝ նրան: Ես փորձում էի աչք փակել կատարվողի վրա: Հնարավոր է՝ դա վախկոտություն էր իմ կողմից, բայց ես չէի կարող փոխել նրան, հասկանում եք: Չես կարող փոխել մարդկանց:

- Այո՛,- հաստատեց միսս Մարփլը,- մարդկանց չես փոխի:

- Ես ընդունել էի նրան այնպիսին, ինչպիսին կար, սիրել էի նրան ու ամուսնացել նրա հետ, և զգում էի, որ պարզապես պետք է համակերպվեմ դրա հետ: Իսկ հետո գործերը վատացան, նա չդիմացավ և ինքնասպանություն գործեց: Նրա մահից հետո ես մեկնեցի Քենիա՝ այնտեղ ապրող ընկերներիս հյուրընկալվելու: Չէի կարող մնալ Անգլիայում և շարունակ հանդիպել հին ծանոթներին, որոնք գիտեին այդ ամենի մասին: Իսկ Քենիայում ես հանդիպեցի Լանսին: - Նրա դեմքը փոխվեց՝ ավելի մեղմ արտահայտություն ստանալով: Նա դեռ նայում էր կրակին, իսկ միսս Մարփլը՝ նրան: Քիչ անց Պատը թեքեց գլուխն ու հարցրեց.- Ասացե՞ք ինձ, միսս Մարփլ, ի՞նչ եք մտածում Փերսիվալի մասին:

- Դե՛, այնքան էլ հաճախ չեմ տեսնում նրան: Սովորաբար միայն նախաճաշին: Ահա և վերջ: Կարծում եմ՝ ներկայությունս այնքան էլ դուր չի գալիս նրան:

Հանկարծ Պատը ծիծաղեց:

- Գիտե՞ք՝ նա ժլատ է: Սարսափելի ժլատ է փողի հարցում: Լանսն ասում է՝ միշտ է այդպիսին եղել: Զենիֆերը նույնպես բողոքում է դրանից: Միսս Դավի հետ աչքի է անցկացնում տնտեսության հաշիվները: Դժգոհում է ամեն մի ծախսի համար: Սակայն միսս Դավին հաջողվում է իրենն առաջ տանել: Նա իսկապես սքանչելի անձնավորություն է: Այդպես չե՞ք կարծում:

- Այո՛, անշուշտ: Հիշեցնում է ինձ միսիս Լաթիմերին Սենթ Մերի Միդլից՝ իմ գյուղից: Նա ղեկավարում էր Կանանց կամավորական ծառայությունը, աղջիկ սկաուտներին և գրեթե ամեն բան, որ կարելի էր ղեկավարել: Միայն հինգ տարի անց մենք հայտնաբերեցինք, որ... անհ, պետք չէ բամբասել: Չկա ավելի ծանծրալի բան, քան այն մարդիկ, որ խոսում են այնպիսի վայրերի ու մարդկանց մա-

սին, որոնց երբեք չեք տեսել, և որոնց մասին ոչինչ չգիտեք: Ներեցե՞ք ինձ, սիրելիս:

- Իսկ Սենթ Մերի Միդը հաճելի՞ գյուղ է:

- Դե՛, չգիտեմ, թե որն է հաճելի գյուղը Ձեզ համար, սիրելիս: Բավական գեղեցիկ գյուղ է: Համակրելի բնակիչներ ունի, բայց կան նաև չափազանց տհաճ մարդիկ: Ինչպես ցանկացած այլ գյուղում, այնտեղ հետաքրքրաշարժ իրադարձությունների պակաս չկա: Մարդկային բնույթը գրեթե նույնն է ամենուրեք, այնպես չէ՛:

- Դուք հաճախ եք բարձրանում միսս Ռեմսբորթոմի մոտ, - նկատեց Պատը: - Նա իսկապես վախեցնում է ինձ:

- Վախեցնում է: Ինչո՞ւ:

- Որովհետև ինձ թվում է՝ նա խենթ է: Կարծում եմ՝ կրոնական մոլուցք ունի: Չե՞ք մտածում, որ նա... պարզապես... խելագար է:

*ԲՎԼԵԿԵՐԵՆ Ե՛ 1915. ՇՏԾ*

- Ի՞նչ առումով խելագար:

*Կայք*

- Ա՛հ, Դուք գիտե՞ք՝ ինչ նկատի ունեմ, միսս Մարփլ, ավելի քան լավ գիտեք: Նա նստում է վերևում, երբեք դուրս չի գալիս ու մեղքերի մասին է մտորում: Դե՛, գուցե ի վերջո մտածել է, որ իր կյանքի առաքելությունը դատաստան տեսնելն է:

- Ձեր ամուսինն է այդպես մտածում:

- Չգիտեմ, թե Լանսն ինչ է մտածում: Նա չի ասում ինձ: Սակայն մի բանում միանգամայն վստահ եմ. նա կարծում է, որ այս ամենը խելագարի ձեռքի գործ է, և այդ մարդն ընտանիքից է: Դե՛, պետք է ասեմ՝ Փերսիվալը բավականաչափ ողջամիտ է: Ջենիֆերը պարզապես հիմար է ու փոքր-ինչ խղճալի: Մի քիչ նյարդային է և վերջ: Իսկ Էլեյնն այն տարօրինակ, հախուռն ու անհանգիստ աղջիկներից է: Նա խենթի պես սիրահարված է իր այդ երիտասարդին և վայրկյան իսկ չի խոստովանի ինքն իրեն, որ նա փողի համար է ամուսնանում իր հետ:

- Կարծում եք՝ այդ երիտասարդը հանուն փողի է ամուսնանում նրա հետ:

- Այո՛: Դուք այդպես չե՞ք կարծում:

- Ես կասեի՝ ավելի քան վստահաբար,- ասաց միսս Մարփիլը:- Ճիշտ երիտասարդ էլիսի պես, որ ամուսնացավ Մարիոն Բեյթսի՝ երկաթեղենի հարուստ վաճառողի դստեր հետ: Նա հասարակ աղջիկ էր և խելքահան էր լինում նրա համար: Ինչ էլ որ լիներ, պարզվեց՝ նրանց միությունը միանգամայն հաջող էր: Երիտասարդ էլիսի և այս Ջերալդ Ռայթի պես մարդիկ անախտություններ են պատճառում միայն այն դեպքում, երբ սիրելով ամուսնանում են աղքատ աղջկա հետ: Այդ քայլի համար նրանք այնպես են նեղսրտում, որ իրենց զայրույթը թափում են աղջկա վրա: Բայց երբ հարուստ աղջկա հետ են ամուսնանում, շարունակում են հարգել նրան:

- Չեմ պատկերացնում,- խոժոռվելով շարունակեց Պատր,- թե ինչպես կարող էր դրսից մեկն անել դա: Եվ դրանով է բացատրվում այն մթնոլորտը, որ տիրում է այստեղ: Բոլորը հետևում են միմյանց: Միայն թե շուտով ինչ-որ բան կլինի...

- Մահեր այլևս չեն լինի,- ասաց միսս Մարփիլը:- Համենայն դեպս, ես այդպես եմ կարծում:

- Չեք կարող համոզված լինել դրանում:

- Դե՛, ըստ էության, լիովին համոզված եմ: Այդ տղամարդը հասել է իր նպատակին, հասկանո՞ւմ եք:

- Տղամարդը:

- Դե՛, կամ էլ կինը: Ակամա այդպես ասացի:

- Ասում եք՝ նա հասել է իր նպատակին: Ի՞նչ նպատակի:

Միսս Մարփիլը թափ տվեց գլուխը. ինքն էլ դեռ ամբողջովին վստահ չէր:

## ԳԼՈՒԽ 23

Եվ կրկին միսս Սոմերսը թեյ էր պատրաստել մեքենագրուհիների սենյակում, ու այս անգամ ևս թեյնիկը չէր եռացել, երբ նա ջուրը լցրեց թեյի վրա: Պատմությունը կրկնվելու հատկություն ունի: Իր բաժակը վերցնելիս միսս Գրիֆիթը մտածեց. «Ես իսկապես պիտի խոսեմ միսթր Փերսիվալի հետ Սոմերսի հարցով: Վստահ եմ՝ ավելի լավ աշխատակցուհու կարող ենք գտնել: Թեև այս սարսափելի հանգամանքներում մարդ չի ցանկանում անհանգստացնել նրան գրասենյակային մանրութներով»:

Միսս Գրիֆիթը, ինչպես նախկինում հաճախ էր արել, կտրուկ ասաց.

- Ջուրը կրկին չի եռացել, Սոմերս:

Եվ միսս Սոմերսը վարդագունելով պատասխանեց իր սովորական ձևով.

- Աստված իմ, այս անգամ ինձ իրոք թվաց, թե եռացել էր:

Թեմայի հետագա զարգացումն ընդհատվեց Լանս Ֆորթեսքյուի մուտքով: Փոքր-ինչ բութ հայացքով նա շուրջը նայեց, իսկ միսս Գրիֆիթը, վեր թռչելով, ընդառաջ եկավ նրան:

- Միսթր Լանս,- բացականչեց նա:

Լանսը շրջադարձ կատարեց նրա ուղղությամբ, և նրա դեմքը ժպիտով փայլեց:

- Ողջո՞ւյն: Ախր սա միսս Գրիֆիթն է:

Միսս Գրիֆիթը զմայլված էր: Տասնմեկ տարի առաջ էր տեսել նրան, իսկ նա հիշում էր իր անունը: Նա շփոթահար ձայնով ասաց.

- Անհավատալի է, որ հիշեցիք:

Եվ Լանսը թեթևությամբ, իր ողջ հմայքն առաջին պլան բերելով, ասաց.

- Իհարկե, հիշում եմ Ձեզ:

Հուզմունքի այլք անցավ մեքենագրուհիների սենյակով: Միսս Սոմերսը մոռացավ թեյի հետ կապված խնդիրների մասին: Բերանը թերթակիրոտն բաց՝ նա նայում էր Լանսին: Միսս Բելն իր գրամեքենայի վրայով անհամբեր հայացք գցեց նրա վրա, իսկ միսս Չեյզն աննկատ կերպով հանեց իր դիմափոշին ու քսեց քթին: Լանս Ֆորթեսյուն շուրջը նայեց:

- Այսպիսով՝ այստեղ ամեն ինչ դեռ առաջվա պես է, - ասաց նա:

- Փոփոխությունները շատ չեն, միսթր Լանս: Ինչպիսի արևառ ու հիանալի տեսք ունեք: Հավանաբար արտերկրում անչափ հետաքրքիր կյանք եք վարում:

- Կարելի է այդպես անվանել,- ասաց Լանսը,- բայց, թերևս, այժմ փորձելու եմ հետաքրքիր կյանք ունենալ Լոնդոնում:

- Գրասենյակ եք վերադառնալու:

- Հնարավոր է:

- Ա՛հ, ախր դա հրաշալի կլինի:

- Դուք ինձ ժանգոտած կհամարեք,- ասաց Լանսը:- Ստիպված կլինեք սովորեցնել ինձ ինչպես աշխատել, միսս Գրիֆիթ:

Միսս Գրիֆիթն ուրախությամբ ասաց.

- Ձեր վերադարձն անչափ հաճելի կլինի մեզ համար, միսթր Լանս: Իսկապես:

Լանսը երախտագիտությամբ լի հայացք գցեց նրա վրա:

- Որքան սիրալիր եք,- ասաց նա:- Չափազանց սիրալիր:

- Մենք երբեք չենք հավատացել... մեզնից ոչ մեկի մտքով չի անցել...- միսս Գրիֆիթը խոսքն ընդհատեց ու կարմրեց:

Լանսն ափով թերթն խփեց նրա ձեռքին:

- Դուք չէիք հավատացել, որ սատանան նույնքան սև էր, որքան նրան պատկերել էին: Դե՛, հնարավոր է՝ նա այդպիսին չէր: Բայց այդ պատմությունն արդեն անցյալում է: Ինչ իմաստ կա դրան վերադառնալու: Ապագան է կարևոր:- Նա հավելեց.- Եղբայրս այստեղ է:

- Կարծես թե անձնական աշխատասենյակում է:

Լանսն անկաշկանդորեն գլխով արեց ու առաջ անցավ: Անձնական աշխատասենյակի ընդունարանում կոպիտ դիմագծերով միջին տարիքի մի կին վեր ելավ իր գրասեղանի հետևից ու սպառնալից հարցրեց.

- Ձեր անունը, և ի՞նչ գործով եք եկել, խնդրե՛մ:

Լանսը թերահավատորեն նայեց նրան:

- Դուք միսս Գրովնորն եք,- հարցրեց նա:

Լանսին նկարագրել էին, որ միսս Գրովնորը շքեղ շիկահեր է: Նա, անկասկած, այդպիսին էր երևում նաև թերթերի լուսանկարներում, որոնք հաղորդում էին Ռեքս Ֆորթեսքյուի գործով հետաքննության մասին: Այս կինը, վստահաբար, չէր կարող միսս Գրովնորը լինել:

- Միսս Գրովնորը նախորդ շաբաթ է աշխատանքից հեռացել: Ես միսիս Հարդքասլն եմ՝ միսթր Փերսիվալ Ֆորթեսքյուի անձնական քարտուղարուհին:

«Իսկը ծերուկ Փերսիի ոճով,- մտածեց Լանսը:- Ազատվել շքեղ շիկահերից ու փոխարենը գորգոնի՛ ընդունել: Հետաքրքիր է՝ ինչո՞ւ: Անվտանգությունից ելնելով, թե՛ այս մեկն ավելի էժան է»: Իսկ բարձրաձայն անհոգաբար ասաց.

- Ես Լանսելոթ Ֆորթեսքյուն եմ: Մենք դեռևս չէինք հանդիպել:

---

<sup>1</sup> Հին հունական դիցաբանության մեջ հանդիպող կնոջ դեմքով, օձավարս հրեշներ:



- Օ՛, ներեցե՛ք ինձ, միսթըր Լանսելոթ,- ասաց միսիս Հարդթասլը,- կարծես թե առաջին անգամ եք գրասենյակում:

- Առաջին, բայց ոչ վերջին,- ժպտալով պատասխանեց Լանսը:

Նա հատեց սենյակն ու բացեց այն դուռը, որը տանում էր իր հոր անձնական աշխատասենյակ: Ի զարմանս իրեն՝ գրասեղանի մոտ նստածը ոչ թե Փերսիվալն էր, այլ տեսուչ Նիլը: Վերջինս բարձրացրեց հայացքը թղթերի մեծ կապոցից, որոնք տեսակավորում էր, և գլխով արեց:

- Բարի առավոտ, միսթըր Ֆորթեսքյու, ենթադրում եմ՝ եկել եք Ձեր պարտականությունները ստանձնելու:

- Նշանակում է՝ Դուք իմացել եք, որ ես որոշել եմ ընկերություն վերադառնալ:

- Ձեր եղբայրն ասաց ինձ:

- Մի՞թե: Խանդավաճ էր:

Տեսուչ Նիլը փորձեց թաքցնել ժպիտը:

- Խանդավառություն չնկատեցի,- լրջորեն ասաց նա:

- Խեղճ Փերսի,- մեկնաբանեց Լանսը:

Տեսուչ Նիլը հետաքրքրասիրությամբ նայեց նրան:

- Դուք իսկապես մտադիր եք Լոնդոնի ֆինանսիստներից դառնալ:

- Դուք դա հավանական չե՞ք համարում, տեսուչ Նիլ:

- Դա Ձեր բնույթին հարիր չի թվում, միսթըր Ֆորթեսքյու:

- Ինչո՞ւ: Ես իմ հոր որդին եմ:

- Ինչպես նաև Ձեր մոր:

Լանսը թափ տվեց գլուխը:

- Այդ կողմից ոչինչ չեք գտնի, տեսուչ: Մայրս վիկտորիանական ռոմանտիզմի հետևորդներից էր: Նրա սիրելի գիրքը «Արքայի հովվերգերն» էր, ինչպես, անկասկած, կա-

րող էիք եզրակացնել մեր անուններից: Նա հաշմանդամ էր և, իմ պատկերացմամբ, միշտ կտրված էր իրականութ-  
յունից: Ես ամենևին այդպիսին չեմ: Չգացմունքային չեմ,  
ռոմանտիզմի չափազանց թույլ զգացում ունեմ և ընդհա-  
նուր առմամբ իրատես եմ:

- Միշտ չէ, որ մարդիկ այնպիսին են, ինչպիսին իրենք  
են իրենց մասին մտածում,- ընդգծեց տեսուչ Նիլը:

- Այո՛, թերևս ճիշտ եք,- ասաց Լանսը:

Նա նստեց աթոռներից մեկին և իրեն բնորոշ ձևով մեկ-  
նեց երկար ոտքերը: Լանսն ինքն իրեն ժպտում էր: Ապա  
անսպասելիորեն ասաց.

- Դուք ավելի խորաթափանց եք, քան եղբայրս, տեսուչ:

- Ինչ առումով, միսթր Ֆորթեսբյու:

- Ես տեղը տեղին վախեցրել եմ Փերսիին: Նա կարծում  
է, որ ես ամբողջովին պատրաստ եմ քաղաքի գործարար  
կյանքին: Մտածում է՝ թաթս դնելու եմ իր կարկանդակի վրա:  
Նրան թվում է՝ սկսելու եմ մսխել ընկերության փողը և փոր-  
ծելու եմ ռիսկային նախագծերի մեջ ներքաշել իրեն: Թեկուզ  
հաճույքի համար արժեր անել դա: Թեև միայն դա բավական  
չէր լինի: Ես իսկապես տանել չեմ կարողանում գրասենյակա-  
յին կյանքը, տեսուչ: Ինձ դուր է գալիս բաց երկինքն ու որոշ  
առումով արկածների հնարավորությունը: Ես շնչահեղձ կլի-  
նեի այսպիսի վայրում:- Նա շտապեց հավելել.- Սա մեր մեջ  
եմ ասում, հաշվի առեք դա: Ինձ չմատնեք Փերսիին, լսվ:

- Հազիվ թե այդ թեման արծարծվի, միսթր Ֆորթեսբյու:

- Ես պետք է մի քիչ խաղ խաղամ Փերսիի գլխին,-  
ասաց նա:- Ուզում եմ ստիպել, որ տանջվի: Պետք է հա-  
շիվներս մաքրեմ նրա հետ:

- Ա՛յ քեզ հետաքրքիր արտահայտություն, միսթր Ֆոր-  
թեսբյու,- ասաց Նիլը:- Ձեր հաշիվները մաքրեք. ինչի՞ համար:

Լանսը թոթվեց ուսերը:

- Ա՛հ, հին պատմություն է: Չարժե դրան վերադառնալ:

- Որքան հասկանում եմ, անցյալում չեկի հետ կապված ինչ-որ խնդիր է եղել: Դուք դա էիք ակնարկում:

- Որքան բան գիտեք, տեսուհի:

- Որքան հասկանում եմ, դատական հետապնդում չի եղել,- ասաց Նիլը:- Ձեր հայրը դա չէր անի:

- Ո՛չ: Նա պարզապես դուրս շարտեց ինձ և վերջ:

Տեսուհի Նիլը մտազբաղ նայում էր նրան, բայց Լանս Ֆորթեսքյուի մասին չէր, որ նա մտածում էր, այլ Փերսիվալի: Ազնիվ, աշխատասեր, տնտեսող Փերսիվալի: Այնպիսի զգացողություն ուներ, որ այս գործի ամեն քայլափոխին ինքը միշտ բախվում էր Փերսիվալ Ֆորթեսքյուի առեղծվածին՝ մարդու, որի արտաքին կողմը հայտնի էր բոլորին, բայց որի էությունը շատ ավելի դժվար էր ճանաչել: Նրան նայողը կասեր՝ ինչ-որ առումով դժգույն ու աննշան կերպար է, մարդ, որ հիմնականում գտնվել է իր հոր կոշիկների տակ: Ըստ էության՝ խստաբարո Փերսի, ինչպես կոմիսարի տեղակալն էր ժամանակին ասել: Այժմ Նիլը փորձում էր Լանսի միջոցով ավելի խորությամբ ճանաչել Փերսիվալի անհատականությունը: Նա զգուշավորությամբ մոթմոթաց.

- Այնպիսի տպավորություն է, որ Ձեր եղբայրը միշտ չափազանց... դե՛, ինչպե՛ս ասեմ... Ձեր հոր կոշիկների տակ է եղել:

- Հետաքրքիր է:- Ակնհայտ էր, որ մտորում էր այս դիտարկման շուրջ:- Հետաքրքիր է: Այո՛, հնարավոր է, որ այդպիսի տպավորություն է ստեղծվել: Բայց վստահ չեմ, որ իրականում այդպես էր: Գիտե՞ք, երբ հետ եմ նայում կյանքիս, զարմանքով հասկանում եմ, թե ինչպես էր Փերսիվալը միշտ ուզածին հասնում, մինչդեռ թվում էր՝ ոչինչ

չի անում դրա համար, եթե հասկանում եք, թե ինչ նկատի ունենմ:

Այո՛, մտածեց տեսուչ Նիլը, անկասկած, զարմանալի էր: Նա կարգի բերեց իր առջև դրված թղթերը, մի նամակ դուրս քաշեց և գրասեղանի վրայով Լանսի կողմը հրեց:

- Սա այն նամակն է, որ օգոստոսին էիք գրել, այնպես չէ՛, միսթթ Ֆորթեսքյու:

Լանսը վերցրեց այն, թռուցիկ հայացք գցեց վրան ու վերադարձրեց:

- Այո՛,- հաստատեց նա,- ես գրել եմ այն ամռանը՝ Քե-նիա վերադառնալուց հետո: Հայրիկը պահե՛լ էր այն, այո՛: Որտե՛ղ էր այն, այստե՛ղ, գրասենյակում:

- Ո՛չ, միսթթ Ֆորթեսքյու: Այն Ձեր հոր թղթերի մեջ էր Կենու տնակում:

Տեսուչը մտքում անցավ իր առջև դրված նամակի վրայով: Այն երկար չէր:

«Սիրելի՛ հայրիկ,

Ես ամեն ինչ քննարկեցի Պատի հետ և համաձայն եմ առաջարկիդ: Ինձնից որոշակի ժամանակ կպահանջվի այստեղ գործերս կարգի բերելու համար՝ մոտավորապես մինչև հոկտեմբերի վերջ կամ նոյեմբերի սկիզբ: Ժամանակը մոտենա, տեղյակ կպահեմ քեզ: Հուսով եմ՝ մենք ավելի լավ կհամագործակցենք միմյանց հետ, քան սովոր ենք: Համենայն դեպս, ես կփորձեմ ուժերիս ներածի չափով: Ավելացնելու բան չունենմ: Հոգ տար քեզ:

Քո Լանս»:

- Ո՛ր հասցեով էիք ուղարկել նամակը, միսթթ Ֆորթեսքյու: Գրասենյակի՞, թե՛ Կենու տնակի:

Լանսը խոժոռովեց՝ փորձելով հիշել:

- Բարդ է ասել: Չեմ կարողանում հիշել: Հասկանում եմ, գրեթե երեք ամիս է անցել: Կարծում եմ՝ գրասենյակի: Այո, գրեթե վստահաբար: Այստեղ՝ գրասենյակ:- Նա մի պահ լռեց՝ նախքան անթաքույց հետաքրքրասիրությամբ հարցնելը.- Ինչո՞ւ:

- Հետաքրքիր էր,- պատասխանեց տեսուչ Նիլը:- Ձեր հայրը չէր դրել այն այստեղ՝ իր անձնական թղթերի հետ: Կենու տնակ էր տարել, որտեղ նրա գրասեղանից էի գտել այն: Կցանկանալի իմանալ՝ ինչու էր այդպես արել:

Լանսը ծիծաղեց:

- Ենթադրում եմ՝ Փերսիի աչքից հեռու պահելու համար:

- Այո,- համաձայնեց տեսուչ Նիլը,- հնարավոր է: Նշանակում է՝ Ձեր եղբայրը հասանելիություն ուներ Ձեր հոր՝ այստեղ պահվող անձնական թղթերին:

- Դե՛հ,- Լանսը վարանեց ու խոժոռվեց,- ոչ այնքան: Նկատի ունեմ՝ ենթադրաբար կարող էր աչքի անցկացնել դրանք, երբ կամենար, բայց նա...

Տեսուչ Նիլն ավարտեց նախադասությունը նրա փոխարեն:

- Չպիտի նման բան աներ:

Լանսը լայն ժպտաց:

- Ճիշտ այդպես: Եթե անկեղծ խոսենք, դա լրտեսություն կլիներ: Թեև Փերսին, կարծում եմ, միշտ էլ լրտեսել է:

Տեսուչ Նիլը գլխով արեց: Նա նույնպես հնարավոր էր համարում, որ Փերսիվալը լրտեսեր: Դա համապատասխանում էր այն կերպարին, որ տեսուչը սկսում էր բացահայտել:

- Անունը տվեցինք, հայտնվեց,- մոթմոթաց Լանսը, երբ այդ պահին դուռը բացվեց, և Փերսիվալը ներս մտավ: Նա պատրաստվում էր խոսելու տեսուչի հետ, բայց տեսնելով Լանսին՝ լռեց ու հոնքերը կիտեց:

- Ողջուն,- ասաց նա:- Դու այստեղ ես: Չէիր ասել, որ այսօր գալու ես:

- Աշխատելու տենչը պատեց ինձ,- ասաց Լանսը,- այնպես որ, ահա և ես՝ պատրաստ օգտակար լինելու: Ինչ կկամենաս, որ անեմ:

Փերսիվալը դժգոհությամբ պատասխանեց.

- Առայժմ ոչինչ: Բացարձակապես ոչինչ: Պետք է որոշակի համաձայնության հասնենք, թե բիզնեսի որ ուղղությանն ես դու հետևելու: Պետք է աշխատասենյակ հատկացնենք քեզ:

Լանսը քմծիծաղով հարցրեց.

- Ի դեպ, ինչո՞ւ ես ազատվել շքեղ Գրովնորից, ծերո՞ւկ, և նրան փոխարինել ձիու դեմքով կնոջով:

- Ինչ ես խոսում, Լանս,- վճռական հակադարձեց Փերսիվալը:

- Անկասկած, փոփոխությունը դեպի վատն է,- ասաց Լանսը:- Չէի համբերում, թե երբ եմ տեսնելու շքեղ միսս Գրովնորին: Ինչո՞ւ ես աշխատանքից հեռացրել նրան: Մտածում էիր՝ նրան չափից շատ բան է հայտնի:

- Իհարկե ոչ: Այդ ի՞նչ միտք է:- Փերսին խոսում էր զայրույթով. նրա գունատ դեմքը պատել էր կարմիրը: Նա թեքվեց դեպի տեսուչը:- Ուշադրություն մի՛ դարձրեք եղբորս,- ասաց նա սառը:- Նա բավական տարօրինակ հումորի զգացում ունի:- Ապա հավելեց.- Ես երբեք բարձր կարծիք չեմ ունեցել միսս Գրովնորի մտավոր կարողությունների վերաբերյալ: Միսիս Հարդքասլը գերազանց հանձնարարականներ ունի և չափազանց հմուտ է, ինչպես նաև համեստ պահանջներով:

- Համեստ պահանջներով,- քթի տակ կրկնեց Լանսը՝ հայացքը հառելով առաստաղին:- Գիտե՞ս, Փերսի, ես այնքան էլ հավանություն չեմ տալիս աշխատակիցների հա-

մար խնայողություն անելուն: Ի դեպ, հաշվի առնելով այն հավատարմությունը, որով աշխատակազմը կանգնեց մեր կողքին նախորդ ողբերգական շաբաթների ընթացքում, չէն կարծում, որ պետք է բարձրացնել նրանց աշխատավարձը:

- Վստահաբար ոչ,- վրա տվեց Փերսիվալ Ֆորթեսքյուն:- Դա միանգամայն անհարկի է ու ավելորդ:

Տեսուչ Նիլի ուշադրությունից չվրիպեց Լանսի աչքերի դիվային փայլը: Փերսիվալը, սակայն, չափազանց սրտնեղած էր դա նկատելու համար:

- Դու միշտ բացառիկ շռայլ գաղափարներ ունես,- կմկմաց նա:- Այն վիճակում, որում հայտնվել է ընկերությունը, տնտեսումը մեր միակ հույսն է:

Տեսուչ Նիլը հազաց՝ ասես ներողություն հայցելով:

- Դա հենց այն հարցերից մեկն է, որի շուրջ կցանկանայի խոսել Ձեզ հետ, միսթր Ֆորթեսքյու,- դիմեց նա Փերսիվալին:

- Այո՛, տեսուչ,- Փերսիվալն ուշադրությունը տեղափոխեց Նիլի վրա:

- Ուզում եմ ենթադրություններիցս մի քանիսը քննարկել Ձեզ հետ, միսթր Ֆորթեսքյու: Որքան հասկանում եմ, նախորդ վեց ամսում կամ ավելի երկար ժամանակ՝ թերևս մեկ տարում, Ձեր հոր ընդհանուր վարքագիծը շարունակ աճող անհանգստության աղբյուր է եղել Ձեզ համար:

- Նա առողջ չէր,- անբեկանելիորեն ասաց Փերսիվալը:- Անկասկած, նրա առողջական վիճակն ամեննին լավ չէր:

- Դուք փորձել եք համոզել նրան բժշկի այցելել, բայց ապարդյուն: Նա կտրականապես հրաժարվեց:

- Ճիշտ այդպես:

- Կարո՞ղ եմ հարցնել՝ արդյոք Դուք կասկածել եք, որ Ձեր հայրը տառապում է մի հիվանդությամբ, որը սովորա-

բար անվանում են ուշ սիֆիլիտիկ պսիխոզ. նման վիճակի ախտանշաններն են մեծության մոլուցքը և դյուրագրգիռությունը, որոնք վաղ թե ուշ հանգեցնում են անհույս խելագարության:

Փերսիվալը զարմացած տեսք ուներ:

- Ինչպիսի ուշագրավ խորաթափանցություն, տեսուհի: Ես հենց դրանից էի վախենում: Ահա թե ինչու էի այդպես ուզում, որ հայրս բուժում անցնի:

Նիլը շարունակեց.

- Մինչ Դուք փորձում էիք համոզել Ձեր հորն անել դա, նա կարող էր հսկայական կորուստ պատճառել բիզնեսին:

- Անկասկած,- համաձայնեց Փերսիվալը:

- Ինչպիսի անբարենպաստ իրավիճակ,- նկատեց Նիլը:

- Ավելի քան սարսափելի: Ոչ ոք չգիտի, թե ինչ մտատանջությունների միջով եմ անցել:

Տեսուհի Նիլը հանգիստ ասաց.

- Բիզնեսի տեսանկյունից Ձեր հոր մահը չափազանց բարեհաջող հանգամանք էր:

- Մի՞թե կարող եք մտածել, որ հորս մահվանն այդ լույսի ներքո եմ նայում,- խստորեն ասաց Փերսիվալը:

- Հարցն այն չէ, թե Դուք ինչպես եք վերաբերվում դրան, մի՞թե Ֆորթեսքյու: Ես զուտ փաստի մասին եմ խոսում: Ձեր հայրը մահացավ ֆինանսական աղետի մեջ հայտնվելու նախաշեմին:

Փերսիվալն անհամբերությամբ վրա բերեց.

- Այո, այո: Փաստն այն է, որ Դուք ճիշտ եք:

- Այս դեպքից ողջ ընտանիքը շահեց. չէ՞ որ բոլորն այս բիզնեսից են կախված:

- Այո, բայց, իրոք, տեսուհի, չեմ հասկանում, թե ուր եք տանում... - Փերսիվալը խոսքը կիսատ թողեց:

- Ոչ մի տեղ էլ չեմ տանում, մի՞թե Ֆորթեսքյու,- ասաց



Նիլը:- Պարզապես սիրում եմ հստակեցնել փաստերը: Եվ մի բան կա: Որքան հասկանում եմ Ձեր ասածից, Դուք որևէ կապ չեք ունեցել Ձեր եղբոր հետ այն պահից ի վեր, ինչ նա տարիներ առաջ հեռացել է Անգլիայից:

- Միանգամայն ճիշտ է,- հաստատեց Փերսիվալը:

- Այո, բայց միթե միանգամայն, միսթեր Ֆորթեսբյու: Նկատի ունեմ՝ գարնանը, երբ այդպես անհանգստանում էիք Ձեր հոր առողջության համար, փաստացի գրել եք Աֆրիկայում գտնվող Ձեր եղբորը, հայտնել նրան Ձեր մտահոգությունը՝ կապված Ձեր հոր վարքագծի հետ: Կարծես թե ցանկացել եք, որ Ձեր եղբայրը միավորվի Ձեզ հետ՝ ստիպելու Ձեր հորը բուժզննում անցնել և անհրաժեշտության դեպքում հոգեբուժարան տեղափոխվել:

- Ես... ես... իսկապես չեմ հասկանում...- Փերսիվալը խորապես ցնցված էր:

- Դա ճիշտ է, այո, միսթեր Ֆորթեսբյու:

- Դե՛, ես մտածում էի, որ այդպես միայն ճիշտ կլինի: Ի վերջո, Լանսելոթը կրտսեր գործընկեր է:

Տեսուչ Նիլի հայացքը տեղափոխվեց Լանսի վրա: Լանսը հեզնական ժպտում էր:

- Դուք ստացել եք այդ նամակը,- հարցրեց տեսուչ Նիլը:

Լանս Ֆորթեսբյուն գլխով արեց:

- Ինչ եք պատասխանել դրան:

Լանսի հեզնական ժպիտն ավելի լայնացավ:

- Ես գրեցի Փերսիին, որ գնա գրողի ծոցը և հանգիստ թողնի հայրիկին: Գրեցի, որ հայրիկը, հավանաբար, հիանալի գիտի, թե ինչ է անում:

Տեսուչ Նիլի հայացքը վերադարձավ Փերսիվալին:

- Այսպիսին էր Ձեր եղբոր պատասխանը:

- Ես... ես... դե՛, մոտավորապես: Թեև շատ ավելի վիրավորական ձևակերպումներով:

- Մտածեցի՝ գրաքննված տարբերակը նախընտրելի կլիներ տեսուչի համար,- ասաց Լանսն ու շարունակեց.- անկեղծ ասած, տեսուչ Նիլ, դա էր պատճառներից մեկը, որ, երբ ստացա հորս նամակը, տուն եկա՝ անձամբ վերջ դնելու կասկածներիս: Ճիշտը որ ասեմ, հորս հետ ունեցած կարճ գրույցում նրա պահվածքում որևէ սխալ բան չնկատեցի: Փոքր-ինչ դյուրագրգիռ էր, այդքան բան: Ինձ թվաց՝ նա լիովին ունակ էր վարելու սեփական գործերը: Այնուամենայնիվ, Աֆրիկա վերադառնալով և իրավիճակը Պատի հետ քննարկելով՝ ես որոշեցի, որ տուն կվերադառնամ ու... ինչպես ասեմ... կհետևեմ, որ խաղն արդար լինի:

Խոսելիս նա հայացք գցեց Փերսիվալի վրա:

- Ես առարկում եմ,- ասաց Փերսիվալ Ֆորթեսքյուն:- Կտրականապես համաձայն չեմ այն ամենին, ինչ ակնարկում ես: Ես մտադիր չէի հորս հեռացնել գործերից, ինձ նրա առողջությունն էր մտահոգում: Խոստովանում եմ, որ ինձ մտահոգում էր նաև...- Նա դադար սովեց:

Լանսը շտապեց լցնել դադարը:

- Քեզ նաև գրպանդ էր մտահոգում, այնպես չէ: Փերսիի փոքրիկ գրպանը:- Նա ոտքի ելավ, և հանկարծ նրա խոսելու ձևը փոխվեց:- Լավ, Փերսի, բավական է: Ես մտադիր էի մի փոքր խաղ խաղալ գլխիդ՝ ձևացնելով, թե աշխատում եմ այստեղ: Չէի պատրաստվում թույլ տալու, որ ամեն ինչ սրտիդ ուզածի պես ընթանար, բայց թող անիճյալ լինեմ, եթե շարունակեմ սա: Անկեղծ ասած՝ սիրտս խառնում է քեզ հետ նույն սենյակում գտնվելուց: Ողջ կյանքում կեղտոտ, ստոր անպիտան ես եղել: Քիթդ խոթել ես ուրիշների գործերի մեջ, լրտեսել, խաբել ու անախորժություններ ստեղծել: Մի բան էլ ասեմ քեզ: Ես ապացույց չունեմ, բայց միշտ համոզված եմ եղել, որ դու ես կեղծել չեկր, որի պատճառով այն ամբողջ աղմուկը բարձրացավ, և ինձ

դուրս շարտեցին այստեղից: Առաջին հերթին՝ դա սարսափելիորեն անհաջող կեղծիք էր, որ պարզապես աչք էր ծակում: Գործարարի հեղինակությունս չափից դուրս վատն էր, որ թույլ տար ինձ ինչպես հարկն է ընդդիմանալ, բայց ես միշտ հարց էի տալիս ինքս ինձ՝ մի՞թե հայրիկը չէր հասկացել, որ եթե ես կեղծեի իր ստորագրությունը, ապա դա անհամեմատ լավ կանեի:

Լանսը սահուն կերպով շարունակեց խոսքը՝ ձայնը բարձրացնելով:

- Դե ինչ, Փենսի, այլևս չեմ շարունակի այս հիմար խաղը: Կուշտ եմ այս երկրից էլ, քաղաքի գործարար կենտրոնից էլ: Զզվել եմ քեզ պես ճղճիմ մարդկանցից՝ իրենց նեղ զղերով տաբատներով, սև վերարկուներով, շինծու ձայներով և ողորմելի, անարժեք ֆինանսական գործարքներով: Մենք կբաժանենք մեր ունեցածը, ինչպես դու էիր առաջարկում, իսկ ես Պատի հետ ուրիշ երկիր կգնամ՝ մի վայր, որտեղ շնչելու ու շարժվելու տեղ կլինի: Արժեթղթերը կարող ես ինքդ բաշխել: Քեզ պահիր առավել հուսալիներն ու կայունները, որ երկուտոկոսանոց շահույթ կբերեն քեզ կամ երեքտոկոսանոց, երեքուկես: Տո՛ւր ինձ հայրիկի վերջին ռիսկային գնումները, ինչպես դու ես անվանում դրանք: Դրանց մեծ մասը, հավանաբար, անհաջող ձեռքբերում է: Բայց գրազ կգամ, որ մեկը կամ երկուսը վերջում ավելի մեծ շահույթ կբերեն ինձ, քան քո բոլոր առաջնակարգ արժեթղթերի երաշխավորված երեք տոկոսները: Հայրիկը խորամանկ ծեր սատանա էր: Նա ռիսկի էր դիմում, բազմիցս: Եվ որոշ ռիսկեր արդարացվում էին՝ բերելով հինգ, վեց և նույնիսկ յոթհարյուրտոկոսանոց շահույթ: Ես վստահում եմ նրա դատողությանն ու բախտին: Իսկ ինչ վերաբերում է քեզ, այ՛ ճիճու...

Լանսն առաջ շարժվեց եղբոր ուղղությամբ, որ արագո-

րեն նահանջեց դեպի գրասեղանի եզրը՝ տեսուչ Նիլի կողմը:

- Լավ,- ասաց Լանսը:- Քեզ չեմ դիպչի: Դու ուզում էիր, որ ես այստեղ չլինեմ, գլուխդ ազատես ինձնից: Պետք է որ գոհ լինես:- Լայն քայլերով դեպի դուռն ընթանալիս նա ավելացրեց.- Եթե ուզում ես, «Կեռնեխներ» հին հանքի կոնցեսիան նույնպես կարող ես ինձ փոխանցել: Եթե մարդասպան ՄաքՔենզիներն են մեր հետքին ընկել, ես նրանց ինձ հետ Աֆրիկա կտանեմ:- Արդեն շեմին շրջվելով նա հավելեց.- Վրեժը... այսքան տարի անց... քիչ հավանական է թվում: Սակայն տեսուչ Նիլը կարծես թե լրջորեն դիտարկում է դա, այնպես չէ, տեսուչ:

- Անհեթեթություն,- ասաց Փերսիվալը:- Չի կարող պատահել:

- Հարցրո՛ւ նրան,- ասաց Լանսը:- Հարցրո՛ւ, թե ինչի համար են կեռնեխների ու հայրիկի գրպանի տարեկանի մասին այս բոլոր հարցերը:

Մեղմորեն վերին շրթունքը շոյելով՝ տեսուչ Նիլը հարցրեց.

- Հիշում եք ամռանը պատահած կեռնեխների դեպքը, միսթր Ֆորթեսքյու: Դրանք որոշակի հիմք են տալիս հարցաքննության համար:

- Անհեթեթություն,- կրկնեց Փերսիվալը:- Քանի տարի է՝ այդ ՄաքՔենզիների մասին ոչ ոք չի լսել:

- Եվ այնուամենայնիվ,- ասաց Լանսը,- ես անգամ կխիզախեի երդվել, որ մեր մեջ ՄաքՔենզի կա: Ենթադրում եմ տեսուչը նույնպես այդպես է մտածում:

\* \* \*

Տեսուչ Նիլը հասավ Լանսելոթ Ֆորթեսքյուի հետևից, երբ վերջինս դուրս էր գալիս փողոց:

Լանսը փոքր-ինչ հիմարավուն ժպիտ պարզևեց նրան:

- Ես չէի ուզում նման բան անել,- ասաց նա:- Բայց հանկարծ կորցրի տիրապետումս: Ա՛հ, ինչ արած, վաղ թե ուշ բանը դրան էր հասնելու: Պատի հետ հանդիպում ունեմ «Սավոյում». նույն ուղղությամբ եք գալիս, տեսո՛ւք:

- Ո՛չ, Բեյդոն Հիթ եմ վերադառնում: Միայն մի բան կցանկանայի հարցնել Ձեզ, մի՞սթր Ֆորթեսբյու:

- Այո՛:

- Երբ անձնական աշխատասենյակ մտնելով՝ ինձ տեսաք, Դուք զարմացաք: Ինչո՞ւ:

- Երևի չէի սպասում, որ Ձեզ այնտեղ կտեսնեմ: Ինձ թվում էր՝ Փերսիվալին եմ գտնելու այնտեղ:

- Ձեզ չէի՞ն ասել, որ նա դուրս է եկել:

Լանսը հետաքրքրասիրությամբ նայեց նրան:

- Ո՛չ, ինձ ասել էին, որ նա իր աշխատասենյակում է:

- Հասկանալի է... ոչ ոք տեղյակ չէր, որ նա դուրս էր եկել: Անձնական աշխատասենյակում երկրորդ դուռ չկա, բայց փոքրիկ ընդունարանում կա մի դուռ, որն ուղիղ միջանցք է տանում: Ենթադրում եմ՝ Ձեր եղբայրն այդպես է դուրս եկել, բայց զարմացած եմ, որ միսիս Հարդքասլը չի ասել Ձեզ դրա մասին:

Լանսը ծիծաղեց:

- Հավանաբար գնացել էր իր թեյի բաժակը վերցնելու:

- Այո՛... այո՛, լիովին հնարավոր է:

Լանսը նայեց նրան:

- Ի՞նչ է սա նշանակում, տեսո՛ւք:

- Ընդամենը մի քանի մանրուքի շուրջ եմ գլուխ կոտրում, այդքան բան, մի՞սթր Ֆորթեսբյու...

## ԳԼՈՒԽ 24

Գնացքում՝ Բեյդոն Հիթի ճանապարհին, տեսուչ Նիլին զարմանալիորեն չէր հաջողվում լուծել «Թայմսի» խաչբառը: Տարբեր հավանականությունները շեղում էին նրա միտքը: Նույնկերպ լուրերն էր կարդացել՝ կիսով չափ ընկալելով: Գրված էր Ճապոնիայում երկրաշարժի, Տանգանիկայում ուրանի հանքավայրի հայտնաբերման, Սաուդ-հեմփթոնի մոտակայքում ափ զգված առևտրային նավատորմի նավաստու դիակի և նավաշինարանի բանվորների վերահաս գործադուլի մասին: Կարդացել էր նաև կողպուտների վերջին զոհերի և նոր դեղամիջոցի մասին, որ հրաշքներ էր գործում տուբերկուլյոզի առավել բարդ դեպքերում:

Այս բոլոր դրվագները տարօրինակ նախշանկար էին ստեղծել նրա գիտակցության խորքերում: Քիչ անց նա վերադարձավ խաչբառին և իրար հետևից արագորեն երեք պատասխան գրեց:

Երբ տեսուչը հասավ Կենու տնակ, արդեն որոշակի եզրակացության էր եկել: Նա հարցրեց սերժանտ Հեյին.

- Որտեղ է այն ծեր լեդին: Դեռ այստեղ է:

- Միսս Մարփլը: Օ՛, այո՛, նա դեռ այստեղ է: Հիանալի ընկերներ են դարձել վերնահարկի տատիկի հետ:

- Հասկանալի է:- Մի պահ դադար տալուց հետո Նիլն ասաց.- Հիմա որտեղ է նա: Կցանկանայի տեսնել նրան:

Միսս Մարփլը հայտնվեց մի քանի րոպե անց՝ բավական կարմրած ու արագ-արագ շնչելով:

- Ուզում էիք տեսնել ինձ, տեսուչ Նիլ: Հուսով եմ՝ չեմ սպասեցրել Ձեզ: Սերժանտ Հեյը միանգամից չէր գտել ինձ: Ես խոհանոցում էի, զրուցում էի միսիս Քրամփի հետ: Շնորհակալություն էի հայտնում նրան խմորեղենի համար

և ասում, թե որքան հմուտ ձեռք ունի, ու որքան համեղ էր նախորդ երեկոյան նրա պատրաստած սուֆլեն: Գիտե՞ք, միշտ կարծել եմ, որ ավելի լավ է աստիճանաբար մոտենալ նյութին: Ինչ էլ որ լինի, ենթադրում եմ՝ Ձեզ համար դա այնքան էլ հեշտ չէ: Դուք, ընդհանուր առմամբ, ստիպված եք անմիջապես անցնել Ձեզ հետաքրքրող հարցերը տալուն: Սակայն, անկասկած, ինձ պես ծեր կնոջից, որ, ինչպես ասում են, ժամանակի պակաս չունի, ամեն տեսակ անիմաստ խոսակցությունն էլ սպասելի է: Եվ, ինչպես ասում են, խոհարարի սիրտ տանող ճանապարհն անցնում է նրա խմորեղենով:

- Իրականում Դուք ուզում էիք Գլեդիս Մարտինի մասին զրուցել նրա հետ,- հարցրեց տեսուչ Նիլը:

Միսս Մարփլը գլխով արեց:

- Այո՛: Գլեդիսի: Հասկանո՞ւմ եք, միսիս Քրամփն իսկապես շատ բան կարող էր ասել ինձ աղջկա մասին: Ոչ սպանության առնչությամբ: Խոսքս դրա մասին չէ: Այլ վերջին շրջանում նրա տրամադրության և ավել-պակաս ասածների մասին: Ավել-պակաս ասելով՝ նկատի չունեմ տարօրինակ բաները: Պարզապես խոսակցությունների աննշան մանրամասները:

- Դա Ձեզ օգուտ տվե՞ց,- հարցրեց տեսուչ Նիլը:

- Այո՛,- պատասխանեց միսս Մարփլը,- անշուշտ, մեծապես օգտակար եղավ: Գիտե՞ք, ինձ իսկապես թվում է, որ ամեն ինչ ավելի ու ավելի պարզ է դառնում, համաձայն չե՞ք:

- Եվ այո, և՛ ոչ,- ասաց տեսուչ Նիլը:

Սերժանտ Հեյը, ինչպես նա նկատեց, դուրս էր եկել սենյակից: Նա ուրախ էր, քանի որ այն, ինչը պատրաստվում էր այժմ ասելու, առանց չափազանցության, օրենքից թեթևակիորեն դուրս էր լինելու:

- Լսե՛ք, մի՛սս Մարփի,- ասաց նա,- ուզում եմ լրջորեն խոսել Ձեզ հետ:

- Այո՛, տեսու՛յ Նիլ:

- Ինչ-որ առումով,- շարունակեց տեսույ Նիլը,- Դուք և ես տարբեր տեսանկյուններ ենք ներկայացնում: Խոսստովանում եմ, մի՛սս Մարփի, որ Յարդում որոշ բաներ եմ լսել Ձեր մասին:- Նա ժպտաց:- Կարծես թե Ձեզ բավական լավ են ճանաչում այնտեղ:

- Չգիտեմ, թե ինչպես է դա պատահում,- հուզմունքից դողաց միսս Մարփիը,- բայց ես այնքան հաճախ եմ ներքաշվում այնպիսի գործերի մեջ, որոնք իրականում ամենևին ինձ չեն վերաբերում: Նկատի ունեմ՝ հանցագործություններն ու արտակարգ դեպքերը:

- Դուք համբավ ունեք,- նկատեց տեսույ Նիլը:

- Դե, իհարկե, սըր Հենրի Քլիվերինգը,- ասաց միսս Մարփիը,- նա իմ հին ընկերն է:

- Ինչպես արդեն ասացի,- շարունակեց Նիլը,- Դուք և ես հակադիր տեսանկյուններ ենք ներկայացնում: Կարելի է նույնիսկ դրանք առողջ և խենթ դատողություն անվանել:

Միսս Մարփիը փոքր-ինչ թեքեց գլուխը:

- Հետաքրքիր է՝ իսկ ի՞նչ եք ուզում դրանով ասել, տեսու՛յ:

- Դե, մի՛սս Մարփի, գոյություն ունի իրերին նայելու ձև, որը հիմնվում է առողջ դատողության վրա: Այս սպանությունից շահում են որոշ մարդիկ: Ես կասեի՝ մասնավորապես մեկ անձ: Երկրորդ սպանությունից ևս շահում է նույն մարդը: Երրորդը կարելի է անվանել սպանություն ապահովության համար:

- Իսկ դրանցից ո՞ր մեկն եք երրորդն անվանում,- հարցրեց միսս Մարփիը:

Նրա պսպղուն, կանաչին տվող բաց կապույտ աչքերը



խորաթափանցորեն նայում էին տեսուչին: Վերջինս գլխով արեց:

- Այո՛, թերևս, ճիշտ եք: Գիտե՞ք, օրերս, երբ կոմիսարի տեղակալը խոսում էր ինձ հետ այս սպանությունների մասին, նրա ասածի մեջ ինչ-որ բան ինձ սխալ թվաց: Ես, իհարկե, մտածում էի մանկական բանաստեղծության մասին: Թագավորը՝ իր գրասենյակում, թագուհին՝ հյուրասենյակում, և աղախինը՝ լվացքը կախելիս:

- Ճիշտ այդպես,- ասաց միսս Մարփիլ:- Հաջորդականությունն այդպիսին է, մինչդեռ իրականում Գլեդիսին, հավանաբար, սպանել են միսիս Ֆորթեսքյուից առաջ, այնպես չէ՛:

- Կարծում եմ՝ այո՛,- ասաց Նիլը:- Գրեթե համոզված եմ դրանում: Նրա մարմինը հայտնաբերվել է միայն ուշ երեկոյան, և, բնականաբար, բարդ է ասել, թե որքան ժամանակ էր նա արդեն մեռած: Սակայն անձամբ մտածում եմ, որ նրան գրեթե վստահաբար սպանել են ժամը հինգի մոտակայքում, որովհետև այլապես...

- Այլապես նա, անշուշտ, երկրորդ սկուտեղը հյուրասենյակ կտաներ,- վրա բերեց միսս Մարփիլը:

- Հենց այդպես: Նա ներս էր տարել թեյի սկուտեղը, երկրորդ սկուտեղը բերել նախասրահ, և այդ ժամանակ ինչ-որ բան էր պատահել: Նա ինչ-որ բան էր տեսել կամ լսել: Հարցն այն է, թե ինչ: Գուցե միսիս Ֆորթեսքյուի սենյակից իջնող Դյուբուային: Կամ գուցե էլեյն Ֆորթեսքյուի սիրելին՝ Ջերալդ Ռայթն էր մտել կողմնային դռնով: Ով էլ որ եղած լինի, խորամանկությամբ պարտեզ է տարել նրան, և սկուտեղը մնացել է: Իսկ դա պատահելուց հետո հավանական չեմ համարում, որ նրա մահն ուշանար: Դրսում ցուրտ էր, իսկ նրա հագին միայն բարակ համազգեստն էր:

- Անշուշտ, Դուք միանգամայն ճիշտ եք,- համաձայնեց միսս Մարփիլը:- «Աղախինը պարտեզում հագուստեղենն էր կախում». ուզում եմ ասել՝ սա այդ դեպքը չէր: Երեկոյան այդ ժամին նա չէր գնա հագուստեղենը փռելու, ոչ էլ առանց վերարկուն վրան գցելու լվացքի պարանին կհասներ: Այդ ամենը քողարկում էր, ինչպես լվացքի ամրակը՝ բանաստեղծությանը համապատասխանեցնելու համար:

- Այդպես էլ կա,- ասաց տեսուչ Նիլը,- խենթություն է: Ահա թե որտեղ մեր հայացքները չեն հանդիպում: Ես չեմ կարողանում... պարզապես չեմ կարողանում հավատալ մանկական բանաստեղծության այս պատմությանը:

- Բայց այն համապատասխանում է, տեսուչ: Պետք է համաձայնեք, որ այդպես է:

- Համապատասխանում է,- խստորեն նկատեց Նիլը,- բայց, միևնույն է, հերթականությունը սխալ է: Նկատի ունեմ՝ բանաստեղծությունը հստակորեն հուշում է, որ աղախինի սպանությունն էր երրորդը: Իսկ մենք գիտենք, որ երրորդը թագուհուն են սպանել: Ադել Ֆորթեսբյուին սպանել են հինգն անց քսանհինգից վեցից հինգ պակասն ընկած ժամանակամիջոցում: Մինչև այդ Գլեդիսը պետք է որ մեռած լիներ:

- Եվ այդ ամենը սխալ է, այնպես չէ՞,- հարցրեց միսս Մարփիլը:- Հակասում է մանկական բանաստեղծությանը... իսկ դա չափազանց կարևոր է, այնպես չէ՞:

Տեսուչ Նիլը թոթվեց ուսերը:

- Հնարավոր է՝ մանրուքներից ենք կառչում: Մահերը համապատասխանում են բանաստեղծության պայմաններին, և ենթադրում եմ՝ դա էր ամենը, ինչ անհրաժեշտ էր: Սակայն մինչև այժմ ես խոսում էի այնպես, ասես Ձեր տեսանկյունն էի պաշտպանում: Իսկ հիմա կներկայացնեմ գործի իմ տեսանկյունը, միսս Մարփիլ: Մի կողմ եմ թողնում

կեռնելսներին, տարեկանն ու մնացյալը: Ես առաջնորդվում եմ տրամաբանական փաստերով, առողջ դատողությամբ և այն պատճառներով, որոնք դրդում են գիտակից մարդուն սպանություններ գործելու: Առաջին՝ Ռեքս Ֆորթեսքյուի մահը, և ում է այն ձեռնտու: Դե, շատերն են դրանից շահում, բայց ամենից առավել այն ձեռնտու է նրա որդուն՝ Փերսիվալին: Այդ առավուտ Փերսիվալը Կենու տնակում չէր: Նա չէր կարող թույն լցնել հոր սուրճի կամ նախաճաշին նրա կերած որևէ բանի մեջ: Կամ մենք էինք սկզբում այդպես կարծում:

- Ա՛հ:- Միսս Մարփի աչքերը փայլեցին:- Նշանակում է՝ մեթոդ է գործի դրվել, այո: Գիտե՞ք, շատ էի մտածում դրա շուրջ և որոշ մտքեր ունեի: Բայց, իհարկե, ոչ մի փաստ կամ ապացույց:

- Ձեզ տեղյակ պահելուց վնաս չի լինի,- ասաց տեսուչ Նիլը:- Տաքսինը լցրել էին մուրաբայի նոր բանկայի մեջ: Այդ բանկան դրել էին սեղանին, և նախաճաշին միսթր Ֆորթեսքյուն կերել էր դրա վերին շերտը: Ավելի ուշ մուրաբայի այդ բանկան շարտել էին թփերի մեջ և փոխարենը վրայից նույն քանակությամբ վերցրած մեկ այլ բանկա դրել մթերանոցում: Թփերի մեջ զգված բանկան գտնվել էր, և ես քիչ առաջ ստացա լաբորատոր հետազոտության արդյունքները: Դրանում ակնհայտորեն տաքսինի հետքեր կան:

- Ուրեմն այդպես,- մոթմոթաց միսս Մարփիլը:- Այդքան պարզ և հեշտ:

- Միացյալ ներդրումային հավատարմագրային ֆոնդը,- շարունակեց Նիլը,- վատ վիճակում էր: Եթե ընկերությունը հարյուր հազար ֆունտ վճարեր Ադել Ֆորթեսքյուին՝ համաձայն նրա ամուսնու կտակի, ընկերությունը կարծես թե կսնանկանար: Եթե միսիս Ֆորթեսքյուն ամուսնու մահից

հետո մեկ ամիս ապրեր, այդ գումարը ստիպված կլինեին վճարել նրան: Նա անտարբեր կլիներ ընկերության ու դրա դժվարությունների նկատմամբ: Սակայն ամուսնու մահից հետո նա մեկ ամիս չապրեց: Նա մահացավ, և շահեց, ըստ կտակի, Ռեքս Ֆորթեսքյուի ժառանգորդը՝ առանց նվիրագրերի ու պարտավորությունների: Այլ կերպ ասած՝ դարձյալ Փերսիվալ Ֆորթեսքյուն:

- Ամենուրեք Փերսիվալ Ֆորթեսքյուն է,- դառնությամբ շարունակեց տեսուչը:- Ու թեև նա կարող էր թույն խառնել մուրաբային, չէր կարող թունավորել իր խորթ մորը կամ խեղդամահ անել Գլեդիսին: Ըստ նրա քարտուղարուհու՝ երեկոյան հինգին նա իր քաղաքային գրասենյակում էր եղել և գրեթե յոթին էր տուն վերադարձել:

- Դա զգալիորեն բարդացնում է ամեն ինչ, այնպես չէ,- հարցրեց միսս Մարփլը:

- Անհնար է դարձնում,- մոայլորեն պատասխանեց տեսուչ Նիլը:- Այլ կերպ ասած՝ Փերսիվալը դուրս է մնում կասկածից:- Մի կողմ թողնելով իր զսպվածությունն ու զգուշավորությունը, գրեթե մոռանալով իր ունկնդրի մասին՝ նա խոսեց որոշակի տրտմությամբ.- Ուր գնում եմ, ուր թեքվում եմ, միշտ բախվում եմ միևնույն մարդուն: Փերսիվալ Ֆորթեսքյուին: Բայցևայնպես, դա չի կարող Փերսիվալ Ֆորթեսքյուն լինել:- Փոքր-ինչ հանդարտվելով՝ նա ասաց.- Ա՛հ, այլ տարբերակներ ևս կան, ուրիշ մարդիկ, որ հիանալի շարժառիթ ունեին:

- Դե, իհարկե, միսթր Դյուբուան,- կտրուկ ասաց միսս Մարփլը,- և այն երիտասարդը՝ միսթր Ռայթը: Այնքան համամիտ եմ Ձեզ հետ, տեսուչ: Այնտեղ, որտեղ շահի հարց կա, պետք է խիստ կասկածամիտ լինել: Ամեն գնով պետք է գերծ մնալ դյուրահավատությունից:

Անկախ իր կամքից՝ Նիլը ժպտաց:

- Միշտ վատագոյնը մտածել, այո՛,- հարցրեց նա:

Անհավանական էր թվում, որ այս համակրելի ու փխրուն տեսքով, հասակն առած լեդին նման համոզմունք ուներ:

- Օ՛, այո՛,- ջերմեռանդորեն համաձայնեց միսս Մարփիլը:- Ես միշտ վատագոյնին եմ հավատում: Որքան էլ տխուր է, սովորաբար դա արդարացվում է:

- Լավ,- ասաց Նիլը,- եկեք վատագոյնը մտածենք: Դյուբուան կարող էր անել դա, Ջերալդ Ռայթը՝ ևս (այն դեպքում, եթե գործեր էլեյն Ֆորթեսքյուի հետ գաղտնի համաձայնությամբ, և վերջինս թույնը լցնելու մուրաբայի մեջ), ենթադրում եմ՝ միսիս Փերսիվալը նույնպես կարող էր անել դա: Նա հանցանքի վայրում էր: Սակայն վերոնշյալ անձանցից ոչ մեկը չի կապվում խենթ տեսանկյան հետ: Նրանք չեն կապվում կեռնեխների և տարեկանով լի գրպանի հետ: Դա Ձեր վարկածն է, և չի բացառվում, որ այն ճիշտ է: Եթե այդպես է, ապա ի վերջո դա մատնացույց է անում մեկ մարդու, այո՛: Միսիս Մաքֆենզին արդեն քանի տարի է՝ հոգեբուժարանում է: Նա կապ չունի մուրաբայի բանկանների կամ էլ հյուրասենյակում մատուցվող երեկոյան թեյի մեջ ցիանիդ լցնելու հետ: Նրա որդին՝ Դոնալդը, զոհվել է Դյունկերկում: Մնում է դուստրը՝ Ռուբի Մաքֆենզին: Եվ եթե Ձեր վարկածը ճիշտ է, եթե սպանությունների այս ամբողջ շղթայի հիմքում «Կեռնեխներ» հին հանքի գործն է, ապա Ռուբի Մաքֆենզին պետք է այս տանը լինի, և միայն մի մարդ կա, որ կարող է լինել Ռուբի Մաքֆենզին:

- Գիտե՞ք, ինձ թվում է՝ Դուք չափազանց կտրուկ եք,- ասաց միսս Մարփիլը:

Տեսուչ Նիլն ուշադրություն չդարձրեց նրա ասածին:

- Միայն մեկ մարդ,- մոայլորեն կրկնեց նա:

Նա ոտքի ելավ և դուրս եկավ սենյակից:

Մերի Դավն իր հանգստի սենյակում էր: Դա մի փոքրիկ, պարզ կահավորանքով, բայց հարմարավետ սենյակ էր: Այսինքն՝ միսս Դավն էր այն հարմարավետ դարձրել: Երբ տեսուչ Նիլը թակեց դուռը, Մերի Դավը բարձրացրեց գլուխն առևտրի գրանցամատյանների կույտից և ասաց իր հստակ ձայնով.

- Ներս եկեք:

Տեսուչը մտավ:

- Նստե՛ք, տեսուչ:- Միսս Դավը մատնացույց արեց աթոռներից մեկը:- Կարո՞ղ եք մեկ րոպե սպասել: Ձկնավաճառի հաշիվների ընդհանուր գումարը կարծես ճիշտ չէ, պետք է ստուգեմ:

Տեսուչ Նիլը լուռ նստեց՝ հետևելով, թե նա ինչպես էր գումարում սյունակների թվերը: Ինչպիսի զարմանալի հանգստություն և ինքնատիրապետում ուներ այս աղջիկը՝ մտածեց նա: Ինչպես հաճախ էր լինում, նրան հետաքրքրում էր, թե ինչ անհատականություն էր թաքնված այդ ինքնավստահ պահվածքի հետևում: Նրա դիմագծերում փորձեց որևէ նմանություն գտնել այն կնոջ հետ, որի հետ զրուցել էր Փայնվուդ հոգեբուժարանում: Մաշկի գույնը նման էր, բայց դեմքին որևէ էական նմանություն չէր երևում: Քիչ անց Մերի Դավը բարձրացրեց գլուխը հաշիվների վրայից և հարցրեց.

- Այո՞, տեսուչ: Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել:

Տեսուչ Նիլը հանգիստ ասաց.

- Գիտե՞ք, միսս Դավ, այս գործը որոշակի, խիստ արտասովոր առանձնահատկություններ ունի:

- Իսկապե՞ս:

- Սկսեմ միսթր Ֆորթեսբյուի գրպանում տարեկանի հայտնաբերման տարօրինակ հանգամանքից:

- Դա չափազանց զարմանալի էր,- համաձայնեց միսս Դավը:- Գիտե՞ք, ինքս էլ չեմ կարողանում բացատրություն տալ դրան:

- Այնուհետև՝ կեռնեխների հետ կապված հետաքրքրաշարժ հանգամանքը: Այն չորս կեռնեխները, որ ամռանը դրել էին միսթեր Ֆորթեսքյուի գրասեղանին, ինչպես նաև այն դեպքը, երբ կարկանդակի՝ հորթի մտով և խոզապուխտով խճողակը փոխարինել էին կեռնեխներով: Որքան գիտեմ, երկու միջադեպի ժամանակ էլ Դուք այստեղ էիք, միսս Դավ:

- Այո՛, այստեղ էի: Այ հիմա հիշեցի: Տնցող բան էր: Այնքան անիմաստ, չարամիտ արարք էր թվում, հատկապես այդ ժամանակ:

- Հնարավոր է՝ այնքան էլ անիմաստ չէր: Միսս Դավ, Ձեզ ինչ է հայտնի «Կեռնեխներ» հանքի մասին:

- Չեմ կարծում, որ երբևէ լսել եմ այդ «Կեռնեխներ» հանքի մասին:

- Ձեր անունը, ինչպես Դուք եք ասել ինձ, Մերի Դավ է: Դա Ձեր իսկական անունն է, միսս Դավ:

Մերին բարձրացրեց հոնքերը: Տեսուչ Նիլը գրեթե համոզված էր, որ տազնապի արտահայտություն հայտնվեց նրա կապույտ աչքերում:

- Այս ինչ տարօրինակ հարց է, տեսուչ: Միթե ակնարկում եք, որ իմ անունը Մերի Դավ չէ:

- Հենց դա էլ ակնարկում եմ: Ես հնարավոր եմ համարում,- սիրալիորեն ասաց Նիլը,- որ Ձեր անունը Ռուբի ՄաքՔենզի է:

Մերին ապշահար նայում էր նրան: Մի պահ նրա դեմքը զրկվել էր որևէ արտահայտությունից՝ թե՛ բողոքի, թե՛ զարմանքի: Տեսուչ Նիլի կարծիքով դա ակնհայտորեն մտովի հաշվարկներ անելու հետևանք էր: Մի քանի վայրկյան անց Մերին խոսեց հանգիստ, միօրինակ ձայնով.

- Ի՞նչ եք ակնկալում, որ ասեմ:

- Խնդրում եմ՝ պատասխանեք: Ձեր անունը Ռուբի ՄաքՔենզի է:

- Ես ասել եմ Ձեզ, որ անունս Մերի Դավ է:

- Այո՛, բայց ապացույց ունե՞ք, մի՞սս Դավ:

- Ի՞նչն եք ուզում տեսնել: Իմ ծննդյան վկայականը:

- Դա կարող է ն օգնել, ն ոչ: Հնարավոր է՝ ոմն Մերի Դավի ծննդյան վկայականն է Ձեզ մոտ: Այդ Մերի Դավը կարող է Ձեր ընկերուհին լինել կամ մեկը, որ մահացել է:

- Տարբերակները շատ են, այո՛: Մերի Դավի ծայնի մեջ կրկին անհոգություն էր սողոսկել: Իսկապես դժվարին կացության մեջ եք հայտնվել, այնպես չէ՛, տեսո՞ւյ:

- Հնարավոր է, որ Ձեզ կարողանան ճանաչել Փայնվուդ հոգեբուժարանում,- ասաց Նիլը:

- Փայնվուդ հոգեբուժարան: Մերի Դավը բարձրացրեց հոնքերը: Ի՞նչ և որտեղ է այդ Փայնվուդ հոգեբուժարանը:

- Կարծում եմ՝ Դուք ավելի քան լավ գիտեք, մի՞սս Դավ:

- Վստահեցնում եմ Ձեզ, որ ես միանգամայն անտեղյակ եմ:

- Եվ կտրականապես հերքում եք, որ Դուք Ռուբի ՄաքՔենզին եք:

- Ես չեմ ուզում որևէ բան հերքել: Ինքներդ գիտեք, տեսո՞ւյ, որ Ձեր գործն է ապացուցել, որ ես այդ Ռուբի ՄաքՔենզին եմ, ով էլ նա լինի: Այժմ արդեն ակնհայտ զվարճություն էր նշմարվում նրա կապույտ աչքերում, զվարճություն և մարտահրավեր: Նայելով ուղիղ տեսուչի աչքերի մեջ՝ Մերի Դավն ասաց.- Այո՛, դա Ձեր գործն է, տեսո՞ւյ: Ապացուցե՛ք, որ ես Ռուբի ՄաքՔենզին եմ, եթե կարող եք:



## ԳԼՈՒԽ 25

- Այն ծեր բամբասկոտ կինը Ձեզ է փնտրում, տեսուչ,- դավադրական շշուկով հայտնեց սերժանտ Հեյը, երբ տեսուչ Նիլն իջավ աստիճաններով:- Կարծես թե լիքը պատմելու բան ունի Ձեզ:

- Սատանան տանի,- ասաց տեսուչ Նիլը:

- Այո՛, սր՛ր,- ասաց սերժանտ Հեյը՝ առանց դեմքի մկանսնգամ շարժելու:

Նա պատրաստվում էր հեռանալու, երբ տեսուչ Նիլը հետ կանչեց նրան:

- Աչքի՛ անցկացրեք միսս Դավի տրամադրած ստացագիրները, Հեյ, կապված նրա նախկին աշխատանքների և զբաղմունքների հետ: Ստուգեք դրանք... և այո՛, մեկ-երկու բան էլ կա, որ կցանկանայի իմանալ: Սկսե՛ք հարցումներ անել, լավ:

Նա արագորեն մի քանի տող գրեց թղթի վրա և փոխանցեց այն սերժանտ Հեյին, որ ասաց.

- Անմիջապես կգրադվեմ դրանով, սր՛ր:

Գրադարանի կողքով անցնելիս շշուկներ լսելով՝ տեսուչ Նիլը ներս նայեց: Փնտրել էր իրեն միսս Մարփիլը, թե ոչ, այժմ նա ամբողջությամբ ներգրավված էր միսիս Փերսիվալ Ֆորթեսքյուի հետ զրույցին՝ ջանասիրաբար շուղերը չխկացնելով: Խոսքը, որ հասավ տեսուչ Նիլի ականջին, նախադասության կեսից էր.

-... իրականում ես միշտ մտածել եմ, որ բուժքույր լինելու համար կոչում է պետք: Դա, անկասկած, ազնվագույն աշխատանք է:

Տեսուչ Նիլը լուռ հետ քաշվեց: Նրան թվաց՝ միսս Մարփիլը նկատել էր իրեն, թեև նա ուշադրություն չդարձրեց իր ներկայությանը:

Միսս Մարփիլը շարունակեց իր նուրբ, մեղմ ձայնով.

- Ժամանակին, երբ կոտրել էի դաստակս, մի այնքան հմայիչ բուժքույր էր խնամում ինձ: Ինձնից հետո նա գնում էր խնամելու միսիս Սփերոուի որդուն՝ ռազմածովային ուժերի անչափ համակրելի երիտասարդ սպային: Նրանց միջև իսկական սիրավեպ սկսվեց, նրանք նշանվեցին: Այնքան ռոմանտիկ էր թվում: Նրանք ամուսնացան և երջանիկ էին, երկու սիրունիկ երեխա ունեցան: - Միսս Մարփիլը զգացմունքայնորեն հառաչեց: - Գիտե՞ք, նա թոքաբորբ ուներ: Իսկ թոքաբորբի դեպքում այնքան բան է կախված խնամքից, այնպես չէ:

- Օ՛, այր,- համաձայնեց Ջենիֆեր Ֆորթեսքյուն,- խնամքը գրեթե ամեն ինչ է թոքաբորբի դեպքում, թեև, իհարկե, մեր օրերում սուլֆապիրիդինը հրաշքներ է գործում, և երկարուժիգ պայքարի կարիք չկա, ինչպես առաջ:

- Վստահ եմ, որ Դուք հոյակապ բուժքույր եք եղել, սիրելիս,- ասաց միսս Մարփիլը: - Ձեր սիրավեպը նույնպես դրանից է սկսվել, այր: Նկատի ունեմ՝ Դուք եկել էիք այստեղ՝ միսթր Փերսիվալ Ֆորթեսքյունին խնամելու, այնպես չէ:

- Այր,- հաստատեց Ջենիֆերը: - Այր, այր... հենց այդպես էլ եղել էր:

Նրա ձայնի մեջ ռգևորություն չկար, բայց միսս Մարփիլը կարծես չնկատեց դա:

- Հասկանալի է: Իհարկե, պետք չէ ականջ դնել սպասավորների բամբասանքներին, բայց, կարծում եմ, ինձ պես հասակն առած լեդիներին միշտ հետաքրքիր է լսել տան բնակիչների մասին: Դե, ինչ էի ասում: Ա՛հ, այր: Մինչև Ձեր գալը, այլ բուժքույր է եկել այստեղ, այնպես չէ, և նրան հեռացրել են կամ նման մի բան: Երևի անփութության պատճառով:

- Հազիվ թե պատճառն անփութությունը լիներ,- ասաց Ջենիֆերը:- Որքան գիտեմ, նրա հայրը կամ մեկ ուրիշն էր լրջորեն հիվանդ, ուստիև ես եկա նրան փոխարինելու:

- Պարզ է,- ասաց միսս Մարփիլը:- Եվ դուք սիրահարվեցիք, ու ամեն ինչ այդպես պատահեց: Այո՛, հիանալի է, իսկապես հրաշալի:

- Այնքան էլ վստահ չեմ դրանում,- ասաց Ջենիֆեր Ֆորթեսըյուն:- Հաճախ երանի եմ տալիս... - նրա ծայնը դողաց.- Հաճախ եմ երանի տալիս հիվանդասենյակ վերադառնալուն:

- Այո՛, այո՛, հասկանում եմ: Դուք անչափ սիրում էիք Ձեր մասնագիտությունը:

- Այն ժամանակ՝ ոչ այնքան, բայց հիմա, երբ հիշում եմ... կյանքն այնքան միապաղաղ է, հասկանում եք: Օրերն անցնում են՝ առանց անելիքի, իսկ Վալն այնպես կլանված է աշխատանքով:

Միսս Մարփիլը թափ տվեց գլուխը:

- Ջենթվենները ստիպված են շատ աշխատել մեր օրերում,- ասաց նա:- Ազատ ժամանակ գոյություն չունի՝ անկախ փողի քանակից:

- Այո՛, դրա պատճառով կինը երբեմն միայնակ ու ծանծրացած է զգում իրեն: Հաճախ եմ զղջում այստեղ գալու համար,- ասաց Ջենիֆերը:- Դեհ, ինչ արած, գուցե տեղն է ինձ: Չպիտի անեի դա:

- Ինչը չպիտի անեիք, սիրելիս:

- Երբեք չպիտի ամուսնանայի Վալի հետ: Ինչ արած...- նա անսպասելիորեն հոգոց արձակեց:- Եկեք այլևս չխոսենք սրա մասին:

Միսս Մարփիլը բարեհոժարությամբ սկսեց խոսել նոր շրջագգեստների մասին, որ հագնում էին Փարիզում:

- Մեզ չընդհատելն այնքան սիրալիր քայլ էր Ձեր կողմից,- ասաց միսս Մարփիլը, երբ աշխատասենյակի դուռը թակելուց հետո տեսուչ Նիլը ներս հրավիրեց նրան:- Գիտե՞ք, դեռ մեկ-երկու մանրուք կար, որ ուզում էի ճշտել:- Ապա կշտամբանքով հավելեց.- Մենք այդպես էլ չավարտեցինք զրույցը:

- Ներողություն եմ խնդրում, միսս Մարփիլ:- Տեսուչի դեմքին հմայիչ ժպիտ հայտնվեց:- Վախենամ՝ փոքր-ինչ անքաղաքավարի էի: Ես կանչել էի Ձեզ խորհրդակցության և միայն ինքս էի խոսում:

- Ա՛հ, ամեն բան կարգին է,- անմիջապես ասաց միսս Մարփիլը,- որովհետև, հասկանո՞ւմ եք, այն ժամանակ ես լիովին պատրաստ չէի բոլոր խաղաքարտերս սեղանին դնելու: Ուզում եմ ասել՝ չէի ցանկանա մեղադրանք ներկայացնել՝ առանց բացարձակապես վստահ լինելու: Այսինքն՝ վստահ սեփական կարծիքիս մեջ: Իսկ հիմա ես վստահ եմ:

- Ինչո՞ւ եք վստահ, միսս Մարփիլ:

- Դե, վստահ եմ, թե ով է սպանել միսթեր Ֆորթեսքյուին: Ձեր պատմածը մուրաբայի մասին հանգուցալուծում տվեց հարցին: Այսինքն՝ ցույց տվեց, թե ինչպես, նաև՝ ով, և այդ ամենը տեղավորվում է բանականության սահմանում:

Տեսուչ Նիլը ճպճպացրեց աչքերը:

- Ներողություն եմ խնդրում,- ասաց միսս Մարփիլը՝ նկատելով նրա արձագանքը:- Ցավոք, երբեմն դժվարանում եմ լիովին պարզ ձևով արտահայտել մտքերս:

- Դեռևս այնքան էլ չեմ հասկանում, միսս Մարփիլ, թե ինչի մասին ենք խոսում:

- Դե ինչ,- ասաց միսս Մարփիլը,- թերևս լավ կլինի՝ ամեն

ինչ սկսենք սկզբից: Այսինքն՝ եթե ազատ ժամանակ ունեք: Կցանկանայի իմ տեսակետը ներկայացնել Ձեզ: Հասկանում եք, ես շատերի հետ եմ զրուցել՝ տարիքն առած միսս Ռեմսբորթոմի, միսիս Քրամփի և նրա ամուսնու: Վերջինս, իհարկե, ստախոս է, բայց դա այնքան էլ կարևոր չէ, քանի որ երբ գիտես, որ ստախոսը ստախոս է, վերջնարդյունքը նույնն է լինում: Իսկ ես ուզում էի հստակեցնել հեռախոսազանգերը, նեյլոնե զուգագուլպաները և մնացյալը:

Տեսուչ Նիլը ևս մեկ անգամ ճաճպացրեց աչքերը և մտքում հարց տվեց ինքն իրեն, թե այս ինչի մեջ էր ներքաշվել, և ինչո՞ւ էր երբևէ իր մտքով անցել, որ միսս Մարփը կարող էր արժեքավոր ու խելամիտ գործընկեր լինել: Այնուամենայնիվ, մտածեց տեսուչը, որքան էլ նրա գլխում խառնաշփոթ տիրեր, միգուցե որոշ օգտակար տեղեկությունների պատահիկներ քաղած լիներ: Տեսուչ Նիլի մասնագիտական հաջողությունների հիմքում լսելու կարողությունն էր եղել: Այժմ նույնպես նա պատրաստ էր լսելու:

- Խնդրում եմ, պատմե՛ք ինձ ամեն ինչ, միսս Մարփի, - ասաց նա, - միայն թե սկսե՛ք սկզբից, լավ:

- Այո՛, իհարկե, - ասաց միսս Մարփը, - իսկ ամեն ինչ սկսեց Գլեդիսից: Ուզում եմ ասել՝ ես Գլեդիսի պատճառով եկա այստեղ: Եվ Դուք անչափ սիրալիրորեն թույլ տվեցիք ինձ աչքի անցկացնել նրա իրերը: Իսկ դրանք, նեյլոնե զուգագուլպաները և հեռախոսազանգերը քննելով ու մեկը մյուսի հետ համադրելով՝ ամեն ինչ միանգամայն պարզ դարձավ: Նկատի ունեմ՝ միսթեր Ֆորթեսպյուի մահվան վերաբերյալ:

- Դուք վարկած ունե՞ք, - հարցրեց տեսուչ Նիլը, - թե ով է տաքսին լցրել միսթեր Ֆորթեսպյուի մուրաբայի մեջ:

- Սա վարկած չէ,- պատասխանեց միսս Մարփիլը:- Ես գիտեմ դա:

Տեսուչ Նիլը երրորդ անգամ ճպճպացրեց աչքերը:

- Կասկած չկա՝ դա Գլեդիսն է արել,- ասաց միսս Մարփիլը:

## ԳԼՈՒԽ 26

Տեսուչ Նիլը սևեռուն հայացքով նայում էր միսս Մարփին և դանդաղորեն թափ տալիս գլուխը:

- Միթե Ձեր ասածն այն է,- թերահավատորեն հարցրեց նա,- որ Գլեդիս Մարտինը միտումնավոր սպանել է միսթր Ֆորթեսբյուին: Ներեցեք, միսս Մարփ, բայց ես պարզապես չեմ հավատում դրան:

- Ո՛չ, բնականաբար նա չէր ցանկացել սպանել նրան,- ասաց միսս Մարփը,- բայց, միևնույն է, արել է դա: Ինքներդ ասացիք, որ հարցաքննության ժամանակ նա նյարդային էր ու հուզված: Եվ որ մեղավոր տեսք ուներ:

- Այո՛, բայց ոչ սպանության մեջ մեղավորի:

- Դե ոչ, համաձայն եմ: Ինչպես ասացի, նա մտադիր չէր սպանել որևէ մեկի, բայց նա է տաքսինն ավելացրել մուրաբայի մեջ: Իհարկե, նրա մտքով անգամ չէր անցել, որ դա թույն է:

- Իսկ ի՞նչ էր դա՛ ըստ նրա:- Տեսուչի ձայնը դեռ թերահավատորեն էր հնչում:

- Ենթադրում եմ՝ մտածել է, որ դա ճշմարտության շիճուկ է,- ասաց միսս Մարփը:- Գիտե՞ք, անչափ հետաքրքիր է և ուսանելի... այն ամենը, ինչ այս աղջիկները կտրում են թերթերից և պահում իրենց մոտ: Միշտ է այդպես եղել, գիտե՞ք, դարեր շարունակ: Գեղեցկության խորհուրդներ՝ իրենց սիրելի տղամարդկանց ուշադրությունը գրավելու համար: Կախարդություններ, հմայություններ և զարմանահրաշ իրադարձություններ: Մեր օրերում այդ ամենը հիմնականում խառը լցրած է «Գիտություն» խորագրի տակ: Ոչ ոք այլևս չի հավատում կախարդներին, ոչ ոք չի հավատում, որ ինչ-որ մեկը կգա, ձեռքը կթափահարի և քեզ գորտի կվերածի: Բայց եթե թերթում կարդաս, որ

գիտնականները, որոշակի գեղձեր տեղադրելով, կարող են փոխել կենսական հյուսվածքների, և գորտի հատկանիշներ զարգացնել քո մեջ, դե, բոլորի պես կհավատաս դրան: Եվ թերթերում կարդացած լինելով ճշմարտության շիճուկի մասին՝ Գլեդիսն անվերապահորեն կհավատար նրան, երբ նա ասեր՝ դա հենց այն է, որ կա:

- Ո՞վ է դա նրան ասել,- հարցրեց տեսուչ Նիլը:

- Ալբերտ Էվանսը,- պատասխանեց միսս Մարփլը:- Անկասկած, դա նրա իսկական անունը չէ: Բայց և այնպես, ամռանը նրանք հանդիպել են ինչ-որ հանգստի ճամբարում, երիտասարդը հաճոյախոսել է նրան, սիրով զբաղվել նրա հետ և ենթադրաբար ինչ-որ պատմություն պատմել անարդարության, հալածանքի կամ նման մի բանի մասին: Ինչ էլ որ եղած լինի, էությունը հետևյալն էր. Ռեքս Ֆորթեսքյուն պետք է խոստովաներ, թե ինչ է արել և հատուցեր: Ես, իհարկե, չգիտեմ սա, տեսուչ Նիլ, բայց լիովին վստահ եմ: Նա համոզել է նրան աշխատանքի ընդունվել այստեղ, իսկ մեր օրերում, երբ տան աշխատողների պակաս կա, ուզածդ վայրում աշխատանքի անցնելն այնքան էլ բարդ չէ: Ծառայակազմերն անդադար փոխվում են: Այնուհետև նրանք պայմանավորվել են հանդիպել: Հիշում եք՝ այն վերջին բացիկի վրա գրված էր. «Չմոռանաս մեր ժամադրության մասին»: Դա լինելու էր այն հաղթական օրը, որին նրանք ձգտում էին: Նրա տված թույնը Գլեդիսն ավելացնելու էր մուրաբայի վերին շերտին, որպեսզի միսթր Ֆորթեսքյուն ուտեր այն նախաճաշին, ինչպես նաև տարեկան էր լցնելու նրա գրպանի մեջ: Չգիտեմ, թե ինչ է պատմել նրան տարեկանի իմաստը բացատրելու համար, բայց, ինչպես ամենասկզբում էի ասել Ձեզ, տեսուչ Նիլ, Գլեդիս Մարտինը չափազանց դյուրահավատ աղջիկ էր: Փաստացի, հազիվ թե գտնվեր մի բան, որին նա չհավատար,



երթ վայելչատես երիտասարդը ճիշտ ձևով ներկայացներ նրան:

- Շարունակե՛ք,- շփոթահար ձայնով ասաց տեսուչ Նիլը:

- Հավանաբար գաղափարը հետևյալն է եղել,- շարունակեց միսս Մարփը.- Նույն օրն Ալբերտն այցելելու էր միսթր Ֆորթեսքյուի գրասենյակ, իսկ մինչև այդ ճշմարտության շիճուկը պետք է ներգործած լիներ, և միսթր Ֆորթեսքյուն խոստովանելու էր ամեն ինչ, ու այսպես շարունակ: Պատկերացրե՛ք խեղճ աղջկա զգացմունքները, երբ իմացել է, որ միսթր Ֆորթեսքյուն մեռած է:

- Բայց չէ՞ որ նա կասեր դա,- առարկեց տեսուչ Նիլը:

Միսս Մարփը հանկարծակի հարցրեց.

- Ո՞րն էր առաջին բանը, որ նա ասաց Ձեզ հարցաքննության ժամանակ:

- Նա ասաց. «Ես չեմ արել դա», - պատասխանեց տեսուչ Նիլը:

- Հենց դա է, որ կա,- հաղթականորեն ասաց միսս Մարփը:- Մի՞թե չեք հասկանում, որ նա հենց այդպես էլ կասեր: Գիտե՛ք, երբ Գլեդիսն ինչ-որ զարդարանք էր կոտրում, միշտ ասում էր. «Ես չեմ արել դա, միսս Մարփ: Չգիտեմ, թե ինչպես է պատահել»: Նրանք չեն կարողանում այլ կերպ վարվել, խեղճ արարածներ: Սեփական արածը տակնուվրա է անում նրանց, և միայն մեղադրանքից խուսափելն է նրանց միտքը զբաղեցնում: Մի՞թե կարծում եք՝ նյարդային երիտասարդ կինը, որ սպանել է մեկին, որին մտադիր չէր սպանել, խոստովանելու է Ձեզ: Դա միանգամայն անտեղի կլիներ:

- Այո՛,- համաձայնեց տեսուչ Նիլը,- թերևս այդպես էլ կա:

Նա մտովի վերադարձավ Գլեդիսի հետ իր զրույցին:

Նյարդային, հուզված, հայացքը փախցնող և այլ նման բաներ. դրանք կարող էին թե՛ չնչին, թե՛ զգալի նշանակություն ունենալ: Այնքան էլ մեղադրելի չէր, որ ինքը չէր կարողացել ճիշտ եզրակացության հասնել:

- Առաջին հերթին, ինչպես ասացի,- շարունակեց միսս Մարփիլը,- նա կմտածեր ամեն բան հերքելու մասին: Ապա կփորձեր կարգի բերել գլխում եղած խառնաշփոթը: Հնարավոր է՝ Ալբերտը չէր իմացել, թե որքան ուժեղ է դեղամիջոցը, կամ սխալվել և մեծ չափաբաժին էր տվել նրան: Նա արդարացումներ ու բացատրություններ կփնտրեր նրա համար: Հույս կունենար, որ երիտասարդը կապ կհաստատի իր հետ, ինչը, բնականաբար, նա արել էր: Հեռախոսով:

- Դա հայտնի է Ձեզ,- կտրուկ հարցրեց տեսուչ Նիլը:

Միսս Մարփիլը թափ տվեց գլուխը:

- Ո՛չ, խոստովանում եմ, որ սա իմ ենթադրությունն է: Սակայն այդ օրն անբացատրելի զանգեր են եղել: Այսինքն՝ ինչ-որ մարդիկ են զանգել, և երբ Քրամփը կամ միսիս Քրամփն են պատասխանել, կախել են խոսափողը: Ալբերտը հենց այդպես կվարվեր, հասկանում եք: Կզանգեր և կսպասեր, մինչև Գլեդիսը պատասխաներ հեռախոսազանգին, իսկ հետո հանդիպում կնշանակեր նրա հետ:

- Հասկանալի է,- ասաց Նիլը:- Ուզում եք ասել, որ իր մահվան օրը Գլեդիսը նրա հետ հանդիպում պիտի ունենար:

Միսս Մարփիլն աշխուժորեն գլխով արեց:

- Այո՛, դա հաստատվում է: Միսիս Քրամփը ճիշտ էր մի հարցում: Աղջկա հագին իր լավագույն նեյլոնե զուգագուլպաներն ու կոշիկներն էին: Նա պատրաստվում էր հան-

դիպելու ինչ-որ մեկի հետ: Միայն թե այդ հանդիպման համար դուրս չէր գալու տնից: Երիտասարդն էր գալու Կենու տնակ: Ահա թե ինչու էր այդ օրը Գլեդիսի աչքը դեպի դուրս, գլուխը կորցրած և թե ինչու էր ուշացրել թեյը: Եվ այնժամ, երբ երկրորդ սկուտեղն էր նախասրահ բերել, ենթադրաբար միջանցքի ուղղությամբ հայացք էր գցել կողմնային դռանը և տեսել Ալբերտին, որ ձեռքով նշան էր արել իրեն: Նա սկուտեղը ցած էր դրել և դուրս եկել նրան հանդիպելու:

- Եվ այնժամ նա խեղդամահ էր արել աղջկան,- ասաց Նիլը:

Միսս Մարփիլը սեղմեց շուրթերը:

- Դա ընդամենը մեկ րոպե կխլեր,- ասաց միսս Մարփիլը,- բայց Ալբերտը չէր կարող ռիսկի դիմել՝ թույլ տալով, որ նա խոսեր: Խեղճ, հիմար, դյուրահավատ աղջիկ. նա պետք է մահանար: Իսկ հետո... այդ երիտասարդը լվացքի ամրակ էր դրել նրա քթին:- Ծեր լեդիի ձայնը թրթռաց անզիջում ցասումից:- Որպեսզի համապատասխանեցնեք բանաստեղծությանը: Տարեկանը, կեռնեխները, գրասենյակը, հացն ու մեղրը և լվացքի ամրակը... սա ամենամոտ բանն էր, որ նա մտածել էր «Երբ մի թռչնակ հարձակվեց, քիթը կտցեց ու պոկեց» տողի համար...

- Ու ենթադրաբար նրան ի վերջո կտեղափոխեն Բրոդմուր,<sup>1</sup> ու մենք չենք կարողանա կախաղան բարձրացնել նրան. չէ՞ որ նա խելագար է,- դանդաղորեն արտաբերեց Նիլը:

- Կարծում եմ՝ ինչպես հարկն է, կախաղան կբարձրացնեք նրան,- հակադարձեց միսս Մարփիլը:- Եվ նա խենթ չէ, տեսուչ, ոչ մի դեպքում:

Տեսուչ Նիլն ուշադիր նայեց նրան:

- Իսկ հիմա լսեք ինձ, միսս Մարփիլ, Դուք Ձեր վարկածը

---

1 Անգլիայի ամենահայտնի հոգեբուժարաններից մեկը:

ներկայացրիք ինձ: Այո՛, այո՛, թեև ասում եք, որ համոզված եք դրանում, դա ընդամենը վարկած է: Ասում եք, որ այս հանցանքների համար պատասխանատու է մի մարդ, որ իրեն Ալբերտ Էվանս է անվանում, որ հանգստի ճամբարում իր ձեռքն է գցել Գլեդիսին և օգտագործել նրան իր նպատակների համար: Այդ Ալբերտ Էվանսը մեկն է, որ ցանկացել է վրեժ լուծել «Կեռնեխներ» հանքի հին պատմության համար: Դուք ակնարկում եք, որ միսիս ՄաքՔենզլի որդին՝ Դոն ՄաքՔենզլին, չի մահացել Դյունկերկում, այնպես չէ: Որ նա դեռ ողջ է և կանգնած է այս ամենի հետևում:

Սակայն, ի զարմանս տեսուչ Նիլի, միսս Մարվին ուժգին թափ էր տալիս գլուխը:

- Օ՛, ո՛չ,- բացականչեց նա,- օ՛, ո՛չ: Ես ամենևին դա չեմ ակնարկում: Միթե չեք տեսնում, տեսուչ Նիլ, որ սև կեռնեխների այս ամբողջ պատմությունն իսկական կեղծիք է: Այն ընդամենը գործիք է՝ օգտագործված մեկի կողմից, ով լսել էր կեռնեխների մասին... որ դրել էին գրադարանում ու կարկանդակի մեջ: Այս կեռնեխներն ավելի քան իսկական էին: Թռչուններին դրել էր մեկը, որ գիտեր այդ հին պատմության մասին և ուզում էր վրեժ լուծել դրա համար: Բայց այդ վրեժը միայն միսթր Ֆորթեսյուրին վախեցնելու կամ նրան անախորժ վիճակի մեջ գցելու փորձ էր: Գիտե՞ք, տեսուչ Նիլ, չեմ հավատում, որ երեխաներին իսկապես կարելի է մեծացնել ու դաստիարակել այնպես, որ իրենց մտքում վրեժի ծրագիր հասունացնեն, սպասեն ու ի կատար ածեն այն: Երեխաները, ի վերջո, սեփական խելքն ունեն: Սակայն նա, ում հորը խաբել են և գուցե նաև թողել, որ մահանա, հավանական է, որ ցանկանա չար կատակ խաղալ այն մարդու գլխին, որ ենթադրաբար արել է դա: Կարծում եմ՝ այդպես էլ եղել է: Իսկ մարդասպանն օգտվել է դրանից:

- Մարդասպանը,- կրկնեց տեսուչ Նիլը:- Դե, միսս Մարփլ, ասացե՞ք, թե ինչ մտքեր ունեք մարդասպանի վերաբերյալ: Ո՞վ է նա:

- Դուք չեք զարմանա,- ասաց միսս Մարփլը:- Հազիվ թե: Որովհետև հենց ասեմ Ձեզ, թե ով է նա (կամ ավելի ստույգ՝ ով է նա իմ կարծիքով. չէ՞ որ պետք է ճշգրտություն պահել, այնպես չէ՞), Դուք կհասկանաք՝ նա հենց այնպիսի մարդ է, որ կգործեր այս սպանությունները: Նա ողջամիտ է, չափազանց խելացի և միջոցների մեջ խտրություն չդնող: Եվ նա, իհարկե, արել է դա փողի համար, հավանաբար մեծ փողի:

- Փերսիվալ Ֆորթեսլին:- Տեսուչ Նիլը խոսեց գրեթե աղերսանքով, թեև գիտեր, որ սխալվում է: Այն մարդու կերպարը, որ ստեղծել էր միսս Մարփլը, որևէ նմանություն չունեի Փերսիվալ Ֆորթեսլյուի հետ:

- Օ՛, ո՛չ,- առարկեց միսս Մարփլը:- Փերսիվալը չէ: Լանսը:

## ԳԼՈՒԽ 27

- Անհնար է,- ասաց տեսուչ Նիլը:

Հենվելով աթոռի թիկնակին՝ նա հիացական հայացքով նայեց միսս Մարփիին: Ինչպես միսս Մարփին էր ասել, նա զարմացած չէր: Իր հերքումը վերաբերում էր ոչ թե հավանականությանը, այլ հնարավորությանը: Լանս Ֆորթեսքյուն համապատասխանում էր նկարագրին. միսս Մարփին ավելի քան լավ էր տվել այն: Սակայն տեսուչ Նիլը պարզապես չէր կարողանում պատկերացնել, թե Լանսն ինչպես կարող էր հարցի պատասխանը լինել:

Միսս Մարփին առաջ թեքվեց իր աթոռի մեջ և մեղմորեն, համոզիչ կերպով, ինչպես փոքր երեխային են թվաբանության պարզ կանոնները բացատրում, շարադրեց իր վարկածը:

- Նա միշտ է այդպիսին եղել, հասկան՞ում եք: Նկատի ունեմ՝ միշտ է փչացած եղել: Ուղնուծուծով հոտած և չնայած դրան՝ միշտ հմայիչ: Հատկապես կանանց համար: Նա փայլուն միտք ունի և սիրում է ռիսկի դիմել: Միշտ է ռիսկի դիմել, իսկ հմայքի շնորհիվ մարդիկ միայն ամենալավն են մտածել նրա մասին և ոչ երբեք վատագույնը: Ամռանը նա եկել էր տուն՝ հորն այցելելու: Վայրկյան իսկ չեմ հավատում, որ հայրը նամակ է գրել նրան կամ կանչել, եթե, իհարկե, Դուք դրա իրեղեն ապացույցը չունեք:

Միսս Մարփիլը հարցական դադար տվեց:

Նիլը թափ տվեց գլուխը:

- Ո՛չ,- ասաց նա,- ապացույց չունեմ, որ հայրը կանչել է նրան: Կա նամակ, որ իբր Լանսն է գրել նրան այստեղ լինելուց հետո: Սակայն Լանսն իր ժամանման օրը հեշտությամբ կարող էր աննկատ կերպով գցել այն հոր այստեղի աշխատասենյակի թղթերի մեջ:

- Հնարամիտ քայլ նրա կողմից,- ասաց միսս Մարփը՝ գլխով անելով:- Դե՛, ասեմ Ձեզ, հավանաբար նա թռել է՝ այստեղ և փորձել հաշտության հասնել հոր հետ, բայց միսթր Ֆորթեսբյուն լսել անգամ չի ցանկացել այդ մասին: Հասկանո՞ւմ եք, Լանսը վերջերս է ամուսնացել, և չնչին նպաստը, որի հաշվին ապրում էր, և որը, անկասկած, լրացնում էր տարբեր անազնիվ միջոցներով, այլևս չէր բավարարում նրան: Նա սիրահարվել է Պատին, որ հրաշալի, անուշիկ աղջիկ է, և ցանկացել անցնել օրինավոր ու նստակյաց կյանքի՝ առանց դեգերումների: Իսկ դա նրա տեսանկյունից նշանակում է շատ փող ունենալ: Կենու տնակ եկած ժամանակ նա պետք է որ լսած լինի այն կեռնեխների մասին: Գուցե հայրն է հիշատակել դրանք: Գուցե՛ Ադելը: Նա անմիջապես եզրակացրել է, որ Մաքթենզիի դուստրը հաստատվել է այս տանը, և որ աղջիկը հիանալի քավության նոխազ կլիներ սպանության համար: Չէ՞ որ գիտակցելով, որ հորից չի ստանա ուզածը՝ Լանսը հավանաբար սառնասրտորեն որոշել է, որ նա պետք է սպանվի: Գուցե հասկացել է, որ հայրը... հըմ, այնքան էլ առողջ չէ... և վախեցել, որ մինչև մեռնելը նա լիովին կսնանկանա:

- Նա քաջատեղյակ է եղել հոր առողջական վիճակին,- նկատեց տեսուչ Նիլը:

- Ա՛հ, դա շատ բան է բացատրում: Հնարավոր է՝ հոր անունը, որ զուգադիպությամբ Ռեքս է, և կեռնեխների միջադեպը մանկական բանաստեղծության միտքն են հուշել նրան: Նա այս ամենը խենթության է վերածել և կապել Մաքթենզիների վրեժի հին սպառնալիքի հետ: Այնուհետև, ինչպես տեսնում եք, նա կարող էր ազատվել նաև Ադելից և թույլ չտալ, որ հարյուր հազար ֆունտը դուրս գար ընկերությունից: Սակայն պետք է լիներ երրորդ կերպարը՝ «պարտեզում հագուստեղենը կախող աղախինը», և ենթադրում եմ,

որ հենց դրանից է այս ամբողջ չար ծրագիրը հղացել: Անմեղ հանցակից, որին կլռեցնեք, նախքան նա հասցնեք խոսել: Իսկ դա նրան կտար այն, ինչ ուզում էր՝ իսկական ալիքի առաջին սպանության համար: Մնացածը հեշտ էր: Կայարանից այստեղ նա ժամանել է գրեթե հինգին՝ հենց այն ժամանակ, երբ Գլեդիսը երկրորդ սկուտեղն էր բերում նախասրահ: Նա մոտեցել է կողմնային դռանը, տեսել աղջկան ու կանչել նրան: Նրան խեղդամահ անելն ու դիակը տան հետնամաս քարշ տալը, որտեղ լվացքի պարաններն էին, ընդամենը երեքից չորս րոպե կխլեին նրանից: Ապա սեղմել է շքամուտքի զանգի կոճակը, նրան տուն են թողել, և նա միացել է ընտանեկան թեյախմությանը: Թեյից հետո բարձրացել է միսս Ռեմսբոթոմին տեսնելու: Իջնելով աննկատելիորեն մտել է հյուրասենյակ, որտեղ գտել է միայն Ադելին թեյի վերջին բաժակը խմելիս, նստել է բազմոցին՝ նրա կողքին, և գրույցի ընթացքում հաջողել ցիանիդ ցնել նրա թեյի մեջ: Գիտե՞ք, դա բարդ չէր լինի: Սպիտակ նյութի կտոր է՝ շաքարի նման: Նա կարող էր մեկնել ձեռքը շաքարամանին, մի կտոր վերցնել ու ձևացնել, թե դա է գցում բաժակի մեջ: Ապա կծիծաղեր ու կասեր. «Տեսե՞ք, է, շաքարը Ձեր թեյի մեջ գցեցի»: Ադելը կպատասխաներ, որ խնդիր չկա, կխառներ թեյն ու կխմեր: Այ, այդքան հեշտ ու հանդուգն ձևով: Այո՛, նա հանդուգն երիտասարդ է:

Տեսուչ Նիլը դանդաղորեն արտաբերեց.

- Իրականում հնարավոր է... այո՛: Բայց ինձ համար անհասկանալի է... իսկապես, միսս Մարփլ, չե՞մ կարողանում հասկանալ, թե նա ինչ կշահեր սրանից: Հաշվի առնելով այն, որ եթե միսթր Ֆորթեսքյուն չմահանար, բիզնեսը կփլուզվեր՝ միթե Լանսի բաժինն այնքան մեծ էր, որ մղեր նրան երեք սպանություն ծրագրելու: Չե՞մ կարծում: Իրոք այդպես չե՞մ կարծում:



- Սա մի փոքր դժվարություն է առաջացնում,- ընդունեց միսս Մարփիլը:- Այո՛, համաձայն եմ Ձեզ հետ: Սա իսկապես դժվարացնում է խնդիրը: Երևի...- Նա վարանեց՝ հայացք գցելով տեսուչի վրա:- Երևի... ես այնքան անիրազեկ եմ ֆինանսական հարցերից... բայց միթե ճիշտ է, որ այդ «Կեռնեխներ» հանքն անարժեք է:

Նիլը մտքերի մեջ ընկավ: Տարբեր պատառիկներ դասավորվեցին իրենց տեղերում: Լանսի հոժարակամությունը՝ Փերսիվալի ձեռքից վերցնելու տարատեսակ ռիսկային ու անարժեք բաժնեմասերը: Այդ օրը Լոնդոնում հրաժեշտից առաջ նրա ասածը, որ Փերսիվալը լավ կաներ՝ ազատվել «Կեռնեխներ» հանքից և դրա բերած դժբախտություններից: Ոսկու հանք: Անարժեք ոսկու հանք: Բայց միթե այդ հանքն արժեք չուներ: Չգիտես ինչու, այնուամենայնիվ, դա քիչ հավանական էր թվում: Ծերուկ Ռեքս Ֆորթեսքլուն հազիվ թե սխալվեր նման հարցում, թեև, իհարկե, հնարավոր էր՝ վերջին շրջանում նոր հետազոտություններ կատարված լինեին: Որտե՞ղ էր այդ հանքը: Լանսն ասել էր՝ Արևմտյան Աֆրիկայում: Այո՛, բայց մեկ ուրիշը (միսս Ռեմսբորնը) ասել էր, որ այն Արևելյան Աֆրիկայում է: Միթե Լանսը միտումնավոր կերպով էր մոլորեցրել իրեն՝ արևելքի փոխարեն՝ արևմուտք ասելով: Միսս Ռեմսբորնը ծեր էր և մոռացկոտ, բայց ևս այնպես, կարող էր հենց նա ճիշտ լինել, ոչ թե Լանսը: Արևելյան Աֆրիկա: Լանսը նոր էր վերադարձել Արևելյան Աֆրիկայից: Գուցե նա նոր տեղեկություններ ուներ:

Հանկարծ մի չիսկոցով ևս մեկ կտոր տեղավորվեց տեսուչի խճանկարի մեջ: Գնացքում նստած «Թայմս» կարդալը: Տանգանիկայում հայտնաբերված ուրանի հանքավայրը: Իսկ եթե այդ հանքավայրը հին «Կեռնեխների» տարածքում էր: Դա բացատրում էր ամեն ինչ: Տեղում գտնվելով՝ Լանսն

իմացել էր դրա մասին, իսկ ուրանի հանքավայրը մի ամբողջ կարողություն էր ենթադրում: Հսկայական կարողություն: Տեսուչը հոգոց արձակեց: Նայեց միսս Մարփիին:

- Ինչ եք կարծում,- հանդիմանաբար հարցրեց տեսուչ Նիլը,- ինչպե՞ս եմ կարողանալու ապացուցել այս ամենը:

Միսս Մարփիլը քաջալերաբար գլխով արեց, ինչպես հորաքույրը կոզևորեր կրթաթոշակի համար քննություն հանձնող խելացի զարմիկին:

- Դուք կապացուցեք դա,- ասաց նա:- Դուք անչափ խելացի մարդ եք, տեսուչ Նիլ: Ես հենց սկզբից հասկացա դա: Հիմա, երբ գիտեք, թե նա ով է, պետք է կարողանաք ապացույցներ հավաքել: Այն հանգստի ճամբարում, օրինակ, կճանաչեն նրա լուսանկարը: Նրա համար բարդ կլինի բացատրել, թե ինչու է մեկ շաբաթ մնացել այդ ճամբարում՝ ներկայանալով Ալբերտ Էվանս անունով:

Այո, մտածեց տեսուչ Նիլը, Լանս Ֆորթեսքյուն խելացի էր ու միջոցների մեջ խտրություն չդնող, բայց նաև անխոհեմորեն համարձակ: Այն ռիսկերը, որոնց նա դիմել էր, չափից դուրս մեծ էին:

«Ես կբռնեմ նրան», - մտածեց Նիլը: Ապա կասկածը համակեց նրան, և նա նայեց միսս Մարփիին:

- Այս ամենը զուտ ենթադրություն է, հասկանում եք,- ասաց նա:

- Այո, բայց Դուք համոզված եք, այնպես չէ՞:

- Թերևս: Ի վերջո, նրա տեսակը ծանոթ է ինձ:

Ծեր լեդին գլխով արեց:

- Այո... դա այնքան կարևոր է... ահա թե ինչու եմ այսքան համոզված:

Նիլը չարաճճի հայացք գցեց նրա վրա:

- Պատճառն այն է, որ Դուք լավ եք ճանաչում հանցագործներին:

- Օ՛, ո՛չ, իհարկե ոչ: Պատճառը Պատն է՝ այդ անուշիկը... նրա պես աղջիկները միշտ սրիկաների հետ են ամուսնանում... իրականում դա էր, որ հենց սկզբից ուշադրությունս նրա վրա գրավեց...

- Գուցե իմ մտքում ես համոզված լինեմ,- ասաց տեսուչ Նիլը,- բայց շատ բաներ բացատրության կարիք ունեն... Ռուբի Մաքթենզիի պատմությունը՝ օրինակ: Պատրաստ եմ երդվելու...

Միսս Մարփլն ընդհատեց նրան:

- Եվ Դուք միանգամայն ճիշտ եք: Միայն թե սխալ մարդու մասին եք մտածում: Գնացե՛ք և խոսե՛ք միսիս Փերսիի հետ:

\* \* \*

- Միսիս Ֆորթեսքյու,- ասաց տեսուչ Նիլը,- չէի՞ք ասի ինձ Ձեր օրիորդական անունը:

- Օ՛հ:- Ջենիֆերի բերանը բաց մնաց զարմանքից: Նա վախեցած տեսք ուներ:

- Անհանգստանալու կարիք չկա, մադամ,- ասաց տեսուչ Նիլը,- բայց շատ ավելի լավ կլինի, եթե ճշմարտությունն ասեք: Ճիշտ եմ, որ նախքան ամուսնությունը Ձեր անունը Ռուբի Մաքթենզի էր:

- Իմ... դե, և ի՞նչ... Աստված իմ... դե, ինչո՞ւ եք հարցնում,- ասաց միսիս Փերսիվալ Ֆորթեսքյուն:

- Առանց պատճառի,- մեղմորեն պատասխանեց տեսուչ Նիլը, ապա հավելեց.- մի քանի օր առաջ Ձեր մոր հետ էի զրուցում Փայնվուդ հոգեբուժարանում:

- Նա խիստ բարկացած է ինձ վրա,- ասաց Ջենիֆերը:- Ես այլևս այցի չեմ գնում նրան, որովհետև դա միայն հունից հանում է նրան: Խեղճ մայրիկ, նա այնքան նվիրված էր հայրիկին, հասկանո՞ւմ եք:

- Եվ նա դաստիարակել է Ձեզ վրեժի մասին մելոդրամատիկ գաղափարներով:

- Այո՛,- պատասխանեց Ջենիֆերը:- Նա շարունակ ստիպում էր մեզ երգվել Աստվածաշնչի վրա, որ երբեք չենք մոռանա դա և մի օր կսպանենք նրան: Իհարկե, հիվանդանոցում հայտնվելուն և ուսուցումը սկսելուն պես ես սկսեցի հասկանալ, որ նա հոգեպես անհավասարակշիռ վիճակում է:

- Այնուամենայնիվ, Դուք նոյնպես վրեժի զգացում ունեիք:

- Դե, իհարկե: Ռեքս Ֆորթեսքյուն գործնականորեն սպանել էր հորս: Նկատի չունեմ՝ փաստացի կրակել էր նրան, դանակահարել կամ նման մի բան: Բայց ես լիովին համոզված եմ, որ նա իսկապես թողել է հայրիկին՝ մահանա: Միթե դա նույն բանը չէ:

- Բարոյական տեսանկյունից, այո՛, նույնն է:

- Այնպես որ ես իրոք ուզում էի վրեժ լուծել նրանից,- ասաց Ջենիֆերը:- Երբ ընկերուհիներիցս մեկը եկավ նրա որդուն խնամելու, ես համոզեցի նրան հեռանալ և իր փոխարեն ինձ առաջարկել: Չգիտեմ, թե կոնկրետ ինչ էի ուզում անել... Ես երբեք, իսկապես, տեսնիչ, մտադիր չեմ եղել սպանել միսթր Ֆորթեսքյուին: Գուցե մտքովս անցել էր այնքան վատ խնամել նրա որդուն, որ նա մեռներ: Բայց, իհարկե, եթե դու բուժքույր ես կոչումով, չես կարող նման բան անել: Ըստ էության, տեղը տեղին ջանք թափեցի Վալին այդ վիճակից դուրս բերելու համար: Իսկ հետո նա սիրեց ինձ և ամուսնության առաջարկություն արեց, ու ես մտածեցի. «Դե ինչ, ավելի ողջամիտ վրեժ չի էլ կարող լինել»: Նկատի ունեմ՝ ամուսնանալ միսթր Ֆորթեսքյուի ավագ որդու հետ և այդպերպ հետ ստանալ այն փողը, որ նա շորթել էր հայրիկից: Կարծում եմ՝ դա շատ ավելի ողջամիտ տարբերակ էր:

- Այո՛, անշուշտ,- համաձայնեց տեսուչ Նիլը,- շատ ավելի ողջամիտ:- Ապա հավելեց.- Ենթադրում եմ՝ Դոնք եք կենդնեխներ դրել նրա գրասեղանին և կարկանդակի մեջ:

Միսիս Փերսիվալը կարմրեց:

- Այո՛: Երևի հիմարություն էր իմ կողմից... Սակայն մի օր միսթր Ֆորթեսքյուն խոսում էր դյուրահավատ մարդկանց մասին և պարծենում, թե ինչպես է խաբել նրանց, լավագույնը կորզել նրանցից: Ա՛հ, միանգամայն օրինական ճանապարհով: Եվ մտքովս անցավ, որ կարելի է պարզապես... ինչ-որ չափով վախեցնել նրան: Իսկ դա վախեցրեց նրան: Սարսափելիորեն հանեց հավասարակշռությունից:- Նա հուզմունքով ավելացրեց.- Բայց ես ուրիշ բան չեմ արել: Իսկապես, տեսուչ: Միթե... միթե մտածում եք, որ ես կսպանեի ինչ-որ մեկին:

Տեսուչ Նիլը ժպտաց:

- Ո՛չ,- ասաց նա,- չեմ կարծում:- Այնուհետև հավելեց.- Ի դեպ, վերջերս միսս Դավին փող տվե՞լ եք:

Ջենիֆերի ծնոտը կախվեց:

- Ինչպե՞ս իմացաք:

- Մենք շատ բան գիտենք,- ասաց տեսուչ Նիլը և մտքում հավելեց. «Շատ բան էլ կռահում ենք»:

Ջենիֆերը շարունակեց՝ արագ-արագ խոսելով.

- Նա եկավ ինձ մոտ և ասաց, որ մեղադրել եք իրեն Ռուբի ՄաքՔենզին լինելու մեջ: Ասաց, որ եթե հինգ հարյուր ֆունտ հատկացնեմ իրեն, թույլ կտա, որ Դուք շարունակեք այդպես մտածել: Ասաց՝ եթե իմանաք, որ ես եմ Ռուբի ՄաքՔենզին, կկասկածեք ինձ միսթր Ֆորթեսքյունի և խորթ մորս սպանելու մեջ: Ես սարսափելի դժվարությամբ ձեռք բերեցի այդ գումարը. չե՛ որ, բնականաբար, այս մասին չէի կարող պատմել Փերսիվալին: Նա չգիտի՝ ով եմ ես: Ստիպված էի վաճառել նշանադրությանս ադաման-

դե մատանին և անչափ գեղեցիկ վզնոցը, որ միսթը Ֆորթեսքյուն էր նվիրել ինձ:

- Մի՛ անհանգստացեք, մի՛սիս Փերսիվալ,- ասաց տեսուչ Նիլը:- Կարծում եմ՝ կկարողանանք վերադարձնել Ձեր փողը:

\* \* \*

Հաջորդ օրը տեսուչ Նիլը ևս մեկ գրույց ունեցավ միսս Մերի Դավի հետ:

- Մի՛սս Դավ,- ասաց նա,- կցանկանայի իմանալ՝ արդյոք միսիս Փերսիվալ Ֆորթեսքյուի անունով դուրս գրված չեկ կտամք ինձ:

Նա հաճույքով տեսավ, որ Մերի Դավը վերջապես կորցրեց տիրապետումը:

- Ենթադրում եմ՝ այդ հիմարը պատմել է Ձեզ,- ասաց նա:

- Այո՛: Շանտաժը, մի՛սս Դավ, բավական լուրջ մեղադրանք է:

- Դա բոլորովին շանտաժ չէր, տեսո՛ւ: Կարծում եմ՝ Ձեզ համար բարդ կլինի իմ դեմ շանտաժի գործ հարուցելը: Ես ընդամենը հատուկ ծառայություն եմ մատուցել միսիս Փերսիվալին, որի համար նա պարտական էր ինձ:

- Լավ, եթե ինձ տաք այդ չեկը, մի՛սս Դավ, ամեն ինչ կթողնենք այնպես, ինչպես կա:

Մերի Դավը վերցրեց իր չեկերի գրքույկը և հանեց սայրով գրիչը:

- Ի՛նչ ավստս,- ասաց նա հոգոցով,- ֆինանսական միջոցներս այս պահին հատկապես սուղ են:

- Ենթադրում եմ՝ շուտով նոր աշխատանք կփնտրեք:

- Այո՛: Այս մեկն ամենևին ըստ իմ ծրագրի չընթացավ: Ամեն ինչ խիստ անհաջող է դասավորվել ինձ համար:

Տեսուչ Նիլը համաձայնեց:

- Այո՛, Դուք բարդ իրավիճակում եք հայտնվել, այնպես չէ՛: Նկատի ունեմ՝ միանգամայն հավանական էր, որ մենք ցանկացած պահի կարող էինք հետաքրքրվել Ձեր անցյալով:

Մերի Դավը, որ վերագտել էր սառնասրտությունը, բարձրացրեց հոնքերը:

- Վստահեցնում եմ, տեսուչ, իմ անցյալն ավելի քան անբասիր է:

- Այո՛, այդպես էլ կա,- զվարթորեն համաձայնեց տեսուչ Նիլը:- Մենք Ձեր դեմ բացարձակապես ոչինչ չունենք, միսս Դավ: Թեև հետաքրքիր զուգադիպությամբ պատահել է այնպես, որ նախորդ երեք տներում, որոնցում այդքան գերազանցորեն աշխատել եք, Ձեր հեռանալուց երեք ամիս անց կողոպուտներ են կատարվել: Գողերը, հավանաբար, հրաշալիորեն տեղեկացված էին, թե որտեղ էին պահվում ջրաքիսի մորթուց վերարկուները, թանկարժեք իրերը և այլն: Հետաքրքիր զուգադիպություն է, այնպես չէ՛:

- Զուգադիպություններ իսկապես լինում են, տեսուչ:

- Ա՛հ, այո՛,- ասաց Նիլը:- Լինում են: Բայց դրանք չպետք է չափազանց հաճախակի լինեն, միսս Դավ: Կարծում եմ,- ավելացրեց նա,- ապագայում մենք էլի կհանդիպենք:

- Հուսով եմ...- ասաց Մերի Դավը:- Ձեմ ուզում կոպիտ թվալ, տեսուչ Նիլ, բայց հուսով եմ, որ ոչ:

## ԳԼՈՒԽ 28

Միսս Մարփիլը հարթեցրեց իր ճամպրուկի վերնամասը, բրդե շալի եզրը տակը խցկեց և փակեց կափարիչը: Հայացք գցեց ննջասենյակի շուրջբոլորը: Ո՛չ, ոչինչ չէր թողել: Քրամփը ներս եկավ՝ նրա ճամպրուկն իջեցնելու: Միսս Մարփիլը մտավ հարևան սենյակ՝ միսս Ռեմսբորթոմին հրաժեշտ տալու:

- Վախենամ,- ասաց միսս Մարփիլը,- խղճուկ ձևով եմ վարձահատույց եղել Ձեր հյուրընկալության դիմաց: Հուսով եմ՝ մի օր կկարողանաք ներել ինձ:

- Վահ,- բացականչեց միսս Ռեմսբորթոմը:

Նա, ինչպես միշտ, պասյանս էր խաղում:

- Սև վալետ, կարմիր թագուհի,- ասաց նա, ապա սուր, շեղակի հայացք նետեց միսս Մարփիլի վրա:- Ենթադրում եմ՝ Դուք պարզել եք այն, ինչ ուզում էիք:

- Այո՛:

- Եվ ենթադրաբար պատմել եք դա այն ոստիկանական տեսուչին: Նա կկարողանա՞ ապացուցել վարկածը:

- Գրեթե վստահ եմ,- պատասխանեց միսս Մարփիլը:- Գուցե որոշ ժամանակ պահանջվի:

- Ես Ձեզ հարցեր չեմ տա,- ասաց միսս Ռեմսբորթոմը:- Դուք խորաթափանց կին եք: Ձեզ տեսնելուն պես հասկացա դա: Ես չեմ հանդիմանում Ձեզ այն բանի համար, որ արեցիք: Մեղքը մեղք է, և այն պետք է պատժվի: Այս ընտանիքում վատ գեն կա: Երախտապարտ եմ, որ այն մեր կողմից չէ: Էլվիրան՝ քույրս, հիմար էր: Դրանից վատ բան չի լինում:

- Սև վալետ,- կրկնեց միսս Ռեմսբորթոմը՝ մատը դնելով խաղաքարտի վրա:- Գեղեցիկ, բայց սև սրտով: Այո՛, ես վախենում էի դրանից: Ա՛հ, ինչ արած, միշտ չէ, որ հնա-



րավոր է չսիրել մեղսավորին: Այդ տղային հաջողվում էր ճիշտ մոտեցումներ կիրառել: Նույնիսկ ինձ հետ էր խորամանկություն բանեցրել: Ստել էր, թե այն օրն իմ մոտից որ ժամին էր դուրս եկել: Ես չհակասեցի նրան, բայց մեջս կասկած ընկավ... Այդ պահից ի վեր կասկածում էի: Ախր նա էլվիրայի տղան է... չէի կարող համոզել ինձ որևէ բան ասել: Իսկ այ Դուք արդարամիտ կին եք, Ջեյն Մարփլ, իսկ արդարությունը պետք է հաղթի: Միայն թե նրա կնոջ համար եմ ցավում:

- Ես նույնպես,- ասաց միսս Մարփլը:

Նախասարահում նրան էր սպասում Պատ Ֆորթեսքյուն՝ հրաժեշտ տալու:

- Երանի չգնայիք,- ասաց նա:- Ես կկարոտեմ Ձեզ:

- Գնալուս ժամանակն է,- ասաց միսս Մարփլը:- Ես ավարտել եմ այն, ինչի համար եկել էի այստեղ: Բոլորովին հաճելի չէր: Բայցևայնպես, կարևոր է, որ չարը չհաղթի, հասկանո՞ւմ եք:

Պատը շփոթված տեսք ուներ:

- Չեմ հասկանում Ձեզ:

- Իսկապէս, սիրելիս: Մի օր, թերևս, կհասկանաք: Կհամարձակվեմ խորհուրդ տալ Ձեզ, որ եթե երբևէ ինչ-որ բան... այն չլինի Ձեր կյանքում... կարծում եմ՝ ամենից տեղինը կլինի վերադառնալ այնտեղ, որտեղ երջանիկ էիք մանուկ օրերին: Իռլանդիա վերադարձե՛ք, սիրելիս: Ձիերի ու շների մոտ: Եվ այդ ամենի:

Պատը գլխով արեց:

- Երբեմն ափսոսում եմ, որ այդպես չարեցի Ֆրեդիի մահից հետո: Բայց այդ դեպքում,- նրա ձայնը փոխվեց ու մեղմացավ,- երբեք չէի հանդիպի Լանսին:

Միսս Մարփլը հոգոց արձակեց:

- Գիտե՛ք, մենք այստեղ չենք մնալու,- ասաց Պատը:-

Հենց որ ամեն ինչ պարզաբանվի, Արևելյան Աֆրիկա ենք վերադառնալու: Այնքան ուրախ եմ:

- Աստված օրհնի Ձեզ, զավակս,- ասաց միսս Մարփիլը:- Կյանքի փորձությունների միջով անցնելու համար մեծագույն քաջություն է պետք: Կարծում եմ՝ Դուք ունեք դա:

Նա ափով թփթփացրեց աղջկա ձեռքին և այն բաց թողնելով՝ շքամուտքից դուրս եկավ դեպի արդեն սպասող տաքսին:

\* \* \*

Միսս Մարփիլը տուն հասավ ուշ երեկոյան:

Քիթին՝ Սենթ Ֆեյթսի վերջին շրջանավարտը, դուռը բացեց նրա առաջ և ժպտադեմ ողջունեց նրան:

- Ընթրիքի համար ծովատառեխ եմ պատրաստել, միսս: Այնքան ուրախ եմ, որ տանն եք: Կտեսնեք, որ տանն ամեն բան կարգին է: Կանոնավոր կերպով ընդհանուր մաքրություն եմ արել:

- Հիանալի է, Քիթի: Ուրախ եմ, որ տանն եմ:

Վեց սարդոստայն քիվի վրա՝ նկատեց միսս Մարփիլը: Այս աղջիկները երբեք գլուխները չեն բարձրացնում: Ինչ էլ որ լիներ, նա չափազանց բարի էր դա ասելու համար:

- Ձեր նամակները նախասրահի սեղանին են, միսս: Իսկ դրանցից մեկը սխալմամբ Դեյզիմիդ էր հասել: Միշտ այդպես են անում, չէ՛: Դեյն և Դեյզի. իսկապես մի փոքր նման են, ձեռագիրն էլ այնքան վատն է, որ այս անգամ չզարմացա: Այդ մարդիկ տանը չէին եղել, դուռը փակ էր, և միայն այսօր են վերադարձել ու նամակն ուղարկել: Հույս էին հայտնում, որ այն կարևոր չէր:

Միսս Մարփիլը ձեռքն առավ նամակները: Այն մեկը, որը հիշատակեց Քիթին, ամենավերևում էր: Թանաքոտ խզբզոցն աղոտ հիշողություն արթնացրեց միսս Մարփիլի մեջ: Նա պատռելով բացեց ծրարը:

«Սիրելի մադամ,

Հուսով եմ՝ կներեք ինձ սա գրելու համար, բայց ես իսկապես չգիտեմ ինչ անել. անկասկած, երբևէ մտքովս չի անցել վնասել ինչ-որ մեկին ու չեմ արել դա: Սիրելի մադամ, թերթերում կարդացած կլինեք, ասում են՝ դա սպանություն է, բայց ես կապ չունեմ դրա հետ, այնքան էլ կապ չունեմ, այսր ես երբեք նման չարիք չէի գործի, և գիտեմ, որ նա նույնպես չէր անի դա: Ալբերտին նկատի ունեմ: Ես գրում եմ կարիքից դրդված. մենք ծանոթացել էինք ամռանը և պատրաստվում էինք ամուսնանալու, միայն թե Բերտը դրա իրավունքը չունի, նրան զրկել են դրանից, այդ միսթր Ֆորթեսքյուն, որ հիմա մեռած է, խաբել էր նրան: Եվ միսթր Ֆորթեսքյուն հերքել էր ամեն ինչ, ու, իհարկե, բոլորը հավատացել էին նրան, ոչ թե Բերտին, որովհետև նա հարուստ էր, իսկ Բերտը՝ աղքատ: Սակայն Բերտը մի ընկեր ուներ, որ աշխատում էր մի վայրում, որտեղ այս նոր դեղամիջոցներից են պատրաստում, ինչպես նաև այն մեկից, որը ճշմարտության շիճուկ են անվանում. դրա մասին հավանաբար կարդացած կլինեք թերթերում, այն ստիպում է ճշմարտությունն ասել՝ անկախ նրանից՝ ուզում եք դա, թե ոչ: Նոյեմբերի հինգին Բերտը պատրաստվում էր այցելելու միսթր Ֆորթեսքյուի գրասենյակ և իրավաբան տանելու իր հետ, իսկ ես պիտի այդ օրը նախաճաշին դեղամիջոցը տայի նրան, ու հենց այն ժամանակ, երբ նրանք գալին, այն կգործեր, և նա կխոստովաներ, որ Բերտի ասածը լիակատար ճշմարտությունն է: Դե, մադամ, ես լցրեցի այն մուրաբայի մեջ, բայց հիմա նա մեռած է, և ես մտածում եմ՝ գուցե շիճուկը չափազանց ուժեղ էր, բայց դա Բերտի մեղքով չէր. չէ՞ որ նա երբեք նման բան չէր անի, բայց ես չեմ կարող ուստիկանությանն ասել, որովհետև հնարավոր է՝ նրանք մտածեն, որ Բերտը միտումնավոր կերպով

է արել դա, իսկ ես գիտեմ, որ այդպես չէ: Օ՛, մադամ, չգիտեմ ինչ անել կամ ասել, իսկ ոստիկանությունն այստեղ է՝ տանը, սարսափելի է, նրանք հարցեր են տալիս, այնպիսի խստությամբ են նայում, որ չգիտեմ ինչ անել, Բերտից էլ լուր չունեմ: Օ՛, մադամ, չէի ցանկանա նման բան խնդրել Ձեզնից, բայց եթե կարողանայիք գալ այստեղ ու օգնել ինձ, նրանք կլսեին Ձեզ, Դուք միշտ այնքան բարի էիք իմ հանդեպ, իսկ ես որևէ վատ բան չեմ ցանկացել անել, Բերտը՝ նույնպես: Եթե միայն կարողանայիք օգնել մեզ:

Հարգանքով՝

Գլեդիս Մարտին:

Հ. Գ. Կցում եմ իմ և Բերտի լուսանկարը: Ճամբարի տղաներից մեկն էր լուսանկարել մեզ և ինձ տվել այն: Բերտը չգիտի, որ այն ինձ մոտ է. տանել չի կարողանում լուսանկարվելը: Ախր ինքներդ եք տեսնում, մադամ, թե նա ինչ համակրելի տղա է»:

Միսս Մարփլը, շրթունքները սեղմած, նայեց լուսանկարին: Այնտեղ պատկերված զույգը նայում էր միմյանց: Միսս Մարփլի հայացքը սահեց սրտաճմլիկ, հիացական դեմքով, բերանը թեթևակիորեն բաց Գլեդիսի վրայով ու կանգ առավ մյուսի՝ թխահեր, ժպտադեմ, հմայիչ Լանս Ֆորթեսբյուի վրա:

Հուզիչ նամակի վերջին բառերն արձագանքեցին նրա մտքում. «Ինքներդ եք տեսնում, թե նա ինչ համակրելի տղա է»:

Միսս Մարփլի աչքերն արցունքով լցվեցին: Խղճահարությանը հաջորդեց զայրույթը, ցասումն անսիրտ մարդասպանի հանդեպ:

Այնուհետև հաղթանակի ալիքը սրբեց-տարավ այս եր-

կու զգացումն էլ. նման հաղթական զգացում է ապրում այն մասնագետը, որ ծնոտոսկրի կտորով ու երկու ատամով հաջողությամբ վերականգնում է բնաջնջված կենդանու տեսքը:

ԱԳԱԹԱ ՔՐԻՍՏԻ

AGATHA CHRISTIE

ՏԱՐԵԿԱՆՈՎ ԼԻ ԳՐՊԱՆ

A POCKET FULL OF RYE

*ԲՎԱՅԿԱՅՐԵՆԸ 5 1915. info կայք*

Թարգմանիչ՝  
Խմբագիր-սրբագրիչ՝  
Համակարգչային ձևավորումը՝  
Կազմի ձևավորումը՝

Քրիստինե Չիլինգարյան  
Մարգարիտ Արիստակեսյան  
Լիանա Մինասյանի  
Արաբո Սարգսյանի

**EDIT PRINT**  
43 D. Malyan str., Yerevan  
Tel.: (374 10) 520 848  
www.editprint.am  
info@editprint.am



**ԷԴԻՑ ՊՐԻՆՏ**  
Երևան, Դ. Մալյան 43  
հեռ.՝ (374 10) 520 848  
www.editprint.am  
info@editprint.am